

ՆՈՐ ՇԲՁԱՆ

III ՏՆՐԻ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 12

ՊԵՆՏԵՄԲԵՐ

1903



ԹԻՖԼԻՍ

Արագասիյ Ա. Բուժաթիւլաճէի
Նիկոլայեւի փող., № 21.

1903

ԲՈՎԱՆԳԱՌՈՒԹԻՒՆ

№ 12

ԿԶԵ

1. ՀԱԻԱՏՔ, պատկեր Մարտի 5
2. ԲԱՅ ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆ, և ՖՐԱՆՍ, ԼԵՀՈՒՀՈՒ ՄԱՍԻՆ,
Է. Օժեշկո-ի, Թարգմ. Տ. Յ. 10
3. ՄԱՐՈՒՈՂ ՃՐԱԴՆԵՐ, պիես ԱԼ. Աբելեանի 18
4. ԴԻՊԼՈՄԱՌ ԳՈՐԾԻՉՆԵՐ, գրչի հանաք, ԱԼ. Ժա-
տուրեանի 70
5. ՄՈԿԱՅ ԿԵԱՆՔԻՑ, տղաւորութիւններ Ճամբորդի . . . 71
6. ՎԱՅ ԷՆ ՍՐՏԻՆ, բանաստեղծ. ԱԼ. Ժատուրեանի . . . 98
7. ՕՀԱՆԻ ՎԻՇՏԸ, պատմուածք ԱԼ. Անարոնեանի . . . 99
8. ՍԻՐՈՅ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ, բանաստեղծ. Շելլի-ի,
Թարգմ. Գ. Անտիկանի 117
9. ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ, յօդ. Տիգրանի . . . 118
10. ՓՐԿԱՐԱՐ ՀՐԵՇՏԱԿԸ, պատմուածք Մարկ-Տվէնի,
Թարգմ. Փ. 131
11. ՀԱՅՈՑ ԳՐԱԿ. XVI ԴԱՐՈՒՄ, Հնգերեսանցի ճանա-
պարհորդը; Լէօի 140
12. ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ԴԻԻՂԸ, Կուրքաթ-Հարունի 158
13. ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ, 1) Բանա-
ստեղծ Ալիսի Մերթկու Նոր յօդուածները հայերի մա-
սին: «Արկինձրացի-լուսաւորչականների» հարցը. Տ.
Փիլրոմեանի 166
14. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ, 1) Մ. Մանուէլեան՝ «Էսքիզներ»,
Տ. Յ.—2) Յարութիւն Կապեան՝ «Անանքի խորշերից»,
Աթա-ի:—3) «Հռովմայի իմաստ. Լպիկտտի
կեանքն ու վարդապետութիւնը», Թարգմ. Զաւէն վարդ.
Ա. վ. Լ.-ի:—3) Յակոբ Կարսեցի՝ «Տեղադիր Վերին
Հայոց», Առաւանդեանց, Ա. վ. Լ.-ի:—5) Գի գը-Մո-
պասանի «Բեղեյկուհու խոստովանութիւնը եւ հանդու-
ցեալի գողանիքը», Թարգմ. Ն. Տէր-Յովհաննիսեանցի.
Զաւէնի:—6) Պոլ Բուրժէի «Մի խոստովանութիւն»,
Թարգմ. Ն. Յարոյ. Զաւէնի:—7) Ն. Քոփչեանի՝ «Լոյս»
օրապոյցները, Զաւէնի:—8) Տիկին Ավանեանի Նորա-
վէպները, «Անահիտ» 170
15. ՏԵՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ.—Մխաթարի արդիւնաբերութիւնը
Անդրիո իլասում, Յով. Կարապետեանի 183

Նոր շրջան III տարի

Հրատ. XV տարի

ՄՈՒՐՃ

ԴՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 12

Գ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր

1903

Թ Ի Ճ Ի Ս

Տպարան Է. Զուլաթեյանի, Նիկ. № 21.

1903

Дозволено цензурою. Тифлисъ, 25 декабря 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 12

	Երես
1. ՀԱԻԱՏՔ, պատկեր Մարա-ի	5
2. ԲԱՅ ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆ. և ՖՐԱՆՍ. ԼԵՀՈՒՀՈՒ ՄԱՍԻՆ, Է. Օժեշկո-ի, Թարգմ. Տ. Յ.	10
3. ՄԱՐՈՒՈՂ ՃՐԱԳՆԵՐ, պիես ԱԼ. ԱճԵԼԵԱՆ Ի.	18
4. ԴԻՊԼՈՄԱԻՈՐ ԴՈՐԾԻԶՆԵՐ, գրչի հանաք, ԱԼ. ԺԱ- տուրեան-ի.	70
5. ՄՈԿԱՅ ԿԵԱՆՔԻՑ, տպաւորութիւններ Ճամբորդ-ի	71
6. ՎԱՅ ԷՆ ՍՐՏԻՆ, բանաստեղծ. ԱԼ. Ժատուրեան-ի.	98
7. ՕՀԱՆԻ ՎԻՇՏԸ, պատմուածք ԱԼ. Ահարոնեան-ի	99
8. ՍԻՐՈՅ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ, բանաստեղծ. ՇԵԼԼԻ-ի, Թարգմ. Գ. Անուփեանի	117
9. ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ, յօդ. Տիգրանի	118
10. ՓՐԿԱՐԱՐ ՀՐԵՇՏԱԿԸ, պատմուածք Մարկ-Տվէնի, Թարգմ. Փ.	131
11. ՀԱՅՈՅ ԳՐԱԿ. XVIII ԴԱՐՈՒՄ, Հնդկաստանցի ճանա- պարհորդը, Լէօի	140
12. ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ, Կուրքաթ-Հարունի	158
13. ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ, 1) Բանա- ստեղծ Ակակի Մերեթկու Նոր յօդուածները հայերի մա- սին. — Կրկին «վրացի-լուսաւորչականների» հարցը. Տ. Փիլոմմեանի	166
14. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ, 1) Մ. Մանուէլեան՝ «Էսքիզներ», Տ. Յ.—2) Յարութիւն Եսայեան՝ «Կեանքի խորշերից», Աթա.-ի.—3) «Հռովմայեցի իմաստ. Էպիկտետի կեանքն ու վարդապետութիւնը», Թարգմ. Զաւէն վարդ. Ա. Վ. Ղ.-ի.—Յակոբ Կարնեցի՝ «Տեղադիր Վերին Հայոց», Կոստանեանց, Ա. Վ. Ղ.-ի.—5) Դի դը-Մո- պասանի «Գեղեցկուհու խոստովանութիւնը եւ հանգու- ցեալի գաղտնիքը», Թարգմ. Ե. Տէր-Յովհաննիսեանցի. Զաւէնի.—6) Պոլ Բուրժէի «Մի խոստովանութիւն», Թարգմ. Ն. Յարոյ. Զաւէնի.—7) Ե. Թոփչեանի՝ «Լոյս» օրացոյցները, Զաւէնի.—8) Տիկին Սվաճեանի Նորա- վէպները, «Անահիտ»	170
15. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ.—Միախոտի արդիւնաբերութիւնը Անդրկովկասում, Եով. Կարապետեան-ի	183

16. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ.—Նրեանի ջաղաքազլի ընտրու-
թիւնը, Ա-Դօ-ի 187
17. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ,
I Արտիստիկական թատրոն, Ա.-ի.
II Արաքսեանի թատ. Հաւաքարում, Աթ.-ի. 191
18. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Կանանց բարձրագոյն կրթութիւնը
Ռուսաստանում իբրեւ մասնաւոր նախաձեռնութեան
արդիւնք։—Պետերբուրգի գրական ֆոնդի ձեռնարկած
էժան բնակարանները գրականագէտների համար։—Պե-
տական զանձարանի տուած նպաստը գրականագէտնե-
րին։—Հոգեւորականութեան ձեռքը զեմստովային դպրոց-
ների յանձնելու խնդիրը Տվերեան դատարանի զեմստովա-
յին ընդհ. ժողովում եւ հակալծիւր նահանգային զեմստ.
ընդհ. ժողովում։—Քաղաքային ընտրութիւնները Պե-
տերբուրգում։—Մամուլի վերաբերեալ կարգադրութիւն-
ներ։—Շուշու թեմական դպրանոցի փակումը։—Ամե-
նայն Հայոց կաթողիկոսի հիւանդութիւնը։—Կա-
ռավարչական կարգադրութիւն Բաթումի վերաբերեալ։
—Հ. Ս. 202
19. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ռուս-կապոնական բարդութեան
ներկայ դրութիւնը։—Մակեդոնիայի բեթորմների առա-
ջին քայլերը։—Դուլեխովսկու ճառը եւ Սաֆարովի ու
Յոնչևիի կարծիքները ապագայի մասին։—Նորելեան եր-
րորդ մրցանակաբաշխութիւն.—† Մատաթիա Դարա-
դաշեան եւ † Հ. Մանուէլ Քաջունի։—Հ. Ս. . . 209
20. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 212
21. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ. 216
22. ՎՐԻՊԱԿՆԵՐ —
23. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. 217
24. ՅԱԻԵԼՈՒԱԾ, Ա. Ըօլլէսի «Հրաշալի դար», վերջ.
Թարգմ. Ստ. Լիսիցեանի 241—259

Հ Ա Ի Ա Տ Ք

(Պատկեր)

Տանը միակ սենեակն է, առանց բակի, դուռը փողոցին վրայ: Իբր կարասի՝ անկիւններէն մէկը նետուած հին սնդուկ մը, վրան ալ անկողիններու և վերմակներու շարք մը՝ կտոր մը մաշած քուրձով ծածկուած:

Պատուհաններու երկայնքին՝ դռնատ գրգլեակներով պատսպարուած բազմոց մը, որուն աջ անկիւնը պառաւ կին մը սմբած նստած է, ձեռքերը դողը: Բազմոցին մէջտեղը նստէն կինը մը, քառսունին ետեւ տուող տարիքով մը, իսկ ձախ անկիւնն ալ բաւական գեղանի աղջիկ մը որ դողնոցին փոթերը շտկելու զբաղած է: Երեքն ալ աղքատ հագուած են բայց մաքուր:

Գետինը, տախտակամածին վրայ, հասարակ կապերաի աղճատ կտորուանքներ ասդին անդին, և երկաթեայ կրակարան մը որուն մէջ քանի մը կրակի կայծեր կը վառին իրարմէ հեռու, անապատի մը ովախանքուն պէս: Կրակարանին շուրջը, երեք պզտիկ տղաք կատաղի կռիւ մը կը մղեն հացի պատառի մը համար՝ որ գետինն է և որուն հասնիլ կը ջանան երեքն ալ, շարունակ իրար արգիլելով:

Պատեր մերկ են, վաղընջուց մնացած ծեփով մը որ թափած է տեղ-տեղ, և որուն վրայ, ճեղքերու շուրջ

բոլորը, մլուկներու գոյութիւնը կը զգացուի աղափառ ծիրերով: Խոշոր գամ մը որ պատերէն մէկուն կուշտը մխուած է, ձիթենիի ոստ մը կը կրէ, Ծաղկազարդի յիշատակ:

Տղաքը կը կզուլտին, կը պոռան, կը կանչին, միշտ ակնդէտ հացի կտորին, որ իրենցմէ մէկ երկու քայլ անդին նետուած է:

Բազմոցին մէջտեղը նստող կիներ—մայրերնին—կը պոռայ՝ երազէ մը արթնցածի պէս:

—Խեղճ... ի՞նչ կ'ըլլաք կոր նորէն... ալ չ'օգտեց:

Տղաքը չեն լսեր անգամ:

—Սաթենիկ, սըւտնք սո՛ւս ըրէ... կաաղեր են,—կը ձայնէ մայրերնին՝ միշտ երազուն:

Աղջիկը ուսերու շարժում մը միայն կ'ընէ, միշտ ուշադիր գոգնոցին փոթերուն:

Դուրսը արհաւիրտ հով մը կ'ունայ, ամեն մէկ թափին ցուրտի լեզու մը սպրդեցնելով պատուհանին բացուածքներէն ու ճեղքերէն ներս: Ծովի իւրաքանչիւր սուլինը սարսուռ կու տայ երկու կիներուն ու գոգնոցով աղջկան: Երեքն ալ իրենց երազանքէն կը սթափին և սպնիի ժողուրդոտութեամբ մը ինքզինքնին տարցընել կը փորձին:

Յանկարծ տղոց պոռչոտութենքը կը կտրեն, առաջ բերելով ճիշտ այն լռութիւնը որ երկարաձիգ արձագանգի մը մարեղէն վերջ կը գոյանայ:

Կրակարանին տակ պլորուած կատուն, ինքն ալ անօթի, վերջիվերջոյ նշմարած է հացի կտորը՝ որուն համար տղաքը կը կզուլտին, և թաթը երկնցուցած է՝ առիթէն օգտուելու միտումով:

Տղաքը, սառանի ձագերու երևոյթը առած, կը դադրեցնեն իրենց կռիւը: Մազերնին գզուած է՝ երկարատեն քամիին տակ մնացած որաներու պէս: Աչերնին կը վառի վրթկուն փայլով մը, և շունչերնին դժուարաւ դուրս կ'ելլէ զսպուած հեւքերով, որոնք կարծես իրենց կսւրժքը կը պատուեն:

Երեքն ալ մոռցած են իրենց հակառակութիւնը ու կը պատրաստուին յարձակիլ կատուին վրայ, հացի պատառը ազատելու համար: Կենդանին կը կասի, թաթը վեր, կարծես քարացած: Աչքերը միայն կենդանութիւն մը կը մատնեն իր վրայ:

—Հնչող պիտի դողանար, կ'ըսէ ամէնէն պզտիկը՝ յայտնի սրտագողով մը:

—Բռնէ, Մարգար, կը ձայնէ մեծը իրմէ կրտսերին:

Վայրկեան մը չ'անցած, կատուին կռնակը արդէն իսկ բանի մի անգամ համբուրած է դետինը: Խեղճը կը պոռայ, իզուր իր կաշկանդուած թաթերը ազատել փորձելով:

—Օ, մեղք է հայկանը,—կը պոռայ պառաւը իր անկիւնէն, աւրուած փողի ձայնով մի:

Տղաքը ուշադրութիւն անգամ չ'են ըներ. իրենցմէ երկուքը մէկ-մէկ ձեռքով բռնած են կատուին չորս ոտքերը: Մէկը՝ միւսնոյն տանն ոտքովը կոխած է կենդանին վիզին վրայ՝ որպէսզի չը խածնէ: Իսկ պզտիկը՝ կատուին պոչը կը բաշէ կրցածին չափ ուժով:

Կենդանին կը ճուայ, բայց աղաքը չ'են աղբուիւր, մինչև որ քոյրերնին կը ստիպուի դողնոցը ձգելով ոտքի ելլել: Երեքն ալ մէկ-մէկ անկիւն կը փախին ծեծի մը վախէն, մինչդեռ կատուն միակ ոտտուժով մը կ'աներևոյթանայ դրան մօտը բացուած ծակէ մը ներս:

Հովը միշտ կը սուլէ, և նոր սկսած թեթեւ անձրև մը կը ծաղկոտէ ապակիները:

Տղաքը կրկին հացի կտորին կը դառնան, բայց անոր տեղ տափակցած, աղառա ու անճանաչ զանգուած մը միմիայն կը գտնեն դետինը, կապերտին մազերուն կպչած: Իրենցմէ մէկը, կատուն տանջելու զբաղած, կոխոտեր է զայն առանց տեսնելու...

—Աղջիկ, ինչ պիտի ուտէք առ իրիկուն, — կը ձայնէ պահ մի պառաւը:

—Սէլէն քիչ մը հաց կար, ան ալ տղաքը կերան, — կը պատասխանէ կինը, անտարբեր երևոյթով մը:

Յայտնի է որ երկար ատենէ ի վեր վարժուած է այդ վիճակին:

—Բան մը չը կ'սոյ, — կը հարցնէ նորէն պառաւը:

—Ի՞նչ կար որ ինչ պիտի մնայ:

—Սաթէնը ինչ ըրաւ... բան մը չը բերաւ:

—Ձէ... շուն շահորդի կնիկը բան մըն ալ չ'ուզեր կոր տալ... ինչ ըսաւ, քա Սաթէն:

Աղջիկը որ նորէն գոգնոցին փոթերով զբաղած ըլլալան բան մը չէր լսած, կը հարցնէ.

—Ո՞վ:

—Մոտիսդբան:

—Ի՞նչ պիտի ըսէ, մինչև որ կարը չը բերէք, ըսաւ, փարա մըն ալ չեմ տար... դատէ, դատէ, նորէն բան մը չը կայ, նորէն բան մը չը կայ:

—Ասոր բանէինք նէ կը լմննար կ'երթար, — կ'ըսէ մայրը մտածկոտ, աչուքները առաստաղին սեւռուն:

—Ձէ ետւրում, չէ, ասոր Աւագ Ուրբաթ է... ժամու օր... գիտե՛լ կու տայ պառաւը՝ գլուխը կուրծքէն վեր առնելով:

Ու մինչդեռ միւսները կը լռեն, կը շարունակէ.

—Սուրբ օր է, ետւրում... կար բռնել չ'ըլլար... ամէն մէկ ասեղ շարժելուդ ժամ մըն ալ չ'ինես նորէն չես խալըսիր... աւագ օր է... ժամու, աղօթքի, հսկումի օր... չէ ետւրում, չէ...

Դուրսը հովին թափը կտորած է, բայց անձրեւ՝ սասակացած՝ խորազանի հարուածներու պէս կ'իջնէ ապակիներուն վրայ: Տեղ-տեղ, պատուհաններու ճեղքերէն ջուրը ներս կ'անցնի ու կը սահի տախտակն ի վար՝ աղբուկի գլուխ մը երկնցուցած:

Տղաքը նորէն կը սկսին եռուզեռել:

—Մայրիկ, — կը ճչէ պղտիկը, — փորս անօթի է:

—Ի՛մա ալ,—կը ձայնակցի երկրորդը:

—Ե՛ս ալ հաց կ'ուզեմ,—կ'աւելցնէ անդրանիկը:

Ու երեքն ալ ողորմուկ նայուածք մը կը գամեն գետինը, կապերաի կտորին վրայ տափակցած հացի պա-
տառին:

—Մախսըմներուն բերանը ինչպէս գոցելու է,—
կ'ըսէ մայրերնին՝ երազանքէն սթափած:

Յետոյ աղջկանը կը դառնայ.

—Սաթէն, ինչ կ'ըսես, սա կարը ձեռք առնե՞նք:

Աղջիկը չը պատասխանած՝ պառաւը մէջ կը նե-
տուի.

—Ձէ ետւում, չէ... սուրբ օր է... ասեղ զարնել
չ'ըլար...

—Է չոճուխները... ինչ պիտի կերցնեմ... սա կնի-
կը մինչև քի կարը չ'առնէ փարա չը պիտի տայ...

—Թող անօթի մնան... աւագ օր է... Ժամու, ա-
ղօթքի, հսկումի օր... չէ ետւում չէ...

Պառաւին կամքը օրէնք մըն է տան համար:

Կինը՝ համակերպող երևոյթը մը կ'առնէ ու նորէն
կը թաղուի իր երազանքին մէջ, աչուրները կէս մը գոց,
ցուրտէն սրտիուն:

Տղաքը միշտ իրենց անօթութիւնը կու լան, առանց
խօսուածներէն բան մը հասկցած ըլլալու...

ՄԱՐԱ

ԲԱՅ ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆՈՒՀԻՆԵՐԻՆ ԵՒ ՅՐԱՆՍԻԱՅԻՆԵՐԻՆ
ԼԵՀՈՒՀՈՒ ՄԱՍԻՆ

(Էլիզա Օժէշկօի)

«2ը կան իրաւունքներ առանց պարտականութիւնների. պարտականութեան լրջութիւնը աւելանում է իրաւունքի արժէքի հետ, իսկ իրաւունքը պատկանում է միմիայն նրան, ով ուզում է և կարող է կատարել համապատասխան պարտականութիւններ»:

Յ ա ո ա ջ ա ք ա ն

Ժամանակակից հաղորդակցութեան ճանապարհների և շատ ուրիշ գործօնների շնորհիւ՝ առանձին ազգերի մէջ տեղի ունեցող մտքերի փոխանակութիւնը այժմ աւելի եռանդով է կատարւում, քան առաջ, և այդ պատճառով մարդկային մտքի արտադրութիւնները այժմ թարգմանւում են մի լեզուից միւսը՝ աւելի մեծ թւով, քան երբեք: Երբէք զանազան ազգերի ստեղծագործող հոգիները այսքան յաճախ չեն հանդիպել դէմ առ դէմ և, զննելով միմեանց փոխադարձ զարգացումը, փոխ տուել ու փոխ առել համանման, բայց և ինքնուրոյն լոյսի ճառագայթներ: Սկանդինաւիան յանկարծ երևան եկաւ ամենքի համար անակնկալ փայլով. հեռաւոր արևելքից հնչեց Եւրոպայի բոլոր կողմերը ոռւս գրող ու մտածող Տոլստօյի հզօր ձայնը: Մեր (լեհացիների) գրականութիւնն էլ իւրացրին այնպիսի ազգեր, որոնք չեն հասկանում մեր լեզուն և նոյնիսկ կարող էին կարծել, թէ լեհերէնը արդէն չքացել է աշխարհի երեկոց, եթէ նրանց առաջ երևան չը գային մեր լեզուով, այց

նրանց համար մատչելի ձևով ստեղծուած մտքեր ու խոհեր, որոնք կարծէք ասելիս լինէին նրանց.

«Մեր հայրենի երկիրը լուսաւորում է նոյն արևը, որ փայլում է և ձեր երկնակամարում. մեր հողը սնւում է միևնոյն կենսարար հիւթերով. նա ծնում է նոյնպիսի հոգիներ, որոնք ձգտում են դէպի մարդկային գոյութեան բարձունքները և որոշում են նրա անդունդները: Դիտեցէք նրանց, և նրանց միջով դուք կը տեսնէք այն հողը, որ ծնել է նրանց»:

Ազգերի այդ զրոյցի մէջ, որ թերևս պատրաստում է նրանց համար այժմեան շրջանից աւելի լաւ ու աւելի ներդաշնակ ապագայ, լսում է նաև մեր ձայնը,—մի բան, որ ևս աւելի գոհութիւն պէտք է պատճառի մեզ, որովհետև մեզ համար շատ դժուար էր համապատասխան տեղ գրաւել ուրիշ ազգերի թուում: Երբ մենք կանգնում ենք այն դռան առաջ, որի յետևում տեղի է ունենում ընդհանուր զրոյցը, մոռնաւորիկը չի յայտարարում գոռ ձայնով՝ մի հզօր հիւրի գալուստ: Սակայն դուռը բացւում է, և մենք ներս ենք մտնում:

Նոր բան ասած չեմ լինի, եթէ յիշեցնեմ, որ դռները բացուեցին, գլխաւորապէս, շնորհիւ Հենրիկ Սենկևիչի, որ հասցըրեց լեհական վիպագրութիւնը այնպիսի գեղարուեստական բարձրութեան, որին երբէք չէր հասել մեր՝ վիպագրութիւնը և որ ուրիշ ազգերի մէջ էլ յաճախ չէ պատահում:

Նրա և նրան ծնող երկրի անունը հռչակուեց ամբողջ Եւրոպայում, որ հաղորդեց այդ անունները նաև ովկիանի միւս ափը: Բայց միայն արևը չէ, որ փայլում է երկնքում,—կան նաև աստղեր. երկրիս երեսին հնչում է ոչ միայն սոխակի երգը, այլև արտոյտի ձայնը. դաշտերը արտաղրում են տարբեր մեծութեամբ և պէսպէս գոյներով բոյսեր, և, ինչպէս յայտնի է, երևոյթների այդ բազմազանութեամբ է արտայայտւում երկրի հարստութիւնն ու պտղաբերութիւնը: Այդ երևոյթներից իւրաքանչիւրը կատարում է իրան յատուկ պաշտօնը, նրանցից ամեն մէկը աւելի կամ պակաս մեծութեան մարդաբիտ է ընդհանուր գանձարանի մէջ, տարբեր արժէքի հատիկ՝ ընդհանուր շտիմարանում, տարբեր աստիճանի օժանդակ, բայց և միշտ անհրաժեշտ ոյժ է, որ իր առանձին նշանակութիւնն ունի մարդկութեան յառաջագիմական շարժման մէջ:

Վերջերս, մօտ 15 տարի սրանից առաջ *), սկսեցին իմ գրուածքները թարգմանել օտար լեզուներով, իմիջի այլոց նաև

*) Այս յօդուածը գրուած է անցեալ դարի վերջում:

գերմաներէն: Գերմանուհիներին առանձնապէս դուր եկաւ իմ «Մարթա» վէպը, որ հրատարակուեց «Ein Frauenschicksal» վերնագրով: Գերմանիայում գոյութիւն ունեն բազմաթիւ կանայքի ընկերութիւններ, որոնց նպատակն է աջակցել կանանց մտաւոր և տնտեսական յառաջադիմութեան գործին: Այդ ընկերութիւններէց մի քանիսը որոշել էին, իմիջի այլոց, կազմակերպել զանազան քաղաքներում ու ժողովներում այդ վէպի հրապարակական ընթերցանութիւններ: Այդ վէպը լոյս տեսաւ բազմաթիւ հրատարակութիւններով, որ՝ միացած իմ նոյնպէս բաւական յայտնի դարձած մի ուրիշ վէպի—«Մէյէր Եոզէֆովիչի»—ունեցած յաջողութեան հետ, յառաջ բերեց բազմաթիւ թարգմանութիւններ իմ ուրիշ երկերից: Գերմանացիներէից ու գերմանուհիներէից ես յաճախ ստանում էի նամակներ, որոնք, ինչպէս առհասարակ լինում է այդպիսի գէպքերում, լիքն էին լինում համակրութեան արտայայտութիւններով ու գովասանքներով: Վերջապէս, իմ գրական գործունէութեան քսանհինգամեակին՝ ես ստացայ մի քանի գերմանական ընկերութիւններից (Allgemeiner Frauenverein, Deutscher Frauenverein, Deutscher Frauen Reformverein, Frauenwohlverein և այլն) բազմաստորագիր ուղերձներ և, բացի այդ, բազմաթիւ մասնաւոր նամակներ, իմիջի այլոց նաև յայտնի բարեգործուհի և գրող տիկին Աննա Մորգենշտերնից (Բերլին):

Ի՞նչպէս պէտք է պատասխանէի այդ նամակներին ու շնորհաւորութիւններին և շնորհակալութիւն յայտնէի այդ աստիճան շոյիչ ուշադրութեան համար: Շատ դժուար էր պատասխանել ամեն մէկին առանձին: Այն ժամանակ ես վճռեցի ընդհանուր կերպով շնորհակալութիւն յայտնել, և միանգամայն, դէպքից օգուտ քաղելով, հաղորդել օտարազգի կանանց լեհուհիներից մէկի խոհերը կանանց հարցի մասին: Այն բաց նամակը, որ այդ նպատակով գրեցի և որ հիանալի կերպով գերմաներէնից թարգմ. տ. Մալվինա Բլումբերգը, տպուեց տիկին Մորգենշտերնի խմբագրութեամբ Բերլինում հրատարակուող թերթում *), իսկ այնուհետև լոյս տեսաւ նաև առանձին հրատարակութեամբ: Այսպէս է լոյս աշխարհ եկել գերմանուհիներին գրուած նամակս, որ միաժամանակ լեհերէն լեզուով տպեցին «Ster»-ը Լեմբերգում և «Bluszcz»-ը Վարշավայում:

Միւս յօդուածս—«Լեհուհու մասին»—գրեցի «Revue des Revues» ամսագրի խմբագիր պ. Ժան Ֆինօի հրաւերով, որ մի

*) Hausfrauen-Zeitung-ում:

լայն ծրագիր էր յղացել, այն է՝ հրատարակել մի շարք ուսումնասիրութիւններ բոլոր երկիրների կանանց բնաւորութեան, վիճակի և ձգտումների մասին: Չը գիտեմ, ինչ պատճառներով միմիայն մասամբ իրագործուեց այդ լայն մտածուած ծրագիրը: Հրաւերին արձագանգ տուեցին միայն մի ֆրանսուհի, մի գերմանուհի, մի իսպանուհի, մի ռուս կին և մի լեհուհի: Այդ շատ տարածուած ֆրանսիական ամսագիրը մինչև այժմ ղեկավարել է ընդամենը հինգ ուսումնասիրութիւն այդ հարցի մասին:

Էլ ի՞նչ ասեմ այն գրքոյկի մասին, որ այժմ տալիս եմ հայրենակցուհիներին ձեռքը: Ինձ մնում է հաղորդել նրանց նաև մի փոքրիկ գրութիւն, որ գարձեալ ուղարկել եմ արտասահման: Ժընևի «Revue des sciences morales» նոր ամսագրի խմբագրութիւնը գիմել էր իր ապագայ աշխատակիցներին հետեւեալ հարցմունքով, որ կապ ունի կանանց խնդրի հետ.

„Quelle mission morale attribuez vous au mouvement féministe dans l'évolution de la société contemporaine“ *).

Ես պատասխանեցի հետեւեալը.

«Խեղճը միայն այն ժամանակ է կեանքի տաճարները լուսաւորող բարերար ջահ հանդիսանում, երբ սեղաններ են կանգնեցրած այդ տաճարներում: Առանց ջահի՝ մարդիկ կարող են կուռքերը աստուած համարել և աստուածներին՝ կուռք: Իսկ եթէ սեղաններ չը լինեն, մարդիկ կարող են ամենայն յարմարութեամբ զբօսնել լաւ լուսաւորուած տաճարներում, բայց ոչ ոք չի աղօթիլ այնտեղ:

«Շատ սեղաններ, որոց առջև մարդկութիւնը աղօթում էր, կործանուել են, և մարդկանց հոգիներում դատարկութիւն է մնացել, և տիրել է այնտեղ դառնութիւն, ձանձրոյթ և յանցանք:

«Բանականութեան ջահը աղօտ լոյսով էր վառւում կանանց ձեռքում, որովհետև գիտութիւնը չէր բորբոքում նրա բոցը: Այժմ կանայք, օրէցօր աւելի ու աւելի ազատ մուտք ստանալով դէպի գիտութեան կրակարանը, կարող են հետզհետէ աւելի ու աւելի յաջողութեամբ աջակցել մարդկային ցեղի արական կէսին նոր աղօթարաններ կառուցանելու գործում, այսինքն այնպիսի զգացմունքներ ու ձգտումներ զարթեցնելու մէջ, առանց որոնց գոյութեան՝ կեանքը դառնում է մի թեթեամիտ զբօսանք կամ յանցագործութիւնների մի շարք:

*) «Ի՞նչ բարոյական դեր էք վերագրում կանանց շարժմանը ժամանակակից հասարակութեան յառաջագիմութեան գործում»:

«Ես չեմ ընդունում ոչ մի սեպարատիզմ մարդկային ցեղի երկու կեսերի մէջ, ոչ մի առաւելութիւն այդ մարդկանցից, ոչ մի յիշաչարութիւն մեզ հասցրած զրկանքների նկատմամբ: Վերջերքս մեր ձեռքը ընկած ջահը չը պէտք է գործ դնենք այնպիսի նոր աղբիւրներ փնդուելու համար, որոնք կարող են բաւարարութիւն տալ մարդու միմիայն անասնական հակումներին: Պէտք է որոնել միմիայն այնպիսի աղբիւրներ, որոնք կարող են կազդուրել և ջերմացնել մարդու հոգին:

«Եթէ այդ չէ լինելու գիտութեան տաճարը մուտք գտած կանանց ձգտումը, աւելի լաւ կը լինի, եթէ նրանք իսկոյն և եթ հանգցնեն իրանց ձեռքի ջահը: Այդ ջահը պէտք է աշխարհին, որ առանց այն էլ բաւական լոյս ունի՝ ուղղուած մանր, կեղտոտ, եսական ու անսիրտ գործերի ու ջանքերի կողմը»:

Գիտեմ, որ այսպիսի մի հայեացք, որ հիմնւում է կնոջ բարոյական կատարելագործութեան վրայ և նրա մտաւոր կըրթութեան զլխաւոր նպատակը համարում է մարդկային ցեղի բարոյական յառաջդիմութեան աջակցելը, շատերին դժգոհութիւն կը պատճառի և նոյնիսկ առիթ կը տայ կասկածելու, թէ ես պատկանում եմ յետամնացների թւին: Բայց այդ իրաւացի չէր լինի: Ոչ ոք չի կարող հերքել այն ճշմարտութիւնը, որ այժմեան քաղաքականութիւնը հաւասարակշիռ դրութեան մէջ չէ, որ նա շատ է թեքուել կեանքի նիւթական խնդիրների կողմը և որ այդ է շատ աղէտների, թշուառութիւնների և անարդարութիւնների աղբիւրը: Խելքը և գիտութիւնը ծառայում են աւելի, այսպէս ասած, նիւթական քան բարոյական գիւտերի գործին: Այդ չը պէտք է մեր աչքում նուաստացնի խելքի և գիտութեան հեղինակութիւնը, այլ մենք պէտք է ուշադրութիւն դարձնենք մեր սեփական ոչնչութեան վրայ:

Մենք ինքներս ենք մանր, և ամեն ինչ, որ ինքն ըստ ինքեան մեծ է, մանրացնում ենք ու հաւասարեցնում մեր չնչին չափին:

Ինչպէս հաւատը, հայրենասիրութիւնը և մարդկային ոգու ուրիշ գերագոյն արտայայտութիւնները, այնպէս և բանականութիւնը ու գիտութիւնը, մարդկային գործունէութեան անկատարութեան շնորհիւ, սկսել են յիշեցնել երկերեսանի Հանուսի *) պատկերը՝ դաժան և միանգամայն հեզ, չար և բարի:

*) (Հոովմայեցիների) արևի աստուած, որ տուածեան բանում էր երկնքի ղռները, իսկ երեկոյեան փակում, ուստի և արձանը շինւում էր երկու երեսով:

Բանականութեան և գիտութեան սնանկութիւնը չէ այդ, ինչպէս պնդում են ոմանք, այլ մի նոր ապացոյց այն հին ճշմարտութեան, թէ միմիայն առողջ ծառի վրայ կարող են բուսնել լաւ պտուղներ և թէ ամենահիանալի պատուաստն անգամ չի կարող ցանկալի պտուղներ բուսցնել վատառողջ ծառի վրայ: Մենք բարոյապէս հիւանդ մարդիկ ենք, և դրանից է յառաջ գալիս գիտութեան և բանականութեան արդիւնքների մեղ զարմանք պատճառող և մեղ համար կորստաբեր երկուութիւնը: Այդպիսի եզրակացութիւն միայն այժմ կարելի է անել. այդ ճշմարտութիւնը չէին կարող հասկանալ մարդիկ մեղնիցնոյնիսկ մի քանի տասնամեակ առաջ, երբ մարդկութեան դրօշակի վերայ փողփողում էր՝ «Գիտութիւնը ոյժ է» մակագրութիւնը: Գիտութիւնը մեծ ոյժ է, անկասկած, բայց փորձը ցոյց տուեց, որ այդ միմիայն մէկն է այն բազմաթիւ ոյժերից, որոնք պէտք է ենթարկուած լինեն բարւոյ սկզբունքին: Բարին—ահա միակ հիմքը, որի վրայ կարող են երկարատեւ շէնքեր կառուցանել միւս ոյժերը, ահա միակ առաջնորդը, առանց որի հրամանատարութեան կատարեալ պարտութեամբ է վերջանում միւս ոյժերի պայքարը:

Ինձ թւում է, թէ համապատասխան համոզմունքների ու ձգտումների տէր կանայք կարող կը լինէին մեծ չափով նպաստել այն բանին, որ բարոյական բարիքի կողմը ուղղուէր մեր քաղաքակրթութիւնը, որ չափազանց շատ է թեքուել դէպի նիւթական բարիքների կողմը. ինձ թւում է, թէ այդ պէտք է լինի նրանց գլխաւոր գործը, և որ ինքն նրանք սկսէին իրագործել այդ ծրագիրը, չափազանց մեծ, կարելի է ասել, անգնահատելի կարևորութիւն կ'ունենար նրանց ծառայութիւնը ամբողջ աշխարհի առաջ:

Գիտեմ, որ ասածներս շատ էլ գրաւիչ չեն, որովհետեւ պահանջս շատ խիստ է: Բայց ի՞նչ արած: «Ernst ist das Leben» *), ասել է մի գերմանացի փիլիսոփա, իսկ լեհ գրող Նիկոլայ Ռէյի խօսքով «Մարդուս կեանքում մի կաթիլ մեղր կայ և մի տակառ լեղի»: Մարդկանց մոլորեցնում են նրանք, որոնք պնդում են, թէ վեր բարձրանալիս մարդ անընդհատ վայելում է կեանքի նեկտարը. իմ կարծիքով, աւելի ճիշտ կը լինի ասել, որ մարդ դէպի բարձրը ձգտելիս իր զառն վշտերից նեկտար է քամում մարդկութեան համար: Դրանից չը պէտք է եզրակացնել, թէ չ'արժէ ձգտել դէպի բարձունքները, բայց անհրաժեշտ է նախապէս լաւ զննել դէպի վեր տա-

*) Ծանր է կեանքը:

նող ճանապարհները և ինկատի ունենալ, որ նրանք փշոտ են ու դժուարին:

Այդպէս ուրեմն, թող դէպի գիտութեան և ինքնուրոյն գործունէութեան բարձունքները դիմող կանայք աչքաթող չ'անեն երբէք այն, որ իրօք շատ վեր բարձրանալու համար նրանք պէտք ծանր գութանով աղօսեն բարոյականութեան անդաստանը: Թող նրանք երբէք չը մոռանան հետեւեալ ոտանաւորը մեր մեծ բանաստեղծի, որի երկերը ես կը ցանկանայի որ ամենքը կարդային, ըմբռնէին ու իբր ուղեցոյց ընտրէին, ոտանաւոր, որով նա դիմում է յարութեան ծարաւի մարդկային հոգուն:

«Եղիր մարդուս մէջ տանջանք երկնածին, եղիր գլուխ գործոց աննկուն կամքի: Եղիր համբերութիւն—տառապանքի իշխան, որ կամաց առ կամաց կանգնեցնում է իր շէնքը ոչնչից: Անդորրութիւն եղիր գոռ փոթորկի մէջ, չափ ու կանոն՝ խառնակութեան մէջ, ներդաշնակութիւն՝ աններդաշնակութեան մէջ, յաւիտենական գեղեցկութիւն եղիր կեանքի անվախճան պայքարում: Միմիայն ստորների ու կեղծաւորների համար եղիր սպառնալիք, զարոյթ կամ սուրբ լոռութիւն, և դաշն մի կապիր երբէք կեղծիքի հետ: Հրեշտակի շունչ եղիր միւս բոլորի համար: Նեկտար եղիր, որ կենդանութիւն է տալիս սրտերին, քրոջ արտասուք եղիր նրանց համար թշուառութեան լուսններին և առնական ձայն, երբ դողում է նրանց մէջ արիւնթիւնը: Տուն եղիր տնանկների համար և յոյս՝ յուսահատների համար: Իսկ մեռելի պէս քնածների համար եղիր զարթեցնող որոտ: Կեանքի չարաթոյն դժոխքի հետ կուեղիս այն ոյժը եղիր միշտ և ամեն տեղ, որ յաղթում է մահին սիրոյ հզօրագոյն ոյժով»:

(Ս. Կրասինսկիյ—Resurrecturis).

Չափից վեր բարձր իդէալ է այդ: Մեծ մարգարէները և մտածողները սահասարակ այնպիսի պահանջներ են յայտնում մարդկանց նկատմամբ, որոնց իրագործելը սովորական մարդկանց ոյժից վեր է, բայց որոնց վեհութիւնը յակամայից գրաւում է վսեմ սրտերը և կամքերը:

Պէտք է համեմել այդ բարձունքներին... Կարող է երբեմն դողալ ոտքդ, կամ կարող ես մոլորուել և ուրիշ շաւիղ ընտրել... զագաթնակէտը զեռ շատ հեռու կը լինի, երբ այլևս շունչ քաշել անհնար կը լինի: Ոչինչ: Պէտք է այնուամենայնիւ քայլես, բարձրանաս, մաքրես ուրիշների համար ճանապարհը քարերից, ջահովդ լուսաւորես նրանց ուղին: Ոմանք կը համենն նը-

պատակին, ոմանք կանգ կ'առնեն կիսաճանապարհին: Այնու-
մենայնիւ պէտք է ձգտել դէպի բարձունքը այն իդէալի, որ
երգել է մարգարէն, իդէալական աշխարհի այդ արքայական
արծիւը: Այլապէս մեր բոլոր կուտակած գանձերը, մեր ոյժերի
ամբողջ պաշարը կեր կը դառնան մարդ-զազանի համար:

Թարգմ. Տ. Յ.

ՄԱՐՈՒՈՂ ՃՐԱԳՆԵՐ

Պիես 3 գործողութիւնով.

Գ Ո Ր Ծ Ո Ղ Ա Ն Ձ Ի Ն Ք

Ժնրունի Յակոբ 65 տ. նախկին արժաթագործ.
Աննա նրա կինը ուրիշների համար կար անող.
Սարթա նրանց աղջիկը նոյնպէս կար անող.
Ներսէս նրանց մեծ որդին 27 տ. ծխախոտի գործարանում բանող.

Սերոբ նրանց երկրորդ որդին թափառաշրջիկ.
Ալեքսանդր նրանց հարուստ հարեանի որդին.
Մինաս սափրիչ և ժողովրդական բժիշկ:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

Քեմը ներկայացնում է անշուք մի սենեակ: Մէջտեղ մի դուռ: Աջ կողմը երկու դուռ, որոնցից մէկը տանում է խոհանոց. միւս առաջակողմը—բակ: Աջ անկիւնում մի հասարակ շէր վարագոյր, որի ետևում Մարթայի անկողինը: Չախ կողմը մի պատուհան հնամաշ շէր վարագուրով: Պատուհանի տուօ մի սնդուկ՝ մէջը թէլի սպաս: Նրանից ըիջ հեռու պատըստ սամովար վրան դրած մի սեղան: Մի այլ սեղանի վրայ վառած լամպա: Մէջտեղի դռան մօտ կախուած է մի վերար-
կու ե գդակ: Եյս ու այն կողմ հասարակ փայտէ չը ներկած աթոռներ, որոնցից մէկի վրայ նոր կարած շորեր:

Տ Ե Ս Ի Լ 1

Աննա եւ Յակոբ.

Աննա (Նստած ծրագի մօտ կար է անում). Օրը լուսանալու վրայ է, խկ նա չը կայ: Ա՛խ, Աստուած, որտեղ մնաց նա: Ղեկում է քաղաքային զանգի վեցը) Ժամի վեցն է, դոնէ շուտ լուսանար: (Վանջում է) Մարթա, չը կշտացա՞ր քնից, վեր կաց:

Յակոբ (Մտնում է միջին դռնից). Երեւի դեռ նա քաղցր քնի մէջ է, Աննա. թող մի քիչ էլ քնի երեխան: Էս գիշեր ներսէսը շատ հազեց, դու լսեցի՞ր նրա ձայնը:

Աննա. Ես նրա ձայնից եմ փախել: Ո՞ր մայրը կարող է տանել էս ցաւը: Մէկը հիւանդութեան ձեռքին է տանջւում, միւս գիշերը տուն չի գալիս:

Յակոբ. Տեսնում ես, Աննա ինչպէս երես տուիւր է՞դ անառակ դաւակին:

Աննա. Ախ, քիչ երեսատիր ինձ:

Յակոբ. Մի ասիլ, Աննա, մեղքը քեզանում է: Երբ ես Ասատուրի հետ գնում էի օտարութիւն, միշտ ասում էի քեզ, Աննա, էս երեխան աչքիս լաւ չի երևում, լաւ նայիր սրան,

քանի փոքր է՝ հեռու պահիր վատ ընկերներից, թէ չէ կը մեծանայ, յետոյ դժուար կը լինի մեզ համար: Ախր ինչո՞ւ էիր ես նրան ծեծելիս միշտ ճշարով մէջտեղ ընկնում և ձեռքերիս խլում:

Աննա. Բայց չէ՞ որ Ներսէսին չէիր ծեծում, ինչո՞ւ նա լաւ դուրս եկաւ, Սերոբը ոչ:

Յակոբ. Ի՞նչ է ասում, Էդպէս ես միտքդ պահել: Ձեռք յիշում, որ էն ժամանակ ամեն առաւօտ ես նրան հետս անում էի արհեստանոցս և երեկոներն էլ վերադարձիս եկեղեցի, մինչև որ 8 տարեկան դառաւ, տուինք արհեստի:

Աննա. Ես մեղաւոր էի, որ արհեստանոցդ հաւաքեցիր:

Յակոբ. Ի՞նչ անէի: Քաղաքը փոխուեց, կնանիքը իրանց տուին նոր-նոր շորերի, մեր շինածները դրին մի կողմ, նոր-նոր վարպետներ դուրս եկան, հին վարպետներիս հացը կտրեցին, ես էլ ստիպուած եղայ գնալ օտարութիւն:

Աննա. Եթէ դու գնացիր օտարութիւն, ես էլ տանը ուրիշ կանանց նման ծամոն ծամելով չէի նստած:

Յակոբ. Հա, իհարկէ, դու էլ ժամանակ չ'ունէիր: Էդպէս է, Անոյշ ջան, անտէր-անխնամ մնացած երեխաները միշտ փրշանում են: Ո՞վ կ'ասէր, որ արծաթագործ Յակոբը նրա նման անառակ զաւակ պէտք է ունենար: Ի՞նչ ասեմ, Աննա, կարիքը մի կողմից, երեխաների էս դրութիւնը միւս կողմից ներսս է խորովում: (Ձեռքերը տարայնելով): Ի՞նչ է, Աննա, սամօվարը պատրաստ է:

Աննա Սա է էլի, թէ մեր տաք կերակուրը և թէ ամեն ինչը:

Յակոբ. Ե՛հ մեզ համար ոչինչ: Ներսէսի համար պէտք է հոգալ:

Աննա. Հոգալն էլ հօ սրանից աւել չի լինիլ: Ժամի Յ-ին եմ վեր կացել:

Յակոբ. Տեսնում եմ, պառաւ, շատ ես աշխատում: Ես էլ ձեզ կ'օգնէի, բայց ես հազիւ եմ թելը ասեղից ջոկում:

Աննա. Գիշերը ցերեկ արած՝ 15 տարի է գործում ենք, գործում, աչք ենք քոռացնում, բայց էնքան չենք կարողանում վաստակել, որ գոնէ մի օր կարողանանք մի կուշտ փորով հաց ուտել:

Յակոբ. Աստուած ողորմած է, Աննա, յոյսդ մի կտրիլ, գուցէ նա մի օր յիշի մեզ. չէ՞ որ ես գիշեր ցերեկ աղօթում եմ նրա առաջ (Աղօթք է անում):

Աննա. Ա՛խ, չեմ իմանում, որ մեղքներիս համար Նն էլ է խռով կացել մեր գլխին: Մեղայ Աստծոյ:

Յակոբ (Լուի): Հիւանդներին առողջութիւն, զրկուածներին օգնութիւն...

Աննա. (Վեր է կենում եւ քաշում պատուհանի վարագոյրը, լուսանում է): Փառք Աստծոյ, լուսացաւ: Մարթն, ներսէս, վեր կացէ՛ք, արդէն լուսացել է, որդիք:

Տ Ե Ս Ի Լ 2

Յակոբ, Աննա եւ Մարթա

Մարթա. (Վարագոյրի ետեւից) Բարի լոյս:

Աննա. Շուտ արաւ: (Պարապում է թէյով):

Մարթա. (Վազում բռնում է հօր կուռը)... Բարի լոյս, հայրիկ:

Աննա. Մի խանգարիլ նրան, տեսնում եմ, որ մարդը աղօթք է անում:

Մարթա. Ինձ համար էլ աղօթիր, հայրիկ: (Յակոբ զլիտվ է անում) Նա գլխով արաւ:

Աննա. Շուտ արաւ գնաւ երեսդ լուացիր: (Մարթան գնաց խոհանոց):

Տ Ե Ս Ի Լ 3

Աննա եւ Յակոբ

Աննա. (Մի քանի անգամ սնդուկից հանում է բաժակներ, հաց, շաքար եւ այլն) Չը վերջացրել:

Յակոբ. (Երկու կողմերին գլուխ տալով): Բարի լոյս: Դու ինձ հէտ էիր, Աննա, գուցէ ուզում ես՝ օգնեմ քեզ:

Աննա. Ոչինչ հարկաւոր չի, նստիր տաքացիր:

Յակոբ. Ամեն բան տեղն է. Սերոբը բան-ման չի՞ թըռցրել:

Աննա. Տես կարող ես, գնաւ ամենքին էլ ասա, որ մեր աղան գող է:

Յակոբ (Ժպտալով): Առանց իմ ասելու էլ ճանաչում են նրան, թէ ինչ պտուղն է: Լսիր, Աննա, երբ մենակ լինենք, միտըս գցիր, քեզ բան ունեմ ասելու:

Աննա. Հ՞ը, ասա, էլ մի վախեցնիլ:

Յակոբ. Ձէ, նրա մասին չէ. ուրիշ բան է:

Տ Ե Ս Ի Լ 4

Աննա, Յակոբ եւ Մարթա

Մարթա. Բարի լոյս, հայրիկ. (Բռնում է նրա ձեռքը): Տես ինչպէս ցուրտ է: Օ', էդ ի՞նչ է, քո ձեռքդ աւելի սառն է:

Յակոբ. Էդպէս է աշխարհի բանը, Մարթա ջան. հիմայ ես ինքս մի ձմեռն եմ:

Մարթա. Իսկ ես ի՞նչ եմ:

Յակոբ. Դու մի նախշուն գարուն ես. դու իսկ որ մեր տան գարունն ես:

Տ Ե Ս Ի Լ 5

Աննա, Յակոբ, Մարթա եւ Ներսէս

Ներսէս. (Մտնում է միջի դռնից): Բարի լոյս: (Նա խօսում է չոր-չոր, բայց արագ):

Յակոբ. Դու իմ սիրելիս, լաւ քնեցիր գիշերը:

Ներսէս. Գիշերը չէ, հայրիկ. բայց լոյսի վրայ շատ լաւ: Եթէ կարելի լինէր, ես էլի մի քիչ կը քնէի... բայց հազը խանգարում է:

Աննա. Մարթա, թէյ շինիր նրա համար: Երեւի մրսել ես:

Ներսէս. Էնքան էլ տաք չէր իհարկէ:

Յակոբ. (Բռնում է նրա ձեռքը) Ոչինչ, տաք է:

Ներսէս (Փպտալով). Այո, հայրիկ, տաք է. ամբողջ մարմին-նըս տաք է, ես այրւում եմ էդ տաքից (Թէյ են խմում):

Յակոբ. Յոյսդ Աստծոյ վրայ դի՛ր, որդի. մի վախիլ, կ'անցնի:

Ներսէս. Ես էստեղ ինձ շատ լաւ եմ զգում, բայց էստեղ, էս անպիտան ծխախոտի գործարանը ինձ չի ընկնում:

Աննա. Երեւի էստեղ օդը վատ է:

Ներսէս. Հըմ, օդ. ի՞նչ օդ. էստեղ օդ չը կայ, մայրիկ: Էստեղ կայ միայն ծխախոտի ծանր, թունաւոր հոտ և ուրիշ ոչինչ: Շատ եմ զօռ անում, բայց չեմ կարողանում տանել:

Աննա. Դո՛նէ պատուհանները բացէին:

Ներսէս. Օ', էդ չի կարելի, որովհետեւ տղերքը կարող են առանց բանդերովի ծխախոտ թոցնել: Դեռ էդ բաւական չի, մայրիկ, ապակիի վրայից երկաթի ցանցեր էլ է քաշած:

Աննա. Դոնէ փոխուէիր մի ուրիշ բաժանմունք:

Ներսէս. էդ էլ փորձեցի. խնդրեցի, որ ինձ տանեն թըղթի արկղներ շինելու բաժանմունք. բայց յետոյ ես ինքս էլ տեսայ, որ բան չի դուրս գալ:

Աննա. էսքան տարի ծառայում ես, ի՞նչ կը լինէր, որ խնդիրքդ կատարէին:

Ներսէս. Բանը էդ չի մայրիկ. էս բաժնում ես ստանում եմ օրական 90 կոպէկ, իսկ էնտեղ ինձ շատ տան 30—35 կոպէկ:

Աննա. Քեզ նման մեծ տղին 35 կոպէկ:

Ներսէս. Բանը մեծութեան մէջ չէ, մայրիկ: Ծխախոտի գործարանում ամեն գործ վարձատրւում է կամ հատով կամ կշռով: Թղթի արկղ շինելու համար ես պէտք է նորից աշակերտ մտնեմ, այն ինչ՝ էստեղ ես արդէն վարպետ եմ և օրը մի քանի հազար ծխախոտ եմ շինում:

Յակոբ. Ապա ինչո՞ւ էդքան քիչ վարձ ես ստանում:

Ներսէս. Հէնց բանն էլ էդ է հայրիկ: Առաւօտունից շատ լաւ եմ գործում, և օրեկան ես կարող էի մի բուրլիից էլ աւել վաստակել... բայց դէպի երեկոյ ոյժս քշանում է, սկսում եմ թուլանալ և էլ հարբածի նման գլուխս չեմ կարողանում ուսերիս վրայ ուղիղ պահել: Ստիպուած եմ լինում մի քիչ վաղ տուն վերադառնալ: Դուք ուշադրութիւն չէք դարձրել, թէ ծխախոտ շինողներին ձեռքերը ինչքան քնքոյշ են լինում: Ամենալաւ տղամարդի ձեռքերը մեր օրիորդների նախանձը կը շարժեն:

Յակոբ. Ինչի՞ց է էդ:

Ներսէս. Ոսկոռի ձողը անգամ մաշւում է մեր ձեռին, իսկ մեր կաշին հօ մսից է: Երևի Սերոբը չի հկել էս գիշեր:

Յակոբ. Թող կորչի նա. քիչ յիշեցէք նրա անունը:

Աննա. Մի բարկանալ, նոր աղօթք արի:

Յակոբ. Խռով կենայ իմ աղօթքը նրա գլխին:

Ներսէս. Հարևանիդ որդուն չե՞ս տեսել, հայրիկ. լաւ կը լինէր, էս կիրակի էլ մի քիչ գործ տար ինձ:

Յակոբ. Օ՛, պարոն Ալեքսանդրը շատ հաւանել է քո շինած ծխախոտը:

Ներսէս. Ես հօ նրա թամբաքուն չեմ փոխել: Մարթա, քո ձեռքիցդ ի՞նչ քաղցր էր թէյը: Դու չե՞ս նեղանում, մայրիկ:

Աննա. Ինչո՞ւ պիտի նեղանամ, նա էլ իմն է:

Ներսէս. Ձե՞ որ իմ ժամանակ դո՛ւ էիր մեր թէյ շինողը: Էն ժամանակ էլ ես էսպէս հիւանդոտ էի, մայրիկ:

Աննա. էհ, ի՞նչ ես ասում, դու էնքան առողջ էիր, որ թոփլիկ էինք կոչում:

Յակոբ. Կարմիր էիր վարդի նման. Ասատուրը միշտ կճմթում էր թշիցդ:

Ներսէս. Իհարկէ, որովհետեւ մայրիկի կաթով էի մեծացել:

Աննա. Քար կտրուեմ, երեւի երեխիս սիրտը կաթ ուզեց: էգուց առաւօտ դու կարող ես կաթ ունենալ:

Մարթա. Ուրեմն էգուց կիրակի է. էդ ինչից է, մայրիկ, կիրակին մօտենալու ես ուրախանում եմ, իսկ դու տըխրում ես:

Աննա. Ես նրա հոգան եմ անում, որ շաբաթ շաբաթի ետեից է թոչում, իսկ մենք մի բան չենք կարողանում առաջացնել:

Յակոբ. Ի՞նչ շաբաթներ, Աննա. տարիները անգամ արագ են թոչում, բայց էդ անիրաւ գիշերները շատ երկար են, շատ:

Մարթա. Էդ նրանից է, հայրիկ, որ պառաւել ես և գիշերը քունդ չի տանում (Միծաղում են):

Աննա. Քիչ ծիծաղեցէք. վեր կացէք (Մարթան ինքնայեղ տանում է խոհանոց):

Ներսէս. Էս իմ կէրած խմածը ինձ մինչև ճաշ բաւական է. էս կտոր հացն էլ մինչև երեկոյեան ժամի վեցը: (Մի կտոր հաց դնում է դրպանը, հօր օղնոթեամբ հազնւում է. մօտենում է դրան): Օ՛, ինչ լաւ ձիւն է եկել (Գնում է):

Յակոբ. Առողջութիւն տո՛ւր իմ տան սիւնին, Տէր:

Տ Ե Ս Ի Լ 6

Աննա եւ Յակոբ.

Աննա (Շորեր կապելով կապոցի մէջ): Քիչ տըրորւիր, ժամանակ չ'ունեմ: Ի՞նչ էիր ուզում ասել:

Յակոբ. Աննա, ես կամենում էի քեզ ասել, որ վարպետ Մինասը շատ լաւ տղայ է. Մարթան նրա հետ բախտաւոր կը լինի. արի՛ երեխային տանք նրան:

Աննա. Մեր գլխից մի հարուստ փեսացուն կտրուե՞լ է, ի՞նչ է: Առանց էն էլ մեր տան մէջ նա մի բախտաւոր օր չի տեսել. ի՞նչն է ստիպում մեզ վաւազել: Փառք Աստծոյ, մի աղջիկ ունեմ, որ գեղեցկութիւնում հատը չը կայ:

Յակոբ. Գիտես Աննա, էդ բոլորը դու լաւ ես ասում: Ճշմարիտ է՝ վարպետ Մինասը հարուստ չէ, բայց նա շատ բարի և քրիստոնեայ տղայ է: Մի ձեռքի ջուր ունի, որ իսկի՛նչ՝ հեղած: Պէտք է տեսնել թէ երես վերանելուս նա ձեռքը ինչպէս քնքոյշ է շարժում: Երբեմն, հաւատացիր Անոյշ ջան ես էլ եմ գայթակղում և ուզում եմ միբուքս վեր անել տամ:

Աննա. է՛դ էր պակաս:

Յակոբ. Բացի էդ մէկը. նա կարողանում է բժշկութիւններ անել: (Մօտենալով). Նա շատ երիտասարդների է բժշկում՝ զանազան հիւանդութիւններից: Նա ասում է, քաղաքի երիտասարդների մէջ մէկն էլ չը կայ առողջ:

Աննա. Թո՛ղ թէ կուզ ինչ ուզում է լինի, ես քաղցածի մէկին աղջիկ չ'ունեմ տալու:

Յակոբ. Բայց ի՞նչ մեղք է եթէ նա քո ասած հարստութիւնը չ'ունի: Չէ՞ որ նա էլ մեզ նման մի մարդ է:

Աննա. Ես չեմ ասում թէ նա մեզնից վատ է: Բայց ախր սափրիչը ի՞նչ է, որ նրա ապրուստը ինչ լինի: Հիմայ տեսնում եմ, որ ամենքը փողի ետևից են վազ տալիս: Քո խելքդ էն առաջուայ ժամանակներին չը գնայ: Էն վաղ էր, որ մէկի աշխատանքով տասը մարդ էր ապրում: Փառք Աստծոյ, հօ աչքիդ առաջն ենք, հօ տեսնում ես, երեք հոգի գործում ենք գործում, իսկ չորսին բաւական չի լինում:

Յակոբ. Իհարկէ:

Աննա. Էդ ի՞նչ է մեր դրութիւնը: Մին տեղ դուրս գալու համար հագուստ չ'ունենք, մի մարդ տուններս մտնի, առաջը դնելու բան չ'ունենք, Տէրը մի արասցէ մէկներս հիւանդանայ, բժշկի փող չ'ունենք:

Յակոբ. Էդ մէկը ճշմարիտ է Աննա, սե օրի համար ոչինչ չ'ունենք, օր անում ենք, օր ուտում:

Աննա. Իսկ դու դեռ ասում ես տանենք երեխին մին սափրիչի տանք: Ի՞նչ օր, ի՞նչ քաղցրութիւն է գտնելու նա նրա տան: Շատ-շատ, նա էլ մեզ նման քաղցածի մէկն է էլի:

Յակոբ. Ես ոչինչ չեմ ասում Աննա, բայց քո էդ ասածներիցդ էլ ո՞վ է մեզ վրայ ուշք դարձնելու:

Աննա. Ո՞վ է իմանում, կարելի է մի բախտի դուռ էլ իմ երեխիս համար է բացուելու:

Յակոբ. Աստուած տայ Աննա, ես միշտ Նրան աղօթում եմ:

Աննա. Մտիկ արա. ես ուշանում եմ. հտքդ տնից դուրս չը դնես, մենակ չը թողնես նրան: (Մածուկ): Նրա մօտ բերան

չը բացես: (Ուսերին շալ գցելով կապոցը դրաւ զլիւն ու գնաց աջ
դռնով):

Տ Ե Ս Ի Լ 7

Յակոբ եւ Մարթա

Մարթա. Էդ թնչ էիք քչփչում մայրիկի հետ: (Արագու-
թաւք սեղանի վրայից բաները վերցնում եւ դնում է սնդուկ):

Յակոբ. Ոչինչ սիրելիս: Շալդ ուսերիդ գցիր:

Մարթա. Ինձ համար տաք է. ես չեմ մըսում: (Կարում է):

Յակոբ. Իսկ ես առանց վերաբերելի մըսում եմ: Կ'ուզե՞ս
Մարթա, քանի մայրդ տանը չէ, ես քեզ համար կարդամ Բա-
նին Աստծոյ խօսքը:

Մարթա. Կարդա՛:

Յակոբ. Իմ թանկագին Մարթա. ես քեզ շատ եմ սի-
սում, դու սիրում ես ինձ ականջ դնել:

Մարթա. Հէնց դրձ համար ես սիրում:

Յակոբ. Ձէ հոգիս. և նրա համար, որ դձ էլ էս տան
աշխատաւորներից մէկն ես: Գուցէ էս ամառը ես էլ կարողա-
նամ մի գործի կաշել: Ձեմ հասկանում, ինչո՞ւ եմ էսքան թոյլ:

Մարթա. Երեւի շատ ես չարչարուել կեանքումդ:

Յակոբ. Էնքան: Մի անգամ ձիախառն գետն է քշել ինձ,
մի անգամ էլ Ասատուրի հետ ձիւնի տակ եմ գիշերել:

Մարթա. Աւելի լաւ է էդպէս բաներ պատմես հայրիկ-
թէ չէ կարդացածիցդ ես ոչինչ չեմ հասկանում:

Յակոբ. Ասենք ես էլ էնքան չեմ հասկանում: Պէտք է
ասել շատ խրթին են գրում: Օրինակ մի տեղ ասուած է
«Դշխոյն հարաւու յարիցէ յաւուրն դատաստանի». բայց ես
չեմ հասկանում էդ դշխոները ինչ գործ ունեն սրա մէջ: Իսկ
էստեղ (ցոյց է տալիս զիրքը) պարզ ասուած է «Սաւուղ Սաւուղ,
զի՞ հալածես զիս»: Շատ քաղցր խօսքեր են Մարթա: Իսկ դու
ինչո՞ւ չես մէջքդ ծածկում, դու կարող ես մըսել: Ո՞ւր է շալդ-
երեւի անզգամն է տարել: Իսկ դուք ինձանից ծածկում էք:
Սպասէք, ես կը յայտնեմ պալիցիային, թէ չէ նա մեզ բոլո-
րովին կը քանդի:

Մարթա. Մի բարկանաւ հայրիկ: Ապա դու ասում էիր
որ սիրում ես քաջ մարդկանց. չէ՞ որ Սերոբն էլ քաջ է:

Յակոբ. Ախր ինչի՞ս է պէտք նրա քաջութիւնը: Քաջ է,
թող նա իր քաջութիւնը տանի մի ուրիշ լաւ բանի մէջ ցոյց

տայ, և ոչ թէ մեզ պէս զրկուածի վերջին պատառը զողանայ: (Վերկենալով): Ախ փչացած, ախ անզգամ, ես քեզ ցոյց կը տամ:

Տ Ե Ս Ի Լ 8

Յակոբ, Մարթա եւ Սերոբ

Սերոբ. (Աջ դռնից շալը ուտերին մտաւ): Կէցցէ հայրիկ, կէցցէ: Տաք-տաք խօսիր, որ չը մըսես, թէ չէ դըստում փափուկ ցուրտ է:

Յակոբ. Ի՞նչու ես նրա շալը վերցրել. տճւր էս՝ բոպէիս, տո՛ւր ասում եմ:

Սերոբ. (Հրելով նրան). Սպասիր ծերունկ: Դու տեսնում ես, որ ես խղճացել եմ նրան և յետ բերել (Շալը դցում է Մարթայի վրայ):

Յակոբ. Մարթա, դու տեսա՞ր. նա ինձ վրայ ձեռք բարձրացրուց:

Մարթա. Ինչպէ՞ս ես համարձակուում հայրիկի վրայ ձեռք բարձրացնել:

Սերոբ. Ոչինչ, նա շատ է ինձ ճիպոտի տակ ճղճղացրել: Ինչպէ՞ս է. տեսնում ես: Բանը որ ոյժի ընկաւ ինձ ոչինչ չես կարող անել: Ձե՞ս իմանում, որ պառաւը երեխայացել է, իսկ երեխան (կրծքին խփելով) տղամարդ է դառել:

Յակոբ. Մի պարծենալ կրծքովդ. քեզնից պակաս տղամարդ չեմ եղել ես: Հարցրո՛ւ Ասատուրին: Պարծեցի՛ր մի լաւ բանով: Աւելի լաւ է ամաչես տափը մտնես: Ո՞վ է տեսել որ քեզ նման տղամարդը անգործ թափառի:

Սերոբ. Ինչո՞ւ ուսում չը տուիր, որ ես էլ խելօք տղայ դուրս գայի:

Յակոբ. Միթէ՞ ամենքը ուսում ունեն: Միթէ՞ Ներսէսը ուսում ունի: Գոնէ մի ձիու չափ էլ չը կաս: Ձին բանում է և ուսում, իսկ դ՞ու:

Սերոբ. Ա՛, ուրեմն դու ուզում ես, որ ես մի ձի դառնամ:

Յակոբ. Ուզում եմ, որ մարդ դառնաս:

Սերոբ. Պարզ ասա, կ'ուզէիր ինձնից ի՞նչ լինէր քեզ համար:

Յակոբ. Ես ինձ համար չեմ ասում, այլ քեզ համար: Միւնոյն է մենք վաղը միւս օրը գերեզման ենք մտնելու, ո՞վ պէտք է վառ պահի մեր տան կրակը, (յուզուած) էս՝ մարդուղ ճրագը:

Սերոբ. Դու կարծում ես ինձ նմանները նամուս չ'ունեն, ոչինչ չեն մտածում:

Յակոբ. Ասա ինձ ի՞նչ են մտածում նրանք:

Սերոբ. Ախր դու կարծում ես, որ եթէ ես էլ ներսէսի պէս մի կտոր ցամաք հացի համար գնայի մի թամբաքուրի ֆաբրիկում ոսկոռ փթեցնէի, կեանք մաշեցնէի, ես էլ լաւ մարդ կը դառնայի: Ախր էդ սխալ է:

Յակոբ. Ես հօ քեզ անպատճառ թամբաքուրի գործարան չեմ ասում:

Սերոբ. Բայց չէ՞ որ, ուր էլ գնաս, ինչ որ էլ անես, էլի մի կտոր հացի համար ես անելու: Վերջապէս չէ՞ որ քո ասած ձիւի և մարդի մէջ մի զանազանութիւն պէտք է լինի:

Յակոբ. Յետոյ:

Սերոբ. Յետոյ էն, որ դու ուզում ես, ես մի ձի դառնամ, իսկ ես էդ բանը չեմ կարող:

Յակոբ. Ուրեմն մենք որ բան ենք անում մարդ չենք:

Սերոբ. Հէնց բանն էլ էդ է, որ մարդ ենք, բայց միմեանց նման չենք: Սրա համար էլ դու Բանին Աստծոյ խօսքի մէջ ես հանգստութիւն գտնում. մէկը ձիու նման բան անելի մէջ, իսկ ես մի ուրիշ բանի մէջ:

Յակոբ. Իսկ դու պարզ ասա, շարլատանութեան մէջ:

Սերոբ. Վնաս չ'ունի. թող քո ասածդ լինի: Չէս ուզում շարլատաններ լինեն, փոխի կեանքը: Թող ամենքը ձի դառնան, աչքիս վրայ, ես էլ ձի կը դառնամ: Բայց որ ես ձի դառնամ ուրիշները իմ մէջքին նստելու համար, էդ մէկը ներես, ես չեմ կարող:

Յակոբ. Բայց մէթէ մենք կարող ենք կեանքը փոխել: Ամեն ինչ Նրա ձեռքին է, նա է տնօրինում մեր վիճակը:

Սերոբ. Սուտ է: Նա ոչինչ բանից տեղեկութիւն չ'ունի: Մենք ինքներս ենք ամեն բան մեր սրտի ուզածի պէս ծռում:

Յակոբ. Ծռում, մենք: Մարթա, լսում ես ինչպէս նա մեղանշում է:

Սերոբ. Այ դուք ամենքդ էլ էդպէս էք: Երբ մարդս ուզում է մի ճշմարիտ բան անել, ծռուը ուղղել, դուք իսկոյն ձայներդ գլխներդ էք գցում թէ «խառնակիչ է նա, փուչ է նա»: Բայց չէ՞ որ պէտք է մի նրան էլ լսել թէ ինչո՞ւ է նա էդպէս:

Յակոբ. Ի՞նչ ասեմ: Ինձ թւում է թէ քո ասածներիդ մէջ միտք կայ, թւում է որ և դատարկ խօսքեր են:

Սերոբ. Իսկ ինչ որ քեզ թւում է միայն, ինձ համար պարզ է Աստծոյ լոյսի պէս:

Յակոբ. Ես միայն մի բան կ'ուզէի, աղօթելով զարթնէիր քնից, առաւօտից մինչև երեկոյ քրտինք թափէիր, և անկողին մտնէիր աղօթելուց յետոյ, որպէսզի իմանայիր ինչի մէջն է կեանքի քաղցրութիւնը:

Սերոբ. Հնացած բաներ... Ես քեզ ասում եմ չեմ կարող, չեմ կարող:

Յակոբ. Անպիտան, դու միայն էն կարող ես, որ տան մէջ ոչինչ չես թողնում, ամեն ինչ գողանում ես: Սպասիր տես ես ինչպէս կը յայտնեմ պալիցիականներին:

Սերոբ. Ի զուր նեղութիւն կը քաշես. նրանք առանց քո ասելու էլ ինձ լաւ են ճանաչում:

Մարթա. Որտեղից են ճանաչում, ապեր:

Սերոբ. Ոչինչ. մի քանի գիշեր նրանց մօտ հիւր եմ եղել հրաւիրուած: Աւելի լաւ է Բանին Աստծոյ խօսքերից կարգաւ, ականջ դնենք:

Յակոբ. Եթէ դու ուզում ես Աստծոյ ճանապարհին գալ, ես կը կարդամ:

Սերոբ. (Մինչ Յակոբ գիրքը կը թերթի): Չայ խմել վերջացը՝ ընէ էք:

Մարթա. Նոր հաւաքեցինք:

Սերոբ. Մայրիկը տանը չէ:

Մարթա. Շորեր է տարել: Որտեղ ես եղել գիշերը ապեր:

Սերոբ. Գարման շինող Գաւրուշի խանութի ետևում: Պէտք է ասել էստեղ էլ շատ տաք չէր: Հա յետոյ հայրիկ Կուռնելիոս հարիւրապետը գնաց Երուսաղէմ... (Մտնում է վարագոյրի ետևը):

Յակոբ. Մի մտնիլ էստեղ:

Մարթա. (Մածուկ): Մի վախիլ, էստեղ ոչինչ չը կայ:

Յակոբ. Դուքս եկ էստեղից: (Յարձակում է վրան, վարագոյրի ետևում երեւում է, որ իրար հրում են): Դու իրաւունք չ'ունես:

Սերոբ. Ա՛, թող տեսնեմ, ես հաց եմ ուզում (Երեւում է ինչպէս գցեց մի կողմը բարձր):

Յակոբ. Հեռու ասում եմ:

Սերոբ. Եւ քաղցած եմ, լսում ես:

Մարթա. Էստեղ հաց չը կայ:

Սերոբ. (Դուրս գալով): Որտեղ է հացը:

Յակոբ. (Նոյնպէս): Քեզ հաց չը կայ (Նստում է սնդուկի վրայ): Կարող ես գնալ ինքդ աշխատել և ուտել:

Սերոբ. Իսկ... քեզ... կայ:

Յակոբ. Դու ճշմարիտ ես ասում: Բայց չէ որ մի ժամանակ ձեզ ամենքիդ ես էի պահում:

Սերոբ. Վնաս չ'ունի, ես էս օր ծոմ կը պահեմ: Դէ կարդա:

Յակոբ. Ես ոչինչ չեմ կարդալ:

Մարթա. Հայրիկ, խնդրում եմ վեր կաց... Թող նա ուտէ իմ բաժինը:

Յակոբ. (Ձգացուած): Ձեռքիս կոշտուկները դեռ նոր են փափկել, իսկ նա ինձ մի աւելորդ բեռն է համարում: Տէրը իրան եղիցի. Թող ուտի: (Վեր է կենում եւ շրջում մի կողմ):

Սերոբ. Ուրեմն էստեղ է ամեն ինչ: Լաւ խելք էք բանեցրել ես ու իմ Աստուածը: (Մի կտոր բան դրում է բերանը եւ ծածկում սնդուկը): Նստի՛ր ծերուկ. սա ինձ բաւական է: (Մարթային ծածուկ): Բարձիդ տակին ոչինչ չը կար, հըր են փողերդ:

Մարթա. Ապեր ես փող չ'ունեմ:

Սերոբ. Մուտ ես ասում. փող տուր, թէ չէ ամեն ինչ կը փշրեմ տակն ու վրայ կ'անեմ:

Մարթա. Ի՞նչ ես անելու փողը:

Սերոբ. Էս երեկոյ Գաւրուշի մօտ մեծ խաղ կայ:

Մարթա. Թող էդ բանը, քո վարձուքովդ դու կը սպանես սրանց:

Սերոբ. Խրատը քեզ համար պահիր Մարթա, շուտ արա:

Մարթա. Եւ ոչինչ չ'ունեմ ապեր:

Սերոբ. Ա', մի երկարացնիլ: Ասում եմ քեզ շուտ արա:

Մարթա. (Ուզում է տալ): Կէսը ինձ, կէսը (Սերոբ բռնում է ձեռքերից): Ա' հայրիկ:

Յակոբ. Ձեռ մի տալ նրան, դադան:

Սերոբ. Ա' (Խլում է Մարթայի ձեռքից եւ փախչում աջ):

Տ Ե Ս Ի Լ 9

Յակոբ եւ Մարթա

Մարթա. (ձգում է): Ա':

Յակոբ. Ի՞նչ է սիրելիս. ես քեզ խփեց:

Մարթա. Ձէ նա փախաւ ես վախեցայ:

Յակոբ. Լաւ մտիկ արա, նա մի բան թողրած չը լինի:

Մարթա. Ոչ ամեն բան իր տեղն է:

Յակոբ. Ախ որտեղից եկաւ էդ լիբբը, ամեն ինչ տակն ու վրայ արաւ: Ձէ ես պէտք է բռնել տամ էդ աւազակին:

Մարթա. Հարկաւոր չի, հանդարտուիր:

Յակոբ. Ձի լինիլ... տէր Աստուած, աւաղակի ձեռքին գերի՞ պէտք է լինենք: (Դնում է աջ):

Տ Ե Ս Ի Լ 10

Մարթա, յետոյ Ալեքսանդր

Մարթա (Նայելով աջ դռան մէջ). Ախ Աստուած... էդ նա է: Է՛լի գալիս է (Շտապով նստում է, որպէս թէ ոչինչ չի տեսել):

Ալեքս. (Մտնում է աջ դռնից Չ արկղներ ձեռին): Ոսկի հար-
րեանունի, կարելի է շաբաթ է տուն էք հաւաքում, ես ձեզ
կը խանգարեմ:

Մարթա. Ոչ. մենք երեկոյեան ենք տուն հաւաքում: Հա-
մեցէք:

Ալեքս. Այդ Բնչ է. ցերեկով ճրագ: (Այդ սեղանի վրայ է
դնում արկղերը):

Մարթա. Սենեակը տաքացնելու համար է:

Ալեքս. Ոչ ոք չը կ'ա՞յ:

Մարթա. Ոչ:

Ալեքս. (Մտննալով): Ձեռք չես տալիս: (Բռնում է Մարթայի
մեկնած ձեռը): Ուղիղը ասա, այս բոլորիս մտքովդ Բնչ անցաւ:

Մարթա. Ոչինչ:

Ալեքս. Իսկ չէ՞ս ուզում իմանալ թէ իմ մտքովս ինչ ան-
ցաւ:

Մարթա. Ձեմ իմանում:

Ալեքս. Էհ ինչէ: Կարելի է դու նեղանում ես, որ ես քո
ձեռը բռնել եմ:

Մարթա. Բաց թողէք:

Ալեքս. (Փողնելով): Դու չէ՞ս նեղանալ, եթէ ես քեզ մի ըն-
ծայ տամ: Նայի՛ր: (Յոյց է տալիս մի ոսկի բան):

Մարթա. Ես պահելու տեղ չ'ունեմ:

Ալեքսանդր. Բայց այդպիսի նուէրը պահում են կրծքի
վրայ:

Մարթա. Ոչ ոչ... մայրս կը տեսնի, ես չեմ ուզում:

Ալեքսանդր. Ինչպէ՞ս, դու ինձ արհամարհում ես:

Մարթա. Յետոյ, յետոյ:

Ալեքսանդր. Լաւ. թող յետոյ լինի: Շնոր ես վաստակում
կար անելով:

Մարթա. Էնքան, որ ապրում ենք:

Ալեքսանդր. Քեզ համար ես կարում:

Մարթա. Ոչ, ուրիշի համար:

Ալեքսանդր. Բայց մի ձեռք շքեղ զգեստ քեզ շատ կը սաղէր: Դու չե՞ս նեղանալ, եթէ ես քեզ համար մի շորացու ընծայ բերէի:

Մարթա. Է՞դ ինչ բան է: Ինչո՞ւ համար դուք ինձ համար շորացու առնէք:

Ալեքս. Ի՞նչ բան է որ: Այնքան այդպէս անողներ կան: Ի՞նչ գոյն ես սիրում:

Մարթա. Ես ոչինչ չեմ ուզում: Շնորհակալ եմ:

Ալեքս. Ի՞նչ է նշանակում անփորձութիւն:

Մարթա. Ես հօ չեմ կարող ծածուկ պահել, միւսնոյն է կ'իմանան:

Ալեքս. Իսկ մենք այդ բանը հօ ծածուկ չենք անի: Մի օր... այ երբ սրբոցն Աննայի և Մարթայի տօնը կը լինի, ես կը մտնեմ և կը շնորհաւորեմ ձեր տօնը:

Մարթա. Ոչ, իսէր Աստծոյ ոչինչ հարկաւոր չէ: Ինչպէս երևում է դուք դեռ չէք ճանաչում իմ եղբորը:

Ալեքս. Որի՞ն, էն միւսի՞ն: Էհ. նրա նմաններին բաւական է մի երկու բուբլի զինու փող տաս, և նրանք իրանց ծնողներին էլ կը ծախեն:

Մարթա. Ախ Աստուած մի արասցէ նա էդ բաները լսի: Աւելի լաւ է, ուրիշ բաներ խօսեցէք: Ծխախոտներդ վերջացել է:

Ալեքս. Ես չեմ ծխում:

Մարթա. Չէ՞ք ծխում: Ապա ինչո՞ւ էք եղբօրս ծխախոտ շինել տալիս:

Ալեքս. Ասում եմ հարեանիս որդին է, գործ տամ:

Մարթա. Երևի դուք վախենում էք ծնողներից, որ չէք ծխում:

Ալեքս. Ես նրանց միակ որդին եմ. նրանք երբէք չեն համարձակում կպչել եմ քէֆին: Ես ապրում եմ իմ ղուարճութեանս համար: Չե՞ս ուզիլ մի անգամ քեզ ինձ հետ ցիրկ տանեմ:

Մարթա. Ինձ ո՞վ կը թողնի ոտքս անից դուրս դնել:

Ալեքս. Բայց միթէ՞ հիմայ հին ժամանակներն է: Հիմայ աղջիկն էլ պէտք է ազատ լինի, ինչպէս և տղամարդը:

Մարթա. Ձեզ համար իհարկէ էդպէս է. դուք ազատ էք:

Ալեքս. Իմ ազատութիւնը իմ գոլութիւններն են: Դու չե՞ս հարցնում, թէ ի՞նչն է ստիպում ինձ գոլութիւններ անել:

Մարթա. Ասացէք էլի:

Ալեքս. Դու կարծում ես հեշտ է ասելը:

Մարթա. Դժուար է:

Ալեքս. Այ, դու ինքդ ասա: Այս մարդը չի ծխում. ի՞նչ գործ ունի նա մեր տան, ի՞նչ ոյժ է քաշում նրան այստեղ: Տեսնում ես. դու այդ գիտես, բայց չես ասիլ: Իմ սրտիս մէջ էլ շատ բան կայ քեզ ասելու: Բայց չեմ կարողանում: Տանջւում եմ, համբերութիւնս կտրւում է... Գալիս է լեզւին ծայրին կանգնում, և այնուհետեւ ես համրի նման մնում եմ լեզուս կապուած: Տեսնում եմ մի բան, հիանում եմ նրանով. նայում եմ նրա պատկերին և չեմ կշտանում: Եւ որովհետեւ լեզուս կապւում է, ես սկսում եմ զժութիւններ անել և հարբել:

Մարթա. Ի՞նչ բաներ էք ասում. մինչև անգամ հարբում էլ էք:

Ալեքս. Ինչո՞ւ համար ես զարմանում: Հեշտ է, որ ինձ նման երիտասարդը մի սրտի ընկեր չ'ունենայ:

Մարթա. Բայց կարծեմ ասացիք «կայ մի բան որով հիանում էք»:

Ալեքս. Այո, կայ:

Մարթա. Իսկ ի՞նչ է նա:

Ալեքս. Այդ դու ինքդ էլ գիտես: Եթէ իմ ոսկի հարեանուհուս հետաքրքրում է այդ բանը, ապա ես նրա առաջ կը բացեմ իմ սիրտը:

Մարթա. Բացեցէք էլի, ո՞վ է խնդարում:

Ալեքս. Բացե՛մ: Դու ինձնից չե՞ս նեղանալ, եթէ ես քեզ մի ճշմարիտ բան ասեմ:

Մարթա. Ըշմարիտ բանից ինչո՞ւ պիտի նեղանամ:

Ալեքս. Իմ թանգազին Մարթա, ես քեզ սիրում եմ:

Մարթա. Ի՞նչ ասացիք:

Ալեքս. Դու չէ՞ր սպասում:

Մարթա. Այո. ես չէի սպասում, որ դուք եկել էք մեզ ծաղրելու:

Ալեքս. Ծաղրելո՞ւ. քեզ նման գեղեցիկ արարածին ծաղըրելո՞ւ:

Մարթա. Իհարկէ: Միթէ՞ կարելի է հաւատալ:

Ալեքս. Փորձե՛լ ես ինձ, որ չը հաւատաս:

Մարթա. Ի՞նչ փորձել:

Ալեքս. Իհարկէ, քո աչքումմի սափրիչ Մինաս աւելի լաւ է, քան թէ ես: Զէ՞ որ հայրդ նրան երկինք է բարձրացնում:

Մարթա. Ի՞նչ էք ասում. ես բան չեմ հասկանում:

Ալեքս. Վնաս չ'ունէ: Գնա՛ նրան: Հ'մ, շատ լաւ ապրուստ, բախտաւորութիւն և պատիւ է սպասում քեզ նրա տանը: Կիրակի առաւօտները նրա գլխին ջուր կ'ածես, ոտները կը լուա-

հաս, շորերը կը լուանաս... մի խօսքով, ի՞նչ խօսք, որ սրանից հազար անգամ լաւ կ'ապրես:

Մարթա. Դուք շատ բան ասացիք, իսկ ես ոչինչ չը հասկացայ:

Ալեքս. Իհարկէ չը հասկանալու դիր քեզ: Սո՛ւտ է, որ քեզ սափրիչ Մինասին են տալու:

Մարթա. Եթէ ուզուողը ես եմ, ես բան չեմ իմանում:

Ալեքս. Իսկ եթէ քեզ հարցնէին մեր երկուսից որին ես աւելի հաւանում, ի՞նչ կը պատասխանէիր:

Մարթա. Ես ոչինչ չը գիտեմ, ես կը հարցնեմ իմ մօրս:

Ալեքս. (Վողմ): Սա բոլորովին երեխայ է: Բայց չէ՞ որ մինչ մեր ծնողները մենք պէտք է իրար հետ ծանօթ լինենք, իրար հետ ծածուկ տեսութիւններ անենք: Մենք հօ ժամանակից յետ մընալ չենք կարող: Այ եթէ դու ինձ սիրէիր, ես քեզ կ'ասէի թէ ինչ պէտք է անենք: Սիրում ես ինձ:

Մարթա. Ասացէք էլի:

Ալեքս. Մարթա. մաքուր սիրով սիրում եմ քեզ. խօսք տո՛ւր, որ երբ կը լսես իմ ձայնը կը դաս ինձ հետ ծածուկ տեսութեան: Ախ այնտեղ ես կը բացեմ իմ լեզուն, այնտեղ դու կ'իմանաս թէ ինչքան եմ տանջուել քո սիրով:

Մարթա. Յետոյ յետոյ:

Ալեքս. Խօսք տո՛ւր, որ կը մերժես այդ սափրիչին: Թէ չէ երդում եմ քո սիրով, այդ նրան էժան չի նստի, ես նրան կ'ոչնչացնեմ:

Մարթա. Լաւ լաւ բաւական է, խօսք եմ տալիս:

Տ Ե Ս Ի Լ 11

Աննա, Ալեքսանդր եւ Մարթա

Աննա. (Մտնում է աջ դռնից ձեռին փոքր կապոց): Ախ, պարոն Ալեքսանդր էդ դժու ես: Երևի ծխախոտդ վերջացել է:

Ալեքս. Այո. թող վարպետ Ներսէսը ինձ համար վաղը ծխախոտ պատրաստի:

Աննա. Շատ լաւ: Վերջացնի ես կը բերեմ:

Ալեքս. Ի՞նչ հարկաւոր է ձեզ նեղութիւն տալ, Աննա մայրիկ, ես ինքս կը գամ:

Աննա. Աստուած օրհնի քեզ քո բարութեանդ փոխարէն որդի:

Ալեքս. Միւս արկղն էլ կանֆետներ են օրիորդ Մարթայի համար: Մնաք բարեւ (Կնաց աջ)

Տ Ե Ս Ի Լ 12

Մարթա եւ Աննա

Աննա. Դուք մենակ էիք. ուր է հայրդ. քեզ չեմ տեսնում,
Ինչո՞ւ ես սուս արել:

Մարթա. Մայրիկ:

Աննա. Ի՞նչ է պատահել, Տէր Աստուած:

Մարթա. Մայրիկ. թէ կուզ ինձ կախ տուէք, թէ կուզ
սպանեցէք... Ես սափրիչին չեմ գնալ, չեմ գնալ (լալով գլուխը
ձածկում է մօր կրծքի վրայ), չեմ գնալ:

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Քեմը ներկայացնում է Տակորի բնակարանի բակը: Աջ կողմ տնակ իր դռնով:
Մէջտեղ նեղ դռնով տախտակի մի պատ, որի ետև պարտէզ: Մէջտեղ մի մեծ
ծառ, որի տակ սեղան և նոյն աթոռները: Ձախ կողմ ծառերով տարածութիւն:
Աջ կողմ տան մօտ ջրհոր և դոյլ թոկով: Գարուն է:

Տ Ե Ս Ի Լ 1

Մարթա եւ Ալեքսանդր

Մարթա. Երևի դու ուրիշների մօտ մի բան ասել ես:

Ալեքս. Միթէ՞ կարելի է այդպիսի բաները ուրիշներին
պատմել:

Մարթա. Ապա ինչո՞ւ են ինձ սկսել կասկածով մտիկ
անել:

Ալեքս. Այդ քո երկչոտ երևակայութիւնդ է Մարթա:
Դու հօ ինձ հաւատում ես:

Մարթա. Իհարկէ, բայց մինչև երբ պէտք է էսպէս շա-
րունակուի:

Ալեքս. Ես զարմանում եմ, էլ ի՞նչ ես ուզում, ես քեզ եմ
սիրում, դու ինձ:

Մարթա. Քեզ համար իհարկէ՞ էդ ոչինչ, բայց ի՞նձ
համար:

Ալեքս. Ախ Մարթա, ասում են սիրահարուածներից եր-
ջանիկ մարդիկ չը կան, իսկ դու զանգատում ես և զանգատ-
ւում:

Մարթա. Դու ասացիր մօրդ կ'ասես, ի՞նչ եղաւ, ինչո՞ւ
ես ուշացնում:

Ալեքս. Ի՞նչ է պատահել քեզ, որ այդքան շտապում ես:
Մօր ասաջ երես բացելը հեշտ ես խմանում:

Մարթա. Բաս ես ի՞նչ պիտի անեմ, եթէ իմ մայրս իմա-
նայ:

Ալեքս. Եթէ դու չ'ասես, որտեղից պիտի իմանայ:

Մարթա. Վերջը մի օր բացուելու է էլի. հօ էգպէս չի
մնալու:

Ալեքս. Էհ մի վախիլ Մարթա, բացուելուց յետոյ հեշտ
է. գիտես ինչ. եթէ բանը միայն մայրս լինէր, ոչինչ: Բայց
ես անպիտան հօրիցս եմ վախենում. ախ ինչո՞ւ մի կաթուած
չէ խփում, որ տեղն ու տեղը սպանի նրան:

Մարթա. Ինչե՞ր ես ասում դու քո հօր մասին:

Ալեքս. Ախ Մարթա, այն ժամանակ եթէ մայրս չ'ուզի
էլ, ես քեզ կը փախցնեմ մի ուրիշ տեղ. ախ ի՞նչ քաղցրու-
թիւն կայ այս տեսակ բաների մէջ, փախչել-փախցնել:

Մարթա. Դու բոլորովին փոխուել ես. դու էլ առաջուա-
նը չես:

Ալեքս. Է՛հ, ճանաչում եմ կանանց: Դուք բոլորդ էլ այդ-
պէս էք. մի ամիս, երկու ամիս, և յետոյ տղամարդը ձեզ հա-
մար փոխուած է: Մի հարցնող լինի ի՞նչն է իմ մէջ փոխուել:

Մարթա. Ախր չէ՞ որ առաջ դու էգպէս չէիր խօսում:
Չէ՞ որ դու ամեն բան վճռել էիր իսկոյն կատարել:

Ալեքս. Ի՞նչ անեմ, քո կարծիքով գնամ նրանց առաջ
ամեն բան պարզ ասեմ, քո պատճառաւ ի՞նչ էլ տնից դուրս
գցեն:

Մարթա. Ապա ինչո՞ւ դու ասում էիր քո գլխի վրայ
տէր չը կայ, և որ դու ապրում ես միայն քո զուարճութիւն-
ների համար:

Ալեքս. Իհարկէ, եթէ ես մի անխելք բան չ'անեմ, միշտ
կ'ապրեմ իմ զուարճութիւնների համար:

Մարթա. Ես հասկանում եմ... իհարկէ նրանք կ'ուզեն,
որ դու մի հարուստ աղջիկ ուզես:

Ալեքս. Այ տեսնում ես. դու այդ գիտես, բայց ասում
ես, շտապիր: (Մարթան լալիս է): Ինչո՞ւ ես լաց լինում:

Մարթա. Հիմայ ես բոլորը հասկացայ: Ես չեմ կարող...
ես ամեն բան կ'ասեմ իմ մօրս:

Ալեքս. Խելքդ գլուխդ հաւաքիր Մարթա:

Մարթա. Ինչ ուզում է թող լինի...

Ալեքս. Մարթա, հաւատացիր դու դեռ անփորձ ես: Իմ
սիրելի, դեռ ժամանակ շատ կայ, սրբի՛ր աչքերդ, թէ չէ կը
տեսնեն: Է՛հ: (Նստւած է ծախ կողմ):

Տ Ե Ս Ի Լ 2

Մարթա եւ Աննա.

Աննա. (Մտնում է միջի դռնից կապոց ձեռին): Էդ լո՞նչ էր, հը՞, ասա, էդ լո՞նչ էր: Դու լաց ես լինում:

Մարթա. Ո՞վ է լաց լինում. ես հէնց էնպէս:

Աննա. Նա լո՞նչ բան ունէր քեզ հետ:

Մարթա. Ես լո՞նչ գիտեմ:

Աննա. Լաւ է եթէ ոչինչ չես իմացել. բայց Աստուած մի արասցէ մի բան պատահած լինի: Շուտ արն ասա ինձ. սիրտս կը ճաքի եթէ չ'իմանամ ինչ է պատահել:

Մարթա. Նա ինձ սիրում է:

Աննա. Նա քեզ սիրում է:

Մարթա. Նա էդպէս է ասում:

Աննա. Բաս էլ արտասովորք ինչ է նշանակում:

Մարթա. Ոչինչ:

Աննա. Մարթա, աչքիս լաւ մտիկ արա: Ես երեխայ չեմ, էստեղ մի բան կայ, որ դու ինձնից թաղցնում ես:

Մարթա. Հաւատացիր ոչինչ չը կայ. նա խոստացել էր իմ վրայ պսակուել:

Աննա. Խոստացել էր: Ապա ինչո՞ւ նշան չի բերում. մենք ոչինչ ընդդէմ չ'ունենք:

Մարթա. Նա վախենում է ծնողներից:

Աննա. Տղամարդը վախենում է ծնողներից. իսկ դո՞ւ. իհարկէ դո՞ւ էլ ասած կը լինես նրան, որ դո՞ւ էլ ծնողներ ունես... Ես քեզ եմ հարցնում Մարթա:

Մարթա. Օխ, միք տանջիլ ինձ:

Աննա. Մարթա Աստուած մի արասցէ դու խաբուած լինես, ես կրակ կը բռնեմ և տեղովս-մէկ կ'այրուեմ:

Մարթա. Ի՞նչ անեմ:

Աննա. Աչքերդ լաւ բացիլ սիրելիս: Գիշեր ցերեկ աշխատութեան ձեռքին քեզ համար ենք չարչարում: Աչքս մենակ քեզ է տեսնում. այս տան բախտը դո՞ւ պէտք է բացես. դու հօ ամենքիս տեսնում ես. եթէ քեզ էլ մի բան պատահի էլ էն ժամանակ աւելի լաւ է մի քար կապեմ էս չորացած կուրծքիս ու ջուրը դցեմ ինձ խեղդեմ:

Մարթա. Ինչո՞ւ ես ինձ վախեցնում:

Աննա. Ես ուզում եմ քո աչքը բացեմ, իսկ դու ասում ես ես քեզ վախեցնում իմ:

Մարթա, Ի՞նչ մեղք եթէ նա երդում է, որ ինձ սիրում է:

Աննա, Իսկ դո՞ւ:

Մարթա, Ինչո՞ւ ես բարկանում:

Աննա, Ուրեմն դու հաւատացել ես նրա սուտ երդումներին:

Մարթա, Ի՞նչ ես ուզում ինձնից:

Աննա, Բոլորտ ընկնէր մարմնիդ մէջ, այ թէ ինչ եմ ուզում:

Տ Ե Ս Ի Լ 3

Մարթա, Աննա եւ Յակոբ

Յակոբ. (Մտնում է աջ դռնից): Ա՜ դուք էստե՞ղ էք: Ի՞նչ Աստծոյ օրհնած բանն է գարունը: Ես ինձ էնպէս եմ զգում, կարծես թէ նորից 30 տարեկան եմ դառել: Դեռ ամառը աւելի լաւ է: Փորձեմ մէկ ջուր քաշեմ (Ջուր է քաշում):

Աննա. (Յած): Թող կրակ մաղուի իմ սպիտակած գլուխին. թող պատուի գետինը և կուլ տայ մեզ ամենքիս: Սրա համար էր նա էդքան քսքսում, սրա համար էր նա բարերար ձեւանում: Ես նրան ցոյց կը տամ:

Մարթա. Մայրիկ խնդրում եմ մի խայտառակիլ. նա խօսք է տուել, նա չի խաբիլ:

Յակոբ. (Քաշեց : Ահա, տես՞ք: Չէ, հաւատացէ՛ք էս ամառը ես անպատճառ մի զործի պէտք է մոռնեմ: Մինչև ես մի զործի չը մոռնեմ, Ներսէսս չի կարող հանգստանալ: Բայց դուք ինչո՞ւ էք փոխուած: Մարթա, Աննա, Ի՞նչ է պատահել, ասացէ՛ք ինձ: (Փողոցի դուռը ծեծում են): Է՞դ ինչ է. փողոցի դուռը բաց է (Գնում է միջի դռնով):

Տ Ե Ս Ի Լ 4

Մարթա եւ Աննա

Աննա. Ի՞նչ պատասխան տամ էս խեղճին, դեռ ի՞նչ պէտք է պատասխանեմ էն միւսներին: Լաւ սևացրի՛ր օրներս:

Մարթա. Օ՜ մի սպանէ՛ք ինձ:

Աննա. Կորբի աչքիցս անզգամ. էլ այսուհետև չը համարձակուես ոտքդ տանից դուրս դնել: Տեսնում եմ,—ամօթ պատկառանքը ոտքի տակ ես տուել, էլ քեզ տանը պահել չի կարե-

լի առաջի պատահած կեղտոտ մշակ էլ որ լինի, պէտք է տալ տանի կորցնի քեզ հստեղից: Սև լինէր էն օրը որ քեզ ծնեցի:

Մարթա. Մայրիկ ինչէր ես ասում:

Աննա. Ձայնդ, անզգամ:

Տ Ե Ս Ի Լ 5

Մարթա, Աննա, Յակոբ եւ Ներսէս

Յակոբ. (Օգնելով Ներսէսին ներս է բերում միջի դռնով): Աննա, Ներսէսն է:

Աննա. (Սաստիկ վախեցած) Ի՞նչ է պատահել երեխիս:

Ներսէս. Մի վախենալ մայրիկ: Դռան մօտ մի քիչ ինձ վատ զգացի, սրա համար էլ դուռը ծեծեցի: Գարունը լաւ է, երբ մարդ ծառերի տակ է... իսկ էնտեղ... օխ մէկ հնար լինէր ազատուել էնտեղից: Էնտեղ կուրծքս բռնւում է, հազը սպանում է ինձ: Կարծես տաքութիւնս սաստկացել է. մէկ տես մայրիկ:

Աննա. (Բռնելով ձեռքը): Կրակի մէջ այրւում է երեխաս:

Յակոբ. Տունս քանդւում է. ես կը գնամ Միսասին կը փախչեմ. ես իսկոյն:

Աննա. Ո՞ւր ես գնում:

Յակոբ. Երեք բոպէ չի քաշիլ (Գնաց միջին դռնով):

Տ Ե Ս Ի Լ 6

Մարթա, Աննա եւ Ներսէս

Ներսէս. Մի լաց լինիլ մայրիկ. ես դեռ էնքան էլ վատ չեմ:

Աննա (Մարթային). Գնա անկողին պատրաստիր: Կորիր:

Ներսէս. Ո՛չ, սպասիր, հարկաւոր չի, թող նա ինձ մօտ նստի: Նրա քաղցր դէմքին մտիկ անելուս իմ հոգիս հանգստանում է: Ես ցերեկով քիչ եմ տեսնում նրա երեսը, իսկ գիշերը շուտ ենք պառկում քնելու: Նստիր ինձ մօտ Մարթա (Մարթան նստեց): Բայց դու գունատ ես: Թէ՞ իմ աչքերս են խառնուել: Ի՞նչ է պատահել սրան: Չը լինի ինձ համար էք վախեցել: Ոչինչ, հոգս մի անէք, թուքս դեռ չի կարմրել, սա կ'անցնի: Շատ անգամ է պատահում, կարծում ես հիւանդ ես, բայց դուրս է գալիս, որ բոլորովին առողջ ես: Օ՛խ ինչպէս ներսիս կրակը խօսեցնել է տալիս ինձ (Միծաղում է, որ փոխւում է չոր հագի):

Աննա. Քար կտրուէի ես, էդ ցաւերը չը տեսնէի որդի:
 Մարթա. Քիչ խօսիր ապեր, տեսնում ես, որ շլատում է:
 Ներսէս. Ախր ինչպէս լռեմ: Ես սիրում եմ խօսել, հա-
 նաքներ անել... Եթէ կարողութիւն ունենայինք, կը քաշուէի
 մի գիւղ տեղ, կը հանգստանայի ե... կարելի է լաւանայի՝ էլ:
 Էհ, աւելի լաւ էր մի հովիւ լինէի, երկրագործ, կառապան...
 Ի՞նչ եմ ասում մայրիկ: Դեռ, փառք Աստծոյ, ես 27 տարեկան
 եմ, բայց մեր գործարանում երեխաներից շատերը 20 տարուց
 աւել չեն ապրում: Խեղճերը կարմիր-կարմիր թշերով գալիս
 են, իսկ յետոյ, մնաք բարով խեղճ մայրեր: Մարթն մի սառը
 ջրով (Մարթան զնաց աջ դռնից բաժակ բերելու): Մայրիկ, ինչո՞ւ է
 նա փոխուած: Գոնէ նրան լաւ պահեցէք. նա մի գեղեցիկ
 վարդ է եւ թառամածներին մէջ: Ի՞նչ ենք մենք, մարդուդ
 ճրագներ:

Մարթա. (Կոյից ջուր առաւ բերաւ) Ձե՛ր շլատիլ ապեր:

Ներսէս. Ներսումս կրակ կայ, պէտք է հանգցնել էդ կը-
 րակը (Քիչ խմեց): Որտեղ է մնացել Սերոբը: Ի՞նչ լաւ կը լինէր
 մի օր էս մեր մեծ ծառի տակ մի ուրախութիւն անէինք: Երեւի
 շուտով կը գայ եւ թութի ժամանակը: Ձե՛ր, մայրիկ, ինչո՞ւ չէք
 խօսում:

Աննա. Իհարկէ մի 2 շաբթից յետոյ թութն էլ կը հասնի:

Ներսէս. (Քիչ էլ խմեց): Հիանալի է. առայժմ մարեց կը-
 րակը:

Տ Ե Ս Ի Լ 7

Մարթա, Աննա, Ներսէս, Յակոբ եւ Մինաս.

Յակոբ. Մտնում են միջի դռնից): Համեցէք: Աննա, վարպետ
 Մինասն է. իմ լաւ բարեկամը: Մօտեցի՛ր Մինաս. մի՛ ամաչիլ:

Մինաս. Բարի օր ձեզ: (Առանձնապէս տնդղում է Մարթային.
 ձեռ է տալիս ամենքին, վերջում Ներսէսին): Քեզ հետ հօ լաւ ծանօթ
 ենք Ներսէս ջան: Ձեռքդ տաք է երևում, ինչպէս ես զգում
 քեզ:

Ներսէս. Տաք՝ էնպէս, որ վերմակ հարկաւոր չէ:

Մինաս. Լաւ ես. մի՛ վախիլ:

Մարթա. Սառը ջուրը փռած չի նրան:

Մինաս. Ձէ, վարպետի աղջիկ. քանի որ քրտնած չի,
 փռած չ'ունի: Նրա ճարը հէնց էս քաղցր օդն է, որ կայ: Ի՞նչ
 անես թամբաբու հնարողի հէրն անիծուի: Էն զխկումից դժու էլ
 ես քաշում Ներսէս:

Ներսէս. Ձէ:

Մինաս. Վատն էլ հէնց էդ է է: Բաշողի վրայ էնքան հերգործութիւն չունի, ինչքան չը քաշողի վրայ: Էնպէս չէ՞ Ներսէս ջան:

Ներսէս. Լաւ ես նկատել:

Մինաս. Նկատելն էլ խօսք է: Ես ինձ վերայ եմ փորձել: Զխկումը մօտիս որ քաշում են, կամ գլուխս է պտտում, կամ ներսս շուռ գալիս:

Յակոբ. Աննա, նա ծխողներէց չէ:

Աննա. Երեւի ժամանակ չի ունենում:

Մինաս. Ժամանակ չ'ունենալն էլ խօսք է: Երես խօզելու մաշինը մեր տունն է քանդել: Էնպէս օր է լինում առաւօտից մինչ երեկոյ գործ չի լինում: Պարապ չը մնալու համար սկսում ես ածիլիդ սրել, որ իսկի չի էլ մտածել բխանալու: Մին մին կանֆէտ ուտողների փթած առամ քաշելն էլ որ չը լինի, օրերով պէտք է ճանձ քշես:

Մարթա. (Անզգուշութեամբ փռկեցնում է ու փախչում աջ, ուսկից յետոյ բերում է ինքնայեղը եւ զնում է սեղանի վրայ, յետոյ նորից յետ գնում):

Մինաս. (Յաճուկ Յակոբին Մարթայի հասցէին): Դուր եկաւ:

Յակոբ. (Նոյնպէս). Ձէ՞ որ երեխայ է:

Մինաս. Ձէ Ներսէս, որ դոխտորին կ'ուզես հարցրու. դու պէտք է դուրս գաս էդ անիծուած թամբաքուրի ֆաբրիկից:

Ներսէս. Ես էլ եմ նոյնը մտածում վարպետ Մինաս, բայց որտեղից հաց ճարենք էս պարոնների համար:

Յակոբ. Ձէ Ներսէս, օրերը մի քիչ էլ տաքացան թէ չէ, ես անպատճառ մի գործի կը մտնեմ, թող թէ կուզ փողոցներ սրբել տան ինձ: Եղած չեղածներս կը ծախեմ, պարտքի տակ կը մտնեմ, բայց քեզ էդ օրի չեմ թողնիլ: (Մինասին ծածուկ): Դու հարցրու, մի քաշուիլ, երիտասարդ է, ո՞վ գիտէ. կարելի է նա մեզնից ծածկում է իրա իսկական ցաւը:

Մինաս. (Նոյնպէս): Խեղքս բան չի կտրում, Ներսէսը էնպէս տղայ չի. բայց կարելի է փորձել: Ներսէս ջան ես քեզ հետ մի 2 ծածուկ խօսք ունեմ:

Ներսէս. Ի՞նչն հետ. համեցէք (Գնում են միջի դռնով):

Տ Ե Ս Ի Լ 8

Աննա եւ Յակոբ

Յակոբ. Աննա, դու ինձ վախեցնում ես, էդ ի՞նչ աչք ունք է քեզանում:

Աննա. Ոչինչ.

Յակոբ. Ձէ, մի ասիլ. տեսնում եմ, որ մի ծածուկ միտք ուտում է ներսդ: Ասա ինձ:

Աննա. Դու ասում ես էդ Մինասը լաւ տղայ է:

Յակոբ. Հա, Աննա, մի նեղանալ: Ես ուզում եմ, որ առաջինը նա մի լաւ գննի մեր Ներսէսի հիւանդութիւնը. երկրորդ, նա ուզում էր փոքր լաւ ծանօթանալ Մարթայիս հետ: Նա իրա վարպետութիւնով էնպէս օր է լինում, Յ բուբլի է աշխատում, հանաք չ'իմանաս: Բացի էդ մէկը, գիւղում նրանք յայտնի տուն են, չեմ իմանում քանի հատ հէնց գութան ունեն, քանի հատ եզն և մեղրածանձ: Տարեկան քանի բեռն հէնց զինի են ուղարկում Նիժնի:

Աննա. Եթէ դու լաւ ես ճանաչում, էլ ես ի՞նչ ասեմ:

Յակոբ. Աննա երեւի քեզ էլ է դուր եկել: Արի երեխին տանք նրան: Ես քեզ հաւատացնում եմ, որ նա իմ աչքում հազար անգամ բարձր է մեր, էս քաղաքի խմող, խաղացող և վատ հիւանդութիւնների տէր տղերքից:

Աննա. Ի՞նչ ասեմ, ես ասացի մի կարգին մարդ լինէր, որ նա էլ մի լաւ օր տեսնէր:

Յակոբ. Բայց դու ինձանից մի բան ծածկում ես, չը լինի Սերոբն է բռնուել... ասա...

Աննա. Բերանս խօսք չի գալիս, մօրդ:

Տ Ե Ս Ի Լ 9

Աննա, Յակոբ, Ներսէս, Մարթա եւ Ալեքսանդր

Ներսէս. (Յիծաղելով մտնում է միջի դռնով): Շատ հանաքչին է վարպետ Մինասը, հայրիկ (Մտնում է Մարթան աջից եւ թէյի մօտ նստում):

Յակոբ. Օ՜ նա շատ լաւ տղայ է, ի՞նչ է, ռւր գնաց նա, դու նրան չայի չը կանչեցի՞ր:

Ներսէս. Նա իմ ասելու չը սպասեց էլ: Նա ասաց էս

ըոպէիս կը գամ, և դոխտորական վարձիս տեղ մի լաւ չայ կը խմեմ ձեզ մօտ:

Յակոբ. Էդպէս է. նա չ'ունեւորներից փող չի վերցնում, միշտ ասում է, «Վնաս չ'ունի, մնայ, երբ կը հարստանաք, կը վճարէք»:

Ալեքս. (Մտնում է ձախ կողմից): Ոսկի հարեաններ, հիւր չէ՞ք ընդունիլ:

Յակոբ. Հիւրը Աստծունն է, ինչո՞ւ չենք ընդունիլ:

Ալեքս. (Չեոք բռնելով Յակոբի հետ): Չէ, դեռ պինդ ես ծեւրուկ:

Յակոբ. Լաւ եմ: Ամառը մտադիր եմ մի գործի մտնել:

Ալեքս. Այո՞. այդ լաւ կը լինի:

Յակոբ. Ի՞նչ պէտք է անես, մեր ճակատին էդպէս է գրուած. քանի ոյժ կայ, պէտք է գործես:

Ալեքս. Աստուած պահի, դու դեռ աշխատող ձեռքեր ունես:

Յակոբ. Բայց ծայրը ծայրին դժուար է կաշուծ: Ուրիշ բան է ձեր գործը:

Ալեքս. Էհ, այդ ճշմարիտ կը լինէր, եթէ սանձս ծնողներու ձեռքին չը լինէր:

Յակոբ. Ես ձեզ կ'ասեմ, լաւ է, երբ որդին ծնողի խօսքից չի դուրս գալիս:

Ալեքս. Դէ ա՛յն ժամանակ թող ես կոյր ծնուէի, խնւ ծնուէի, քանի որ ես իրաւունք չ'ունեմ ասելու, որ սա աւելի գեղեցիկ է քան թէ միւսը, որ սա աւելի է ինձ դուր գալիս, քան ձեր ասածը:

Յակոբ. Չէ պարոն: Որդին երբէք հօր ցոյց տուած ճանապարհից չը պէտք է դուրս գայ: Ի՞նչ է երիտասարդը, եթէ նրա արիւնի մէջ մի քիչ բնական աղնութիւն կայ, էդ ուրիշ բան. բայց եթէ չը կայ, ուղղակի գլուխը պէտք է կապած պահես. որովհետեւ ի՞նչ զանազանութիւն կայ նրա՝ կամ թէ մի շունի մէջ: Իսկ ի՞նչ է շունը. բաց թող փողոց և կը տեսնես որ իսկոյն նա իրա շնութիւնը արաւ:

Ալեքս. Բայց եթէ մի հարուստի որդի,—ես իհարկէ օրինակի համար եմ ասում,—եթէ նա սիրել է մի աղքատի աղջիկ, իսկ հայրը նրան ասում է «Կորիւր», շուն, չը համարձակուես. և եթէ դու իմ կամքին հակառակ կը զնաս, ես քեզ կը զրկեմ հայրական ժառանգութիւնից և տանից դուրս կը վռնդեմ»:

Յակոբ. Եթէ ես իմանայի թէ ով է էն հարուստը, ես նրա ճակատին կ'ասէի, որ Ինքը Աստծոյ Որդին ոչ ոքից չէր

քաշուում և միշտ աղքատներին հետ էր նստում վեր կենում:
Բնա:

Ալեքս. Ուրեմն:

Յակոբ. Ուրեմն էն, որ խօսքը աղքատութիւնի մասին չը
պէտք է լինի, այլ անարատ անունի մասին: Դուք ասացիք օ-
րինակի համար, ես էլ կ'ասեմ: Իմացած եղէք պարոն, որ ոչ
մէկ մարդից ես չեմ ամաչիլ, որ ես աղքատ եմ. բայց թող վայ
լինի մեր գլխին էն օրը, երբ որ իմ ընտանիքից մէկնումէկը
փողի համար իրա պատիւը կը ծախի:

Ալեքս. Կարծեմ դուք մի որդի ունէք:

Յակոբ. Երեսովս էք տալիս. ի՞նչ արած, որ իմ պատա-
ռիս մէջ էլ մի կեղտ է դուրս եկել: Բայց նրա փչացնողը եղել
է փողոցը, և ոչ թէ իմ տունը: Իմ տանս մէջ, ահա, դուք տես-
նում էք, ձեր աչքի առաջ են. սրանք բացի Աստծոյ խօսքը,
ուրիշ բան չեն լսել:

Աննա. (Ալեքսանդրին ծածուկ): Ես ձեզ հետ ծածուկ խօսք
ունեմ:

Ալեքս. Ի՞նչ հետ, խնդրեմ:

Մարթա. (Ծածուկ): Մայրիկ, խնայիր ինձ ի սէր...

Աննա. (Նոյնպէս): Չայնդ անդգամ (զնացին ձախ կողմ):

Ներսէս. (Հօրը ծածուկ): Էստեղ մի բան կայ...

Յակոբ. Մէկ էս կողմ քաշուենք (զնացին աջ կողմ):

Մարթա. (Մենակ): Ա՛հ. բաւական է. պէտք է վերջ դնել
էդ խայտառակութեան, պէտք է ազատել ինձ էդ կրակից... էլ
ամեն ինչ կորաւ գնաց ինձ համար... Թող խաւարուի իմ
կեանքիս արեւը... (ջրհորի մօտ)... Ներքիւր ինձ, Աստուած... ես իմ
արածս չեմ հասկացել... Ա՛հ... չեմ կարող, չեմ կարող, չեմ
կարող (աղիողորմ լալիս է):

Տ Ե Ս Ի Լ 10

Մարթա եւ Մինաս

Մինաս. (Միջին դռնից թաշկինակի մէջ մեղր ու բաղարջ ձեռին):
Վարպետ-Յակոբի աղջիկ: Չե՞ս նեղանալ, եթէ մեղր ու (թաշկի-
նակը բացելով) բաղարջ համեցէք անեմ: Հարուստը աւելորդից,
խսկ մենք Աստծոյ տուածից. խնդրեմ ներողութիւն:

Մարթա. Շնորհակալ եմ, դէք էստեղ (Մինասը դրեց սե-
ղանի ծայրին):

Մինաս. Ես քեզ հետ թէպէտև շատ մօտ չեմ, բայց հէրդ

էնքան է պատմել, որ հէնց իմանաս թէ մենք շատ հին ճանանչներ ենք: Ղորթը ասա, իմ մասիս հէրդ քեզ իսկի բան չի՞ ասել:

Մարթա. Ասել է:

Մինաս. Ղորթ: Ի՞նչ է ասել:

Մարթա. Որ դուք կարողանում էք շատ լաւ քիթ ու պոռնգներդ ծոմոտել և գոմէշների հետ կուշտի կաշել:

Մինաս. Հա հա հա: Էդ մէկը լաւ է ասել. սրանք ինձանումը կան:

Մարթա. Որ դուք աներեսի նման մտնում էք էստեղ, որտեղ ձեզ չեն համեցէք արել, խօսեցնում էք նրանց, որոնց հետ ծանօթ չէք:

Մինաս. Օ հօ հօ հօ. լաւ կոտրեցիր ինձ ես ու իմ Աստուածը: Լաւ, որ լսող չ'եղաւ: Բայց եթէ խելքս կրունկումս չի այլ թէ գլխիս մէջ, կարծեմ քիչ առաջ հէնց էստեղ ծանօթացանք և մին քիչ էլ ձեռքդ լաւ հուպ տուի:

Մարթա. Բայց էդ անքաղաքավարութիւնը բաւական չէր...

Մինաս. Էս մէկը ներես: (Խոնարհ) Կարելի է քեզ դուր չ'եկաւ իմ կոշտութիւնս, բայց սիրտս ուղիղ է, իսկ ուղիղ սիրտը քաղցր լեզուի հարկաւորութիւն չ'ունի: Սո՛ւտ եմ ասում:

Մարթա. Է՞լ ինչ:

Մինաս. Ի՞նչ ասեմ: Ի՞նքդ ես ասում, որ անամօթի մէկն եմ և որ մտել եմ մին տեղ, որտեղ իմ չափս չեմ հասկանում: Իհարկէ երեխան էլ է իմանում, որ ոսկին աւելի լաւ է, քան երկաթը, և որ սոխից շաքարը քաղցր է: Քո տեղը լինէի, ես էլ կ'ուզէի: Ո՞վ է սա, ունեցած չ'ունեցածը մին մկրատ է մին ածիլի: Սո՛ւտ եմ ասում:

Մարթա. Բաւական է ի սէր Աստծոյ. ինձ ի՞նչ թէ դուք ինչ ունէք:

Մինաս. Էդպէս շուտ գլուխդ տարի, հա: Մօրս կաթը վկայ, իմ միտքս էն չէր, որ քեզ բարկացնեմ:

Մարթա. Օ՛խ. ի՞նչ էք ուզում:

Մինաս. Ոչինչ. քո հրամանը:

Մարթա. Խօսեցէք էլի:

Մինաս. Ի՞նչ խօսեմ: Դու չայ համեցէք անելու տեղ. քիչ մնաց, որ բերած ամանս էլ գլխիս կոտրես:

Մարթա. Ներողութիւն:

Մինաս. Հա: Դէ էն ժամանակ դու էլ քո ծառայիդ ներելի, որ համարձակուեց քեզ աւելորդ գլխացաւանք տալ:

Մարթա. Երևի մի ասելիք ունէիք:

Մինաս. Վարպետ-Յակոբի աղջիկ, եկ դու լինես էս սուրբ մեռնը, մի բարկանալ մի բան ասեմ:

Մարթա. Դէ ասացէք էլի:

Մինաս. Ինչո՞ւ ես էսքան տխուր: Եթէ Սերոբի համար է, հոգս մի անիլ, մին կերպ ճանապարհի կը բերենք, եթէ հօրդ ու մօրդ համար է, դէ ծեր մարդկանց համար լո՞ւն հոգս, եթէ Ներսէսի համար է, միամիտ եղի՛ր, ես նրան կը լաւացնեմ, իսկ եթէ քեզ համար է...

Մարթա. Ի՞նչ:

Մինաս. Ոչինչ, որովհետեւ ես վախենում եմ, ինձ համար լինի:

Մարթա. Ինչո՞ւ ձեզ համար պէտք է լինի:

Մինաս. Ի՞նչ գիտեմ, ասում եմ չը լինի թէ փոխուելով հիմի մտքումդ ասում լինես,—«Խեղճ տղայ, եկել է առաջիս մոմի նման հալուում է, ամօթից ճաքճաքին է գալիս, բայց չի կարողանում մի բերան մի խօսք ասի թէ, այ աղջիկ ես քեզ սիրելուց մեռայ, մեռայ, մեռայ:

Մարթա. (Գուռն ծիծաղով): Այ անամօթ, աներես (աչքերը ծածկում է):

Տ Ե Ս Ի Լ 11

Մարթա, Մինաս, Յակոբ եւ Ներսէս, յետոյ Աննա եւ Ալեքսանդր

Յակոբ. (Աջ կողմից): Ա՛ վարպետ Մինաս, դու արդէն եկե՞լ ես. էդ լաւ եղաւ: Քո ասածիդ պէս եղաւ: Ներսէս, կը նըստենք մեր մեծ ծառի տակ և ուրախ-ուրախ թէյ կը խմենք:

Ներսէս. Համեցէք վարպետ: Էդ լո՞ւն է մեղը ու բաղարջ: Ինձ փնաս չէ՞, վարպետ:

Մինաս. Ոչ թէ քեզ, քրոջդ էլ փնաս չէ:

Ներսէս. Ի՞նչ է ասում, Մարթա:

Յակոբ. Մի խանգարիլ նրանց (Ալեքսանդրին որ Աննայի հետ մտաւ ծախից): Ա՛, համեցէք, Աննա, լո՞ւն էիք խօսում պարոնի հետ:

Աննա. Ոչինչ, դու թէյդ խմի՛ր:

Յակոբ. (Ալեքսանդրին): Չէ՞ք կամենում մի բաժակ թէյ: Համեցէք Աստուծոյ տուածից անոյշ արէք: Բայց որովհետեւ լաւ տանտիրոջ պարտաւորութիւնն է սեղանի պակասութիւնը

քաղցր խօսքերով լրացնի, ես էլ ձեզ համար կը խօսեմ Բանին Աստծոյ խօսքը:

Մինաս, եդ մէկը լաւ է. ես ուրախութիւնով աւանջ կը դնեմ:

Յակոբ. Սրա համար էլ ես քեզ հաւանում եմ Մինաս: Իսկ դուք պարոն, կարելի է ձեզ ձանձրալի թւայ. գիտէ՞ք, հարուստները մի քիչ դէպի Աստծոյ խօսքը սառն են լինում:

Ներսէս. Շատ հասկանալի է հայրիկ. Բնչ խնդրեն, երբ ամեն բան ունեն:

Յակոբ. Իսկ արքայութիւնը: Միթէ հանդերձեալ կեանք չը կայ:

Մինաս. Սրա համար էլ ասուած է, «ուղտը ասեղի ծա-
կով անց կը կենայ, իսկ հարուստը արքայութեան դռնով ոչ»:

Աննա. Աւելի լաւ է ուրիշ բան խօսէք:

Ներսէս. Մի նեղանալ, թող խօսի հայրիկը:

Յակոբ. (Դրքի մէջ ցոյց տալով): Տեսէ՞ք էստեղ ինչ լաւ է ասուած: Երբ կը կանգնես Նրա առաջ, Նա քեզ չի ասի, կուշտ ես եղել թէ հագուած: Նա քեզ կ'ասի, «Երբ է քո գործը, «Երբ է քո գործը: Ես ասում եմ քեզ, մարդ, կը դողաս Նրա առաջ, կը դողաս: Երանի նրան որ կը խնամէ բանտում լինողին, որ ջուր կը տայ ծարաւին:

Աննա. Հէրիք է. քիչ տաքացիր, կը փնասի քեզ:

Յակոբ. Նա կը պատժի չարին, իսկ բարիին կ'ասի, «Երբ է քո գործը: Օ՛, օրհնեցէ՛ք Տէրի անունը յաւիտենից յաւիտեան:

Աննա. Վերջացրո՛ւ մարդ, բաւական է:

Յակոբ. Զարհուրելի է, քարոզիչը բերան է բացում թէ չէ, մէկ էլ տեսնես մենակ է մնացել: Աննա, սա լաւ բան չէ, դու ոչ աղօթք ես սիրում, ոչ Աստծոյ խօսքը:

Ներսէս. Մայրիկը գործի ձեռքից երբ է ազատ շունչ քաշում, որ աղօթքի մասին մտածի:

Յակոբ. Դէ ես մեղայ Աստծոյ, դուք խօսեցէք:

Տ Ե Ս Ի Լ 12

Աննա, Մարթա, Մինաս, Յակոբ, Ալեքս., Ներսէս եւ Սերոբ

Սերոբ. (Մտնում է միջի դռնից): Էստեղ մէկը աւելորդ է:

Յակոբ. Էստեղ ոչ ոք աւելորդ չը կայ. էստեղ աւելորդը միայն դու ես: Կորիք հեռացիր էստեղից:

Սերոբ. Էստեղ մէկը աւելորդ է, ասում եմ:

Մինաս. Կարելի է ես եմ աւելորդը, ես իսկոյն (ուզում է վերկենալ):

Յակոբ. Խնդրում եմ նստիլ: Նա ի՞նչ իրաւունք ունի: Դու ի՞նչ իրաւունք ունես:

Սերոբ. Իմ իրաւունքիս վկայականը էստեղ է (ցոյց է տալիս պիջակի տակ):

Յակոբ. Սուր առնողը սրով կը սպանուի:

Ներսէս. Հանգստացիր հայրիկ. թող նա նստի մեզ հետ. մոռացածը քարոզդ:

Յակոբ. Տէրը ձեզ եղիցի, նստում է, թող նստի:

Ներսէս. Մարթա, չայ ածա՛ն Սերոբի համար:

Սերոբ. Նեղութիւն մի՞ք քաշիլ: Դուք կարծում էք իմ կոկորդով էսօր չա՞յ կը գնայ: Դէ՛հ. էլ ո՞վ ինչ ունի ասելու թող վերջացնի:

Ալեքս. Է՛հ. ինձ ներեցէք (ուզում է գնալ):

Սերոբ. Սպասեցէք պարոն, ես ձեզ հետ խօսք ունեմ:

Ալեքս. Յետոյ կը տեսնուենք:

Սերոբ. Ձէ. ես «յետոյ» սիրողներից չեմ: Պարոն դոկտօրը, չը վերջացրի՞ր էդ դեղին ջուրը:

Մինաս. Ըհ՛ը՛. վերջացրի:

Սերոբ. Էլ խօսք չ'ունե՞ս ասելու:

Մինաս. Շատ էլ ունեմ, քանի որ դանակը կոկորդիս ես դրել, յետոյ:

Սերոբ. Դէ՛հ, ցոյց տո՛ւր քաղաքավարութիւնդ:

Մինաս. Ես իմ քաղաքավարութիւնս ցոյց կը տամ, բայց քունը մին քաղաքավարութիւն չէ (գնաց միջի դռնով):

Տ Ե Ս Ի Լ 13

Աննա, Յակոբ, Ներսէս, Ալեքսանդր, Մարթա եւ Սերոբ

Յակոբ. Քեզ ո՞վ իրաւունք տուաւ իմ հիւրիս փախցընելի:

Սերոբ. Ինձ իրաւունք տուողը մեր ընտանիքի պատին է ձերուկ:

Յակոբ. Ի՞նչ:

Սերոբ. Այ՛ո. ես անառակ եմ, ես շառլատան եմ, բայց տեսնում ես էս մուշտին: Քիչ ատամներ չի թափել նա, երբ նրանց ետեւում մի չար լեզու համարձակուել է յիշոցներով կաշիլ ձեզանից մէկնումէկի անունին:

Ներսէս. էստեղ մի վատ բան է կատարուել, որը ես չեմ իմանում:

Սերոբ. Լաիւր ապեր, կատարուել է թէ չէ կատարուել, էստեղ պէտք է պարզուի, որովհետեւ էս օր դատաստանի օր է: Քանի որ քո զլուխդ գործով է խառն եղել, կամ թէ կարելի է հիւանդութիւնդ խնայել են, քեզ բան չեն ասել, քանի որ էս ծերուկը Բանին Աստծոյ խօսքի վրայ է ցնորուել, քանի որ էս խեղճ պառաւը մի կտոր հացի համար սրա նրա դռները ընկած տան պահպանութիւնը յանձնել է սրան, էս անլեզու գառնին, մեր բակի մէջ ասում են գոյ է դարան մտել... և գողացել է մեր տան պատիւը:

Յակոբ. Ո՞վ է հնարել էդ սուտը... սո՛ւտ է:

Սերոբ. Եւ էդ գողը ինքը ուրիշների մօտ պարծեցել է, որ ինքը մեծ տղամարդութիւն է արել: Հիմի մենք կը տեսնենք, թէ ով է տղամարդը:

Ներսէս. Մայրիկ, էդ ի՞նչ եմ լսում:

Աննա. Խնայիր նրան, նա չի կարող դիմանալ:

Սերոբ. Իսկ դ՞ու, դու կարո՞ղ ես դիմանալ: Իսկ ե՞ս, իսկ մենք ամենքս կարո՞ղ ենք դիմանալ:

Յակոբ. Աննա, Աննա, սա ի՞նչ խօսակցութիւն է որ ես լսում եմ:

Աննա. Ես ոչինչ չեմ իմացել, վկայ է Աստուած:

Սերոբ. Եւ յետոյ, երբ որ ինձ նման շառլատանը մին ծակ ու ծուկում շնութիւն անողի կեղտոտ գլուխն է թոցնում, թըքում են նրա երեսին, ձայն են տալիս՝ աւազակ է նա, արին խմող գազան է նա: Ես ձեզ եմ հարցնում պարոն, ի՞նչ կ'անէիք դուք իմ տեղ:

Ալեքս. Ես նոր եմ իմացել, որ պատիւը գողանալու բան է:

Ներսէս. Վերջ դրէք էս խօսակցութեան:

Աննա. (Բոսխաբար ծածուկ Մարթային): Հեռացիր, կորիւր էլի (Մարթան իսկոյն գնում է աջ):

Տ Ե Ս Ի Լ 14

Յակոբ, Աննա, Ներսէս, Սերոբ եւ Ալեքսանդր

Աննա. Տղամարդ էք դուք, բայց ինչ խօսակցութիւն էք անում աղջիկ-արմատի մօտ:

Սերոբ. Շարունակեցէք, պարոն. ի՞նչ ասացիք, թէ պատիւը ի՞նչ է եղել:

Ալեքս. Ես ասում եմ, ես նոր եմ իմացել, որ պատիւը
կարելի է գողանալ:

Սերոբ. Ուրեմն ձեր ասելով մեր տունը մի պոռնկանոց
էր ձեզ համար:

Ալեքս. Եթէ ես իմանայի, որ դու ես այս տան տէրը,
գուցէ ես իսկի ոտք էլ չը դնէի այստեղ:

Սերոբ. Ա՜... դուք լաւ էք ճանաչել ձեր մարդին. թողէք
որ մենք էլ ձեզ լաւ ճանաչենք: Ի՞նչ է ձեր միտքը հիմայ:

Ալեքս. Բայց մի՞թէ այս բոլորիս և այդպէս վաղ կարե-
լի՞ է պատասխան պահանջել, առանց թողնելու, որ մարդ մի
լաւ մտածի:

Սերոբ. Ա՜, բայց մի՞թէ նոր պիտի մտածէք: Իսկ էս
տան պատիւը ոտնակոխ անելուց առաջ:

Ալեքս. Ձը գիտեմ ի՞նչ ես ուզում ինձնից: Շատ կը ստի-
պեա, ես էլ կ'ասեմ...

Սերոբ. Ի՞նչ կ'ասես:

Ալեքս. Ինչ որ կ'ուզես հասկացիր:

Սերոբ. Պարզ ասա:

Ալեքս. Ես արդէն ասացի:

Սերոբ. Ուրեմն դու մերժում ես: Ձէ դու էլ մերժել չես
կարող, խելքդ գլուխդ հաւաքիր, ես ասացի որ էսօր դատաս-
տանի օր է:

Ալեքս. Ինչպէ՞ս, ուրեմն դու կարծում ես, որ ինձ կը
ստիպես զօռով:

Սերոբ. Այո, ես քեզ կը ստիպեմ զօռով: Երբեք եմ սրա
կաթով, որ դու իմ ձեռքիցս չես պրծնիլ: Խելքի եկ և ամենքիս
առաջ երգումն արա:

Ալեքս. Ի՞նչ է, ինձ սպառնալի՞ք ես տալիս: Դու գիտե՞ս
ու՞մ հետ ես խօսում: Բաւական է ձայն տամ և ամբողջ քաղա-
քը ոտքի կը կանգնի:

(Հետեւեալը կատարւում է բոլորաբար):

Սերոբ. Դէ ձայն տուր շուն շան որդի...

Ալեքս. Ապա մի համարձակուիր:

Աննա. Աստծոյ սիրուն խնայեցէք:

Սերոբ. Թողէ՛ք ասում եմ:

Ներսէս. Սերոբ, Սերոբ:

Յակոբ. (Ակրտանդրին): Հեռացէ՛ք, հեռացէ՛ք:

(Մինչ այդ Մարթան դռնից տեսաւ այդ եւ ձշաց):

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐՐՈՐԴ

Քեմը ներկայացնում է երկրորդ գործողութեան տեսարանը: Աջ կողմ աւելացը-
բած է մի հասարակ մահճակալ, մի բարձ վրան:

Տ Ե Ս Ի Լ 1

Մարթա եւ Յակոբ

Յակոբ. Ինչի՞ չեն հաւատում մարդիկ, որ մեզ ամեն նե-
ղութիւնից, ամեն վատ բանից, ամեն մոլորութիւնից փրկողը
Բանին Աստծոյ խօսքն է: Տեսնո՞ւմ ես ինձ. կը գցեմ ինձ կը-
տուրից և անվնաս կը մնամ, որովհետեւ հաւատը պինդ է իմ
մէջ: Ը... Ը... իսկ դո՞ւ... եթէ դու հաւատով լսած լինէիր ասած-
ներս, դու մեղքի չէիր ընկնիր: Ասում էի բեզ «Մարթա, սի-
րի՛ր Աստծոյ խօսքը»:

Մարթա. ես կը սիրեմ:

Յակոբ. Կը սիրե՞ս... Դու խայտառակեցիր ինձ, լսեղե-
ցիր ինձ: Բաւական է:

Մարթա. Ո՞ւր ես գնում (բռնում է նրան):

Յակոբ. Ո՞ւր եմ գնում: Գնում եմ գործ պտուեմ, պարտը
առնեմ, տանը հաց չը կայ: Գնում եմ Մինասին կանչեմ, որդիս
ձեռքիցս գնում է:

Մարթա. Չէ. ես լսեցի, ես իմանում եմ որտեղ ես գը-
նում: Աստծոյ սիրուն թողէ՛ք էդ բանը... մի՛ գնալ:

Յակոբ. Ա՛ա, հիմի էլ դուան ետեից ականջ դնե՛լն ես
սկսել: Դէ որ իմանում ես, իմացի՛ր: Այո, ես գնում եմ նրանց
մօտ, ես նրանց դուռը կը կոտրեմ. ես կը բռնեմ նրա շառա-
տան հօր օձիքից և կ'ասեմ. «բո լիրբ և անղգամ որդիդ եկել և

դիւրից տարել է իմ աղջկանս, եթէ նա նրա վրայ չի պսակուիլ, ես ամենքիդ քաշ կը տամ դատարանի առաջ»։ Այո, նրան էլ, որդուն էլ, մօրն էլ։ Օր ծերութեան մի ոտս գերեզմանի մէջ, ես չեմ կաղող տանել էս անպատուութիւնը։ Դէն կաց, էլ դա՛նակը ոսկորին ես հասցնել։ Հեռացիր։

Մարթա. Մի գնալ, ինձ մենակ մի թողնիլ էստեղ։

Յակոբ. Ձայնդ, ձայնդ (դնում է միջի դռնով)։

Տ Ե Ս Ի Լ 2

Մարթա եւ Ալեքսանդր

Ալեքս (Ձախ կողմից)։ Մարթա։

Մարթա. Օ՛հ. հեռացէք էստեղից։ Եթէ մէկը էս ըռպէիս հէնց էստեղ տեղնուտեղը ինձ շանսատակ անէր, հաւատացընում եմ, նա մի բարի գործ կը լինէր արած։

Ալեքս. Երեխայ մի լինիլ։ Դու առաջինը չես և վերջինն էլ չես լինիլ։ Միայն ձեր ընտանիքն է, որ այդ դատարկ բանը այդքան մեծացնում է։ Մայրեր կան, որ իրանց ձեռքովն են ծախում իրանց աղջկան, իսկ դու հօ փառք Աստծոյ քո կամքովդ ես եկել։

Մարթա. Ես կարծում էի, որ սէրը կարող է միայն սուրբ լինել։ Ես աշխարհից աւելի մեծ բախտ չէի սպասում։ Դուք իմացաք որ ես մի անփորձ աղջիկ եմ, եկաք և ինձնից գողացաք իմ սիրտը։ Հիմի էլ չեմ իմանում, էլ ի՞նչ էք ուզում ինձնից։

Ալեքս. Բայց եթէ քո այն սրիկայ եղբայրդ մէջտեղ չը մտնէր, ո՞վ էր իմանալու թէ դու իմ սիրեկանն ես։

Մարթա. Բայց միթէ՞ նրան ես էի ասել։

Ալեքս. Երեւի հարբած ժամանակս բերանիցս խօսք եմ բաց թողել ընկերներին մօտ, անպիտանները նախանձից տարածել են։ Ներիր ինձ։

Մարթա. Երեւի ձեզ համար մի դատարկ բան է եղել խաբել, անբախտացնել, դէն շարտել և յետոյ անամօթի պէս ներողութիւն խնդրել։

Ալեքս. Դու ի՞նչ գիտես, որ ես քեզ առաջուանից էլ աւելի չեմ սիրում։

Մարթա. Միթէ՞ դուք կամենում էք, որ ես յիմարս էլի հաւատամ ձեզ։ Թէ՞ դուք կարծում էք, որ ես վերջի ամօթն էլ կը մոռանամ և կը շարտեմ ինձ փողոցի մէջ տեղը։

Ալեքս. Լսիր թէ ես ինչ եմ մտածում։ Ահա մի աղբատ

աղջիկ. ես սիրահարուել եմ նրա վրայ, պսակուել և բերել նրան մեր տուն: Շատ լաւ: Հիմայ դու ինքդ երևակայիր, ի՞նչ կը լինէր քո դրութիւնը մեր տան մէջ: Ծնողներս կը տեսնէին որ դու ոչ քաղաքավարի նստել գիտես, ոչ խօսել. հ'մ, մինչև անգամ դու պարել չը գիտես: Մայրս քեզ հետ ոչ մի տեղ չէր դուրս գալ, հայրս ամեն օր երեսովդ կը տար, որ դու մի քաղցած աղջիկ ես, և որ մի սրիկայ եղբայր ունես:

Մարթա. Իսկ դժբ ինչ կ'անէիք:

Ալեքս. Ոչինչ. կարծի էի ծպտուն հանել, որ վաղուայ օրը երկուսիս էլ տանից դուրս հանեն: Սրա համար էլ ասում եմ քեզ ապրենք ծածուկ, մինչև որ նրանք գլուխները գետնին կը դնեն:

Մարթա. Ոչ ամօթ կայ ձեր երեսին և ոչ էլ Աստուածանից էք վախենում: Թո՛ղ ես խաբուած լինեմ, թո՛ղ ես անպատուած լինեմ, բայց իմանալով, խելքս գլխիս ես ինձ ծախել չեմ թոյլ տալ,—թէ կուզ թագաւորութիւն խոստանաք ինձ: Ես աւելի շուտ ինձ կախ կը տամ, բայց ձեզ նման մի մոլորեցնողի ետևից էլ չեմ գնալ: Ես հաւատացի ձեր սուտ երգումներին, որովհետեւ ես կարծում էի ձեզ էլ մայր է ծնել, ես կարծում էի որ դուք էլ մի քոյր ունէք, ես կարծում էի որ դժբ էլ մի մարդ էք: Սրանից յետոյ ինձ համար բոլորը անցաւ: Ես ձեզ տեսնել անգամ չեմ ուզում: Ես զգում եմ ձեր լիրբ և անամօթ դէմքից:

Ալեքս. Իմացիր, եթէ առաջուայ պէս իմ ձայնը լսելուս գաղտնի տեսութեան չես գալ, ես ոչ ոքից չեմ ծածկւիլ, որ դու իմ սիրեկանն ես:

Մարթա. Իսկ ես էլ ձեզ ասում եմ, որ եթէ ձեր ձայնին ձայն տուող չ'եղաւ, պտրեցէք ձեր սիրեկանին էս ջրհորի մէջ խեղդուած: Հեռացէ՛ք թէ չէ էս բոպէիս ես կը բղաւեմ:

Ալեքս. Ես մի քայլ էլ չեմ անիլ:

Մարթա. Օճ, զգուշիւ, զգուշիւ (վազում է աջ դռնով):

Ալեքս. Միթէ՞ ճշմարիտ նա հաւատացած է եղել, որ ես նրա նմանի վրայ թոյլ կը տայի ինձ պսակուել: Տես սիրտը ինչ է ուզել: Բայց ես գիտեմ. կնոջ համար առաջի սիրածը միշտ քաղցր էլ կը մնայ: Իհարկէ մի առժամանակ նա կը կոտորատուի, կը ձկնացնէ իրան, որ իմ առաջարկութիւնը նրան խորթ թւաց, յետոյ էլի, քիչ-քիչ ինձ մօտ կը գայ: Հարկաւոր է պառաւանդի հետ հաշտութիւն գցել, հնար չը կայ, այդ քաղցածները աչքը միայն փողով կարելի կը լինի քոռացնել: Այդ խայտառակութիւնից յետոյ արդեօք կը դառնուի՞ մի յիմար, որ պսակուել նրա վրայ: Տեսնենք, ով կը համարձակուի:

Տ Ե Ս Ի Լ Յ

Աննա եւ Ներսէս

Ներսէս. (Մտնում են աջ դռնից): Մայրիկ, չը քաշուենք մէկզմէկից, պարզ խօսենք: Անցածը անցել է, էլ հօ չէ՞նք տանջելու նրան: Ինչի՞ չէ՞ք թողնում նա էլ գայ նստի մեզ հետ (Իրրեմն թերեւում է մահճակալի վրայ):

Աննա. Ո՛չ էր ծնուել անզգամը: Սա ծր է, որ մենք ենք քաշում: Առաջ մի կտոր հացի հոգան էր ինձ մաշում, հիմի մի կողմից էն մեռածի հոգսը, միւս կողմից քո հիւանդութիւնը, հիմի էլ էս անբախտութիւնը: Բաս Աստծոյ երկնքի տակ մենք մի օր չը պէտք է տեսնենք: Ախր ինչո՞ւ է Նա եղբան խռով կացել մեր գլխին: Շատ բան էինք ուզում Գեղնից Աստուած: Ախր մեր մեղքը ի՞նչ է այ որդի:

Ներսէս. Ախր էդ անզգամ շան ծնունդները ղում ասես չեն խաբում: Մի կողմից էլ Մարթային մեղադրել չի կարելի. խեղճ երեխան աչք է բացել թէ չէ տեսած լսածը ախ է եղել վախ:

Աննա. Ի՞նչ անենք որ մեր ճակատին էզպէս է գրած, վեր կենայինք Աստծոյ հետ կռիւ անէինք: Խեղզուէր ու պըր՝ ծնէինք նրա երեսից:

Ներսէս. Ի՞նչ ես ասում մայրիկ, քո սիրտը բոլորովին փոխուել է:

Աննա. Քար կտրուէր նրա սիրտը, ինձնում սիրտ է մը՝ նացել:

Ներսէս. Տեսնել նրան ոչ թէ խաբուած, այլև խեղ՝ դուած... էլ ղում վրայ ես դնում քո յոյսդ, խեղճ պառաւ:

Աննա. Աւելի լաւ էր խեղդուած լինէր, քանց էսպէսի մէկ դժողքի պատիժ բերած լինէր մեր գլխին: Գիշեր ցերեկ ցաւս կուլ տալով ես խեղզուեցի:

Ներսէս. Բաւական է մայրիկ, կանչիր նրան: Ես ուզում եմ քո մօտ մի քանի խօսք ասեմ նրան: Էն Մինասը ուզում է նրան:

Աննա. Միթէ ես նրան մի սափրիչի համար էի աչքիս լոյսի պէս պահել մեծացրել... Էնտեղ հասցրեց, որ նրան էլ արժանի չենք:

Ներսէս. Ինչի՞ համար:

Աննա. Ասում ես պարզ խօսենք: Չէ՞ որ էս օրուայ խայ-

տառակութիւնի մասին նա էլ լսած կը լինի: Ուզում էք մի-
նոր խայտառակութիւն էլ յետոյ գայ գլխներին:

Ներսէս. Ո՞վ գիտէ, կարելի է խեղճ տղան էնքան է սի-
րահարուել Մարթայի վրայ, որ էդ բաները իսկի ականջը չի
մտնում:

Տ Ե Ս Ի Լ 4

Աննա, Ներսէս եւ Սերոբ

Սերոբ. (Գալիս է միջին դռնով) Կարելի՞ է մասնացել ձեր
ծածուկ խորհրդին:

Ներսէս. Լաւ բոլորէին եկար Սերոբ ջան: Մէջտեղ մի
հարց կայ, որի վճռելու մէջ դու էլ ձայն ունես: Ընտանեկան
խորհուրդ է:

Սերոբ. Ընտանիական խորհուրդ: Շատ լաւ: Դէ ասացէք
տեսները բանը ինչո՞ւմն է: Տղայ էք ուզում պսակել, թէ աղ-
ջի՞կ էք ուզում գլխից ռադ անել: Եթէ խօսքը իմ մասին է
լինելու, խնդրեմ նեղութիւն չը քաշէք, որովհետեւ ես մտքումս
դրել եմ վարդապետ ձեռնադրուեմ:

Ներսէս. Մի՞ ծիծաղիլ: Ձեռն իմանում, որ սրանով մայրի-
կի սրտին ես կպչում:

Սերոբ. Հա՞ մայրիկ: Սրտիդ կպայ:

Աննա. Դու չը լինէիր էդ խայտառակութիւնն էլ էդպէս չէր
բացուիլ: Ե՞րբ ես ճանապարհի գալու, որդի:

Սերոբ. Ի՞նչ ճանապարհի մասին է: Փո՞ղ ես ուզում. հա-
մեցէք (մի բուռ փող կապած գցում է սեղանի վրայ): Ծախսի՛ր, խմի՛ր,
քէֆ ա՛րա:

Աննա. Յետ վեր առ. քո փողդ մեզ հարկաւոր չի:

Սերոբ. Հասկանում եմ մայրիկ: Դու կարծում ես խփած
են: Ձէ, սխալ ես: Հիմի խփելը թողել եմ և գտել եմ աւե-
լի ազնիւ փեշակ.—խաղացող եմ դառել: Աստուած զօրութիւն
տայ մեր տղերքոնց մէջքին. էս գիշեր բախտը շուռ տուաւ իմ
կողմը և զորս դու պատուիրեցեր, թեփրտեցի անիրաւներին:

Ներսէս. Յետ վերցրու: Ձեռն իմանում, որ նա ձեռք չի
տալ:

Սերոբ. Ոչինչ. մոռոտաւ էք հաշւում. թող իմ գրպանու-
մբս մնայ (դնում է գրպանը): Սե օրի համար հարկաւոր կը գայ:
Դէ գոնէ ասացէք տեսները: Ինչո՞ւ է աչքունքներդ կախ:

Աննա. Ե՞րբ է մեր աչքունքը բաց եղել:

Սերոբ. Ինձ հարցնես, ողջ աշխարհը չ'արժի մարդիս մի

Այսօր արտասուքին անգամ: Աշխարհը արժանի է որ միայն թքես նրա երեսին և կոխ տաս (անում է):

Ներսէս. Գնա մայրիկ կանչի՛ր Մարթային. թող Սերորն էլ իր կարծիքը յայտնի (Աննան գնում է աջ դռնով):

Տ Ե Ս Ի Լ 5

Ներսէս և Սերոր

Սերոր. Ճշմարիտը ասեմ, թէպէտ դու ինձ պատիւ ես անում, բայց ես ընտանիական գործերում չը կամ: Ես նրա երեսը տեսնելու չեմ եկել (նայում է այս եւ այն կողմ):

Ներսէս. Սերոր, ես իմանում եմ դու ինչու ես եկել:

Սերոր. Իմանում ես իմացիր:

Ներսէս. Դու էն անպիտանին ես պտրում. Աստծոյ սիրոյն, թող մնա քո էդ մտադրութիւնդ: Մարդ սպանելը դժուար բան չէ, ճշմարիտ է, դու կը սպանես նրան. բայց սպանելով նրան, դու կը սպանես մեզ ամենքիս: Մէկ մտիկ արա, ի՞նչ կը լինի էս խեղճերի գրութիւնը:

Սերոր. Ի՞նչ էք ուզում ինձանից, ի՞նչ էք ուզում ինձանից: Դուք ուզում էք ամեն մի շունի ցած արարմունքը առանց պատժի՞ մնայ:

Ներսէս. Հանգարտ, նրանք կը լսեն:

Սերոր. Ես իմանալով եմ ձայնս գլխիս վցում, թող թէ կուզ արարած աշխարհը լսի:

Ներսէս. Ախր մէկ մտածիր, ո՞վ ենք մենք:

Սերոր. Ախ, ինչո՞ւ ես քեզ էդպէս քաջացնում ապեր, հըմ, «ո՞վ ենք մենք»:

Ներսէս. Ի՞նչ է, դու կարծում ես քո ասածներդ ես չեմ հասկանում:

Սերոր. Տեսնում եմ: Դո սեփական մտիցդ քեզ խորոված են ուտեցնում, իսկ դու լուծւում ես:

Ներսէս. Ի՞նչ անենք, աղքատութեան դէմ կռիւը թողնում է մեզ աչք բացել:

Սերոր. Մա է ձեր կռիւը:

Ներսէս. Ապա ի՞նչ է: Չար բախտի դէմ չե՞նք կռիւ անում: Եթէ չ'անենք էդ կռիւը, չէ՞ որ մեր ողջ ընտանիքը կը ջնջուի աշխարհի երեսից: Սերոր հոգիս, ի՞նչ անենք որ փոքր ենք, բայց չէ՞ որ մենք էլ մի տուն ենք, ինչո՞ւ թողնենք, որ մարուի մեր ճրագը:

Սերոբ. Վայ էն մարուող ճրագին, որ մեզ նմանների իւղով պէտք է վառ մնայ:

Ներսէս. Մի ասիլ, նամուսով մարդը ինչպէս էլ լինի, մի կտոր հաց կը ճարի իրա ընտանիքը պահելու համար:

Սերոբ. Հաց, հաց. էդ մի կտոր հացը հօ շունն էլ է ճարում:

Ներսէս. Եթէ դու էլ ինձ հետ մէջմէջքի տուած լինէիր, մեր դրութիւնը էս օրին չէր հասնիլ: Ես էլ հագիւ վեր կե-
նամ էս հիւանդութեան ձեռքից, իսկ դու չես խնայում մեր պատիւը:

Սերոբ. Հմ, ցեխի մէջ տրորուած մեր պատիւը:

Ներսէս. Բաս ի՞նչ անենք:

Սերոբ. Երկուսից մէկը պէտք է սպանուի ապեր:

Ներսէս. Ի՞նչ:

Սերոբ. Երկուսից մէկը: Կամ պէտք է մորթել մէկին, կամ շանսատակ անել է՛ն մէկին:

Ներսէս. Ինչէ՞ր ես խօսում:

Սերոբ. Էդ տեսակ կեղտը պէտք է արիւնով լուացուի:

Ներսէս. Ես քեզ ասում եմ խաղաղ ապրուստի մասին:

Սերոբ. Իսկ ես քեզ ասում եմ, էդ տեսակ ապրելը ցածութիւն է: Ինձ վրայ պէտք է ծիծաղեն, տնաղ անեն, անունս կնիկ դնեն, իսկ ես ապրելի մասին մտածեմ: Չէ, էդ մէկը Սերոբը չի կարող: Նա չի կարող իրա անպատուած քրոջ երեսին մտիկ անել: Նա տղամարդ է, գլխին գդակ ունի դրած: Էզուցուայ օրը ուրիշները որ լսեն, մարդիս ճակատի մէջտեղին կը թքեն: Ինձ ստեղծողը ինձ մէկ անլեզու անասուն չի ստեղծել: Էդ մէկը ապեր, խնդրում եմ թող իմ հոգիս պարտքը լինի:

Ներսէս. Ես նրանց համար եմ ասում, նրանք ապրել են ուղում:

Սերոբ. Սրանից յետոյ նրանք ապրե՞լ են ուղում. մահը հօ նրանց համար մին Աստծոյ ողորմութիւնն է: Թող նա ապրի որի համար փակ գուռ—չը կայ, որի համար ցածութիւնը տղամարդութիւն է, որը (ցած) աչքիդ առաջ քրոջդ պոռնիկ կոչեց: Էլ ի՞նչ ես ուղում, էդ անպատուութիւնից յետոյ դու դեռ ապրելու մասի՞ն ես խօսում: Չէ, ապեր. բանտ շատ եմ նստել, բայց ոտքիս ոսկոռները քոր են գալիս, պէտք է բրասխաներ հագնել և մին Սիբիրի կողմերն էլ վիզիտ անել: Սերոբի մեռած օրը պէտք է լինի, որ նրանց տունը սուգի տուն չը շինի:

Ներսէս. (Թուլացած) գլուխս կարծես մի դատարկ տարածութիւն լինի, չորս կողմից նրա պատերով թափուում են եռ

եկած կաթիլներ: Էս դարունը ինձ վախեցնում է Սերոբ: Քաղցր է կեանքը, ես ուզում եմ Սերոբ, ներել մարդկանց բոլոր մեղքերը, ես ուզում եմ ապրել...

Սերոբ. Տայ Աստուած որ դու լաւանաս և ապրես ապեր, իսկ ես, էհ...

Տ Ե Ս Ի Լ 6

Ներսէս, Սերոբ եւ Մինաս

Մինաս. Բարի օր ձեզ (զալիս է միջի դռնից):

Ներսէս. Բարով վարպետ:

Մինաս. Կարելի՞ է հարցնել, ինչպէ՞ս է զգում իրան Ներսէսը:

Սերոբ. Համեցէք:

Մինաս. Դժւ ես ինձ համեցէք անում: Ուրեմն հաշտուենք:

Սերոբ. Ես քեզ հետ խոով չեմ վարպետ:

Մինաս. Դէ ձեռքդ (մեկնում է ձեռքը):

Սերոբ. Բռնիր հիւանդի՛ ձեռքը անշնորհք: Երևի նրա համար ես եկել:

Մինաս. Ուղիղ ես հրամայում (բռնում է Ներսէսի ձեռքը): Վարպետ Յակոբը ինձ ասաց, Ներսէսը մի քիչ իրան լաւ չի զգում: Ուղիղը ասած, ես շուտ-շուտ կը դայի, բայց սրանից եմ քաշւում. անհանգիստ տղայ է: Ինչպէ՞ս ես:

Ներսէս. Ես ինձ վատ եմ զգում:

Մինաս. Էստեղ շատ էլ լաւ չի քեզ համար, պէտք է դնալ սենեակ:

Ներսէս. Էնտեղ էլ խոնավութիւն կայ:

Մինաս. Հնար չը կայ Ներսէս, դու պէտք է ձեռք վեր առնես էդ Թամբաքուի ֆարբիկից:

Սերոբ. Էդ ճարերը հօ ես էլ եմ իմանում:

Մինաս. Ե՛կ ես քեզ մեր գիւղը հիւր տանեմ:

Սերոբ. Բաս ի՞նձ, անշնորհք, համեցէք չէ՞ս անում:

Մինաս. Ես քեզ էլ եմ խնդրում:

Սերոբ. Ի՞նչ ես ասում ապեր, չը գնանք:

Ներսէս. Շնորհակալ եմ վարպետ. դու ինքդ էլ իմանում ես, որ մենք կարողութիւն չ'ունենք, էնպէս որ վարձիդ մասին պէտք է ներես:

Մինաս. Երբ որ դուք ամենքդ մի օր գիւղում մեր տան մէջ հացի՛ նստած կը լինէք, էդ կը լինի իմ վարձը:

Ներսէս. Ինչքան էլ լինի Մինաս, ապրուստը գիւղում հօ ձրի չի:

Մինաս. Իհարկէ ձրի չի, բայց դէ էղքան էլ հօ թանգ չի:
Ներսէս. Ի՞նչ իրաւունքով քեզ նեղութիւն պատճառենք:
Մինաս. Վնաս չ'ունի, երբ որ կը հարստանաք, կը վճա-
րէք:

Սերոբ. Տօ անշնորհք, էդ պայմանով հօ ես Պարիժ էլ կը գնամ:

Մինաս. Բայց գիտե՞ս, մեր գիւղի օդը ինչ օդ է:

Սերոբ. Ասում են զրախտը ձեր տան յետևումն է եղել և
որ Աղամը ձեր հանդումն է թաղուած:

Մինաս Մեր գինիի կարամները իմ աչքում քո Աղամից
էլ մեծ են: Մէկ համեցէք: Ես քեզպէս չեմ: Ես քեզ էստեղ չեմ
ասիլ թէ «էստեղ մէկը աւելորդ է»:

Սերոբ. Ներքի վարպետ. անցած բան է (ծեղք է բռնում):

Ներսէս. Ախ ինչքան կ'ուրախանար հայրիկը, երբ էդ
տեսնէր:

Մինաս. Դուք նրան մենակ մէք թողնիլ փողոց. թէ չէ
նա (ճակատի վրայ ցնորուած ցոյց տալով) մի քիչ փոխուած է երե-
ւում:

Սերոբ. Բանիդ կաց վարպետ. ծերերի վերջն է՝ կամ ան-
դամալոյժ կը կտրեն, կամ խելքները տանուլ կը տան:

Մինաս. Սերոբ ջան, դու մի քիչ ներողութիւն անես:

Սերոբ. Երևի խոստովանք ունէք, համեցէք (գնացաջ կողմ):

Տ Ե Ս Ի Լ 7

Ներսէս եւ Մինաս

Մինաս. Ներսէս ջան, ես քեզ մի բան եմ ասելու. բայց
խօսք տուր, որ խօսքը մեր մէջ կը մնայ:

Ներսէս. Խօսք եմ տալիս, բայց չեմ երդում, որովհետեւ
կեանքումս սուտ ասած չը՝ կամ:

Մինաս. Գիտե՞ս իմ միտքը ինչ է: Ես ուզում եմ տնա-
ւորուեմ: Դու ինքդ էլ տեսնում ես, որ մեզ նման տնաւո-
րուածների համար ապրուստը քաղաք տեղում ինչքան է դժուա-
րացել: Դէ Փառք Աստծոյ, էդ նոր-նոր ցաւերը հիմի գիւղերումն
էլ է տարածուել: Դոխաւորները իհարկէ պատիւ չեն անում
գիւղ գնալը, էնպէս որ մեզ համար էստեղ մի կտոր հաց ճա-
րելը դժուար չի լինիլ: Բայց իմ միտքս, ի՞նչ ասեմ:

Ներսէս. Ասա վարպետ, մի քաշուիլ:

Մինաս. Ասեմ. լաւ, ասեմ: Ասա ներէս, ուզում եմ որ մի նոր եղբայր էլ ունենաս:

Ներսէս. Մենք առանց էն էլ եղբայր ենք:

Մինաս. Հա, էդ մէկը հրպէս է: Բայց իմ միտքս ուրիշ բան է: Ձեռք իմանում հասկանում ես, թէ չէ:

Ներսէս. Մի քիչ հասկանում եմ, բայց եթէ էլ պարզ ասես, աւելի լաւ կը հասկանամ:

Մինաս. Ինչպէս ասեմ... Ներքի եղբայր, մարդ ենք:

Ներսէս. Ոչինչ, ասա:

Մինաս. Եթէ քաղաքում մայր կամ քոյրս լինէր, բանը աւելի հեշտ կը լինէր, որովհետեւ իմ ասելիքս պէտք է կնիկարմատ ասէր: Վարպետ Յակոբը արդէն իմանում է, ես նրան ասել եմ: Ի՞նչ ծածկեմ քեզանից: Մի շանգամ տեսել եմ քրոջդ, վերջը, հաւանել եմ... սիրել եմ: Ես նրան ուզում եմ, կը տաք՝ լաւ, չէք տալ՝ էլի դուք իմը, ես ձերը:

Ներսէս. Եղբայր Մինաս, դու մեզանից ինչո՞վ ես պահաս, որ մենք «չէ» ասենք: Քեզանից լաւ տղի էինք տալու:

Մինաս. Ուրեմն էս էսպէս. սա վերջացաւ: Բայց ես էլի մի բան պէտք է ասեմ: Դուք չը կարծէք, թէ ես քաղաքումը ականջներին բամբակ դրած եմ ման գալիս, որովհետեւ մի հանգամանք կայ, որի պատճառով դուք կարող էք մտքներովդ անց կանցնել, թէ երեւի էս մարդը մի շատ միամիտ մարդ է և աշխարհից խելքը բան չի կտրում:

Ներսէս. Մէնք:

Մինաս. Դուք... ինչպէ՞ս ասեմ: Դուք էլ բերանով երեսիս չէք ասիւ, բայց մտքներովդ ամեն ժամանակ կ'անցնի: Ինչեւէ՛ Վարպետը ինձ համար շատ է պատմել Աստծոյ խօսքը... իմ արածը մի շատ ծանր բան է, դժուար բան է. (սաստիկ յուզուած) հազարից մէ՛կը չի անիլ էդ բանը... Եղբայր Ներսէս, ես ուզում եմ մին անմեղ հոգի ազատեմ: Ես ուզում եմ ազատել ձեր պատիւը, չէ, չէ, ի՛մ պատիւը: Ձե՛ որ նա էլ իմ հայ քրիստոնեայ քոյրս է: Ինչպէս կ'ուզես, էնպէ՛ս հասկացի՛ր: Ես պրծայ:

Ներսէս. Մինաս ջան (ուզում է համբուրել նրա ձեռքը):

Մինաս (Ձեռքը քաշելով): Ես կը սպասեմ պատասխանի:

Ներսէս. Ագնիւ տղայ... Սերոբ, Սերոբ (գնում է Սերոբի գնացած կողմ):

Տ Ե Ս Ի Լ 8

Մինաս եւ Ալեքսանդր

Ալեքս. (Ձախ կողմից) Բարեկամ, դու իսկի բան-ման հասկանում ես. թէ հէնց իսկ են ասել, յիմար գիւղացի:

Մինաս. Ի՞նչ ես ուզում:

Ալեքս. Ես ասում եմ դու իսկի բան-ման հասկանում ես:

Մինաս. Ես իմ հասկացածս ինձ համար շատ բաւական եմ համարում, և սրանից աւելին չեմ էլ ուզում հասկանալ:

Ալեքս. Ես քեզ ասում եմ, գիտե՞ս ինչ աղջիկ են կապում գլխիդ:

Մինաս. Ոչ ով իմ գլխին աղջիկ չի կապում: Աղջիկը ես իմ կամքովն եմ ուզել:

Ալեքս. Բայց ես ուզում եմ քո աչքդ բացեմ:

Մինաս. Իսկ ես քեզ ասում եմ բացի՛ր դու քո աչքդ: Մի՞թէ պարոն մի մեղք բան է, եթէ մարդ գայլի բերանից մի դառը ազատի:

Ալեքս. Ի՞նչ:

Մինաս. Հրամմերես, իսկ հնպէս, ինչպէս որ հրամանքդ հասկացաւ:

Ալեքս. Լսի՛ր, իմ գլուխս այդպէս բաներ չի մտնում: Ես քեզ խորհուրդ եմ տալիս, քանի որ թեփուռդ ցրիւ չեն տուել, քո կամքովդ հեռացի՛ր այստեղից:

Մինաս. Իմանում եմ ինչ կայ պարոն: Բոլորովին էլ Աստծուն մոռանալ չի լինիլ: Ե՛կ, ես խնդրում եմ, եթէ հայ ես, քրիստոնեայ ես, արիւնհեղութիւնը հեռացրո՛ւ էս տեղերքից:

Ալեքս. Ես քեզ ասում եմ, քանի որ գլուխդ ուտերիդ վըրան է, էլ չը համարձակուես ոտք դնել այս կողմերը. թէ չէ գլխիդ մի խալ խաղալ կը տամ, որ եկած ճանապարհդ կը մոռանաս:

Մինաս. Իսկ ես քեզ ասում եմ աչքդ բաց և մարդիդ լաւ ճանաչի՛ր (բռնում է նրա կրներից և ուժգին հրում յետ) ... Գընա՛ կորի՛ր էստեղից:

Ալեքս. Ես քեզ ցոյց կը տամ (անյայտանում են ձախ կողմում):

Տ Ե Ս Ի Լ 9

Ներսէս եւ Սերոր

Ներսէս. (Գալիս են աջ կողմից) Սերոր: Էլ իսկի չ'ասես, թէ աշխարհը չորացել է, և մեզ համար մարդ չը կայ: Այ մարդ:

Սերոր. Ի՞նչ է ուզում էդ Լողմանը:

Ներսէս. Նա Մարթային է ուզում:

Սերոր. Դէ էլ ինչի՞ էք սպասում, տուէք տանի էլի:

Ներսէս. Ուրեմն դու համաձայն ես:

Սերոր. Ե՛ս. ճ ես սափրիչներին շատ եմ պատուում, որովհետեւ ինչ գոռոզ գլուխ ասես, որ չը խոնարհուի նրանց մկրատի տակ (ծիծաղում են):

Տ Ե Ս Ի Լ 10

Ներսէս, Սերոր, Աննա եւ Մարթա

Ներսէս. (Նրանք մտան աջ դռնից) Խօսիր մայրիկ. դու գիտես, թէ մենք ինչ էինք ուզում ասել:

Աննա. Մայրիկը ի՞նչ խօսի: Նրա բերանում լեզու է մընացել: Մայրիկը խօսելու շնորհքն էլ է կորցրել, խելքն էլ:

Սերոր. Ուրեմն է՛ս կը խօսեմ: Լսիր Մարթա: Վարպետ Մինասը սիրահարուել է քո վրայ,—երևի իհարկէ նա լսել է քո տղամարդութիւններդ,—ի՛նչ ես հրամայում, ի՞նչ պատասխան տանք. ինքդ էլ լսւ ես իմանում, որ էլ է՛ս տեղը չի, որ կոտորատուես, նազ անես, ուսովդ «չեմ իմանում» անես, գլխովդ «կը մտածեմ»: Քեզ համար էլ էդ տեսակ ցերեմոնիաների ժամանակը անց է կացել: Բայց դատարաններում մին լաւ սովորութիւն կայ: Աշկարայ մարդասպանին էլ հարցնում են, «վի՛զ ես առնում, որ մեղաւոր ես»: Իհարկէ, ո՞ր յիմարը կ'ասի, թէ վի՛զ է առնում: Քաղաքավարութիւնը պահանջում է, որ մենք էլ քեզ հարցնենք: Հաւան ես:

Ներսէս. Չէ Սերոր: Էդպէս չի: Մարթա ջան. մեր դէմքին, մեր լեզուին մի մտիկ անիլ: Մենք մեր սրտի խորքում էլի առաջուայ պէս սիրում ենք քեզ: Չը կարծես, որ դու մեր աչքում մի աւելորդ բան ես, որ մենք ուզում ենք դէ՛ն շարտել: Չէ, Աստուած վկայ Մարթա, դու իմ աչքում էլի առաջուայ իմ քոյրս ես: Մինասի մասին միայն սա կ'ասեմ, որ քո մասին

մին էնպէս խօսք ասեց, որ ես ուզեցի նրա ոտքերը համբու-
րել... Մնացածը դու ես իմանում, մի քաշուիլ, կ'ուզես՝ «այո»
ասան, կ'ուզես՝ «ոչ»:

Աննա. Խօսիր էլի. ինչո՞ւ է լեզուդ քարին կապին դէմ
ընկել: Ինչո՞ւ ես պապանձուել, ասան՝ որ չես ուզում:

Սերոբ. Սպասեցէք: Ես չեմ ուզում, որ նա իրա երեսը իմ
մօտս բացի: (Յաճուկ Ներսէսին) Փողերիս գլուխը քոր է գալիս:
Դու տեսնում ես, որ նա համաձայն է. ես զնամ պատրաստու-
թիւն տեսնեմ (զնաց միջի դնով):

Ներսէս. Բացիր սիրտդ մայրիկի առաջ (զնում է աջ):

Տ Ե Ս Ի Լ 11

Աննա եւ Մարթա

Մարթա. Մայրիկ, ինչո՞ւ էք ինձ մորթում:

Աննա. Դու ինքդ ես մեզ առանց դանակ մորթել, մե՞զ ես
ասում:

Մարթա. Ինչո՞ւ ինձ գոնէ մի անգամ չ'ասացիք, որ մար-
դիկ սուտ ասող են լինում, երգումը ցեխի մէջ գցող: Ինչո՞ւ
թողիք որ ես մոլորուեմ:

Աննա. Գիշեր ցերեկ քեզ չէի՞ ասում:

Մարթա. Բաս ինչո՞ւ էիք թողնում, որ էս շունը ոտք դը-
նի մեր տան մէջ: Ես յիմարացայ, ես խաբուեցի նրա լեզուին,
ես կարծեցի, նա ինձ կը բախտաւորեցնի: Ես ի՞նչ իմանայի,
որ մինչ էդ աստիճան կարելի է չը խղճալ մարդու: Ախ ինչ-
պէս մարդիկ չեն վախենում Աստուածանից: Բաւական չէ որ
նա ինձ խաբեց, հիմի էլ դուք էք ուզում մի ուրիշին խաբել:

Աննա. Խաբե՛լ:

Մարթա. Կարելի՞ է, որ նա ոչինչ լսած չը լինի:

Աննա. Ես ի՞նչ իմանամ լսել է, թէ չէ:

Մարթա. Բաս ես ի՞նչ սրտով գնամ նրան, եթէ նա չի
իմանում: Եւ ի՞նչ աչքով պէտք է մտիկ անեմ նրան, եթէ նա
յետոյ իմանայ:

Աննա. Տանջանք է էլի:

Մարթա. Եթէ մեղք չը լինէր, վաղուց ես վերջ դրած
կը լինէի իմ կեանքիս: Կրակի մէջ էլւում եմ մայրիկ: Գի-
շեր ցերեկ ես Աստուծոն խնդրում եմ ինձ ների: Բայց եթէ
դուք չէք ներում, որտեղի՞ց նա ինձ կը ների: Գոնէ դու ինձ
ներիր մայրիկ, ախր չէ՞ որ դու առաջ ինձ սիրում էիր: Միթէ՞
յաւիտենական ընկճոյ ես քո աչքում:

Աննա. Թող Աստուած ների քեզ... ես ի՞նչ ասեմ: Ինչ կրակ մաղուեց իմ գլխիս: Քո անբախտութիւնը լեզուս կապեց, սպանեց ինձ... ախր չէ՞ որ ամենքիս ուրախութիւնը մենակ դու էիր իմ խեճ երեխայ:

Մարթա. Կարգադրեցէ՛ք իմ վիճակը և ու՛մ ուզում էք տուէ՛ք, միայն թէ նա իմանայ, որ ես մի անփորձ երեխայ եմ եղել, մոլորուել եմ, սխալուել եմ, թող առաջ նա ինձ ների, յետոյ ինքը գիտէ: Եթէ նրան էլ արժանի չ'եղայ, զցեցէ՛ք ինձ տան մի անկիւն, կապեցէ՛ք երեսիս դուռը, թող էնտեղ կըծկուեմ և մինչև կեանքիս վերջը քաւեմ իմ մեղքը: Երևի իմ անբախտ ճակատիս էդ էր գրած:

Աննա. Ձէ, չէ: Էդպէս մի՛ ասիլ: Գոնէ դու ալըլիր և օր տես: Մենք մի բախտաւոր օր չենք տեսել Աստծոյ երկնքի տակ: Ոչ մի մարդ մեր նեղութիւնումը մեր դուռը չի ծեծել, մեզ չի հարցրել: Էդ խեղճ տղան է, որ մի քիչ մեզ ձեռք է բռնել: Կարելի է նրա հետ դու աւելի բախտաւոր ես լինելու... չէ՞ որ հայրդ ասում է, որ նա մի բարի տղայ է:

Մարթա. Եթէ նա բարի կը լինի և յետոյ, ես ամեն կերպ կ'աշխատեմ, որ նա բախտաւոր լինի:

Աննա. Աստուած տնայ, որ դուք բախտաւոր լինէք որդի:

Մարթա. Միայն թէ թող նա ինձ տանի, հեռացնի էս տեղից... որ ամեն ինչ մոռացուի: Ախ ինչքան եմ դառնացրել ձեր օրերը: Դէ գոնէ հիմի, թող մէկ լսեմ քո քաղցր բերանից իմ անունը:

Աննա. Մարթա, Մարթա (փափաժում են): Շատ արտասուք թափելուց աչքերս են քոռացել:

Տ Ե Մ Ի Լ 12

Մարթա, Աննա, Ներսէս եւ Մինաս

Ներսէս (Մտնում են աջից). Հա, էդ լաւ է: Արտասուքը շատ ցաւեր է լուանում:

Աննա. Նա համաձայն է:

Ներսէս. Աստուած քեզ նրա հետ բախտաւոր անի, քոյրըս (կանչում է): Վարպետ Մինաս (մազում է սիրտը բռնելով):

Մինաս. (Չափից) Ես էնքան էլ հեռու չեի. ի՞նչ նեղութիւն տուիր քեզ:

Ներսէս. Ոչինչ... անցաւ: Հիմի խօսելու հերթը քոնն է:

Մինաս. Մինչ էսօր ես քեզ մօր տեղ եմ հաշուել, էսօրուանից էլ դու ինձ քո որդիդ հաշուիր: Իսկ քեզ իմ հայ-քրիստոնեայ քոյր. ի՞նչ ասեմ, իմ բախտիս՝ Աստուած քեզ է նշա-

նակել, քո բախտիդ՝ ինձ: Աշխարհք է, թո՛ղ պէտք է անես: Էսպէս էլ է լինում, Էսպէս էս: Է՛հ փառք Աստծոյ: Վարպետ Յակոբի աղջիկ, յոյս ունեմ էլ չ'ասես, թէ աներեսի մէկն եմ, մտել եմ Էստեղ, որտեղ ինձ համեցէք չեն արել:

Ներսէս. Հա հա հա... Էդ թո՛ղ նոր բան է (հազում է):

Մինաս . Ձէ, էլ չը խօսես Ներսէս... Ֆիասում է քեզ (նստեցրեց մահճակալի վրայ):

Տ Ե Ս Ի Լ 13

Աննա, Մարթա, Ներսէս, Մինաս եւ Սերոբ

Սերոբ. (Միջի դռով) Կարծեմ արդէն կարելի է շնորհաւորել: (Հանում է զանազան գրպաններից օղի) Սա փորագաւի ճար, (զինի) սա գլխացաւի (յետոյ բաժակներ, հաց, պանիր եւայլն): Դէ մայրիկ (ածում է զինին եւ տալիս): Ապա մի օրհնիր: Էն ինչպէ՞ս են ասում «օրհնեմ օրհնեմ զօրանաս, կանանչես չը չորանաս, գինի խմես քոռանաս»...

Աննա. Ողորմած Աստուածը լսի իմ մեղաւոր բերանիս օրհնանքը: Վատ օր չը տեսնէ՛ք, սիրով ծերանաք (խմում է զինին):

Սերոբ (Լրացնելով նրա ասածը) Մի բարձի տիրանաք, հ'մ: Անճյշ: Դէ վարպետ, տեսնեմ դո՛ւ ինչպէս ես սիրում նշանածիդ (ածում եւ տալիս է նրան զինին):

Մինաս. Լաւ ձեռքի է:

Սերոբ. Բռնիր ասում եմ (Մինասը բռնելուս յետ է քաշում, ուզում է խմել, նորից տալիս է նրան): Ձէ վարպետ, ես սրանում չը կամ, բռնիր: Իմը էդ առիւծի կաթն է (տալիս է նրան զինին, իրա համար ածում է օղի): Դէ Աստուած շնորհաւոր արասցէ: Եթէ ուզում ես հարսնացուդ քեզ շատ սիրի, լաւ քամիր (խմեց):

Մինաս. Կենացդ վարպետի աղջիկ (խմեց):

Սերոբ. Մինչև տակը, մինչև տակը: Այ էդպէս (ածում է զինի եւ տալիս է Ներսէսին): Խմիր ապէր, սա ամեն հիւանդու-թիւնների ճար է, օձի կծածից մինչև մարդի կծածը:

Մինաս. Նրան ո՛չ թէ խմելը, խօսելն էլ է ֆիաս:

Սերոբ. Ոչինչ, ես կը խօսեմ նրա տեղ. «Սերոբ, յետ դառ վատ ճանապարհից ե լաւ մարդ դառ»: Շատ լաւ ապեր: Ասենք թէ էսօրուանից խօսք տուի ես էլ լաւ մարդ դառնամ: Բայց չէ՞ որ էստեղումս (սրտում) կայ մի ցաւ, մարդուն խելքից հանող մի ցաւ: Նա չի թողնում ինձ, որ ես էլ հաշտ աչքով մտիկ անեմ աշխարհիս չարութիւններին, նա չի թողնում, որ

ես էլ կեղծ ժպտամ, սողամ փորիս վրայ և լիզեմ ինձ կոխ տունդ ոտքերը: Շատ անգամ մտածում եմ, «քեզ ինչ որ աշխարհքը լի է անարդարութիւնով և զրկանքներով»: Բայց չի լինում. նա զարթնում է ևասում՝ զլուխդ բարձր բռնիր, աչքերդ համարձակ, կուրծքդ հպարտ: Տճւր, խփիր, ջարդիր, քեզ հանգստութիւն չը կայ: Եթէ դուք ապեր, կարողացաք էդ փոքրիկ սատանայի զլուխը ջարդել էս տեղում, եթէ դուք ինձ կարողացաք բժշկել էդ ցաւից, ես էլ խօսք եմ տալիս ձեզ լաւ մարդ դառնալ (խմեց):

Տ Ե Ս Ի Լ 14

Աննա, Մարթա, Սերոբ, Ներսէս, Մինաս եւ Յակոբ

Յակոբ. (Առաջ բեմի ետեւից լսուեց նրա հառաչանքը «անհ, անհ», յետոյ նա մոտաւ սեւ վերարկովի վերի կոճակները բայ, փռչի մէջ կորած, զխաբաց եւ մազերը քրքրուած): Մարթա, իմ Մարթա: Ես տեսայ նրա հօրը, նա փողոցի մէջտեղով անցնում էր կառքի մէջ: Ես վազեցի նրա վրայ. բռնեցի կառքից և ասացի. Յիսուսի անունով ասում եմ քեզ, կանգնիր, յետ տուր ինձ իմ ընտանիքի պատիւը: Իսկ նա ոտքով խփեց կրծքիս, «խելքից ցնորուած է» ասաց, գցեց ինձ հողերի մէջ, քշել տուաւ առաջ:

Աննա. Ի՞նչ է պատահել քեզ, խեղճ մարդ, մեր է գզակդ: Յակոբ. (Կնոջը) Ես նրան մի վատ բան չ'ասացի, Անոյշ ջան. ի՞նչ իրաւունքով խփեց նա ինձ: Մեղաւորը նրա որդին է... ես ի՞նչ եմ արել նրան: Ես կանչեցի իմ Տէր Յիսուսիս, բայց նա չ'եկաւ ինձ օգնութեան, երևի հաւատը մեռած է իմ մէջ:

Սերոբ. Ես կը գամ քեզ օգնութեան, ես. էդ բանը նրանց էժան չի նստիլ:

Յակոբ. Դու էլի եկել ես: Կորիր, մի երեւալ իմ աչքիս: Իմ որդին Ներսէսն է (Համբուրում է նրան): Դու իմ սիրելիս ինչպէ՞ս ես հիմայ:

Ներսէս. Սիրիւր և նրան. նա խօսք է տալիս լաւ մարդ դառնայ:

Յակոբ. Հա՛, Աստուած ներէ քեզ... չէ՞ որ դու էլ (համբուրում է Սերոբին)... իմ արիւնս ես:

Սերոբ. (Աչքերը սրբելով) Է՛հ... չեմ կարող տանել էդ վիրաւորանքը, պէտք է վերջացնել (զնաց ծախ):

Տ Ե Ս Ի Լ 15

Աննա, Մարթա, Ներսէս, Մինաս եւ Յակոբ

Մինաս. Ինձ չե՞ս ճանաչում վարպետ:

Յակոբ. Հա հա հա: Սա աղքատներին լաւացնում է, բայց փող չի վերցնում. ասում է «մնա, երբ կը հարստանաք, կը վճարէք». բաս ինչո՞ւ չես կարողանում սրան լաւացնել: Ախր չե՞ որ սա է իմ տան սիւնը. չե՞ որ սա պէտք է վառ պահէ իմ տան կրակը, էս մարուող ճրագը:

Մինաս. Նա կը լաւանայ. Աստուած ողորմած է. Էգուց մենք ճանապարհւում ենք գիւղ:

Յակոբ. Հա: Տմբ նրան, լաւ մտիկ արա, լաւացրո՞ւ նրան, թէ չէ նա էստեղ կը մեռնի, չի ապրիլ (յանկարծ նրա դէմքը փայլում է եւ որպէս թէ ծիծաղելով): Բայց մտիկ արա, եթէ նա մեռնի, չը գնա, ինձ չ'ասես «Աստուածանով մխիթարուես, ծերունի»: Ձէ՛ չէ: Ինձ ի՞նչ, թէ նա կը մեռնի: Դու գնա մխիթարութիւնը նրան ասա: Ինձ ի՞նչ: Հմ, նրանն էր, նրանն էլ դառաւ: Ես որդի չ'ունեմ: Ես ինքս որդին եմ իմ Տէր Յիսուսի: Աղօթք անենք:

Մինաս. Ձէ վարպետ սպասիր:

Ներսէս. Հայրիկ ես իմ աչքով ուզում եմ տեսնել: Օրհնիր: Մինասը արդէն մեր Մարթայի նշանածն է:

Յակոբ. Ծջմարի՞տ է: Ուրեմն դուք լսեցի՞ք խեղճ ծերուկիս խօսքը (Մարթա եւ Մինաս մօտենում են): Անոյշ-ջան. օրհնենք նրանց:

Ներսէս. Ախ Աստուած, ա՛ (բռնում է սիրտը եւ թաշկինակով քերանք):

Աննա (յանկարծ). Երեխաս ձեռքից գնաց:

Մինաս. Ոչինչ, մի վախէք: Էստեղ ցուրտ է, պէտք է յառնել ներս (օգնում է նրան):

Յակոբ. Մի՛ թողնէք, երեխան մըտում է: Տարէ՛ք ներս (Մինաս եւ Մարթա տանում են Ներսէսին, որի ձեռքում նկատում է սաստիկ արիւնոտ թաշկինակ: Անմոն դառն մօտ հեծկտում է): Աննա դու լաց ես լինում: Ասա օրհնեալ լինի Աստծոյ կամքը:

Աննա (լացով)... Օրհնեալ լինի Աստծոյ կամքը:

Յակոբ. Հա. Էդ լաւ է: Օրհնեալ լինի նրա կամքը:

Տ Ե Ս Ի Լ 16

Յակոբ, Աննա եւ Սերոբ

(Բեմի ետեւից լսում է Ալեքսանդրի ձայնը). «Ես քեզ ասում եմ բաց թող ինձ... սրիկայ»: (Սերոբի ձայնը). «Մեռի՛ր շուն շան որդի»: (Ալեքսանդրի ձայնը). Ա, օգնեցէ՛ք... ա՛մ»: (Սերոբը մըտնում է ծախից, արիւնոտ դաշոյնը ձեռին):

Աննա. Տէր Աստուած, էդ ի՞նչ է, ի՞նչ է պատահել:

Սերոբ. Ոչինչ. ես մաքրեցի մեր տան պատիւը:

Յակոբ (Որպէս թէ չմտնելով իր շուրջը կատարուածը). Աղօթք անենք... (չողում է) աղօթք անենք:

(Այս ձայների վրայ Մինաս եւ Մարթա յայտնւում են աջ դռան մէջ):

Ա.Լ. ԱՔԵԼԵԱՆ

ԳԻՊԼՈՄԱԻՈՐ ԳՈՐԾԻԶՆԵՐ

(Գրչի հանար)

—«Բարե, Ասատուր,

—Բարե, Խաչատուր.

—«Էդ ո՛ւր ես այդպէս ոտք առած վազում.

—Նիստի եմ գընում, ինձ են ուղարկում.

—«Ի՞նչ նիստ, այ խելօք, այս կէս֊գիշերին
Նիստի են կանչում միայն գըժերին.

Մեր նիստի օրը երէկ էր, անցաւ,

Ոչ ոք չէր եկել, նիստ չը կայացաւ:

—Ի՞նչպէս թէ երէկ... Ա՛խ, ներիր, մօ՞ն շեր...

Ի՞նչեր եմ փչում... Ի՞նչ որ էս գիշեր

Կընկանքս ասի, որ տանից դուրս գամ,

Նոյնն էլ ես քեզ եմ կըրկնում, բարեկամ...

—«Դէ, ց՛ը... Ասատուր,

—Դէ, ց՛ը... Խաչատուր.

—«Ես դէպի կըլուք, իսկ դու դէպի ո՛ւր.

—Ես էլ, բարեկամ (մեր մէջը մընայ),

Ռանդէվու ունիմ... Նիստն է մահանայ...

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

ՄՈԿԱՅ ԿԵԱՆՔԻՑ

Մոկս ու Շատախ երկու գաւառներ են ընկած Վանից հարաւ. 1894 թւականին Վանի կուսակալութիւնից հրամանագիր ստանալով Շատախով գնացի Մոկս:

Անցանք Հայոց-Ձորից, Շըխնոց-Գէօրէնդեշտից, որ շատախցիների երթևեկութեան վտանգաւոր. ճանապարհն է, ու մտանք անտառներ, ձորեր, ուր բարձրութիւններից հոսող ջրերը իջնում էին ցածր ու կազմում Շատախի գետը, որ խփելով անտառախիտ ծառերին, բարձր ու կապոյտ լեռների սև քարերին վշշում էր ու վշշում: Մենք գետի ափովն էինք գնում, անցնելով նեղ ու ժայռոտ ճանապարհներից, հաստարուն ծառերի տակից, որոնց ճիւղերը վար կախուած, երբեմն ստիպում էին մեզ ծռել գլուխնիս ջորիների վրայ: Անցնելով անտառը հասանք մի մարգագետնի, անցանք այս մարդից էլ, արգէն մենք հասել էինք Շատախի բերանը: Այգպէս ահա Վանից երկօրուայ ճանապարհորդութիւնից յետոյ մենք մտանք Շատախ:

Երբ իջևանեցինք դեռ օրը երեկոյացած չէր, կէս ժամու չափ մեր յոգնութիւնը առնելէ վերջ, ես վեր կացայ Շատախում ման գալու:

Գետն անցնում էր «Թաղ»-ի կենտրոնից, շատացած ու յորդահոս. վրան ձգուած քարէ կամար կամուրջը կապում էր այս ու այն կողմի տների յարաբերութիւնները, որոնք մի մայթի լայնութեամբ հազիւ թէ երկու կողմով գետից հեռի լինէին շինուած: Նոյն տեղ իրարի մօտիկ էին շուկան, եկեղեցին ու կառավարական պաշտօնատները: Բնակիչները մեծ մասամբ աբա ու շալ պատրաստող արուեստաւորներ են:

Գիշեր անցկացրի Շատախի «Թաղ»-ում: Անկողինս ձգուած էր վերնայարկ սենեկի այն սլատուհանի առջև, որ նայում էր

իր դէմ ցցուած անտառապատ սարերին: Առաւօտ ճանապարհի վրա եղնէինք: Նախ պէտք է անցնէինք այն լեռնաշղթան, որ կոչւում է «Գողի սար»։ Իբրեւ ուղեցոյց ես վերցրի Քոչար թափառական ցեղերից մի ջահէլ քիւրդ: Նրա անունը Բրօ էր: Ես ու Բրօն Շատախից դուրս եկանք նրա երեք ջորիներին հետ, ու առաջին գիշերը անցկացրինք Շատախի մզրաններից գերբաւացի քիւրդ ցեղապետ Քոք աղի տանը. գիւղի բնակիչները Քոք աղայի հայ մրիբաններն էին. այր մարդիկ բնաւ մեզ չը մօտեցան, վախելով մեր մեկնելուց յետոյ աղայի հարցաքննութեան ու սպառնալիքին ենթարկուելուց, այդ գործը կատարում էին կիները: Մենք իջևանեցինք դուրսը, բաց երկնքի տակ. մեր ճանապարհը ձորից դէպի սարի գլուխ բարձրանալու դրութեան մէջ էր, մեր օթեանը սարի կրճերն էր:

Բրօն Քոք աղայի հետ խօսելիս իբր հրամանակատար ծառայ էր ձեռնում, բայց երբ ինձ հետ մենակ մնաց, Քոք աղայի ինչ լինելն յայտնեց, ու ինձ ազդարարեց չը քնել գիւղում նրա կողոպուտին չ'ենթարկուելու համար. մենք չը քնեցինք, կէս գիշեր հաղիւ անց, Բրօն նայեց իր երկնային ժամացոյցին ու ասողերի ընթացքը հաշւեց, որից եզրակացուց թէ ժամանակ էր ճանապարհելու:

Հասնելով Գող սարի խարաբա կոչուած մասը՝ իջանք ջորիներից, Բրօն նրանց ազատելով բեռից և թամբից, տարաւ հեռուն ջուկ-ջուկ ամեն մին մի քարի կապելու շատ երկար պարանով: Այդ ժամանակ ես կանգնած էի սարի գլխին ու նայում մեր գալու ու գնալու ճանապարհին: Կանգնած տեղումս, մի քարի տակից, բղխում էր սառնորակ զուլալ աղբիւր ու սահելով մարմանդ անցնում ծաւալում էր դէպ ցածր, կանաչ մարգերի տակ: Մեր աչքի առջև փռուած էր զառիվայրի վրայ հանգչած մզրանների կանաչ ծառաստանը, որի մէջ ծածկուած տնակներ էին երևում. մզրաններից էն կողմ ցածր փռուած է ընդարձակ տարածութիւն, ուր երևում են Ոստանայ, Կորճկանի և ուրիշ լեռներ: Աննշմարելի հեռաւորութիւնից, մշուշապատ հորիզոնի տակից երևաց արևը ու իր առաջին ճառագայթները խփեց թմրաման սարերի գագաթներին, մութեր գցելով նրանց արանքներում:

Բրօն իր գործը վերջացրած մօտս եկաւ, բաց արաւ իր փոքրիկ խուրջինը, հանեց իր հետ բերած թափառական քոչարների պատրաստած մի քանի հաց ու քոչարի ընտիր պանիր, փռեց աղբիւրի գլխի մաքուր սալին ու ինձ հասկացրեց որ առաւօտին լոյսի ու շաղի խառնուրդին մէջ, սարի գագաթ, աղբիւրի գլխին միայն այսպիսի հաց ու պանիր են ուտում:

Խստապա սարի ճանապարհին ենք, ուր գողերն անպակաս են լինում: Երկուքս էլ իջած էինք ջորիներից, երկուքիս ձեռքին էլ հրացանը պատրաստ էր: Անդունդի մէջ բուսած մի բլուր բոլորակի, մեծ արտի չափ տափարակից նեղ-նեղ ճանապարհներով իջնում էին զանազան ճիւղերի բաժանուած ձորերը, որոնք տանում էին Շատտխի և Մոկաց զանազան գիւղերը. վերև յիջած տափարակ բլրի գլխին, երկու արշին բարձրութեամբ քարերով բոլորակի պատուած, աւազանի ձևով մի ընդարձակ շէնք կար առանց առաստաղի ու դռան: Այդտեղ էր աւազակների բոյնը, ուր, Բրօի պատմածով գողերը բերում են գողացած իրերը իրանց մէջ բաժանելու, և իրանք ծածկուելով պատերի տակ, զրսից չեն երևում: Եթէ յարձակումներ կրելու ստիպուին, չորս բոլորակի շարուած պատի քարերը պահանջէին են ծառայեցնում ու իրանք անցկացած քարի ետև, հրացանը դրած պատի վրայ խփում ու կըռւում են:

— Ի՞նչպէս պիտի իմանաս թէ այնտեղ մարդ կայ կամ ոչ:

— Հիմի պիտի իմանամ, պատասխանեց Բրօն, հրացանը դրեց ջորիի վրայ, ջորին կանգնեցրեց ու առաջուց պատրաստած, ծոցում լեցրած ձգելու քարերը հանեց ու սկսեց հեռուից տեղալ բոյնի կողքին: Ասում էր, եթէ մարդ լինի այնտեղ, գլուխը վեր պիտի հանի, տեսնելու թէ ո՞վ է: Բրօի քարերը վերջացան: Քիչ էլ սպասեցինք, ձայն չ'եկաւ. ոչ գլուխ բարձրացնող եղաւ և ոչ հրացանով պատասխանող: Բրօն ասաց, մարդ չը կայ, գնանք: Մենք անցանք հեռացանք, բլուրը ծածկուեց, էլի սկսուեց քերծ ու անդունդ. բաւական գնալուց յետոյ մեր առաջը բացուեց շատ հեռաւոր սարերի կրճքին փռուած գիւղերի մի տեսարան:

Մենք ճանապարհորդում ենք Առինջայ ձորից: Երկու կողմի սարերի կրճքին, մօտիկ-մօտիկ շինուած են հայ գիւղերի քարաշէն երկյարկ տներ, որոնք հեռուից դղեակի կամ փոքրիկ բերդերի տեսքն ունին, իրանց առջև դէպ զառիվայր տեղաւորել են փոքրիկ արտեր, ծառաստաններ ու պարտէզներ, որոնք իջնելով ցածր հասնում են մինչև գետակ: Մոկաց հարսները իրանց անուանի գեղեցկութեամբ մեզ ցոյց են տալիս Արգալ բէգի տունը, որ Մոկաց իսկական տէրն է. մեր աջ սարի թևին է Ամենափրկիչ վանքը, որի քարաշէն հոյակապ եկեղեցին իջնում են քարէ սանդուղքներով: Բուն եկեղեցու կենտրոնում մի սառն ու յստակ աղբււր բլխելուց զատ՝ աւանդաբար ասում են, որ պատի մէջ արձանի պէս կանգուն թա-

դուած է Քրիստոսի ծննդեան գնացող Գասպար թագաւորի մարմինը, որը քրիստոնէական այդ առաջին եկեղեցին ինքն է հիմնել տուել իր ծերութեան օրերում. և թէ Ամենափրկիչը իր այդ հնութեամբ ու դիրքով այնքան մեծ նշանակութիւն ունի կրօնասէրների աչքին, որ Երուսաղէմ գնալ չը կրցողը եթէ Ամենափրկիչ գայ, Երուսաղէմ գնացած կը համարուի: Վանքի մի մագաղաթի վրայ գրուած է. Լէնկթէմուրը իր արիւնահեղ գնացքը կատարելիս հրաման է արել, միայն այնքան մարդու կեանք կը շնորհուի, որքան մարդ ապաստանելով կարողանայ պարունակուել եկեղեցում: Նրա վանահայրը ծերունի մի քահանայ — Տէր-Շմաւոնը չը նայած իր ծերութեան, առոյգ էր և քաջ. նա Աբդալ բէգի պէս «էշկեա» կանչուելով, մամաւկցում էր նրա աւագակային գործողութիւններին: Այդ աւագակային ղերից շնորհիւ վանքը տեղի համեմատական չափով պահում էր իր շքեղութիւնը ու հօր յաջորդը պատրաստ լինելու համար վարժ Տէր-Շմաւոնի որդին ևս քահանայ էր ձեռնադրուել:

Աբդալ բէգի վրայ գաղափար տալու համար բաւականա՝ նանք ասել, որ պատերազմել է նախ Բէզըրխան-բէգի ու յետոյ թիւրքաց կառավարութեան դէմ. Օսման փաշան թնդանօթներով եկել կործանել էր նրանց բերդերը, դեռ մինչ ցարդ մնում են Դաշտի թաղում կործանուած բերդի հողակոյտերը: Աբդալ բէգին էլ իր երեք եղբայր Շըխի, Սիւլէյման ու Շէրէֆ բէգերով գերի են տարել Պոլիս, ու այնտեղից աքսորել Հոռոս կղզին, վերցնելով նրանց զինւորական ծառայութեան մէջ: Աքսորի ժամանակամիջոցը լրանալուն պէս, թիւրք կառավարութիւնը նրանց գրաւելու համար կամենում է բարձր պաշտօններ տալ ու պահել. բայց նրանք յանձն չ'առնելով վերադառնում են Մոկս իրանց նախկին տիրապետութիւնը: Աբդալ բէգը խօսում է ու գրում է օսմաներէն, պարսկերէն, ֆրանսերէն. խօսում է քիւրդերէն, որ իր լեզուն է, ու գիտէ հայերէն որ չի խօսում:

Հասնելով Մոկս քաղաքը իջևանեցինք իմ վանեցի մի բարեկամի մօտ, որ պաշտօնով այնտեղ էր ապրում:

Մոկս քաղաքը բաղկանում է հինգ մասից, միայն Քաղաք կոչուած մասն է որ փոքրիկ տափարակի վրայ է գտնւում, միւսները կոչւում են Դաշտ, Անձղոնց, Աբրհամանց, Զրաղացի թաղ, Մանդկանց:

Առաջի հինգ մասերը գուտ հայաբնակ են, իսկ վերջին՝ Մանդկանցը՝ քրդաբնակ: Հայաբնակ մասերից ամեն մին ունի իր եկեղեցին: Եկեղեցիները սարի գրկին են, միշտ հոյակապ, միշտ գեղեցիկ: Մանդկանցը մի բլրի վրայ է ու բերդի նմանութիւն ունի, քարէ սանդուղքներով բարձրանում են մինչև

դուռը, բլրի գլխին, որ տափարակ է: Այդ տափարակի վրայ են շինուած ընդարձակ տներ, ծառաստաններ, ուր պտուղներից ու բանջարեղէններից զատ ունի և մեղրի փեթակներ, որոնք իրանցից ոչ մի ժամանակ խլող աշխատանք չեն պահանջում: Մանդկանցի քրդեր պարապում են նաև ջորապանութեամբ, աւազակութեամբ:

Մանդկանց կողքին է շինուած «Միր Հասան»-ի գերեզմանը. սա իրանց ասածով մի բարեգործ քիւրդ է եղած. այնտեղ կայ նաև մզկիթ և մէտրէսէ. դասականդութեան լեզուն քիւրդերէնն է և արաբերէնը, ոչ օսմանեանեան լեզուն և ոչ գրականութիւնը մուսք չ'ունին այնտեղ, քիւրդերը ասում են թիւրք հասարակութիւնը ու նրանց վրայ ոչ մի արժանաւոր յատկութիւն չը գտնելով անուանում են «սերֆրօշ» որ նշանակում է սխտոր ծախող: Այդ ատելութիւնը այնքան խոր արմատ ունի, որ կառավարութեան իրանց համար շինած մի վարժարանի պատերն անգամ քանդել ու առաստաղի գերանները գետն էին թափել, որպէսզի թիւրքն ու թրքական կրթութիւնը հեռի մնան իրանցից: Մէտրէսէն պահպանւում է Միր-Հասանի անունով ամեն տարի կազմակերպուած ժողովարարութեամբ:

Մի օր Մանդկանց մզկիթ գնացի, տեսայ որ դա մի մեծ էլի հոյակապ նախկին եկեղեցի էր նոյնպէս մեծ-մեծ պատուհաններով, նայուածքը դէպի արևելք. նրա մէջտեղից մի անշընորհք ու անարուեստ կիսատ պատ քաշելով՝ ժամանակներից իվեր յարմարեցրել են մզկիթի, ու բաժանուած մասը մնացել է անգործածելի իրանցից էլ ճանաչուելով իբր հայկական եկեղեցի. հիմիկուայ մանդկանցին հայերի թաղ չի անցկենում իբր սովութիւն, և ոչ մոկացի հայ Մանդկանց:

Ջրաղացի թաղը իբրև հայերից բնակուած քաղաքամիջի մի բաժանմունք, գտնւում է մի սարի ստորոտում Մանդկանցի դէմ: Այս երկու մասերը իրարմից զատում է Փութկու ձորից եկող Մոկաց գետը, որ բղխում է մի քարանձաւի միջից. նրա տեղը ասում են առաջուց եկեղեցի է եղել, թէև գետի այս ակունքի մօտ բլրի գլխին ևս շինուած կայ մի մեծ եկեղեցի, ուր բնակութիւն չը կայ ու մանդկանցուց ոչխարի մակաղատեղին է:

Գետի այն միւս ափը մանդկանցիք առանձնացնելով չեն բաւականացել, այլև պահանջել ու սովորութիւն են դարձրել որ Ջրաղացի թաղի առջևից Վան երթեկող ճանապարհի անցորդը եթէ ձիաւոր է պէտք է վար իջնի ու հետի անցնի Միր Հասանի դիմացից ի պատիւ նրա. այնտեղ արգելուած է գործիական ու ձայնական երաժշտութիւն, նոյնիսկ գլխին անձրեղց

կամ հովանոց բռնելը: Միր Հասանի դերեզմանական պարտէզը, ներկայացնում է վայրենի բնութիւն, ուր ծառերը չը պիտի մշակուին կտրտուելով, ինքնին կտրտուելով վար ընկած ճիւղերը չը պիտի վերցուին. բուսած խոտերը չը պիտի քաղուին, ամեն բան պիտի մնայ տեղնիտեղ, մարդկային ոտքը իրաւունք չը պիտի ունենայ նրանում քայլ փոխելու, որոշեալ ճանապարհով անցնելուց զատ:

Իրդական այս կրօնական ու կրթական հաստատութեան դէմ Զրադացի թաղում մի առանձին շինուած սենեակում էր ահա որ ես իջայ իմ բարեկամի մօտ:

Նրա ծառան պատրաստեց մեզ համար տեղական ընթրիքը, որի ժամանակ բերին Մոկաց ընտիր սպիտակ մեղր, կարագ, մրգերից՝ Մոկաց տանձ որն իր մեծութեամբ ու համեղութեամբ անուանի լինելով տունկը տարուել է քաղաքները ու կոչւում է միւկնոյն անունով. կային նաև դեղձ, բէդարան խաղող, որն ուտելու համար սովորութիւն կայ գետի եզերքում քարերի մէջ փռել, որի վրայ խփելով ափը ծեծող ալին, այնքան լուանում, պսպղացնում ու ուռցնում է, որ իր մասնաւոր համին աւելացնում է մի տեսակ ախորժելի անուշութիւն, ու ճաշակող քիմքերը դրդում է անյապ ուտելու ցանկութեան: Բաւական ժամանակ մնալով Մոկաց երկրում ես շատ հետաքրքրական սովորութիւններ և երևոյթներ տեսայ, որոնց հետ կ'աշխատեմ ծանօթացնել ձեզ:

Հասարակական կարծիքը Թիւրքիայում.

Ընդհանրապէս կարծւում է, թէ թիւրք և քիւրդ ժողովուրդը հասարակական կարծիք չ'ունի: Այդ ուղիղ է միայն եւրոպական քաղաքակրթութեան տեսակէտից, Թիւրքիայի հրպատակների և օտար, բարեկամ կամ թշնամի պետութիւնների վերաբերմամբ այդպէս չէ: Իսլամ տիրապետութեան քաղաքական հայեացքները տարածւում և հանրային համոզում են դառնում նոյնիսկ մի քանի ժամում «օթումադների» (նիստերի) միջոցով: Ամեն թաղի թաղապետ, կամ ազգեցիկ տեղական պաշտօնեայ կամ քիւրդ բէգ այս խնդրում համախոհ կերպով են գործում, և նրանցից ամեն մինը իր տանը դրա համար յատկացուած ընդունելութեան սենեկներ ունի ամառուան ու ձմեռուան ջրկ-ջուկ, ուր հաւաքւում են թիւրքեր ու քիւրդեր առանց դասակարգի խտրութեան, ու լսում պաշտօնական հաղորդագրութիւնները բերանացի և դատողութիւններ անում: Այս միջոցով թիւրք միապետը կարող է իր գաղտնի ցանկու-

Թիւններն, մօբերն ու հրամանները մահմէդական ազգաբանակութեան մէջ տարածել մի քանի ժամուս առանց լրագրերի ու իրազէների: Վերջիններս՝ այսինքն իրազէները գրաւոր ձևականութիւններ են օտարներին և քրիստոնեայ հպատակներին խաբելու համար: Պատմում են, որ դեռ ուսու-թիւրք վերջին պատերազմը չ'եղած չը գիտեմ, ի՞նչ առթիւներից գրգռւած, Վանի այդ ժամանակուայ միւթէսէրիֆին կայսերական փիրման է ուղարկւում, որ հպատակ քրիստոնեաներին հաւասար աչքով նայի: Փիրմանը ըստ օրինի կարդացւում է հրապարակաւ և ընդունւում թընդանօթածգութիւնով ու «եաշա»-ների (կեցցէ) ձայներով: Դրանից օգտուելով ժամանակի տեղական հայ առաջնորդը, ամեն մի սպանութեան կամ հայի դէմ եղած հարստահարութեան համար անմիջապէս թագրիր (գրաւոր բողոք) է տալիս: Միւթէսէրիֆը թիւրքական զանցառու պատասխանը «իշապընա պաքարըդ»-ն (ինչ որ հարկաւոր է կ'անենք) կրկնելով, երեքկնելով չի կարողանում առաջնորդին հասկացնել, որ իր բողոքագրերը չը շարունակի. վերջապէս մի օր առանձին տեսակցութիւն է նըշանակում ու նրան մտերմարար ասում. Մուրախաս էֆէնդի, սէն փիրմանա պաքմա, իչինդէքի փուսուլայա պաք. (դուն փիրմանին մի նայիր հետն ուղարկուած տոմսակին նայիր) և ցոյց է տալիս տոմսակը, որ արտօնում է անել ինչ իրանց կամքն է պահանջում, և ինչ որ անել յարմար է տեսնում, միայն թէ առանց անխոհեմութիւնների: Այսպէս հնաւանդ սովորութիւն է թիւրքաց զիւանագիտութեան մէջ ազատամիտ իրազէներ ու «իչինդէքի փուսուլա»-ներ, որոնք նիւթ են դառնում իրանց հասարակական կարծիքների: Թիւրքահայը այնպէս լաւ գիտէ այդպիսի իրազէների նշանակութիւնը, որ Նւրուպայի դրանց տուած կարեւորութեան վրայ ծիծաղում է սկեպտիկաբար ու առած դարձած խօսքն է կրկնում. «Սէն իրազէս պաքմա, իչինդէքի փուսուլայեա պաք»: Նկատելի է թէ ինչպէս օթուրմադներ իմիջացով մինչև մեր օրերը շարունակուող այս «իչինդէքի փուսուլա»-ների իմաստը իբր հասարակական կարծիք շինելով ու տարածելով, թիւրքերն ու քիւրդերը որոնք ուրիշ գէպքում իրար միտ են ուտում, այս պարագայում միանալով գործում են համերաշխութեամբ:

Ոստինք քրդական կենտրոնը

Ոստինք, քրդական հը պաշտօնական այս կենտրոնը, Աւինջ, Նանենց, Առուանից ու Տինիս տարող ձորերի կենտրոնումն է: Տափարակ քերծի վրայ շինուած մի

պալատանման տուն, բարձր կանգնած ու շրջապատուած պարտէզներով ու մարգագետիններով, իր փառաւոր լուսամուտներէից նայում է քառակուսի պաշտօնական կենտրոնին ու ձորեր տանող ճանապարհներին. այդ մարգագետինների մեծ մասը Ամենափրկիչ վանից կալուածը լինելով տիրապետել է Շըխի բէգն ու ընդարձակել իր սահմանները, մի կողմից էլ իր առջևն ունենալով Մակոց գետը որ խփելով մօտիկ գտնուած մի սարի փեշին ու տրորել չը կարենալով խփում ու անցնում է շարունակ. նրանից շատ քիչ հեռի է և իր եղբայր Շէրէֆ բէգի տունը որ թէև խելք չ'ունի, բայց անուանի է մնում իր եօթն աւագակ որդիներով. Մօտիկ է Աղին, ձորերի հայ մեծ և առաջին գիւղը ուր բնակւում են Մոկաց Մէլիքը, հայերի հոգեւորական գործերի փոխանորդ աէր-Մարտիրոսը, հաշական գործերի Աղթամարայ կաթողիկոսական գործակալ Աբդալ բէգի որդի Մէհտուլլահ բէգը. քիչ հեռի է նաև Կարմիր մեծ կամուրջը որ հայերն են շինած ու նրա գլխին բարձրացած բերդը, որ իր զառիվայրի շրջապատուած այգիով ու պարտէզներով ծառայում է հիմի Նուրի բէգին իբր տուն: Սա իր հայասէր եղբայր Մէհտուլլահ բէգի հակապատկերն է կազմում. Սուլէյման բէգը դուրս գալով Շիխ բէգի ներկայ տանից բնակւում է Մոկաց «Դաշտ» հայ թաղում, որի վրայ յարմար պարագաներում հայերը միշտ առաջ են տանում իրանց բողոքը թէ չեն ուզում հայերի մէջ քիւրդ ունենալ, ու կամենում են դուրս գցել Դաշտի թաղից: Վերջինս եղբայրների մէջ յանդուգն ու համարձակ աւագակներէիցն է. առանց աջ ու անհակ նայելու զբաղւում է քաղաքագիտութեամբ: Աբդալ բէգը լինելով բէգերի մեծ եղբայրն ու հայրը, առանց գործի գնալու թէ թիւրք պաշտօնեայ է, և թէ երկրի մեծ տէրը, ուր որ ուզի այնտեղ է բնակւում. նա ութսուն տարեկան կայ, բայց զարմանալի է որ քառասուն տարեկանի առոյգութիւնն ունի, ետեից ման են գալիս հինգ վեց զինուած խոլամներ (ծառայ): Ինքը զարունից սկսեալ սար'ըն է գնում. իր վրայ իր կեանքում, ասում են անպատուութիւն է համարել փողի քսակ ունենալ, միայն հրաման է արել, կողոպտել, մորթել, աւարել, ու նոյնպէս հրաման է արել ուզածին պէս ծախսել. այս էլ Աբդալ բէգն է, որի բնակութեան տեղը ասինք թէ Աւինջն էր: Այս բէգական ցեղը Մոկսի բնակիչներին իբրև հպատակների իրանց վրայ են բաժանած, թիւրք կառավարութեան ստացած տուրքերից յետոյ, իրանք էլ իրանց տուրքերն են վերցնում. իրանց հպատակներին սուր կրելու, աւագակութեան գնալու իրաւունքներ են տալիս, ու

նայած հպատակի հարստութեանը, հարկ եղած դէպքում ծախում են նրա հպատակութիւնը մին միւսին: Դաշտ թաղեցի Ջէիվէրն ասում էր, ես առաջ Աբդալ բէգի հայն էի, նա ինձ տաս օսմանեան լիւրայով ծախեց Շըխի բէգի վրայ, ինձ էլ սուր կրելու արտօնութեան տուեց: Ջրաղացի թաղից մի քանի տուն Աբդալ բէգ նուիրել էր չը գիտեմ ո՞ր բէգին ասին նրա ամուսնութեան առթիւ: Շըխի բէգի սովորութիւնն է տանից դուրս չը գալ, ընդունել ամէն տեսակ այցելութիւններ, լսել տեղեկութիւններ, պատգամաւորներով բանակցութիւններ անել, ու քաղաքական գրագրութիւն ունենալ ծածկագրութեան տակ Պոլիս ու Հայաստանի ուրիշ քաղաքներ իրանց անյայտ բարեկամների ու մտերիմների հետ. յիսուն հինգ տարուց աւելի է երևում, խօսում է մեղմ, ու կշռում բերանից դուրս հանած ամեն մի խօսքը, չափում է մարդու արժանիքը, չափը նրա խօսակցութիւնից հանելով:

Մոկաց մէլիքները

Մոկաց մօտիկ անցեալի իշխանների մէջ առաջ Նէթօն էր որ հակալիւն էր ներկայացնում աքսորից վերադարձած քիւրդ բէգերին ու աւելի նրանց զուլիս գտնուող Աբդալ բէգին. Նէթօն միակ ազդեցիկ հարուստ հայ իշխանը լինելով Մոկսում ճնշել էր նրանց, ոչնչացրել բէգական ազդեցութիւնը ու նրանց դարձրել էր իր շնորհների ետեից թափառողներ, աղերսականներ. Աբդալ բէգը այդ շնորհներից մին մուրալիս Վան գնալու ժամանակ սարի ճանապարհին, երբ Նէթօն տռջկից ու ինքն էլ՝ պատիւ, ուրիշ խօլամների հետ ետեիցն է գնում, յարմար ըողէն հասած համարելով դէն է գցում կեղծ բարեկամութիւնը, վեհանձնական թշնամութիւնից ու սրտի քաջութիւնից զերկուած, Նէթօին՝ ջորիից ցածր իջնելիս, ետեից հրացանը կրակում է ու փախչում. Նէթօն ընկնում է մեռած, ու վատասիրտ մարդասպանը բռնւում բանտ գրւում. բայց թիւրք ու քիւրդ յանցաւորները, որոնք իրանց ոճրագործութիւնները եթէ քրիստոնէի դէմ են կատարել, ցոյցի համար թէև պատժի ենթարկւում են, բայց կառավարութիւնը զանց առնելով օրէնքը, ու հետեւելով իր ցեղական ու կրօնական աւանդութիւններին ու սովորութիւններին, բանտից փախցնում է եղեռնագործին, կամ մի ուրիշ վարձկանը իրրև ոճրագործ տեղն է նստեցնում: Այդ իսլամական առանձնայատուկ շնորհներից Աբդալ բէգն էլ չէր զրկուած, նրան փախցրել էին Պարսկաստան, ուր կարճ ժամանակ թափառելուց յետոյ վերա-

դարձել էր նորից իր համար հարստահարութեան այժմ պատ-
րաստի աշխարհ—Մոկսը: Ժամանակի մեծ պահանջ չէր զգաց-
ւում ցրիւ տալու Նէթօի հարստութիւնը, խլուած էին իր
կալուածները, այրել տուած էին Մոկաց կենտրոնում Անձղոնց
թաղի գլուխ կառավարչական պաշտօնատան վերե իրերի հա-
մեմատութեամբ առաջնակարգ շինութիւն համարուող իր տու-
նը: Ամեն օր անցնում էինք այդ աւերակներէ վրայից, Նէթօի
կէն խիզնօն աղքատացած, աւերակ տներէց մնացած միայնակ
մի կտոր տան դռան առաջ նստած, ձեռքը կցած ու ծունկը
բռնած մեղամաղձիկ ու տխուր նայում էր այդ աւերակներին:
Նէթօի սպանուելու ժամանակ իր մեծ աղջիկներից զատ ու-
նեցել էր և մի վոքր որդի Դարմօն, որ մեծանալով տասնհինգ
տարեկան դառնալիս ամուսնացրել ու իր թշուառութեան կշտին
բերել նստեցրել էր սե-սե վառ աչերով, արիստոկրատիական
վեհանձն ու գրաւիչ նայուածով սիրուն գեղանի Քոլէն: Նէ-
թօի որդի Դարմօն միշտ չը կար, նա կամ բանտն էր կամ դէս ու դէն
գնում, ծեծում սրան-նրան, խլում ուտում ծիծաղում քիւրդի հետ,
հայի հետ առանց խտրութեան, ու ընկեր դառնալով բէգերի
որդիներից մի քանիսի հետ, թշնամանում ու ընդհարում էր
բէգերի միւս որդիների հետ, աւազակութիւն անելով նրանց
հետ մինակ ինքն էր դրւում բանտ, ու դուրս գալիս էլի շա-
րունակում էր, աղքատ թափառական, համարձակ, այդ շրջա-
նի ընկերական կեանքը: Երբ նրան ասում էին՝ ինչի՞ մի գործ
չես անում.—Օ՛, իմ հայրը թնշ վայելեց իր հարստութիւնից,
պատասխանում էր նա, որ ես թնշ վայելեմ: Մերը օրից օր է,
տեսնենք թնշ կը լինի:

Մոկսում Ամենափրկիչ վանքից յետոյ երկրորդական
տեղն է բռնում սուրբ Կարապետի վանքը, որ անտա-
ռապատ բլրակի ոտքը մի տափարակի վրայ շինուած լի-
նելով, Սբկանց հայ գիւղի վրայից նայում է գետի միւս ափին
եղող Աղինին, Ոստինքին. իրանից քիչ հեռու Սբկանից մօտ
կայ նաև մի մատուռ որ ասում է էլի Սբկանց, աւանդութիւ-
նով ասում են որ այնտեղ կուսանոց է եղած, որ քանդուելով
յիշատակի համար մատուռն միայն է մնացել, և թէ Սբկանց
նշանակում է սուրբ կանանց, սուրբ բառի տեղ կրճատուած սբ
բառի գործածութիւնը մինչև հիմի էլ կայ Վանուսն իսկ. սուրբ
Գրիգոր ասելու տեղ սբ Գրիգոր են ասում: Չուի բէգը Մոկսի
բազմաթիւ փոքրիկ բէգերի մի որդին, իբր բռնութիւն, մի
քանի անգամ եկել է վարել ցանել այն տափարակը որի վրայ

շինուած է վանքը, ու դրանից օգտուելով, հողը համարել է իր սեփականութիւն: Թոյլ չը տալով որ հեռէ մէկը իր արտից ճանապարհ շինելով վանքը մտնի, յաջողեցրել է վանքն ևս առնել իր հովանաւորութեան տակ և վերցնել վանքի եկամուտի կէսը: Մի խօսքով վանքի կրօնականն ու տնտեսական բաժինը շինել էր իրան մի եկամուտի աղբիւր: Մոկաց Մէլիքը կրօնականի շատ բաժնին ևս իշխող այդ քրդական հովանաւորութեան վերջ տալու համար, գնացել արտաքսել էր վանահայր քահանային, վերցրել եկեղեցական զարդեր, փակել վանքի դուռը, միանգամից ջնջելով այդ սովորութեան հաստատութիւնը, ու անցել Վան դատ սկսելու Չոլի բէգի դէմ թէքէական և թէ իրաւաբանական ճիւղերում. մէկով նրա պատիժն էր պահանջում, միւսով արտը վանքին պատկանելն էր հաստատում, որի փաստերը դատավարութիւնից առաջ փաստաբաններին կարծիքով դատը շահելու ոչ մի կասկած չէին թողնում:

Բէգերը տեսնում էին որ այս պատճառով սրան նրան դիմելուց, փող ծախսելուց պրծնելու համար աւելի լաւ էր միանգամից պրծնել Մէլիքից, որ բացի այդ կոտորում էր իրանց շրջական, բէգական յարգանքն ու աղբեցութիւնը, իրանը տեղը դնելով:

Մէլիքը մի օր ասաց. «Շըխ Ֆէհիմ իրան գործիք ունենալով Նուրի բէգը, ուզում է ինձ սպանել որ իմ ձեռքից ազատուին, ես մահից չեմ վախենում, շատ-շատ ապրեմ, մի քանի չափ էլ ցորենի թեփ պիտի ուտեմ այսպիսի կեանքում, բայց ես չեմ ուզում մեռնել, նրա համար որ տունս Վան տանելով իմ զատերին մզումն տամ, նրանց մէկիկ-մէկիկ բանտերում պիտի մաշեցնեմ, եթէ մին ազատուի, միւսն պիտի ընկնի, էն ազատուի, մի ուրիշը պիտի բռնուի, ես նրանց բռնակալ հոգին պիտի հանեմ. սրանք շներից էլ շատ են, մեր միսն ուտելուց յետոյ հիմի մեր ոսկորն են կրծում»: Եւ նա ճանապարհ ընկաւ Վան:

Մէլիքի տունը Մէհտուլլահ բէգի հսկողութեան տակ դուրս գալով Մոկսից բարձրացել էր Եղերով սարը ու ապահովութեամբ իջել Գաւաշի սահմանը յանձնուելով Մէլիքին, որ յաջորդ օրը ուղևորել էր կարաւաններին մեծ ճանապարհով:

Մէլիքի կինը մեռած լինելով նա իր երկու փոքրիկներից մինը գրկումն ու միւսն ետեւ գցած, ձիու վրայ կարաւանի մէջ գնում է ապահով ու վստահ: Դեռ կէսօր չ'եղած, արաբական շորերով մի ձիաւոր՝ զլխին սև փոշի կապած ու երեսը ծածկած, հրացանը թեին, կարաւանի ետեւից շատ հեռուից գալիս

է արագասլաց. ու մօտենալիս՝ «Բարև Մէլիք» կանչելով, անցնում է արագութեամբ փոշու ամպեր բարձրացնելով. նա ծածկւում է հեռաւորութեան մէջ, բայց կէս ժամ չ'անցած՝ յայտնւում է նորից, գալիս է կարաւանի հանդէպ և ութ քայլի վրայ հրացանի բերանը ուղղում է Մէլիքի սրտին, նրան ցած գլորում ձիուց երկու որդիների հետ: Մեծ որդին ճշալով հօր վրայ է ընկնում ու նրան արայով ծածկում: Մարգասպանը հեռուից լսում է հօր և որդւոյ խօսակցութիւնը, հասկանում է, որ Մէլիքը կենդանի է, յետ է դառնում և հրացանի հարուածով վերջ տալիս Մէլիքի կեանքին ու սրարշաւ փախչում: Սարսափած կարաւանից ոչ ոք սիրտ չի անում նրան հետամտել:

Մելօն, Տըզըէն.

Ծնողաց միակ որդի փոքրիկ Մելօն տասնչորս տարեկան հագիւ կար. նա լինելով մեզ մօտիկ հարեաններից, ամեն օր բերում էր իրանց տանից ինձ համար գնուած տաքացրած կաթը, որ լո՛իկ մնջիկ իր տեղը դնելով անցնում գնում էր: Մի անգամ էլ Մելօն կաթը ձեռքին ներս մտաւ ու մի ութ տարեկան աղջիկ էլ անմիջապէս նրա ետեից եկաւ նրան կանչելու. ազատ համարձակ էր երևում նա, մի քիչ էլ հպարտ վզին լայնկեկ բոլորած արծաթեղէն ու ոսկեղէն զարդերից, զրանց կենտրոնում, մարդու միջամատի կրկնակի հաստութեամբ ու երկարութեամբ մի ոսկեջրած արծաթեղէն կախուելով միշտ շարժւում ու ծեփում էր կրծքի այս ու այն մասին. ես այդպիսի տարօրինակ ձևով զարդ երբեք տեսած չէի: Երբ Մելօն ճանապարհ զրեց աղջկան «գնա գալիս եմ» փնթփնթալով, ես Մելօին հարցի.—Քոյրդ է՞ս աղջիկ.—կարմրեց ու լռեց. երբ կրկին հարցրի՝ «կինս է» ասաց: Չը կարողացայ ծիծաղս զսպել ու իրան ասի. այս փոքրիկ վիճակովդ կին է՞լ ունիս.—ինձ երեք տարի առաջ են ամուսնացրել, ես յիշում եմ, բայց չեմ իմացել: Սիրո՞ւմ ես կնոջդ. կարմրեց ու գլուխը քաշ գցեց: Չը մոռանամ ասել որ Մելօն մեկնելիս հարցրի, այդ արծաթէ զարդը միայն քո՞ կինն ունի, թէ ուրիշներն էլ գործածում են.—բոլոր նորահարսերը՝ պատասխանեց ինձ ու գլուխ տալով դուրս ելաւ:

Մոկաց բէգերը

Մոկաց բէգերը բաժանուած էին երկու կուսակցութեան. Մէհտուլահ, Աբդալ, Սիւլէյման բէգերը մի կուսակցութեան.

Շէյխը, Շըլխի, Շէրէֆ, Նուրի բէգերը մի կուսակցութեան: Մէհտուլլահ բէգը քսանեօթ տարու մի գեղեցիկ երիտասարդ էր մեղմախօս, ծանրախոհ ու բարեկիրթ, բարձր համաձայնուում էր դէմքի արտայայտութեան, գիտէր օսմաներէն, ֆարսի և հայերէն լեզուներն ու գրականութիւն. քրէստոնէական կըրօնի ոգիով շատ հետաքրքրուելով, միջակ կրթութեան տէր հայ հոգևորականի չափ գիտէր նաև մեր կրօնը իր ծէսերով ու վարդապետութիւնով: Պաշտուար կաթողիկոսի գործակալն էր Աղթամարի ելևմտական գործերի այն մասին, որ պատկանում էր Մոկսին ու շրջակայից. բայց չէր հաւանում, Պաշտուար կաթողիկոսին իբրև յետադէմ ու ազահ մարդու, յետադէմ էր գըտնում նրան որ ոչ մի ջանք գործ չի դնում մի վարժարան բանալ Մոկսում, ազահ՝ որ ամեն բան քանդելով միայն փող է հաւաքում ու դնում իր կողքին: «Ո՛րքան անգամ խորհուրդ եմ տուել իրան, ասում էր, Փութկիի ժողովքի ամեն տարի հաւաքուած մեծագումար դրամը չը տանել անյայտացնել, Փութկին չը թողնել աւերակ, անգարդ, այլ շէնցնել, գնել կալուածներ, վանքը հողատէր դարձնել, հողերը մշակել, արդիւնք վերցնել, ժողովքը անհաստատ եկամուտ է, այսօր կայ, վաղը չը կայ. եթէ ես չը լինեմ, ի՞նչ ապահովութեամբ ժողովարարը ման պիտի գայ մինչև Տիգրանակերտի սահմանների ծայրերը, ո՞վ պիտի թոյլ տայ նրան որ առանց կողոպտուելու մտնի Մոկս: Բայց հողը, կալուածը մշտական է, չի խլուիր, չի կողոպտուիր, բաւական է որ առուծախի օրինական բոլոր գործողութիւնները կատարուին, որքան ուզում ես ասա, կաթողիկոսը լսել է ձևացնում, բայց չի լսում»: Յետոյ քննադատում էր թիւրք կառավարութիւնը որ կայսերական պալատից սկսեալ իսլամի կրօնական քաղաքականութեամբն է առաջնորդւում. մինչդեռ հիմի ոչ մի պետութիւն իր քաղաքականութիւնը չի ամփոփում կրօնականի մէջ. նկատում էր պաշտօնեաների յատկութիւնները, որոնք վանձը սպառելուց ու տէրութիւնը կործանումի ենթարկելուց չեն խղճահարւում, բաւական է որ իրանց փորը լեցուի: Մէհտուլլահ բէգը իր իշխանութեան ենթարկուող հայերից օլամ (անվարձ աշխատանք) չէր ընդունում. նրանց չը հարստահարելուց զատ բարերար խնամակալի դեր էր կատարում: Մոկսում եղած ամենաբախտաւորը Մէհտուլլահ բէգի իշխանութեան տակ գտնուող հայն էր համարւում:

Վանի կոտորածն սկսուելիս, Մէհտուլլահ բէգը Վանումն է լինում: Նա ձի է նստում և ուզում է այնպէս շուտ հասնել Մոկս քանի կոտորածի լուրը այնտեղ չէ հասած. շտապելու համար ճանապարհին երկու ձի է պատռեցնում, բայց մինչև նա

Կը համէր Ոստանից, լուրը հաղորդուելուն պէս արհեստի քիւր-
դերը նախ մի հայ գիւղ են թալանում: Նուրի բէգը մի հայի
Կարմիր կամըջից գետն է գցել տալիս. Մէհտուլլահ բէգը հաս-
նում է, և Մոկս մտնելուն պէս՝ գնում է ուղղակի Տինխու: Տի-
նիսցիք ապստամբ քիւրդեր են, շատ գիւղերով մի ձորի բնա-
կիչներ. սրանք կառավարութեան տուրք վճարել չեն ուզում,
որի համար շատ անգամ զօրք է գնում, բայց իրանք բարձրա-
նալով սարերը կուռում են կանոնաւոր զօրքերի հետ ու դիմադը-
րում: Այդ տեսակ վիճարկան ծախսերի ու կռիւների տեղի
չը տալու համար, կառավարութիւնը միշտ ստիպուած է գիւղի
Մէհտուլլահ բէգի միջնորդութեան, որ տինիսցիներին համո-
զում է երբեմն մի գումար վճարել: Այս անգամ ձորը մտնելով՝
Մէհտուլլահ բէգը, կանչել տալով թալանի գնացող գիւղի քըր-
դերին, հրաման է անում մէկիկ-մէկիկ գետին գցել ու ամեն
մէկին հարկւր փայտի հարուած տալ, թալանուող հայ գիւղի
խլուած իրեղէնների ու ոչխարների հաշիւը բերել տալով՝ առ-
նում է նրանցից մէկի տեղ երեք ու տալիս հայերին. այնպէս
որ ի պատիժ, այս անգամ թալանող գիւղն է թալանւում. ու
յետոյ բացարձակ հրաման է հանում. «Եթէ Մոկսում մի հայի
քիթն արիւնի, ես այդ արիւնողի վիզը կտրել պիտի տամ.
որովհետեւ Մոկսը թիւրքի կոտորածի տեղը չէ». այսպիսով
Մոկաց տասնազարի չափ հալը կոտորածի ոչ մի զոհ չի տա-
լիս, բացի այն մէկը, որ իր հասնելուց առաջ գետն էր գը-
ցուած: Սրանցից Արզալ բէգը՝ թէև աներևոյթապէս միմիայն
պահել էր իր վրայ աիրողի հեղինակութիւնն ու գերազանցու-
թիւնը միւս բէգերի վրայ, բայց իրօք նա զիջելով Մէհտուլ-
լահ բէգին, ապրում էր աւագակութիւններով, կռիւներով:
Այսպէս նա Միրանից Մզտօի (յետոյ Մուստաֆա փաշա) հողե-
րի սահմանի ծայրին գարիի արտ ունէր, ամեն անգամ պատ-
րուակ բռնելով, թէ իր սահմանակից այժը կամ ոչխարը ան-
ցել են ու տրորել իր արտը, հաւաքում էր հայից քիւր-
դից խառն մի հրոսակախումբ, գնում, խփում նրա ոչխարների
հօտից հազարաւորներ բերում, անցկացնում Վան, Պարսկաստան
կամ Հալէպ ծախելու: Նա սովորաբար պահում էր բազմաթիւ
հաւատարիմ խուամներ (ծառայ), որոնք իր հաշիւն ապրելով
միշտ պարտաւոր էին մեռնել նրա համար: Իր ծերութեան օ-
րերումն իսկ՝ սիրում էր գիշերները սարերն անցկացնել,
այրերի մէջ, լեռների կատարներին քնել: «Անկողնի մէջ կող-
քերս ցաւում են, ասում էր նա հպարտութեամբ. — տունը ինձ
բանտ է թւում, ինձ սիրելի է աչքս փակել, քնել ընդարձակ
երկնքի տակ, լուսնին, աստղերին նայելուց յետոյ. սիրում եմ

պառկել թուր ու հրացանի կողքին, որ մի թեթև շուկ լսուելիս, վեր՝ ցատկեմ, նայեմ լեռներին, իմ միշտ պատրաստ խողաններին ու ահանջ դնեմ քամու ձայնին: Ուզում եմ օդս մաքուր, քունս թեթև լինի»: Ինքը հագնւում էր շատ պարզ, ապրում էր շատ պարզ: Հետաքրքիր է նրա դատավարութիւնը. մի օր եկաւ կանգնեց կառավարութեան պաշտօնատան առաջ, ուր գտնւում են վարչական, դատաստանական ևայլ բաժանմունքները: Հայ ու քիւրդ հասարակութիւնը լցուած էր, ինչպէս և պաշտօնեաներ ու բէգերը. հայերը ու քիւրդերը բերանացի զանգատներ էին արել իրան, դատ պահանջողն ու դատի ենթարկողն բոլորն էլ պատրաստ էին, նրանց ամենի մասին նախապէս տեղեկութիւններ ստացած լինելով՝ քիւրդի մէկին ասաց. «Հինգ ոչխար պէտք է տաս Սարգսին»: Մի ուրիշ հայի՝ «տաս մէջիդիէ պէտք է տաս Վարդանին»: և այսպէս շարունակարար: Մի հայի վճարելու համար մի քիւրդ բերան բանալ ուզեց որ առարկութիւն անէր. Աբգալ բէգն ասաց, «տիւ քեէֆախոյի» — կամքը քոնն է. քիւրդը խոնարհութեամբ յայտնեց «պիտի վճարեմ». մի քառորդ ժամում տաս, տասերկու դատաստան տեսաւ ու ամենին արծաղեց խաղաղութեամբ: «Տիւ քեէֆախոյի» խօսքի մասին հարցըրի մի գետցողից թէ ի՞նչ է նշանակում. նա ասաց. եթէ քիւրդը խօսէր ու յանձն չ'առնէր վճարել, գիշերս նրան Աբգալ բէգ սպանել կը տար. այդ է նշանակում «տիւ քեէֆախոյի»: Այժմ դառնանք միւսներին. Սիւլէյման բէգը աւաղակապետ էր բառի բուն նշանակութեամբ. նա չէր կամենում հակառակ կուսակցութեան յարելով իր շահերին հաւասար ընկերներ ունենալ. նա ունենալով նաև իր ուրիշ պատճառներ, իմիջի այլոց հակառակորդների հետ բացարձակ թշնամութիւն, եկել կապուել էր Մէհտուլլահ բէգի բարի ու Աբգալ բէգի իրեն նկատմամբ ներոյ ու ասպետական բնաւորութեան ու ընկերութեան: Գալով միւս կուսակցութեան, Շէյխ-Ֆէհիմը իբրև հոգևորական օգտուելով մի բացարձակապէս տիրող բէգի բացակայութիւնից կարողացել էր անուղղակի իր ազդեցութիւնը տարածել, հարստանալ, կեղեքել հային ու քիւրդին հաւասարապէս իր հարստութեան մէջ մնալով անչափ ազահ՝ ինչպէս լինում են սովորաբար շատ հոգևորականներ: Նա վերջին ոռու-թիւրք պատերազմին Բայազետի պաշարման գնալով իր հաւաքած քիւրդ բաշիրբողուկների հետ, լաւ գնահատուած էր օսմանեան կառավարութիւնից և իբրև վարձատրութիւն Մոկաց գանձարանից ստանում էր ամսական չորս օսմ. լիրա և 16 զուբուշ: Մոկս գնացող ամեն մի նոր գանձապահին յայտնում էր, թէ իր

ստացած ոռճիկը հայերից հաւաքուած զինւորական տուրքերի փողից կ'ուզէր ստանալ, որպէսզի փողերը չը փոխուին ուրիշ կալուածական կամ տասանորդական տրոց փողերի հետ, որ իւրան հալալ չէ. նա հալալ էր համարում միայն հայի տուած զինւորական տուրքը, որովհետեւ ինքը կրօնի և աղգութեան պաշտպան զինւորականն էր եղած, քիւրդերն ու թիւրքերը սրբազան պատերազմին մէջ ծառայող այդ հոգևորական զօրավարին Շէյխ Ջէլալէղզինի երկրորդն էին համարում, ու նրան մեծ յարգանք ու պատիւ տալիս: Շըխի, Շէրէփ, Նուրի բէգերն էլ Առուանից շէյխի այս կրօնական հովանաւորութիւնից օգտուելով՝ միացել էին նրան իրանց տիրապետական նպատակները առաջ տանելու մտքով: Շէյխ Ֆէհիմը վախում էր Արդալ բէգից, որովհետեւ վերջինս անունով միայն մահմէդական լինելով՝ ոչ մի կրօն չէր ճանաչում, իր բոլոր ուժերը թափում էր քաղաքական մարդ դառնալու ու զինւորական մնալու համար: Շէյխը Մէհտուլլահ բէգին գաղտագողի «գեաւուր» էր անուանում, ասելով որ՝ նա շէյխութիւն չի ճանաչում և եթէ յարմար պարագայ գտնի, քրիստոնեայ պիտի դառնայ: Իսկ ինքը իր ուժերը ամրացնելու համար իր կուսակցութիւնն էր զօրացնում: Այդ երկու կուսակցութիւնները այնքան լարուած էին իրար դէմ, ինչպէս զինադադարի սպասող երկու պատերազմող թշնամիներ. և ամեն մէկը իր ուժերի շրջանը ընդարձակելով, կապեր էր հաստատում սահմանակից գաւառների, մօտաւոր ու հեռաւոր նահանգների հետ, կուսակցութիւնն ու գործը տարածելով Մոկսից դուրս: Քիւրդ ժողովուրդը՝ որ իր յատկութիւններով պարարտ հող էր ներկայացնում այս կուսակցութիւնների գործունէութեանց համար, կրօնական կոյր հնազանդութիւնը կրելուց յետոյ, պաշտում էր քաղաքական ու զինւորական ուժի բացարձակ առաւելութիւնը. և այս վերջին պարագայում աչքը դարձնում էր երկրի նախկին տիրող Արդալ բէգի վրայ, որը զայրոյթի եկած ժամանակ լուր էր ուղարկում Շէյխ Ֆէհիմին ու ասում. «կը գամ միրուքդ ածիլել կը տամ». Շէյխը այդ վտանգաւոր պարագաներում իբրեւ չէզոք, մի կողմ էր քաշուում և որոշում էր մնալ իր պարզ հոգևորականի դերում: Արդալ բէգը սիրում էր ասել, «ես ինձ ոչ ոչ ոքին պատասխանատու չեմ ճանաչի, սուլթանը ուզեց մեր երկրներին տէր դառնալ, բայց չի կարող տիրել. երբ այս անգամ էլ մի փորձ անի, ռուսի պաշտպանութեան զիմելով՝ մի խաչ պատւանշան կը կախեմ կրճքիցս և էլի կը պատերազմեմ ու անկախութիւնս չեմ տալ. ես ծեր եմ, բայց հոգիս երիտասարդ է դեռ ու կենդանի»:

Մոկս ունի տասնադար բնակիչ հայութիւն, որ խօսում է իր մայրենի լեզուով: Այդ երկրի վաթսուն հինգ գիւղերից քառասուն եօթը հայ է, տասնութը միայն քիւրդ: Մոկսում վաթսունհինգ վանք ու եկեղեցի կայ, միայն տասնչորս մզկիթ. սրանցից էլ հաղիւ թէ վեց եօթը շէնքի կերպարանք ունին, մնացեալը հողակոյտ են ներկայացնում: Հայերն այստեղ արի են, աշխատասէր և ոչ բոլորովին ստրկահոգի: Քրդերի վրայ նրանք ունին բազմաթիւ առաւելութիւններ: Մէհտուլլահ բէգի կուսակցութիւնը նախատեսում էր այդ, նա գիտէր, որ եթէ Առուանից մէջ, Մոկսի ծայրում կար մի Շըխնոց, իրան սահմանակից Գաւազում կար հայկական կաթողիկոսարան, որ ծովի փառաւոր ու հրաշագեղ թագունհիի պէս դէպ ինքն էր քաջում սիրտ ու միտք. թէև Նաչատուր կաթողիկոս անպէտք և անընդունակ մարդ էր շատ գործերի, բայց անմահ չէր նա, և կաթողիկոսարանը կարող էր ունենալ այնպիսի մի յաջորդ, որ կրթութիւն տարածող, գիտուն հոգեւորական լինելուց զատ, լինէր նաև շինարար մարդ: Մանաւանդ որ Մոկսի աւանդական պատմութիւնը բերնէ բերան, որդուց որդի հաղորդում էր, թէ քիւրդերի տիրապետութիւնից յետոյ, եղել էին ժամանակներ, որ հայերի մէջ էլ հերոսներ առաջ գալով գլուխ էին բարձրացրել ու կուռնով քիւրդերի դէմ լեռնական կեանքում դաշնակցութիւն էին կապել: Դեռ ժողովրդի մէջ երգւում է Մոկաց Միրզի հերոսական քաջութիւնը ու իշխանութիւնը: Ճգիրէի քիւրդ Ամիրան իբրև իրանից մեծ իշխանի, բարեկամի ու դաշնակցի հրաւէրք է պատրաստում ու նրան հրաւիրում: Հակառակ խորհրդականների ցանկութեան Միրզէն վըստահելով իր ուժին ու ազդեցութեան, դուրս գալով Մոկաց կենտրոնի Մանգկանից (այժմ քրդաբնակ), որի բնակավայրը ու իշխանութեան բերդն ու պաշտօնավայրն էր եղած, առանց վախի գնում է: Ճոխ սեղանից յետոյ միւրդ հրամցնելիս, մի քանի ձմերուկներ փորձելուց յետոյ, իբրև ամենընտիրն Ճգիրէի ամիրան վերցնել է տալիս նախապէս թունաւորուած ու իրար արուեստականապէս կպցրած մի ձմերուկ, ու իր ձեռքով կտրելով Միրզայի ներկայութեան հանում է նրա միջից թունաւորուած շերտը ու կերցնում Միրզին. թոյնը ճաշակելով Միրզէն ընկնում է: Երբ իր հետեւորդները հասնում են նրան պահելու, դառնում ծածկուած ամիրայական զինւորները վըրայ են թափւում. սկսւում է ջարդ երկու կողմից: Միրզայի հետեւորդները կոտորւում են մինչև վերջին մարդը: Սա մի պատմութիւն է որ դեռ երգւում է: Բայց դեռ ներկայումս հայի դաշնակցական իրաւունքների մի մասը գործադրւում է նոյն-

իսկ իրանց ամուսնական կեանքում: Որևէ բէգ ամուսնանալիս իր ընտրելի մասին պարտական է հաղորդել իր բաժնի հպատակ հայերին, հարսնացուն եթէ դրսի նահանգներում կամ գաւառներում գտնուի, հայերը իրանց միջից պատգամաւորութիւն ջոկելով, պիտի ուղարկեն տեղեկութիւն առնելու նրա վարք ու բարքի մասին հայերի վերաբերմամբ և տեսնելու նրա պեղեցկութիւնը: Եթէ պատգամաւորութիւնը հաւանի, բէգը պէտք է բերի, իսկ եթէ չէ նա պիտի հրաժարուի: Հայերի այդ գործողութիւնը այն իրաւունքի ուժն ունի, որ բէգի կինը իրանց ընտրելին լինելով իրանց կամքի ներկայացուցիչն է: Կինը, իբրև միայն հաճոյքի գործիք չը ճանաչուելով քիւրդերի մէջ, բէգի կինը, իշխանութիւնը գրեթէ բաժնում է մարդուն հետ, նրան է պատկանում մի կարգ խնդիրների կարգադրութիւնն ու վճիռը քաղաքական տեսակէտից: Նոյն կն դէպքեր՝ որ հայերը մերժել են մի որևէ ընտրելին իրանց քաղաքական իրաւունքը գործադրելով: Ներկայի մէջ հայերն այսպիսի երկրի, բէգերի ու այս խառնակութեանց մէջ իրանց տեղն ու ձայնը ունենալով, իրանց գլուխն ունէին Մոկայ Մէլիքին որի սպանութեան մասին խօսեցինք: Շէյխի ու Շըխի բէգի կուսակցութիւնը որ հայերի անպայման գերի—հպատակութիւն էին պահանջում, նկատելով որ հայի այդ ուժը զօրանալով իրանցը պիտի ջնջէ, իրանց համախոհներից խորհուրդ էին կազմել, Կարճկանի մէջ Մուսա բէգի հետ, Ոստանի մէջ Կուլիխան բէգի հետ, որոնց հետ խնամիական կապով էլ կապուած էին Շըխի ու Նուրի բէգերը, սպանել Մէլիքին Մոկայից դուրս, որպէսզի դա չը նկատուի իրանց գործ, հանրային հաշիւ, այլ մնայ իբրև մասնական, անհատական մարդասպանութիւն. և այդպէս էլ արին:

Ո զ Մ Գ Ի Լ Ղ Ր

Ոգմը մօտաւորապէս 300 տնից բաղկացած մի մեծ գիւղ է իր դաշտերով, այգիներով, փարթամ ու հարուստ հարաւի արևի ու ջրի տակ: Հոգը տարէցտարի աճող աղգաբնակութեան անբաւական լինելով, ժողովրդի մի մասը մնում է տեղի վրայ, միւս մասը ծաւալում դրսերը, անցնում զանազան երկիրներ մեծ մասամբ գգելու կամ ինչպէս իրանք են ասում՝ կատանութիւն անելու: Կատանութիւնը ունի իր առանձին բարբառը: Բայի ցեղային հայ լեզուն կատանի լեզուն մի տեսակ արկղեան բարբառ է, որ ողմցիք գործածում են այն օտարների առաջ դադանի խօսակցութեան մէջ: Նստկան մասի

գիւղախմբապետները մի տեսակ կիսանկախ քիւրդ բէգերի դիրքն ունին. չը նայելով քիւրդերից շրջապատուած լինելուն նրանք ոչ միայն չեն զաղթում ու չեն ցրւում, այլ նոյնիսկ մեծից մինչև փոքրը զինուած բոլորն էլ կուրի մարդիկ են: Տինիսցի քիւրդերը՝ որ ապստամբներ են, անխոհեմութիւն են ունենում մի ողմցի սպանելու մօտ ժամանակներում: Այդ կորուստի փոխարէն իրանց վրիժու համար ողմցիք սկսել են մորթել, կտրտել որտեղ որ մի տինիսցի են պատահել, դաշտում, սարում, ցորենի արտում, ամեն տեղ, մինչև որ տինիսցիք ստիպուել են նրանց գիւղախմբապետների հետ հաշտութիւն կայացնել: Տինիսցիների դրսեր գնալու ճանապարհը Մոկսով է. սովորութիւն ունին ճամբորդել միշտ ընկերով ու զինուած. ո՛րէն քիւրդը ողմցիին տեսնելիս տարբեր աչքով է նայում նրան, ու ողմցի ասելով աշխատում է հեռանալ նըրանից:

Աղինի Տէր Մարտիրոսը

Մի քահանայ կայ Աղինում Տէր Մարտիրոս, նա սիրոյ ու անձնութեան վարդապետի աշակերտն է: Ձմեռները՝ երբ ձիւները ծածկել են սարերը, փակել ճանապարհները, մոկացի գիւղացին մեծ մասամբ բանտարկուած կը մնայ իր գիւղում: Բայց Տէր Մարտիրոսը հագնում է ըռշիկը, կապում է շալվարի փաշէն, աւետարանը հայոց պատմութեան հետ տողալակ դնելով փաթաթում կապում, ու մէջքին շալակած, փայտը ձեռքին, մինչև ծունկ ձիւների մէջ խրուելով ու դուրս գալով բարձրանում է սարէսար, դնում ձորից ձոր, մտնում գիւղերի հեռաւոր անկիւնները այցելելու իր լեռնական ժողովրդին, ամեն գիւղ երեք չորս օր նստում, հաւաքելով գիւղական հասարակութեան ֆրիստոսի խօսքն է քարոզում, կարդալով նրանց հայոց պատմութեան կտորներէից՝ բացատրում հայի անցեալն, խօսում ներկայի, ու յոյսեր տածում ապագայի վրայ. նա զեղէգեղ անցկենալով կատարում է իր հոգևոր պարտականութիւնը իբրև կաթողիկոսական փոխանորդ, իբրև հոգևոր հովիւ ամբողջ Մոկսի և իբրև գրագէտ Մոկսի հայութեան. նա ծոյլ ու երկչոտ չէ, իր անձնուէր վարդապետը իրան սովորեցրել է գնալ սարերը, մտնել բանտերը, հարցնել, այցելել հալածուածին, դժբախտին, առանց հարցնել ու հասկանալ ուղեւ թէ ո՞վ է նա, մոկացի՞ թէ ողմցի: Անձնուէր մարդու առաքինութեան ձայնը հովերն անգամ տանում են, բանտարկեալները դիմում են Տէր-Մարտիրոսին:

Օ ջ ա խ ք

Մոկսի կենտրոնական թաղերից ամեն մէկը ունի իր ձեռագիր աւետարանը, դրանք հնութիւններ են, որ իբր նուիրական ու թանկ ժառանգութիւն, ու իբր իրանց ցեղագրութիւն պահպանում են շատ ինքնավ. Անձղոնց թաղի աւետարանում կարդում ենք Սֆթենց Նախշի բէգի անունը, որ երկու հարիւր տարիից առաջ է, և որի ցեղը կայ ու բնակւում է Անձղոնցում զանազան տների բաժանուած: Կան և ուրիշ ցեղերի գլխաւորների անունները, որոնց բոլոր ցեղերն էլ կան, էլի այնքան հնութիւնից մի քանի տարի աւելի կամ պակասով: Զարմանալին այն է, որ աւետարանում յիշատակուած տներից զատ ուրիշ նորեկներ չը կան հիմի. մի նորեկ հայ ընտանիք, որ թաղի ծայրին մի նոր տուն է շինել, պայմանով է, տեղը պատկանում է թաղին. և այդ ժողովուրդը ժառանգաբար բնակւում է իր պապերի հողի վրայ ու չի բաժանւում: Օջախի հաստատութիւնը բնականապէս ամուսնութեան վրայ է: Եւ ոչ ոք ամուրի կամ այրի չի մնում, ինչքան և ծեր լինի նա: Աւել անուն մէկը որ ութսուն հինգ տարեկան ծերունի էր, առոյգ ու կայտառ էր մնացել, ունէր որդիներ ու թոռներ: Կինը մեռած լինելով՝ ուղում էր ամուսնանալ և իր ամուսնական բանակցութիւնները կատարում էր հետեւալ կերպով, որ ինքն էր նկարագրում. «հա երկրորդ հինգշաբթին է (տօնավաճառի սովորական օրերը) գնում եմ քերէկանցի կնոջ հետ խօսելու, բայց պայմանների մասին չենք կարող յարմարուիլ. երկուսիս էլ իրար առնելու սիրտ կայ, միայն թէ նա մի տղայ ունի, որ զօրւարացնում է գործը. մտածում ենք նրա բախտի մասին, նրան ջոկելու առանձին ապրեցնելու որ մեզ մօտ չը մնայ, ու մեր անուշ կեանքը խանգարի. բայց չենք կարող մի եզրակցութեան գալ, որովհետեւ չենք ուզում որ տղան անբախտանայ, թէ իր համար վատ է, և թէ մենք մեղք կը գործենք, մանաւանդ որ ես ու իր մայրը էլ նրա մասին մտածելու պէտքը չենք ունենալու, ու մեր խելքը հանդարտ պիտի մնայ, եթէ տղայի օրերը լաւ բախտի կապուին»: Եւ երբ ասում էին, թէ նա որդիներ ու թոռներ ունի, էլ ինչ՞եւ է ուզում ամուսնանալ, Աւիկը պատասխանում էր. «որդիներն ու թոռներ իրանց համար են, ինձ սրտակից կին պէտք է, ես առանց կնոջ չեմ կարող ապրել, առանց կնոջ կեանք չը կայ, օջախ չը կայ»:

Օջախ պահպանող մի ցեղի սերունդը իրանց բնակած տների բաժանման առթիւ մի առաւօտ կուում էին փայտերով

տուր ու զըմփոցներով ու կռիւր այնքան տաքացել էր, որ շատերի ջարդուած գլուխներից, կոտորտուած ճակատներից արիւն էր հոսում, միջամտողները նրանց իրարմից հեռացրին, ու կռիւր առժամանակեայ կերպով խաղաղեց: Կէսօրին՝ երբ ամենքը վերադառնում էին ճաշելու, նոյն տեղի վրայ նոյն մարդիկ էլի կռիւ էին սկսել, այս անգամ կռուողներ աւելի շատ էին, և ուրիշներ էլ շատ կային խառն. նորից գլուխ էր ջարդուած ու արիւն հոսում. երբ հարցնում էի թէ ի՞նչու այնպէս չը կարողացան հանդարտեցնել որ այս կռիւր նորից չը սկսէր, ինձ ասին, այս ուրիշ կռիւ է.— Ի՞նչ կռիւ է.— Օջախի կռիւ. Այս անգամ առաւօտի ցեղակից կռուողները միացած իրանց հարևան մի ուրիշ ցեղի դէմ (դարձեալ հայ) էին կռում. ինձ հասկացրին որ օտարի հետ եղած կռիւր վերջացնելուց յետոյ իրանց միջի կռիւ է, վրէժը վրէժ. ցեղի ու օջախի պաշտպանութեան մէջ մեր իրարի դէմ ունեցած թշնամութիւնը լուծւում է:

Բխտայ ուխտատեղին

Արեւերես այն սարը որի ոտքումն է շինուած Անձղոնցը կոչուած է Բէստ. եկեղեցիից բաւական վերև սարի կրճքին նըկատելի կերպով այցելողին երևում է Նախշի բէգի տան հիմունքը: Իսկ Բէստայ սարը որին թիւրքերը «Էջնոս Գալասի» են ասում, և որի գագաթին շինուած ու այժմ քանդուած բերդի ու եկեղեցիի մասին քիւրդերը անանդաբար ասում են «Ճընըւըլի թաղաւորութեան ժամանակի բերդն է եղած, ու եկեղեցին բերդի միջում»: Հայերը ոչ մի հաստատուն տեղեկութիւն չեն կարող տալ: Ասում էին անանդական սովորութիւն կար, որ Աւետեաց տօնին մուրազակարօտ կին ու տղամարդ երկտասարդութիւնը առաջներ գնում էին ուխտ անելու բերդի եկեղեցում, մոմեր վառելու, բայց երբ եկան վատ ժամանակները, այդ սովորութիւնը դադարեց, ուխտաւորներին Բէստայ գլուխը միշտ բարձրանալու զօրաւորութեանց պատճառով մի քիւրդի էին վարձել, որ որոշեալ ժամանակներում գնար մի խոռոչում տեղաւորուած կանթեղին ձէթ ածէր, լուսաւորէր, ու հաւաքած մոմերը տանէր վառէր ու ետ դառնար: Բայց քիւրդը ծերանալով մեռնում է, ուխտն էլ դադարում: Բէստայ բարձրութիւնից հեռաւոր տարածութեան վրայ երևում են Ոստանը, Վանայ ծովը, Վանը: Միւս կողմից Տիգրանակերտն է նշմարւում ինչպէս մշուշի մէջ: Ամպերի մէջ պատուած Մասեաց ձիւնափայլ ծայրերը նկատւում են: Ահա այս առթիւ պատմում են, թէ մի անձղոնցի երեխայ հարցնում է հօրը.—

Հայրիկ. երբ մեր երկիրը ձիւնով, ցրտով, սառույցով ծածկուի ու Աստծու ոտները մրսի, ո՞վ է կարում սուրբը: Հայրը պատասխանում է՝ կօշկակար Մըկէն:—Ով է տանում:—Քիւրդ թաօտին: Որտեղ է տանում:—Բէստայ գլուխը՝ որ Աստուած հագնի: Անկըրակ, անճրագ ժողովուրդ, որ ցածրեր նստած Աստուծոյ համար սու էր կարում ու մոմ պատրաստում քիւրդին տալու, որ բարձրանար, սարի գլխին կրակ անէր, ճրագ վառէր, մըրսած Աստծուն սու հագցնէր, ձանձրացել էր իր ցածրում կօշկակարութիւն անելուց...

Բ ա ռ ի կ ն ն դ ա ն

Վարդանանց տօնի նախընթաց գիշերը հայերը սովորութիւն ունին իրրեւ բարիկենդանի ուրախութիւն «քեօխ դնել»: «Քեօխ» անուանւում է այս սովորութիւնը. յաջորդ օրը տեղի ունենալիք պատերազմական խաղերին մասնակցողներին որն որ կէս գիշերին գայ և ընկերի բնակած տան պատուհանից կամ երդիքից կանչի, ձայն տայ, ձեռք դպցնի, քեօխը նա տուած կը լինի, հետեւեալ քեօխ ընդունողն կը պարտաւորի բարիկենդանի ծախսերի համար որոշ վճար տալ: Այս պատճառով վանազան խմբեր աշխատում են շուտ արթննալ ու շուտ քեօխ տալ: Նրանք հաւաքւում են գրեթէ ժամանակից առաջ, ու խաղի պատերազմական ծրագրով անցնում են, մի մասը Աբրահամանց սարալանջին, մի մասը՝ Անձղոնցին ու մի մասըն էլ Դաշտի թաղի թեւը, բանակները լոյսը նշմարելուն պէս առաջ են շարժւում իրանց հրամանատարի հետ. սկսւում է առանց հրացանաձգութեան պատերազմը, յաղթութիւնը պատկանում է այն կողմին որ կարողանում է առաջ գնալ ու տիրել թշնամիի դիրքն: Քեօխից յետոյ պատերազմական խաղերին որ տեւեց մինչև կէս օր, ամեն մի բանակ բաղկանում էր հարիւր մարդուց, ամբողջական բանակից բաժանուող ուժերը երկու կողմից էլ կար, նրանց յարձակումն ու նահանջումն կատարւում էր շատ կանոնաւոր: Վերջապէս պատերազմին վերջ տրուեց մի բանակի աստիճանական յառաջխաղացութեամբ ու միւս բանակի դիրքն ամբողջական տիրուով: Պատերազմական տուգանքը տալու է յաղթուող կողմը, երկու կողող բանակների բարիկենդանեան ուրախութիւններին ծախսելու համար: Ինչպէս ամեն մի բանակում, «քեօխ»-ի մէջ պարտութիւն կրողը վճարել պարտական էր իր յաղթող ընկերին:

Տուգանքի գումարները հաւաքուելով, սկսեցին ուրախու-

թիւնները, նախ պատերազմի օրուայ երեկոյին, իբր նախատո-
նակ, յետոյ ուրբաթ օրը ամենքը միացած հաւաքուեցին Աբր-
համանցը, ուր տեղի ունեցաւ երկսեռ խմբերի կերուխումը,
երգն ու պարը: Շաբաթ օրը նոյնը կրկնուեց Դաշտի թա-
ղում. իսկ կիրակի Անձղոնցում մի ուրիշ հանդէս էր պատ-
րաստուած. նրանք ներկայացնելու էին թիւրք-քրդական վարչու-
թիւնը. խաղի հրապարակի մի դրան առաջ, յիսուն-յիսուն շա-
րուեցան հայ երիտասարդ տղերք մոկաց համազգեստով: Մո-
կաց այդ խաղի իշխանը դուրս եկաւ տան դռնից, ու հարիւր
հրացանները միասին գոռացին՝ նրան զինուորական պատիւ
տալով. իշխանը ցնցոտիներ հագած ու դիմակ դրած մի քիւրդ
էր, նա հայ չը պիտի լինէր, այլ թիւրք կամ քիւրդ, նրան
փաշա էին անուանում: Փաշայի առջև ըմբիշի ձևով հագուած
երկու երիտասարդներ էին կանգնել, որոնք իրանց մերկ սը-
րունքներն ու բազումները դէմքի հետ միասին սևով ներկած
դառել էին արաբներ, ամեն մէկը իր թևին մի կարճ թոմրուղ
(հաստ գերան) բռնած, աչք բռնելով փաշայի ականարկին ու
բերանին, սպասում էին մի անմիջական հրամանի երկուքն ի
միասին: Ծառաների սարսափեցուցիչ դիրքը տեսնելով, թոմ-
րուղների ծայրերը գետնին խփելիս հանած զորդոցից փաշան
զուարճանում էր, ինչպէս և ուրիշ չորս արաբական ձիաւորնե-
րի տեսքից, որոնք քիչ հեռու պատրաստ կանգնած էին: Մի
կոտրած աթոռ դրին փաշայի տակ, որ վրան նստեց ընկնելով
կանգնելով, իր շուրջը նստեցին իր ժողովականները, որոնց
մէջ մասնաւոր տեղ ունէր դէֆթէրդարը (եւամտական պաշ-
տօնեան): Փաշան ամեն մարդու հետ չէր խօսում, միայն մե-
քանաբար բերանը շարժում, ու հանդիսի կարգադրիչներից մի
ճարտարը վանդնած ու ականջը ծռած գէպի փաշայի բերանը
տալիս էր հրահանգներ իրանից, իբրև փաշայից: Մի քիչ հե-
ռու մի արաբուհի իր մարդիկներով ման էր գալիս, նա «Բիե-
զիկ» էր անուանուում, որ նշանակում է աղջիկ. «Բիեզիկ»-ը
արարուհի դարձած մի հայ պատանի էր. փաշան աչքը վեր
բարձրացնելիս տեսնում է «Բիեզիկին» ու հրաման անում ձիա-
ւորներին որ բռնեն բերեն իրան համար: Գնում են ձիաւորնե-
րը, բայց տէրերը Բիեզիկին փախցնում են տները: Փաշան հը-
րաման է հանում յարձակուել տների վրայ, դռները խորտա-
կելով ներս մտնել, և ուր որ է Բիեզիկը բռնել բերել: Հրա-
մանը տրուելուն պէս՝ թոմրուղակիները վազում են, մի քանի
դռներ թոմրուղի հարուածներով կոտրւում ու Բիեզիկը գլու-
նելու համար տնէտուն ման գալիս: Երբ բերելու ուշանում են,
փաշան զբաղւում է իր պաշտօնական ժողովներով, նրանց տո-

մարներով ու հաւաքելի տուրքերի չափով: Հաւատարիմ թոմարուղակիրները արիւն քրտինք մտած գտնում են Քիւզլիկին, որ քոնսկով փաշային բերելու համար ճանապարհ են ընկել: Քիւզլիկը նշմարուելիս, մի մեղրի պարապ փեթակ իբր խոշորացոյց տալիս են փաշային որ բռնի իր աչքին տեսնելու թէ, Քիւզլիկը բերում են իր ներկայութեան: Փաշան հրամայում է տանել հարեմը, առանց հարց պատասխանի տեղի տալու: Քիւզլիկի գալու վրան փաշան ուրախանալով հրամայում է զբամական մեծ գումարներ ընծայ ստանալ իր ծախուց համար, ու ընծայ տուողներին երկիրներ բաշխել: Այս հետաքրքիր տեսարանը աչքից բաց չը թողնելու համար գայմագամից սկսեալ բոլոր պաշտօնեաները եկած գիտում էին: Փաշան այդ զբամները հաւաքելու համար զրկեց թոմարուղակիր արաբներին նախ գայմագամի և ապա ուրիշ պաշտօնէից մօտ, որոնցից առանձին-առանձին մի գումար ստանալով, ամեն մէկին առանձին երկիրներ բաշխեց, իսկ մէկին ասաց. «Մոկս այն սքանչելի երկիրը որ օրուայ մէջ եօթ անգամ արեւածագ ու եօթ անգամ արեւամուտ կայ, քեզ եմ տուել»: Այսպէս երկիրներ բաշխելուց յետոյ, երբ վեր կացաւ իր վեհապետական իրաւանց տակ զբանուող իշխանութեանց վայրերը այցելելու, մի քանի տեղ պատիւներ ընդունելուց յետոյ, Մոկսը մտնելիս, զորս զու պատուիրեցեր ծեծեցին նրան ու վռնդեցին, արաբ ծառաները թողին իրանց թոմարուղներն ու փախան, ձիաւորների ձեռքից ձիերը խլեցին, ու փաշայութեան վեհապետութիւնը կործանեցին:

Սրան անմիջապէս յաջորդեց հրախաղովութիւն, երկսեռները խմբական երգ ու պար, մոկացի հայի վերջին բարիկենդան:

Ք և ա Ֆ ի ը ր կ ո ը

Եթէ բարիկենդանը հային էր պատկանում, քիւրդերը ևս իրանց համար մի տօն էին սահմանել ու անուանել քեաֆիր-կոր, պահոց երկուշարթին յատկացնելով նրա համար, որ պիտի դառնար բարիկենդանի հակադարձը: Քեաֆիրները կուրացնելու այս տօնական գործողութիւնը սկսուեցաւ լուսաբացին, քիւրդերը զուրս գալով Մանդկանից կազմել էին մեծից ու փոքրից զինուած մի խուժան, նրանք էլ ունէին իրանց թիւրք փաշան հայերի ունեցածի պէս ցնցոտիներ հագած ու ծիծաղելի, որին մէջերնին առած, աղմկալի առաջ անցնելով բարձրացան կառավարութեան պաշտօնատան տափարակ տանիքը, ու ատրճանակներ արձակելով բաց օդում՝ իրանց փաշային հանդիսաւոր կերպով վայր գցեցին ու իրանք նրա շուր-

Չը բոլորուելով՝ սկսեցին մէկիկ-մէկիկ իրանց չ'ունեցած պատւի կարգով փաշայի վերաբերմամբ մի գարշելի, աղտոտ ձեւականութեամբ զբաղուել: Այդ աղմկալի ձայներից մենք դուրս էինք եկել, ու քեաֆիրկորի ի՞նչ լինելուց տեղեկութիւն չ'ունենալով հանդիսատես եղանք այդ խայտառակութեան: Գայմագամը այդ լիըր յանդգնութեան դէմ զայրանալով, անմիջապէս ոստիկանութեանը հրաման արեց կրակ բանալ, նախ վերեւ, եթէ չեն լսում ճիշտ իրանց վրայ. հրացանները առաջին անգամով արձակուելիս, խուժանը ցրուեց, նրանք ճանապարհին թէև կողոպտուել էին մի քանի պատահած հայի, բայց այս անգամ քեաֆիրկորը անյաջողութեան էր մատնուած: Բայց հայի ու քիւրդի այս տօները հաւասարապէս թիւրք վարչութեան դէմ հակառակութեան նշաններ էին ցոյց տալիս. միայն թէ իրանց վերաբերմունքն էր տարբերուած. ամեն մէկը պատկերացնելով իր բարոյականութիւնը ու ցեղային բնաւորութիւնը, բայց քեաֆիրկորի հաստատութիւնը առանձնակի ևս հայերի դէմ էր, նրանց վրայ յարձակուելու ու կողոպտելու համար:

Հ ա Ր Ա Ն Ա Ս Է յ Ր Ա Ն

Կանաչ կիրակին է. Մոկսի բնութիւնը սիրուն է: Ամեն կողմ ծաղիկ, կանաչ, օդը Բուրալից, արևի շողերը վառ ու գեղեցիկ:

Այդ օրը մի առանձին շարժում է սկսւում Մոկաց կենտրոնի ու Ոստինքի միջև Տամսոնց ճամբ, Աբրհամանից բարձունքները, մարգագետնի վրայ, ծառերի տակ, քարի գլխին, առուի ափին, գետի եզրին: Մոկսի ամբողջ հայութիւնն այնտեղ է, քաղաքացի թէ գիւղացի: Քնքուշ սեռի գեղեցկութիւնը, որ մի յատուկ տուրք է Մոկսի բնութեան, այսօր ի ցոյց է դրւում շնորհիւ նորահարսերի: Տանտիկինը բաց է անում ճաշի սեղանը, փռելով հացի սփռոցը կանաչ մարգի վրայ, զուարճացնող ըմպելին դրուած է գեղի հարսի տրամադրութեան տակ, որ լցնի ամեն այցելուին հրամցնի գինին ու արաղն, ու իր ձեռքով նրան պարզի: Այցելուն խմելուց ու իր սրտի գեղումները յայտնելուց յետոյ պարտական է փոխադարձաբար հարսին ևս հրամցնել նոյն ըմպելիից, զրա համար ընդունում է նրա ձեռքից շիշն ու գաւաթը, որը ինքն էլ լեցնելով նրան է տալիս, հարսը շնորհակալութեամբ ընդունելով բերնին է տանում ու առանց խմելու, խմած համարելով վայր է դնում գաւաթը: Այցելուն տալիս է հարսի մազան, որը ինչքան թանգ ու առաջուց պատրաս-

տուած ըերուած լինելով իր կողմից, ինչքան քաղցր ու անուշ լինի, այնքան մեծ է ճանաչուած այցելուի յարգանքն զէպի հարսի շնորհն ու գեղեցկութիւնը: Նուագածունների խումբը ածելիս սկսւում է երգն ու պարը, կեր ու խումբը: Նիւթական վիճակի տարբերութիւնը զրկանք չի կարող դնել նուագածութեան վայելքի մէջ—նա հասարակաց է: Գնչուների մի ընտանիք՝ որ ապրում է Մոկսում իբր նուագածու, ոչ մի ազգութեան չի պատկանում. կրօն չ'ունի, հայրենիք չ'ունի, թափառական կեանքով ապրելով, ամեն տեղ տանում է իր հետ վիշն ու քեէմանը: Գնչու ընտանիքի մայր ֆէրիշանը, հաւասարապէս ամենին բարեկամ լինելով, որոշեալ ժամանակին հաւաքում է քաղաքացի ու գիւղական տներից իրանց յատկացուած կամաւոր որոշ տուրքեր, որ հասարակաց հանդիսական տօներին հաւասար ժամերով գնան նուագելու ամենի համար, անցնելով խմբէ ի խումբ:

Այսօր ամեն իրաւունք հարսներինն է, նրանք խօսում, պարում, զուարճախօսում են, երգում են, աշխատելով ցոյց տալ իրանց գեղն ու շնորհը: Ահա նրանց երգերից մէկը, որի երգողըն էր Փշան անունով նորահարսը.

Գետափնը վէ կը քեէլիմ ես, խանէ, խանէ,
Խալքի խիալ խիւանդ եմ ես, խանէ, խանէ,
Թուխ աչքերու սպանածն եմ ես խիօ, խիօ:

Դոստ, էլնեմ տամբուրվան, քեամ քեո խէրանց էրդիս,
Տխնամ որ դու քեըներ ես, բազկի շողեղէն գլխուդ զրեր ես.
Բազկի շառաւիղք տուեր քեո երես.
Ըսկում աի չալեմ չում դու քեո անուշ քեընուց արթնես.
Կուգեմ պաշմ քեո կարմիր իրեսներից առնես.
Վախնամ խռովիս, քեո թուխ աչքերը արտօսուայ:
Սէպէպ կ'էլնիմ ես.
Դոստ. խռով մի մնա. խռով աղէկ չի:

Դոստ կայներ խէրանց իրես բաց, ձեռ, իրես լուաց,
Ինչ ձիկ տեսաւ մուրմուրիկմ՝ էլաց.
Ասաց, լաճիկ, լաճիկ, էրէկ քեո ապով ձիկ ծեծած.
Միս ոսկորից բեկբեկած, արուն բամբակով է ժողված
Բրինքտեր մալհամով քեաւած.
Ինչ իմ աչք ինկաւ քեո իրես,
Իմ խալվէն վարդն ըռհան վար ձիկ չի շարժած
Ձը գիտցայ թէ դու խօրէ մօրէ խօրօտ իր,

Թէ ձիկ սկունն ի թուած.

Արի պաշմ' առ, թող ձիկ տարած թումումած:

Կ' իրիշիմ բոյդ վեր, բոյդ թումամ էր,
 Կ' իրիշիմ ծծուերդ վեր ու ծծուերդ շամամ էր,
 Կ' իրիշիմ աչքերդ վեր, աչքերդ Ձինու կթխայ էր.
 Մրկայ իրիցայ թուխ աչքերու դարդէն
 Կոտրեցիր իմ սրտի փարդէն,
 Կապեցիր իմ տղայ Մաղտէն,
 Խամով, դարդով, պէ ըուզկեար ումը ի՞նչ անիմ:

Դօստ. Գեո սիրուն ձիկ տը թըլիմ գեարնան գետեր,
 Տանէր, թող տանէր, չում Շեանգեառ տանէր, Մուսուլ
 դու խանէր,

Ոչ մէրիկ ունեմ որ գերլիուս նստէր,
 Ո'չ քեիւրիկ ունեմ ծամեր էրանէր,
 Պստիկ դոստ մ' ունեմ, թէ էնիկ զիւր խալաւ փոխէր,
 Աշխար խիտ շախուն, ես իմ խիտ խամուն
 Տ' ելնեմ խիտ բանձրիկ սարիւրաց.
 Խամերը տամ աշնան քեամուն:

ՃԱՄԲՈՐԴ

Վ Ա Մ Յ Է Ն Ս Ր Տ Ի Ն

Վայ էն սըրտին, որ սէր չ'ունի...
Խըղճուկ իմ սիրտ—անտէր ես.
Սիրածի հետ սէրը կորցրիր,
Անսիրական, անտէր ես...

Վայ էն դիմին, որ տէր չ'ունի...
Անտէր իմ կեանք—չոր ծառ ես.
Էսօր անբոյս, էսօր անյոյս,
Վաղն էլ—անյոյս կը մարես...

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

Օ Հ Ա Ն Ի Վ Ի Շ Տ Ը

I

Այնքան լաւ էին միասին այն երկու ծերերը՝ Օհանը ու իր կինը՝ Նւ տարէցտարի նրանք աւելի էին նըմանում իրար բնաւորութեամբ, ձայնով, խօսելու եղանակով, շարժումաճքով, գլուխ բռնելու, կորանալու, նըստելու ձևով։ Վերջիվերջոյ տարբերութիւնը մնաց միայն այն, որ մէկը ձիւնի պէս ճերմակ մազեր ու միրուք ունէր, իսկ միւսը՝ լաշակ ու կանացի շորեր։ Չագերը վաղուց հետէ թուցրած ծեր թուռնների պէս նրանք միշտ միասին էին, ամեն տեղ անբաժան։ Երկուսն էլ կնճռոտ՝ բայց բարի գէմքով, հեզ մարած աչքերով, երկուսն էլ կարճահասակ ու կորացած, միշտ հողադոյն զգեստներով, ժպտադէմ, քաղցր գէպի երեխաները, խիստ, պահանջող, հրամայող գէպի հասակաւորները։ Որդիների ու բազմաթիւ թոռների տէր էին, տունը լի էր, չէն ու կենդանի, բայց կարծես աշխարհում մենակ էին այն երկու ծերերը, բոլորովին մենակ, իրանց կեանքի վերջալուսին սղմում էին կողք-կողքի՝ իրար ջերմացնելու, սփռիւնելու համար որը, անտէր մնացած երեւիտների պէս։

Քանի տարի էր, որ երկու ծերերը օրուայ նոյն ժամին դուրս էին գալիս միեւնոյն դռնից, միասին աւհանջ դնում եկեղեցու զանգի ձայնին, միաժամանակ խաշակնրում երեսները, մրմնջում նոյն աղօթքը և նոյն

դանդաղ, երերուն ընթացքով՝ շարժւում բաւից դուրս՝ դէպի Աստծու տունը: Շատ վաղուց էր, որ ոչինչ չէր խանդարել նրանց ծեր օրերի այդ գերագոյն մխիթարութիւնը, այդ ամենօրեայ աղօթքը, որի մէջ ամփոփւում էր կարծես նրանց էութեան բոլոր մնացորդը, խուսափող կեանքերի յետին փայլը: Թւում էր, թէ հիւանդութիւնն անդամ խնայում է նրանց միայն այն պատճառով, որ ժամից, աղօթքից յետ չը մնան:

Եկեղեցուց նրանք յետ էին գալիս միեւնոյն հանդիսաւոր դանդաղութեամբ և սովորաբար կատակելով ծերունի քահանայի հետ: Խօսակցութեան ու կատակների անսպառ նիւթը միշտ մահն էր ու գերեզմանը:

— Երկսիւղ միասին պէտք է թաղեմ, հալւորներ, ասում էր քահանան:

— Հա՛, տէրտէր ջան, միասին, միասին, շտապում էր համաձայնել պառաւը:

— Ի՞նչ ես խօսում, այ կնիկ, կատակով բողոքում էր Օհանը. մեռանք ապրելով ու մի թաղա տէրտէրի ձեռնադրութիւն չը տեսանք, կաց մի սրանից աղաւտե՛նք, մեռնելու ժամանակ միշտ կ'ունենանք:

Քահանան ծիծաղում էր, ծերերը երկխայի պէս զուարճանում էին այս սրախօսութեամբ:

— Օհան ամի, աւելացնում էր քահանան, տեսնում եմ՝ երեսդ պինդ է, վայ թէ դու էդ պառաւին էլ թաղես:

— Ձէ, տէրտէր ջան, էդ մի՛ ասա, բողոքում էր Օհանը լուրջ կերպով, թող Աստուած իմ պառաւին պահի ինձ համար, առանց նրան հալս հալ չի լինի:

Եւ այդ ճանապարհը ժամից մինչև տուն... գալաւրուն ու անվերջ, սղմուած ցածրիկ խրճիթների մոայլ պատերի մէջ՝ ասես շինուած էր նրա համար, որ ծեր ժամաւորները աշխարհի և երկնքի իրերի մասին խորհելու ժամանակ ունենան: Երկու ծերերը չէին ձանձրանում այդ ճանապարհից, փայտերի վրայ յենուած ու կորացած՝ նրանք կողք-կողքի քայլում էին՝ աջ ու ձախ

բարեւներ բաշխելով դռների առաջ կանգնած գիւղացիներին. երեկոյեան կիսախաւարի մէջ նրանց փոքրիկ ստուերները երեւում էին մեղմիւ, վերջալոյսի յետին շողերը գունատ ու յուսահատ՝ քաշւում էին կաուրների և դէղերի վրայից ու մեռնում լեռների յետեւում: Եւ այնքան յուզիչ, այնքան խորհրդաւոր զուգադիպութիւն կար հեռաւոր հորիզոններում մեռնող ճառագայթների և գիւղի դորշ, մթագնած փողոցներում հանդարտօրէն երեւող այս ծերերի մէջ, որոնք կամաց-կամաց լուծւում, խառնւում էին երեկոյեան մշուշի հետ: Եւ այն մարդ շողերը և այս ծերերը ասես զոյգ-զոյգ իրար բռնած՝ իրար վրայ յենուած քայլում էին գէպի գերեզման մի յուզարկաւոր հանդիսաւորութեամբ, որ լուռ, բայց խորունկ ցաւի պատկերն ունէր:

Ուրիշների հետ գերեզմանի և մահուան մասին նըրանք սիրում էին խօսել միշտ կատակելով, միշտ ծիծաղելով: Ամեն մէկի համար գերեզմանը հանգստութեան, անվրդով խաղաղութեան յաւիտենական վայրն էր, բայց դրա հետ միասին նրանց յետին ցանկութիւնն էր կամ մի օրում, կամ գոնէ մի շաբթում մեռնել, որ մէկը միւսից յետոյ աշխարհում մենակութեան, որբութեան դառնութիւնը երկար չը ճաշակի:

Ամեն երեկոյ ժամից յետոյ, երբ ընթրիքի սփռոցի շուրջը բոլորում էր ամբողջ ընտանիքը, ծեր Օհանը մի բաժակ գինի էր ձեռք առնում, և սկսում էին գերեզմանի ու մահուան մասին անվերջ բարեմայլութիւնները ընդհանուր լռութեան մէջ:

— Կնիկ, անպակաս լինիս. էս տղերքին թո՛ղ Աստուած պահի իրանց համար, բայց դու ինձ համար՝ ես քեզ համար, այ պառաւ, ասում էր ծերունին ժրպտալով:

— Մարդ, բարերար Աստուծոյ կը խնդրեմ, որ քո բարի, բո արդար ձեռքով երկու բուռ հող գցես երեսիս ու զինջանամ, ուրիշ բան չեմ ուզում. ցամաք

աչքով դերեղման մանեմ, դու էլ գլխիս վերե կանգնած լինիս:

—Մի սաս, այ կնիկ, ցամաք աչքը թող Աստուած տայ, բայց առանց քեզ իմ բերնի համն էլ համն չի լինի: Թող Աստուած երկսիս հողին էլ մի հետ առնի, առանց կնիկ մարդն ինչի է հարկաւոր:

Հարսները կամացուկ փափսում էին, որդիները ժրպտում ծերերի այս փոխադարձ գուրգուրանքների վրայ, և լաւ էր այդ բոլորը:

Վերջանում էր ընթրիքը, ծերերը միառժամանակ նստում էին իրար մօտ, նայում էին վազվզաւ, աղմկող թոռներին և, երբ առաջին հաւը թառն էր բարձրանում, նրանք կամացուկ քաշւում էին իրանց անկիւնը և սնկնալոյսով, յօրանջելով ու աղօթելով անկողին մտնում միասին:

Չմեռները, երբ խրճիթում ցուրտ էր, դուռն ու երգիքը պատած եղիամի թանձր շերտով, ծերերի անկողինը ձգւում էր թոնրին բոլորովին մօտիկ: Այնուամենայնիւ իրանց բնում ցրտից ճթճթացող թռչունների պէս, նրանք կծկւում էին, իրար կպչում, վշվշում:

—Կնիկ, մէջքիս կպիր, արանք մի թող, այ պառաւ, քամի խաղաց, փէտացայ, շուտ, շուտ, տննչէն:

Եւ երկու վտիտ, սառած մարմինները մէջք մէջքի էին տալիս, իրար սղմւում, մօտ, մօտ, իրանց հին ջերմութեան մի յետին մնացորդն աշխատում էին խառնել իրար անկողնի մէջ, էլի մի ձմեռ ապրելու համար: Առաւօտները զարթնում էին լուսաբացից շատ առաջ, և անկողնի մէջ սկսում էին մի երկար խօսակցութիւն նախ երազների՝ ապա աշխարհի իրերի մասին:

—Պառաւ, քնած ես:

—Չէ, ի՞նչ քնեմ, տնաչէն, դիշերները տարի են, էս քան քնե՞լ կը լինի:

—Հաւը կանչեց:

—Մի բերան նոր կանչեց, էս մեր արջորին տղեր-

քը թող լաւ մտիկ տան, ձէնը շատ զիւ է ու խտակ, լուսաբացին մարդի հոգին թեթեւանում է լսելիս:

—Հա, լաւ ձէն ունի, լաւ աքլորը տան զարգն ու բաղդն է:

—Էսօր դու ինձանից շուտ զարթնար, խէր ըլնի, պառաւ:

—Երազի աէրը մեռնի, երազները թողնում են, որ մարդ քնի. զարմանալու բաներ տեսայ, մազերս դիպացան: Եւ ծերերի երազներն այնքան շատ էին, միշտ այնքան բազմազան, յաճախ հրէշաւոր, այլանդակ, սարսափներով լի, չար ու բարի, լաւ ու վատ: Արջեր, գայլեր, գողեր, դեւեր, ճիւղաղներ իրար խառնուած կամ գատ-գատ գալիս էին ծերերի յոգնած, մթազնած երեւակայութեան հետ խաղալու ձմերային երկար գիշերներին, խրճիթի թանձր խաւարի մէջ: Ամեն լուսաբացին ծերերը փոխադարձաբար պատմում էին իրար այդ երազները, պատմում էին բոլոր մանրամասնութեամբ, ունկնդիրը դողում էր վատ խորհուրդներից, պատմողը վախենում էր, բայց ոչինչ բաց չէր թողնում:

—Աստուած խէրն անի, կրկնում էր վերջում ունկնդիրը մոռածկոտ ու անհանդիստ:

—Հա, Աստուած բարին կատարի, աւելացնում էր պատմողը:

Տիրում էր խորին լուռութիւն. ծերերն իրանց պատմութիւններից վախեցած՝ ասես կծկւում էին ու իրար սղմում խաւարի մէջ: Աքաղաղը վերստին կանչում էր զիւ, բարձր:

—Տղերքը չը գնացին գոմը, ասում էր ծերունին:

—Չէ, քնած են, ձէն տուր:

—Սաքօ, այ Սաքօ. Գրիգոր, ելէք, որդիք, լուսացաւ ախր, անասունները կապերը կը կտրատեն, մեղք են, ելէք, գոմը գնացէք:

Խրճիթի խաւարի մէջ սկսում էր մի խուլ շարժում ու փսփսոց. հարսներն առաջինը շտապում էին դադտագողի թողնել իրանց անկողինները, անձայն հագ-

նուեւ ու ոտքի ելնել, որ մեծերը չը նկատեն. նրանց ամուսինները նոյնպէս հագնուում էին հանդարտութեամբ, բարձրանում տեղերից, խարխալելով դուռը փնդրում: Տունը զարթնում ու կենդանանում էր խաւարի մէջ. մօտեցող լուսաբացը ճրագ վառելու ցանկութիւն չէր թողնում:

Հեռուից լսում էր նաև եկեղեցու զանգի ձայնը, որ մեղմ ելեէջերով տարածւում էր բնած գիւղի վրայ. ծերերն էլ յօրանջելով խաչակնքում էին երեսները, տնքում, հազում ու շարժւում:

—Վեր կաց, պառաւ, վեր, մենք էլ էրթանք դէպի մեր Աստուածը, մեր աղօթքն անենք:

—Օրհնեալ է Աստուած, մրմնջում էր պառաւը, էրթանք: Էս գիշեր ի՜նչ ցուրտ է, պարզկայ է արեւ, սափորները չէն ճղուել, տես դռներն ինչպէս ճուռում են:

—Հա, պարզկայ է, ձիւնն էլ թարսի պէս էս ձմեռ շատ չի, ցանքերին վնաս չը պատահի:

—Աստուած ողորմայ:

Եւ հանդարտութեամբ հագնւում էին ծերերը՝ շարունակ յօրանջելով ու աղօթելով, դրան յետևում երեսները մի բուռ ջրով լուանում, կրկին խաչակնքում ու կամացուկ շարժւում դէպի եկեղեցին:

Անցնում էին տարիները տարիների յետևից, նրանք աղօթում էին, քնում, զարթնում էին, դարձեալ աղօթում և ամեն օր քայլում էին դէպի գերեզման:

II

Բանը պատահեց յանկարծ...

Ծերունի Օհանը ինքն էլ չ'իմացաւ, թէ ինչպէս հիւանդացաւ իր կինը և ինչպէս մեռաւ: Միայն մի օր պառկեց և միւս օրը արդէն դադարումն էր: «Ճրագի պէս մարեց, սուրբ կնիկ, ճրագի պէս», կրկնում էր ծերունին՝ դադարի յետևից քայլելով:

—Թաղեցիք պառաւին, հալւոր, թաղեցիք,—ասում էր քահանան յուզարկաւորութիւնից վերադառնալիս.— երեսդ պինդ է. էէ, դու էն ասն, դեռ էլի շատ պէտք է ապրես, ոտերդ մեկնելու չես, հոգուդ հացը վերջապէս չը պէտք է ուտենք:

—Աստծու կամքն է, տէր հայր, ինչ որ վերից կը տրուած է, էն ոչ դու, ոչ ես փոխել կարող ենք:

—Միաբդ գիտեմ, գիտեմ, հալւոր, տեսնես ինչ ջահիլ կնկայ ես աչք դրել, որ մէկ էլ թագապսակ կապես. բարով մուրազիդ չը հասնես, վերջացրեց քահանան: Լնդհանուր ծիծաղ բարձրացաւ:

Հին օրերի ընկերուհու մահը Օհանը չը լացեց. ինչպէս լաց լինէր, հասած որդիների, մեծ թոռների տէր էր, նրան վայել չէր արցունք թափել իր պառաւ ամուսնու գերեզմանի վրայ: Թաղումը կատարուեց ուրախութեամբ, նոյնիսկ կատակներով: Հարեանները գտնում էին, թէ պառաւը լաւ ու բաւական ապրեց, իսկ ժամանակին մեռաւ: Քահանան համարեա ժրպտագէմ էր քաղում աղօթքները, ամենքը կարծես խօսք մէկ արած իրանց վերաբերմունքով ուղում էին ասել, թէ այսպիսի մահը չեն լալիս, այլ օրհնում են տուողին, ուրախանում են, որ տեղի ունեցաւ:

—Երանի իրան, կրկնում էին կանայք չորս կողմից, աշխարհը վայելեց ու մեռաւ ցամաք աչքով, ով չի ուզի այդպիսի մահ:

Եւ այդ ընդհանուր անտարբերութեան մէջ մենակ էր ծերունին, նրա սիրտը մխում էր, բայց ստիպուած էր ծածկել իր վիշտը, իր մենակութեան, այս յանկարծակի վրայ հասած որբութեան արցունքները: Նա ամաչում էր մանաւանդ իր հասած որդիներից ու թոռներից. ինչ օրինակ պիտի տար ինքը, եթէ երեխայի պէս հեկեկար պառաւի յետեից: Այնքան տարիներ ապրել էր աշխարհում, նրա օրէնքներն ու կարգերը գիտէր, նրա սովորութիւններն ու աւանդութիւնները միշտ պահպանել էր ծերերին յատուկ նախանձախնդրու-

Թեամբ, իր կեանքի վերջին չէր ուզում վատ օրինակ հանդիսանալ, իր տարիքին, դիրքին անվայել թուլութեան նշաններ ցոյց տալ։ Եւ նա ոչ միայն չը լացեց, այլև կատակներին պատասխանեց ժպտով, խառնուեց մասնաւոր խօսակցութիւններին, կարծես ոչինչ պատահած չը լինէր, խօսեց արտից, դաշտից, վար ու ցանքից, թանգութիւնից ու էփանութիւնից։

Այն գիշեր նա առաջին անգամ այնքան տարիներից յետոյ մենակ անկողին մտաւ, կծկուեց վերմակի տակ ու սկուռեց, բայց երկար ժամանակ քնել չը կարողացաւ։ Եւ առաջին անգամ իր կեանքում նա լսում էր, թէ ինչպէս խրճիթի խաւարը ծածկոյթ ունենալով՝ իր հարսները մէկը միւսի յետեւից զգուշութեամբ, անձայն հանեցին իրանց զգեստները և անկողինների մէջ ամուսինների կողքը բռնեցին։ Նա մի քիչ էլ կծկուեց, վերմակը դլխին քաշեց, կ'ուզէր չը լսել հանուսղ զգեստների խշխշոցը, երիտասարդ կեանքերի շշուկը, երկչոտ շրթունքների փափսոցը, կրծքերի ներդաշնակ հևքը, նա ամաչում էր իր համար, բայց այդ գիշեր խաւարը ոչինչ չէր ծածկում նրանից։ Եւ կամաց-կամաց իր հոգու խորքում, նրա մի մոռացուած անկիւնում զարթնում էր մի զգացմունք, որ նախանձ չէր—ինչպէս նա կարող էր նախանձել սեփական որդիների բախտին, երջանկութեանը, երիտասարդութեանը—դա մի ուրիշ բան էր, մի անհուն վիշտ, կիզիչ ու ծածուկ, որ ուռչում լայնանում էր, ու ճնշում ծերունու կուրծքը. նրան թւում էր, թէ իր շուրջն այն գիշեր էլ ոչինչ ու ոչ ոք չը կայ, որ ինքը մնացել է մեն-մենակ աշխարհում, ու դատապարտուած է կծկուել ու դողդողալ իր սառն, անհամբոյր անկողնի մէջ։ Գերեզմանում այդ օրը հանգչող պառաւը կարծես տարել էր ամեն ինչ և ծերունուն թողել մի խեղդող ամայութիւն։

Խրճիթը բոլորովին խաղաղուեց։ Խաւարի մէջ լքուում էր միայն քնողների մեղմ շնչառութիւնը և մի հատիկ կատուի անվերջ մոմռոցը, միակերպ, ձանձրալի։

Ամեն ինչ մոռացած՝ ծերունին ականջ էր դնում այդ մոռոցին։ Տարիներից յետոյ առաջին անգամ կատուն գրաւել էր նրա ուշագրութիւնը, կ'ուզէր մինչև իսկ այդ փոքրիկ կենդանին ունենալ իր անկողնում, դրկել, սեղմել իր կրծքին, զգալ դէթ մի կենդանի արարածի շունչը, սրտի բաբախումը. «Բայց կատուները ծերերին չեն սիրում, մտածեց նա, նրանք սովորաբար փոքրիկ երեխաների անկողնի մէջ են պառկում դիշերները»։

Եւ այն միաքը, թէ մինչև իսկ կատուները չեն սիրում ծերերին, նրա ցաւը կրկնապատկեց և միայնութիւնը դարձրեց սարսափելի։ Նա աւելի կծկուեց, վերտիտ ոտներն աւելի հաւաքեց իրար վրայ, իսկ վերմակը կ'սսես աւելի ցուրտ դարձաւ, նրա ծալքերից սառն հով էր փչում։ Լուսաբացը հեռու չէր, աքաղաղը կանչեց ըստ սովորականին զիւ, բարձր, քիչ յետոյ էլի հընչուեց եկեղեցու զանգը, և նրա ձայնը մեղմ ելեւէջերով տարածուեց բնած գիւղի վրայ։ Այդ այն ժամն էր, երբ իր պառաւը ըստ սովորականին զարթնում էր ու պատմում իր երազները, երբ նրանք վեր էին կենում միասին և երերալով խաւարի մէջ դնում դէպի Աստծու տունը։ Յիշեց այդ բոլորը ծերունին, ուռած սիրտը փղծկաց, և նա վերմակը դիւսին քաշեց ու խեղդուած ձայնով հեկեկաց։ Յորդ արցունքները հոսում էին նրա ծեր աչքերից, թրջում էին բարձը, և նրա այրուած հոգին հովանում, հանգստանում էր։ Եկեղեցու զանգը շարունակում էր հնչուել, միակերպ ու յամառ, կարծես անսլաք ճառ. ծերունուն իր անկողնուց դուրս քաշելու և դէպի աղօթքը գրաւելու համար, բայց Օհանը ջարդուած ու յոգնած՝ էլ ոյժ չ'ունէր վերկենալու, նա կամաց-կամաց նզղեց ու քուն մտաւ։ Եւ առաջին անգամ տարիներից յետոյ վշտացած ծերունին ժամից յետ մնաց։

III

Անցան օրեր և շաբաթներ, ծերունի Օհանը վերըս-

կսեց իր առաջուայ կեանքը: Առաւօտ և երեկոյ նա մենակ եկեղեցի էր դնում և մենամենակ էլ վերադառնում: Միայն այժմ նա աւելի դանդաղ էր քայլում, մի քիչ աւելի էր կուացած իր գաւազանի վրայ և ճանապարհն էլ նրան թւում էր խիստ երկար: Պատահում էր երբեմն, որ նա տնքտնքում էր, հազում ու յետ մնում եկեղեցուց: Յերեկները նստում էր խրճիթի դրան առաջ բարձրացած թմբի վրայ, նայում էր լայնարձակ բակին, ուր հսկայ կաղամախները և փնջակատար խընձորենիներն ու տանձենիները օրօրում էին քամու առաջ: Ծերունին սիրում էր նայել մանաւանդ նրանց մի մի գեղնած տերևներին, որոնք փռվալով պտոյտներ էին գործում օդի մէջ, ընկնում գետին՝ այլևս երբէք վեր չը բարձրանալու համար: «Բողոքը, բոլորը կը թափուեն, և էլ ոչ մէկը չի բարձրանայ», մտածում էր նա տխուր թեամբ, և ծեր գլուխը կախում էր կրծքին կարծես նոյնպէս գետին ընկնելու համար:

Նա քիչ էր խօսում, չատ մտածում, և երեկոյեան ընթրիքի ժամանակ այլևս նրա ձայնը չէր լսում. մահուան ու գերեզմանի մասին բարեմաղթութիւնները լռել էին: Առաջուայ պէս նա պառկում էր ամենքից վաղ, փակում էր աչքերը, աշխատում էր քնել ամենից առաջ, որ չը զգայ իր մենակութիւնը, երբ իր որդիներն ու հարսները կը պատրաստուեն անկողին մտնել, չը լսին ընդ կենդանի շշուկը, ազատուի այն սարսափելի, խեղդող զգացմունքից, որ ամեն գիշեր միևնոյն ժամին ուռչում էր նրա կրծքի տակ և ճնշում, ճնշում: Բայց իղուր. նրա բունը չէր տանում, աչքերը չէին փակւում, նա ամեն գիշեր սլարդ ու որոշ հասկանում էր իր շուրջը՝ խաւարի մէջ կատարուող կեանքը, նա համարեա բաց աչքով տեսնում էր թէ ինչպէս ամենքը, ամենքը լաւ են, երջանիկ են, մենակ չեն, միայն ինքն է որբ ու անտէր, միայն ինքն է մոռացուած, որովհետեւ ծեր է, խարխլած: Այդ զգացմունքից նա և՛ տանջւում էր, և՛ ամաչում: Դա մի խորունկ ցաւ էր, որ չէր

կարող, չէր համարձակուում պատմել ոչ ոքի, և որը մե-
նակ տանել նա իր ուժից վեր էր:

Ծերունին զգում էր, որ ինքը այդ ցաւից ամեն
գիշեր մեռնում է, կամաց-կամաց, մաս-մաս. կարծես
մի անտեսանելի ձեռք անողորմ կերպով պոկում էր նը-
րանից իր հոգին կտոր-կտոր՝ անտանելի ցաւեր պատ-
ճառելով, իսկ ինքը դատապարտուած էր կրել, տոկալ
ու լռել մինչև գերեզման:

Ինչո՞ւ:

Այդ զարհուրելի «ինչո՞ւ»-ին նա պատասխան չէր
գտնում և չը գիտէր ո՞ւմից հարցնել, ո՞ւմ բաց անել իր
ծեր սիրտը, իր մխացող հոգին:

Եկեղեցուց վերադառնալիս նա մի քանի անգամ
պատրաստուել էր մի բան ասել, միայն երկու խօսք
Հէրիքին, այն հաստ ու կոշոր դէմքով այրիին, որ ա-
մեն երեկոյ անցնում էր իր կողքից: Բայց այդ տարօ-
րինակ կինը ասես դիտմամբ սովորական «օղորմի Աս-
տուած»-ն ասում էր ու միշտ անցնում շտապով: Ինչո՞ւ չի
կանգնում, ինչո՞ւ չի սպասում, որ միասին գնան՝ դրոյց
անելով, մտածում էր Օհանը, չէ՞ որ ինքն այժմ մենակ
է, բոլորովին մենակ: Հէրիքը երեւի այդպէս չէր մտա-
ծում, որովհետեւ մանրիկ, բայց արագ քայլերով մօտե-
նում էր ծերունուն, աջ ձեռքը դնում էր իր կրծքին, գը-
լուխը թեթեւ կռացնում, մեղմ ձայնով «օղորմի Աս-
տուած» ասում ու անցնում առանց յետ նայելու: Ճարը
կտրած՝ Օհանը վճռեց ինքն առաջինը խօսել, մի բան
ասել, նրան կանգնեցնել որեւէ պատրուակով:

Եւ այն երեկոյ ծերունու աղօթքը ժամում լաւ չէր,
նա չէր լսում տէրտէրի ասմունքը, կ'ուղէր, որ նա շուտ
վերջացնի, նոյնիսկ մի քանի անգամ յետ նայեց իմա-
նալու համար, խօս Հէրիքը դուրս չի՞ դնացել: Չէ՞, Հէ-
րիքն այնտեղ էր, կանանց դասում, իր սրուշեալ տե-
ղում, սեան առաջ: Օհանը յետ նայելուց յետոյ՝ էլ չէր
կարողանում աղօթել, նրա գլխում անդադար դառնում
էին այն մի քանի բառերը, որ նա վճռել էր արտասա-

ներ, նոյնիսկ ականայ կրկնում էր ինքն իրան՝ «Հէրիք բաջի, վռազում ես». կրկնում էր և ամաչում:

—Մեղայ քեզ Աստուած, մեղայ քեզ, խկոյն աւելացնում էր նա, բայց կրկին գաղտագողի յետ էր նստում, կրկին նոյն բառերը ինքնաբերաբար արտասանում էր մեղմիւ:

Ժամը վերջացաւ. Օհանն առաջինը դուրս եկաւ, որ Հէրիքն իրանից վազ չ'անցնի, գնայ՝ նա քայլում էր և սրտի բաբախումով ականջ դնում յետեւեց լսուող ոսնածայներին. նա հաւատացած էր, թէ կը կարողանայ ճանաչել նրա ոտքի ձայնը:

—Օղորմի Աստուած:

Օհանը ցնցուեց, շփոթուեց յանցանքի մէջ բռնուածի պէս: Բայց էլի հաւաքեց իրան ու բազցրու թեամբ պտտասխանեց.

—Օղորմի ծնողացդ, Հէրիք բաջի: Վերջին երկու բառերը ծերունին արտասանեց այնպիսի քնքշութեամբ, այնքան ուշադիր շեշտով, որ կ'ինը յետ նայեց զարմացած, բայց էլի կանգ չ'առաւ: Յուսահատուած ծերունին ոյժ տուեց ոտներին ու մի քիչ տարօրինակ, դողդոջն ձայնով կանչեց.

—Հէրիք բաջի... այ Հէրիք բաջի... վռազում ես համ... ի՞նչ շուտ-շուտ ես գնում... բան ունիս...

Կ'ինը կրկին յետ նայեց:

—Հա, ապա, Օհան ամի, բան ունեւ, շատ վռազն եմ:

Եւ կ'ինը դարձեալ անցաւ, գնաց: Ծերունին լքուած՝ մի առժամանակ մնաց իր տեղում, դուրսը կրճքին քաշ, անոյժ ու ջարդուած, ասես մի ծանր աշխատանքից յետոյ, ապա շարժուեց դէպի առաջ աւելի մենակ, աւելի խեղճ, քան երբեքիցէ: Այնուհետեւ մի քանի օր եկեղեցում չ'երևաց. դիշերներն անքուն, ցերեկներն էլ նստում էր իր սովորական թմբի վրայ, կամ երկար դաւազանով խաղեր էր քաշում գետնին, կամ նայում էր դէպի ծառերը, որոնց տերեւները մէկիկ-մէկիկ ընկ-

նում էին գետին, «այլևս երբեք չը բարձրանալու համար»:

Սակայն ապրել չէր լինում, պէտք էր մի բան անել:

Երեկոյեան նա դարձեալ եկեղեցումն էր, անհանգիստ, յուզուած, անհամբեր: Ժամասացութիւնը այս անգամ նրան թուում էր անվերջ, զայրանում էր, որ, քահանան դանդաղ է կարգում, կարծես դիտմամբ: Վերջապէս ժամաւորները սկսեցին դուրս գալ. ծերունին բայլում էր դէպի տուն, և սպասում էր Հէրիքի օտնաձայնին:

—Օղորմի Աստուած:

—Օղորմի ծնողացդ, Հէրիք բա՛ջի:

Կինը անցնում էր ըստ սովորութեան. Օհանը մի վերջին ճիգ դարձ դրեց ու քաղցրութեամբ կանչեց յետեւից.

—Կնոջ, Հէրիք բա՛ջի, տնաչէն, ինչ ես վաղում... քո հօրն օղորմի... Կ'ասես յետեւիցդ ե՛ն ընկած... Կնոջ, խօսելով էրթանք... տունը չի փախչի...

Հէրիքը կանգ առաւ առհարկի ու ճնշուելով: Ծերունին այժ տուեց օտներին, հասաւ նրան հեալով, շնչակտուր: Նրանք սկսեցին բայլել միասին: Օհանը սաստիկ ուզում էր մի բան ասել, իր սիրտը բաց անել, բայց խօսք չէր գտնում. բոլորն, ինչ մտածում էր մի բանի օրուայ ընթացքում, իր ծեր մտքից խոյս տուեց, գլուխը մնաց դատարկ, չրթունքը փակ, սիրտը յուզուած: Այդ հաստ, փափլիկ, սիրուն պառաւը, որ օրօրուելով քայլում էր նրա կողքից մերթ ընդմերթ քսուելով իր թեւին, նրան խալառ շփոթեց:

Լուռ էին. ժամանակն անցնում էր, թանկագին ժամանակը: Ծերունին հաւաքեց իր բոլոր բաժնութիւնը և մի բան ասած լինելու ու պառաւին խօսեցնելու համար, երեխայի պէս թափովեց.

—Հէրիք բա՛ջի... դեռ լաւ ես... զրինդ ես... դու վաթգ տեղն է... օտներդ էլ լաւ են երևում...

—Դու էլ լաւ ես երևում, Օհան ամի, ձեռ ու ոտդ պինդ են:

—Է՛հ, ի՞նչ լաւ, մէրիկ, էս մենակութիւնը...

—Ինչի՞ ես մենակ, փառք Աստծու, ի՞նչդ է պաւկաս, որդիներդ, թոռներդ, հարսներդ, տունդ լի, շէն...

—Է՛հ, որդիներն ու թոռներն իրանց համար, Հէրիք բաջի... իմը ուրիշ բան է... մենակութիւնը զուլում բան է... մարդու մէջ է կոտրում: Համ էլ գիշերները երազ ես տեսնում... տեսակ-տեսակ երազներ... ու չես իմանում ո՛ւմ պատմես... ձմեռն էլ ցուրտ է... մարդ տեղաշարի մէջ չի տաքանում մենակ... չը մեռայ պրծնեմ... Օղորմած հոգին գնաց... ինձ էլ չը տարաւ հետը... Հէրիք բաջի, դու տեղաշարիտ մէջ չեմ մրսում, հա՛մ... չէ, դու չես մրսի, լիքն ես... ինչպէս լիքն ես:

Ծերունին ձեռքով շօշափեց նրա կակուղ թեւ գգուշութեամբ:

Կինը դարմացած նայեց իր տարօրինակ խօսակցին:

—Կովերը չեմ կթել, Օհան ամի, վաղն եմ, ասաց նա ու շտապով հեռացաւ:

Օհանը նայում էր նրա յետեւից, ծեր աչքերի բոլոր ուժով աշխատում էր որքան կարելի է երկար տեսնել նրա պատկերը երեկոյեան մառախուղի մէջ, տեսնել նրա լայն թիկունքը, կոլոր ուսերը, ամբողջ գեր մարմնի հաճելի երերումները: Բայց Հէրիքը շուտ մաշուեց անլոյս փողոցների մէջ. ծերունին գլուխը քաշ ձգեց՝ մրմնջալով. «Գնաց, գնաց անիրաւը... նա էլ չը մնաց... ո՛ւմ ի՞նչ պէտքն է, որ Օհանը մենակ մեռնում է... բոլորը, բոլորը, անողորմե՛ր...»

Այն գիշեր անկողնի մէջ ծերունին դարձեալ երկար ժամանակ արթուն էր, բայց այս անգամ ուրիշ մտքեր էին պաշարել նրա գլուխը: Հէրիքի գեր մարմինը, լիքը բազուկները, կոլոր գէմը, ամբողջ այդ գըրաւիչ, ջերմացնող պատկերը, որ սողում էր երեկոյեան մառախուղի մէջ, ինչպէս մի քօղով փաթաթուած, շա-

բունակ ծերունու աչքի առաջն էր։ Օհանը մի առանձին հաճոյքով էր երեւակայում, թէ որքան տաք, որքան ախորժելի կը լինի Հէրիքի անկողինը ձմեռ ժամանակ, երբ դրսում ոռնում է ձիւնախառն քամին կատաղի, ցուրտ, երբ խրճիթի պատերն ու դուռն— երգիկը ծածկըւում են եղեամի սարսեցուցիչ շերտով, որքան դուրեկան կը լինի այդ ժամանակ մէջը-մէջքի սղմուել նրա հետ մօտ-մօտ, լողալ նրա կենդանի ջերմութեան մէջ և գրաւիչ երազներով քնել մինչև լուսաբաց։ Միթէ հնարաւոր չէ այդ, միթէ անկարելի է... Հէրիքն այրի է, մենակ, ինքը նոյնպէս մենակ, նոյնպէս սրբ... միթէ չէին կարող իրանց կեանքի մնացորդը միասին անցկացընել... ինչո՞ւ մեռնել այնպէս մենակ, լքուած, մոռացուած, ինչո՞ւ քաշ տալ այս մենաւոր, անպէտք ծերութիւնները, որոնցից մահը երբեմն գիւժամբ ասես խուսափում է երկար ժամանակ, նրանց աւելի ձանձրալի, նոյնիսկ նողկալի դարձնելու համար։ Միթէ այս բոլորը չի մտածում, չի զգում Հէրիքը... չէ նա էլ այրի է... բայց Հէրիքը կանգնեց, խօսեց... Օհանը յիշեց բոլոր այն խօսակցութիւնը, Հէրիքն ասում էր՝ թէ «դեռ լաւ ես, ուժդ տեղն է»... յիշեց նրա լիքը բազուկը, որը շօշափեց... Բոլորը լաւ կը լինի, եթէ Հէրիքը կամենայ, և ինչ պիտի ասի, կնիկ աղբ է, նա աւելի կ'ուզի ընկեր ունենալ... Ապա նրա աչքին ներկայացաւ գիւղը աւանդապահ ու անողորմ, պահանջող ու խիստ Գիւղը... հազար բերան ունինա, հազար խօսք, ու ամեն մի խօսքը մի թունաւոր նետ է։ Խնչ կ'ասի այդ գիւղը, իր հասակին, իր ծերութեանը, իր դիրքին մարդիկ երբ են ամուսնացել... որդիները, թոռները... հարսները, խախկ ու խայտառակութիւն։ Ախր ժամ պէտք է գընալ, տէրտէրի առաջ պէտք է կանգնել։ Հէնց ինքը՝ Օհանը, ինչ կ'ասէր ինքը, եթէ նոյն բանը մի ուրիշն անէր... մի ուրիշը ոտնատակ տար սովորութիւնները, աւանդութիւնները, ամօթը, մանաւանդ ամօթը... Հա,

հա, ինքն էլ խիստ անողորմ կը լինէր, բայց ինչպէս իմանար, թէ այդքան ցաւ բան է մենակութիւնը:

«Ձի ապրում, չի ապրում, կրակ է, մեռնում եմ», մրմնջում էր նա:

Հաւը խօսեց, դեռ նա արթուն էր ու թաւալում էր անկողնի մէջ, բայց պէտք էր մի բան անել, մէկին ասել, մէկին պատմել իր ցաւը, ճար, դարման խնդրել:

Խրճիթը դեռ խաղաղ էր ու խաւար:

— Սարգիս ջան, այ Սարգիս կանչեց ծերունին քնքշութեամբ իր աւագ որդուն:

Սարգիսը լուռ էր. միայն լսում էր նրա առողջ չնչառութիւնը. նա քնած էր:

— Սարգիս ջան, այ որդի, կրկնեց ծերունին վրձնողաբար, մի բան ասելու հաստատ ցանկութեամբ:

— Հը՛... հայրիկ... դո՛ւ ես, գոմի ժամանակ է...

— Ձէ, որդի գոմի ժամանակ չի... էս գիշեր էնպէս ցուրտ է... տեղաշարիս մէջ չեմ տաքանում...

— Ձե՛ս տաքանում... թո՛ղ, մի բան գցեն վրագ:

«Ձը հասկացա՞ւ... անողորմ որդի», շշնջաց ծերունին, և նրա աչքերը թացացան խաւարի պէս մութ վշտից: Յետոյ նա լսեց, թէ ինչպէս Սարգիսը զարթեցրեց իր կնոջը, ինչպէս վերջինը վերկացաւ խարխաւփելով մօտեցաւ ծալքին, զգուշութեամբ մի բան դուրս քաշեց բսալով, եկաւ դէպի կեսրարի անկողինը: Խաւարը թանձր էր, կիսամերկ, ջահիլ կինը չէր երևում, վստահ էր, բայց ծերունուն թւաց, թէ ինքը տեսնում է այդ կանացի կիսամերկ պատկերը, զայրացաւ, ամաչեց ու գլուխը թաղեց վերմակի տակ: Հարսը ծածկեց նրան ու հեռացաւ: «Անողորմներ, անողորմներ», վերլստին շշնջաց ծերունին:

Անցան էլի օրեր, էլի գիշերներ, նոյնպէս անհանգիստ, նոյնպէս ծանր: Եւ մի գիշեր իբրեւ վերջին, յուսահատ փորձ, ծերունին վճռեց դիմել որդուն:

— Սարգիս:

— Ի՞նչ է, հայրիկ, էլի՞ մրսում ես:

Ծերունին մի փոքր լուռ մնաց, մի բան պիտի ասէր, որ չէր ասուում:

— Սարգիս ջան, որդի... ախր, ես էսպէս... նա չը կարողացաւ շարունակել, ձայնը խզուեց, և խաւարի մէջ հնչուեց նրա խուլ հառաչանքներն ու հեծկլտանքները. ծերունին լալիս էր յորդ արցունքներով:

— Հայրիկ, կանչեց զարմացած որդին անկողնի մէջ նստելով:

Ծերունին շարունակում էր լալ:

— Հայրիկ, ի՞նչ կայ, ինչի՞ ես լալիս:

— Է՛հ, ես ի՞նչ գիտեմ, որդի... լալիս եմ էլի... որ ես չը լամ, էլ ո՞վ լայ... ծերերը պէտք է լան... Լին օրը ժամից դալիս, էս մեր հարեան Հէրիքին տեսայ... Էնպէս մեղքս էկաւ... լաւ, շինարար, անարար կնիկ է, ու Էնպէս մենակ... խեղճ... դանդաղում էր իր անտէրութիւնից... «մենակ եմ» ասում էր...

— Է՛, Հէրիքի դարդն էլ քեզ տուին, դրա համար ես լալիս:

— Չէ, որդի... հալբաթ ամեն մարդ իր դարդն ու ցաւն ունի... ամա ասում եմ... ի՞նչ տեսեմ... դէ ես էլ մենակ եմ, Հէրիքի պէս... ձմեռ է... էս տեղս էլ Էնպէս ցուրտ է... ցո՛ւրտ է... Ծերունին դարձեալ շարունակել չը կարողացաւ, արցունքը խեղդեց նրա կոկորդը, նա երեսը դարձրեց դէպի բարձը, ու սսկուեց: Որդին լուռ էր, նա հասկացաւ իր հօր վիշտը, հասկացաւ ու մոռալուեց: Հայրը Հէրիքին ուզում էր տուն բերել... Կին դարձնել... հարսների ու թոռների տէր, իր վաթսուունն անց... գիւղը, խալիսը, դուռ, դրկեց...

Էլի օրեր անցան. հայր ու որդի էլ չը խօսեցին այն հարցի մասին, ծերունին չը գիտէր, թէ ի՞նչ է մըտածում իր որդին, անհանգիստ էր և հարցնել ամաչում էր: Եւ մի երեկոյ, երբ Օհանը ժամից դուրս էր գնում, ծերունի քահանան ձեռքը նրա ուսին դրեց ու կանգնեցրեց. նրանք յետ մնացին ժամաւորներից:

— Օհան ամի, ասաց քահանան, երեկ Սարգիսն ինձ

մօտ էր... մի բան ասաց... օջաղդ քարուքանդ կը լի-
նի... քեզ էլ սաղ չի գայ, ամեն բան իր ժամանակն
ունի, որդի... մարմինն իր ժամանակը, հոգին՝ իրը. բո-
հոգու ժամանակն է... նայիր էս ծառերին.—նա ցոյց
տուեց եկեղեցու բակի մերկ կաղամախիները.—ձմեռ է,
նրանք տերեւթափ են, դու էլ գիտես, գարուն կը
գայ, բայց թափուած տերեւները էլ երբէք վեր չեն
բարձրանայ, նրանց տեղ նորերը կը ծլեն, նորերը... ա-
ղօթիր ու միայն աղօթիր գարնան ու նոր տերեւների
համար... իմն ու քոնը անցաւ, էլ չի դառնայ:

Գիւլն էր խօսում, աւանդապահ, խստապահանջ,
անողորմ գիւլը, որ հազար բերան ունէր, հազար խօսք,
ու ամեն մի խօսքը թունաւոր նետ էր: Դա մի հօղմ
էր, աւերիչ ու ահագին, որ թափով սրբում, տանում էր
բոլոր անհատական տենչերը, երջանկութեան երազնե-
րը, որոնք դէմ էին ամօթին, սովորութիւններին: Ծե-
րունի Յհանը բաց աչքով տեսնում էր այն անդունդը, որ կուլ
էր տալիս իրան, որից խուսափել, աղատուել չէր կարող.
նա այժմ ապրում էր ոչ թէ ապրելու, այլ մեռնելու,
միայն մեռնելու համար: Գիւլն էր այգալէս ուզում:

Նոյն զիշեր նա գարձեալ կանչեց որդուն թոյլ,
նուաղած ձայնով.

—Սարգիս, այ Սարգիս:

—Հը՛, հայրիկ, մրսում ես:

—Հա, որդի, մրսում եմ... շատ եմ մրսում:

Ծերունին իրօք մրսում, դողդողում էր անկողնի
մէջ: Որդին վերկացաւ, ճրագ վառեց, խնամքով ծած-
կեց հօրը, նստեց կողքին:

Յհանը լաւ չէր, Յհանը մեռնում էր:

—Մեռնում եմ, որդի... ձմեռ է... գարուն կը
գայ... հին տերեւներն էլ չեն կանաչի... ծլէք, ծաղկէք
ու կանաչէք դուք, որդիք, բոլորդ:

Առաւօտեան քահանան եկաւ նրան հաղորդեց, գի-
շերը նա զառանցում էր գարնան ու տերեւների մասին.
մի երկու անգամ Հէրիբին յիշեց, և լուսաբացին նրա

Վաքրիկ, վտիտ մարմինը իր լայն անկողնի մէջ ստուած
էր ու անշարժ:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ՍԻՐՈՑ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

(Շեղի)

Առուակը դէպի դետակն է ձգտում,
Գետը միանում վեհ ովկիանոսին,
Ծովերը յուզուած իրար են դգւում,
Անջատ կեանք չը կայ երկրիս երեսին:
Բարձր էակներն Անհասի խօսքով
Ձուլւում են զոյգ-զոյգ, իբրեւ մէկ էակ,
Իսկ ինչո՞ւ ուրեմն խօլ փաղաքշանքով
Մենք չենք միանում, իմ անդին հոգեակ:
Համբոյր է տալիս լեռը եթերին,
Կահակներըն իսկ փարում են իրար:
Ինչո՞ւ նման չենք մենք ծաղիկներին,
Որ սէր են բուրում մէկ-մէկու համար:
Ծովն են փայլալում լուսնեակն ու դիշեր,
Արփին շողերով դրկում է աշխարհ,
Բայց ես ինչ անեմ այդ ջերմ համբոյրներ,
Երբ գգուանք չ'ունիս դժբաղդիս համար...

Թարգմ. Գ. ԱՆՈՓԵԱՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Վերջերս Պարսկաստանի մէջ ծագած խռովութիւնները ամենուն ուշադրութիւնը դարձուցին նորէն դէպի արեւելեան այդ վաղեմի պետութիւնը՝ որ իր դրացի քոյր պետութեան՝ Թուրքիայի հետ, ամենէն անընտելը կը մնայ արեւմուտքի քաղաքակրթութեան:

Ի՞նչ էն այդ խլրտումներու շարժառիթները: Մանաւանդ անոնք պիտի վերսկսի՞ն, աւելի սպառնալից հանգամանք պիտի ստանան: Ահա ինչ որ պիտի ջանանք բացատրել իբրեւ անշահախնդիր դիտող:

Ընդհանրացած կարծիք մըն է թէ Պարսկաստանի լճացումին ու անշարժութեան պատասխանատուն պարսիկ կրօնքի ձեւը՝ մահմէդականութիւնն է: Մենք կը կարծենք ընդհակառակը, որ կրօնքի ձեւն աւելի, կրօնքի մասին ժողովրդի կազմած հասկացողութիւնն է մեղաւորը: Որովհետեւ Պարսկաստանը, եթէ նոյնիսկ քրիստոնեայ ըլլար, մենք իր դրութիւնը զգալապէս փոխուած չը պիտի գտնէինք, եթէ ժողովուրդը շարունակէր կրօնի նկատմամբ ունենալ այն ըմբռումը զոր ունի այժմ:

Իրենք զիրենք քրիստոնեայ կոչողներուն ծիծաղելի յաւակնութիւններէն մէկն ալ այն է՝ իբր թէ՛ քաղաքակրթութեան անհրաժեշտ ու յարակից պայմանն է քրիստոնէութիւնը: Եւ արդարեւ հարեանցի դիտողը պիտի գտնէր որ ճիշտ ու արդարացի է այս հաստատումը, քանի որ քաղաքակիրթ ազգերու ամենք ալ քրիստոնեայ են:

Բայց պէտք չէ մոռնալ թէ քրիստոնէութեան թւականէն չը սկսիր քաղաքակրթութիւնը: Քրիստոնէութենէ առաջ գոյութիւն ունէր ահագին քաղաքակրթութիւն: Առանց յիշելու արեւելեան մերձակայ թէ հեռուոր հին ազգերու քաղաքակրթու-

թիւնը որ մայրն է եղած արեւմտեան հին քաղաքակրթութեան՝ յոյն և հռոմէական քաղաքակրթութիւններուն, մեր ներկային քաղաքակրթութիւնը ծնած ու կազմուած է բացառապէս իր անմիջական նախորդներու ազդեցութեան տակ:

Դրականութեան ու գեղարուեստներու տեսակէտով մենք տակաւին շատ բան ունինք սորվելու անցեալի յոյն-հռոմէական գրական ու գեղարուեստական հսկայ յիշատակարաններէն: Իսկ մեր կուլտուրական ու կենցաղավարական կեանքի զարգացումը կը պարտինք ներկայ հրաշագործ գիտութեան:

Յոյց տալու համար քաղաքակրթութեան ու քրիստոնէութեան յարաբերութիւնը՝ յիշենք փաստ մը:

Միջին-դարը, կաթոլիկութեան ամենէն կարմիր, կամ աւելի ճիշտ ամենէն մութ շրջանը, ուր հաւատքը հասած է իր բարձրագոյն կէտին, քաղաքակրթութեան ամենէն ամուլ ու ցաւոտ րոպէն է: Երբ կաթոլիկ կրօնի մղձաւանջը կը դադրի այլևս մարդկային ուղեղը զարդարելէ, երբ երկնաբաղձութեան շրջանին կը յաջորդէ անտարբերութեան, ազատ մտածումի, կեանքի վայելքներն ու հողի հաճոյքները մոլեգնօրէն փնտրող և իրականացնող շրջանը, ուր եկեղեցիի պաշտօնական ներկայացուցիչները՝ պապերը՝ անպատկառ վայելումի տենչը այն աստիճան հեռունները կը մղեն որ չեն քաշուիր իրենց սիրուհիին պատկերը կախել եկեղեցիի մէջ, Տիրամօր պատկերին մօտ *), վերջապէս երբ կը բացուի վերածնունդի (Renaissance) հոյակապ թւականը, այն ժամանակ միայն կաթոլիկութեան խաւարին մէջ խարխափող ցաւագին մարդկութիւնը կը սկսի հսկայ քայլերով առաջդիմել:

Իրարու յաջորդող այդ երկու շրջաններու բաղդատութիւնը բաւական պերճախօս է:

Եթէ նոր փաստեր յիշել հարկ ըլլար, կարելի էր մատնանիշ ընել Ճարոնը, Ծայրագոյն Արեւելքի այդ Անգլիան՝ որ անհամեմատ կերպով առաջ է քաղաքակրթութեան մէջ արեւմուտքի շատ մը քրիստոնեայ երկիրներէն: Ու եթէ քրիստոնէութիւնը քաղաքակրթութեան վկայագիր մը ըլլար, շատոնց պէտք է քաղաքակիրթ համարէինք Խոյի ասուրին, Սալմաստի հայը և ուրիշ մօտիկ ցեղեր:

Պարսիկը անընտել գտնուեր է քաղաքակրթութեան որոհեալ կրօնքի մասին շատ նախնական հասկացողութիւն ունի: Կրօնքը իրեն համար վերացական ըմբռնումներու ամբողջու-

*) Այս մասին կարգալ Իպոլիտ Տէնի «Philosophie de l'art» — Արուեստի փիլիսոփայութիւն — գործը:

Թիւն մը չէ, այլ թանձրացեալ, եթէ կարելի է այսպէս ըսել շօշափելի դարձած հասկացողութիւններու շարք մը: Պարսիկը պարզ մեքենայ մըն է զոր շարժումի մէջ կը դնեն կրօնական նախապաշարումները:

Իրականութենէն քաղուած մէկ երկու օրինակ առաջ բերենք:

Պարսիկ կառավարութիւնը փորձեց, ասկէ մէկ քանի տարի առաջ, ծխախոտի մենապաճառութիւնը տալ անգլիացիներուն: Այդ կարգադրութիւնը հաճելի չը թւեցաւ հոգևորականութեան որ անմիջապէս ծխելը «հարամ» յայտարարեց: Այդ օրուէն սկսած պարսիկ ժողովուրդը հանդիսաւորապէս փշրեց իր «ղայլանները», այլևս չը ծխեց, որովհետեւ քսանհորս ժամ առաջ «հալալ» եղող «թամպաքուն» այժմ հարամ էր, սրբապիղծ: Բայց մէկ երկու օր առանց ծխելու մնալէն ջղագրգռուած՝ յարձակեցաւ Ռէժիի պաշտօնատան վրայ, ձեռքն ընկածը կոտրեց, թափեց և յաջողեցաւ վերջապէս մենապաճառութիւնը ջնջելու: Այնուհետեւ «հարամ թամպաքուն» դարձեալ «հալալ» եղաւ:

Թէհրանէն 1—2 ժամ հեռաւորութեան վրայ ուխտատեղի մը կայ «Հազրէթը Շապղիւլ Աղիմ» անունով: Ռուսական ընկերութիւն մը այդ փոքրիկ գծին վրայ երկաթուղի շինած է, որովհետեւ ամեն հինգշաբթի իրիկուն, ուրբաթ առաւօտ երկսեռ պարսիկներ դունդադունդ կը դիմեն այդ սրբատեղին ազօթելու, մանաւանդ զուարճանալու համար:

Արդ, գեղեցիկ օր մը, բարձրաստիճան հոգևորական մը առանց տոմսակ առնելու երկաթուղի կը նստի: Քննիչ պաշտօնեան՝ կէս ճամբէն ետ կը դարձնէ ախունդը, որ յամառած էր տոմսակին արժէքը վճարելու:

Ախունդը փրփրած՝ կայարանին մէջ, երկաթուղի նստելը հարամ կը յայտարարէ: Ոչ մէկ պարսիկ կը համաձայնի, աւելի ճիշտ կը համարձակի ոտքը դնացքին մէջ դնել:

Կայարանապետը ճամբորդներու այս անակնկալ գործադուլին առջև շուարած՝ ախունդը քաղցրութեամբ կը մտցնէ գրասենեակ ու կը բացատրէ անոր թէ ցաւալի սխալում մը տեղի ունեցած է իրմէ տոմսակ պահանջելով, թէ ինքը կարող է ճամբորդել առանց տոմսակի: Ախունդը նազ կ'ընէ: Կայարանապետը խելաբերելով կը դիմէ վճռական միջոցին... ախունդին թաթը մէկ քանի թուճանով կ'իւղտէ: Բարեպաշտ մարդը կը կակղի ու դառնալով իր հօտին կը ծանուցանէ թէ իրենց հոգիներու փրկութեան համար ոչ մէկ վտանգ կայ երկաթուղիով ճամբորդելուն մէջ: Պարսիկ ամբոխը նոյնքան հնազանդ փութ-

կոտուլթեամբ կը կատարէ ախուսդին երկրորդ վճիռը, առանց երկար բարակ մտածելու միջադէպին փիլիսոփայութեան վերայ:

Քանի մը ամիս տուաջ Թէհրան խօսքի բռնուեցանք պարսկի մը հետ որ միջակ դասակարգը կը ներկայացնէր, շաքարի վաճառական էր: Մեր խօսակցութիւնը Սպահանի մէջ կատարուած բարբարոսութեան շուրջը կը դառնար: Ընթերցողները դուցէ տեղեկութիւն ունին որ, Սպահանի մէջ, պարսիկ ամբոխը մոլեռանդութեան յեղակարծ ու եղերական զարթնումով մը քսան հոգի սպանեց ու անոնց ղեակաները նաւթով ողողելէ յետոյ այլեց: Այդ դժբախտները «բարբի» էին:

Խօսակիցս անկարելի եղաւ համոզել որ այդ արարքը բարբարոսութիւն էր, առնուազն: Բարին իրեն համար ուրացող էր, պիղծ էր, մէկ խօսքով պարսիկ չէր:

Իրեն խօսեցայ կրօնքի և ազգութեան դադափարներու տարբերութեան վրայ. Եւրոպայէն, իր քթին տակ ապրող ազգերու կեանքէն օրինակներ բերի, ըսի իրեն թէ ոչ միայն դատողութեան սխալ մը, այլ մեծ անարդարութիւն մըն էր բողոքական փրանսացին, կաթոլիկ գերմանացին, բարի պարսիկը իրենց ցեղի գլխին պայթած դժբախտութեանց ժամանակ նոյնքան տառապած են ու կը տառապին, որքան իրենց արիւննակից այն եղբայրները, որոնք ազգի պաշտօնական կրօնքը կը դաւանին:

Բացատրեցի վերջապէս իրեն թէ կրօնքը խղճի, հոգիի խնդիր մըն էր և թէ ուէ մէկը իրաւունք չ'ունէր իր եղբորը կամ իր հարեանին վրայ բռնանալու որ անիկա իր հոգին անպատճառ արքայութեան հրեշտակներուն յանձնէ, երբ իր խիղճը իրեն ուրիշ բան կը թելադրէ, թէկուզ անձնատուր ըլլալ դժոխքի սատանաներուն:

Անօգնւտ: Պարսիկը յանքերգի մը պէս կը կրկնէր թէ բարիները ուրացողներ են և կը պղծեն իրենց բոլոր պղծելի ու անպղծելի բաները, իրենց աղօթատեղին, իրենց գերեզմանատունը, իրենց բաղնիքը ևայլն:

Հոգեկան այս վիճակը սովորաբար կը կոչեն մոլեռանդութիւն: Բայց մոլեռանդութիւնը կ'ենթադրէ խորունկ համոզում, մտաւոր կեանք: Ճշմարտութեան և արդարութեան բոլոր ախոյեաններն ու առաքեալները մոլեռանդներ եղած են: Յառաջ գիմութիւնը արդիւնք է մոլեռանդութեան: Իսկ մեր քիչ վերև բնորոշած վիճակը՝ խորհելու և դատելու կարողութեանց բացարձակ մահուան, իր անձէն, իր բանականութենէն իսպառ հրաժարումի հետևանք է:

Մտքի մահ չի մատնե՞ր, արդարեւ, այն վրդովող ու զզուանքէ շնչահեղձ ընող արիւնոտ տեսարանը, զոր ամէն տարի պարսիկները կը վերանորոգեն «ղաթլի» օրը:

Ինչպէս որ միջին-դարու քրիստոնեայ ճգնաւորները, իրենց մարմինը մտրակներով կը ծեծէին, զրկանքներու մէջ կ'ուժասպառէին, նոյնպէս ժամանակակից պարսիկը իր գլուխը սրերով կը ջարդէ, մարմինը ծանր շղթաներով կը կապուեցնէ հասնելու համար միենոյն նպատակին—հաճոյանալ Աստուծոյ, փրկել մեղապարտ հոգին:

Ահաւասիկ ժամանակակից պարսիկ ժողովրդին մտաւոր ու բարոյական պատկերը:

Պարսիկ ժողովրդի խլրտումներու բուն շարժառիթին թափանցելու համար բաւական չէ միայն աչքի առաջ ունենալ անոր հոգեկան ու մտաւոր պատկերը, պէտք է ծանօթանալ մանաւանդ անոր ապրած միջավայրին հետ, սոստեսական-քաղաքական կեանքի այն պայմաններուն հետ, ուր կը շարժի ու կը գործէ պարսիկ ազգաբնակիւթիւնը:

Պարսկաստանը աւելի վատ դրութեան մէջ է, քան Եւրոպան Փրանսական մեծ-յեղափոխութենէն առաջ: Քաղաքական ու հասարակական ինչ կարգեր որ գոյութիւն ունէին, երկու երեք դար առաջուայ Արեւմուտքի մէջ, այն կարգերը կը տիրեն այժմ Պարսկաստանում:

Հասարակ ժողովուրդը Եւրոպայի մէջ պարիաններու ահագին բանակ մը կը ներկայացնէր որուն պարտականութիւնն էր տիրող դասակարգի, աւատական (féodal) իշխաններու, ազնւականութեան, կղերին փորն ու քսակը պարարտացնել ու միենոյն ժամանակ իր նիհար ուսերուն վերցնել պետական բազմածախ մեքենայի անիւները իւղոտելու ծանր բեռը—հարկերու վճարումը: Պարսկաստանի մէջ տէրերը անունով տարբեր բայց նոյնն են: Փոխանակ աւատական իշխան, ազնւական, կղեր անունը կրելու, խան, բէկ, ախունդ կը կոչուին: Հողը իրենց սեփականութիւնն է. գիւղական համայնքները իրենց ճորտերն են, ոչ աւելի ոչ պակաս: Գիւղացիները իրենց հաշւին կը մշակեն երկիրը ու արդիւնաբերութեան $\frac{1}{3}$ -ը իրենցն է: Ո՛չ իրենք և ո՛չ ալ քաղաքներու բնակչութիւնը, վաճառական, արհեստաւոր թէ ազատ ասպարէզներու հետևող ուղղակի կամ անուղղակի հարկերէ վերծ են, կամ գրեթէ վերծ են, որովհետեւ թէհրանցի վաճառականի մը հաստատումին համեմատ, վաճառականները կառավարութեան տարեկան տուրք կը վճարեն 8 զոան $1\frac{1}{2}$ բուրլի միայն:

Եւ արդէն հարկային դրութիւնը բոլորովին անկերպարան:

վիճակի մէջ է Պարսկաստանի մէջ, ուր այլևայլ երկրներում, քաղաքներում բնակչութեանց վրայ դրուած հարկերէն ոչ մէկը գոյութիւն ունի: Հարկերը իբր թէ անոր համար են որ պետութիւնը երկրի ժողովրդի կարիքները հոգայ: Բայց Իրանի մէջ ժողովրդական կարիք չը կայ, բայց ախրապետող դասակարգերու վայելումի անսանձ ձգտումէն: Առնող առնողի փախող-փախողի:

Նախկին Եւրոպայի և ներկայ Իրանի բաղդատութիւնը շօշափելի դարձնելու համար յիշեցնենք պատկեր մը.

Մինչև Լուզովիկոս ԺԴ-ը քրանսայի կենտրոնական իշխանութիւնը թոյլ էր: Ամբողջ քրանսան բաժանուած էր պղծատիկ իշխանութիւններու, որոնք իրենց սահմանին մէջ կատարեալ տէրեր էին. աւատական իշխանները՝ ընդհանրապէս արհամարհոտ՝ կենտրոնական իշխանութեան հրամաններուն հանդէպ, յաճախ կը ըմբոստանային, ընդհարումներ կ'ունենային պետութեան հետ: Լուզովիկոս ԺԴ-ը յաջողեցաւ, վերջապէս, խորտակել աւատական իշխաններու խրոխտ ամբողջները և հըպատակեցնել այդ սանձարձակ, պղտիկ զուխները, կենտրոնական իշխանութեան: Ըմբոստներուն դէմ զործածեց բռնութիւնը, իսկ շատերը հրապուեց իր արքայական շնորհներով, պատուաւոր պաշտօններով: Ու աւատական իշխանները՝ մասամբ շլացած՝ Լուզովիկոս ԺԴ-ը պէս փառահեղ ու հզօր թագաւորի մը աւատածնէն շնորհներէն ու մասամբ ալ բռնապատուած հաշտուելու անողոր իրականութեան պահանջներուն հետ, ճանճերու պէս թափուեցան Լուզովիկոսի արքունիքը, որ պէտք է շեշտել, քրանսայի նախորդ ու ապագայ արքունիքներու ամենէն շքեղը, ամենէն հրապուրիչը պիտի մնայ: Ուրովհետեւ բացարձակ ու անսահման իշխանութեան այդ մարմնացումը՝ կը սիրէր մասնաւորաբար շրջապատուիլ ոչ միայն անունի այլ և մտքի ազնականութեան՝ ծաղիկներով: Լուզովիկոս ԺԴ-ը իր սեղանին շուրջը կը հաւաքէր իր ժամանակի բոլոր յայտնի բանաստեղծները, բոլոր հաղազիւտ ու թանգագին խմացականութիւնները:

Պարսկաստանի մէջ աւատական իշխանութիւններու տեղը կը բռնեն խաներն ու բէգերը, որոնք երբեմն բաւական մեծ մտահոգութիւն կը պատճառեն կենտրոնական կառավարութեան: Թէհրանի իշխանութիւնը, զինւորական ուժէն զուրկ, յաճախ կը ստիպուի սուտ խուլ ու սուտ կոյր ձեռնալ խաներու յայտնի բռնակալութեանց, կամայականութեանց և մինչև իսկ ըմբոստացումներուն հանդէպ: Հետեալաբար, սովորական երևոյթ մըն է Թէհրանի չէզոքութիւնը, խաներու մէջ պատահած կը-

ռիւններու ժամանակ, որոնք իրենց առաջ բերած աւերումներով և թալաններով՝ աշխատող ու արիւն քրտնող ժողովուրդին համար սարսափելի զուլումներ են:

Հարստահարութիւններու, զրկանքներու և զուլումներու այս շարքին վրայ աւելցուցէք, հաքիմներու, կառավարիչ-դատաւորներու կեղծումները, որոնք կատարուելով օրինական սահմաններու մէջ, ոչ նուազ ազետաբեր են ժողովուրդին համար:

Հաքիմները, իրենց պաշտօնը՝ կենտրոնական կառավարութեան կը գնեն ահագին կաշառքով և յետոյ իրենց իրաւասութեան տակ զտնուող ժողովուրդին կոնսկէն կը հանեն իրենց կաշառքին տասնապատիկը...

Մենք սկզբները մերձեցում մը հաստատեցինք Թուրքիայի և Պարսկաստանի մէջ տեղ: Այդ երկու պետութիւնները Արեւելքի ամենէն յետամնաց երկիրները կը ներկայացնէին: Բայց նորէն Թուրքիան բաղդատելով Պարսկաստանի հետ, կարելի է արտաքուստ եւրոպականացած համարել. Թուրքիան ունի քաղաքական օրէնսդրութիւն, որ քաղաքական ազգերու օրէնսդրութիւնն է՝ code Նապոլէոնը: Տեսնենք թէ ինչպէս է ան Պարսկաստանի մէջ:

Իրանի միակ օրէնքը կրօնական օրէնսդրութիւն՝ «շարիաթն» է: Հոգեւորականութիւնը՝ իր նեցուկներով՝ խան, բէկ, մեծամեծ՝ թէ զատաւոր է և թէ զատուող: Ժողովուրդը, զինքը հարստահարողներուն դէմ արդարութիւն պիտի պահանջէ նոյնիսկ հարստահարողներէն: Իսկ հոգեւորականութիւնը, ախուհ, մուլա, մուշտէիդ, վճիռ պիտի կայացնէ իր դէմ, կամ ուրիշ խօսքով՝ գայլը որ արդարութիւն պիտի մատակարարէ զառնուկին, բոլոր գայլերուն դէմ:

Յայտնի բան է թէ երկրի մը կենսունակութեան, հարըստութեան աղբիւրները կը կազմեն գիւղերը: Բայց կան երկիրներ, որոնք եթէ դիւղատնտեսութեան այնքան ալ յարմար չեն, ինչպէս Անգլիան ևայլն, գոնէ ունեն ճարտար արուեստի (industrie) այլևայլ ճիւղեր, որոնց շնորհիւ կը բարգաւաճին տնտեսապէս: Եւ տնտեսական բարգաւաճումի այդ գործին մէջ մեծ դեր կը կատարեն քաղաքները:

Պարսկաստանի քաղաքները բացարձակապէս անընդունակ են այդպիսի դերի մը: Անոնք ընդհակառակը, իրենց մակաբուծի կեանքով՝ զօրաւոր գործօնները կը հանդիսանան Պարսկաստանի տնտեսական կազմալուծման: Համեմատաբար աւելի յաճախակի շփումի մէջ գտնուելով Եւրոպայի, եւրոպացիներու հետ, քաղաքներու ազգաբնակչութիւնը՝ հագուելու, կապուելու, ապ-

րելու իր նախկին, նահապետական պարզութիւնը հետզհետէ կը կորցնէ: Իր պապերը գոհացնող՝ երկրի արդիւնաբերած կերպասը, կօշիկը այլևս չեն բաւականացներ, իրեն հարկաւոր է եւրոպական նուրբ ու գեղեցիկ կերպաս, սթրուէն կօշիկ, օսլայած շապիկ և կեանքի ուրիշ յարմարութիւններ և դիւրութիւններ:

Պէտքերն աճելով, Եւրոպայի արդիւնաբերութիւնը հիմա շատ աւելի մեծ քանակութեամբ մուտք կը գործէ Պարսկաստանի մէջ, քան 10—20 տարի առաջ: Իսկ Պարսկաստանի արտածութիւնը կը մնայ նոյնը, որովհետեւ արդիւնաբերութեան նահապետական եղանակները կը շարունակուին գործադրուիլ անփոփոխ, եւրոպական գործիքներն ու արդիւնաբերելու կերպերը չեն դարձողովրդի աշխատանքն արգասաւորելու:

Պարսկաստանի տնտեսական յետամնացութեան այս մեծագոյն պատճառէն զատ կայ ուրիշ, ոչ նուազ մեծ պատճառ մը, ոչ նուազ խոշոր անպատեհութիւն մը—հաղորդակցութեան և փոխադրութեան միջոցներու չըզոյութիւնը: Պարսկաստանը երկաթուղիի ոչ մէկ գիծ ունի: Տակաւին վերջին ժամանակներս միայն շինուեցան կառուղիներ (chaussée) որոնք կը ծառայեն միայն մեծ քաղաքներու հաղորդակցութիւնը դիւրացնելու: Այդ խճուղին շինուած է ռուսական ընկերութեան մը ձեռքով և Ռաշտը կը կապէ Թէհրանի և Թէհրանը՝ Քաշանի: Այնպէս որ Թէհրանէն Սպահան, Նոր-Ջուղա երթալու համար կառքով կարող էք ճամբորդել մինչև Ղում, Քաշան: Անկէ անդին պէտք է ձի նստել: Ուրեմն, նոյնիսկ այդ շոսան՝ երկրի արդիւնաբերութեան փոխադրութեան գործին մէջ բոլորովին աննշան դեր կը կատարէ: Գիւղերը միշտ կը մնան առանց կապի, առանց հաղորդակցութեան: Եւ յետոյ այդ խճուղին՝ ճամբորդին, ապրանք փոխադրողին համար շատ թանկ է: Օրինակ, Թէհրանէն կառքով Ռաշտ 7 թուման (12 ր.), ձիով ճամբորդողը 4 թուման ու էշով՝ աւելի պակաս:

Պարսկաստանի մէջ փոխադրութեան միջոցները նահապետական ուղտը, ջորին, ձին ու էջն են: Հետևաբար դիւղական արդիւնաբերութիւնը՝ իր առջև օտար ընդարձակ շահաստաններ (débouché) չը գտնելէ զատ, տեղական քաղաքներու պէտքերն անգամ հազիւ թէ կը յաջողի գոհացնել:

Գիւղերու մէջ ահագին քանակութեամբ արմաիք, հացահատիկ կայ: Քաղաքներու մէջ հացի պակաս և սղութիւն: Ինչո՞ւ, որովհետեւ փոխադրութեան միջոցներ չը կան, և եղած նախնական միջոցներով ալ գիւղական արդիւնքը շատ սուղ կը նստի քաղքիներուն:

Անշուշտ պիտի զարմանաք եթէ ըսեմ ձեզի որ ասիական խուլ քաղաքի մը ինչպէս է Թէհրանի, կամ Ռաշտի, մէջ, կեանքը, ապրուստը՝ նոյնքան թանկ է, որքան Վիէնայի, Բերլինի, կամ Պարիզի մէջ:

Քառորդ դար առաջուայ և հիմակուայ կեցութեան պայմաններու բաղդատութիւնը պարզապէս շուարեցուցիչ է: Թէհրանցի, թաւրիզցի 40—50 տարեկան տանտիրիկիները, մինչև հիմա տակաւին չեն կարող զսպել իրենց զարմանքը ապրուստի ներկայ անչափ թանկութեան մասին: Բազմանդամ ընտանիքի մը տանտիրիկնը, առաջները, օրական ամենաշատը մէկ դոան հաղիւ կը ծախսէր. իսկ այսօր 10—15 դոան օրական ծախքով, ընտանիքը նոյն առատութիւնը չի վայելեր: Այս բանը ինծի հաստատեր են յաճախ Թէհրանի տանտիրիկիները, փաստերով, ծախքերու գինը մէկիկ-մէկիկ թելով և ներկային հետ բաղդատելով: Այսպէս օրինակ, 15—20 տարի առաջ, պարսկական սէնկէկ հացը՝ տեսակ մը երկար ու բարակ հաց, որ այժմեան սէնկէկէն թէ քանակութեամբ և թէ որակով կրկնապատիկ շատ ու լաւ է եղեր, կը գնեն եղեր 2 շահիր: Իսկ հիմա սէնկէկը կը ծախուի 5—6 շահիր:

Տանտիրիկնը՝ առաջ մինչդեռ կէս կամ 1/4 շահի վճարելով կանաչավաճառին, ոչ միայն նոյն, այլև յաջորդ օրուայ համար անանուխ, կոտեմ, թարխուն, կայլն կը ստանար, այսօր, իւրաքանչիւր ճաշի, 1—2 շահու կանաչը հաղիւ կը բաւէ: Նոյն համեմատութեամբ թանկցած են միւսն կայլ ուտեղէնները:

Բոլորովին ճիշտ չը պիտի ըլլար, անտարակոյս, Պարսկաստանի մէջ ապրուստի հետզհետէ թանկանալը հաղորդակցութեան միջոցներու չը գոյութեամբ կամ նախնականութեամբ միայն բացատրել: Կան և ուրիշ մէկ երկու յայտնի պատճառներ:

Նախ պէտք է յիշել պարսկական դրամի արժէքին փոփոխականութիւնը: Պարսիկ դրամի արժէքը հետզհետէ անկումի մէջ է: Դժբախտաբար չը պիտի կրնամ հաստատ թւանշաններ մէջտեղ բերել, բայց անուրանալի իրողութիւն մըն է թէ այսօր օտար դրամներ, ռուսական ռուբլին, ֆրանսական ֆրանկը կայլն շատ աւելի բարձր գներ ունին քան առաջ: Ի՞նչ է պարսկական դրամի անկումին պատճառը:

Բոլոր երկիրներու մէջ դրամի արժէքը հիմնուած է ոսկիի վրայ: Ոսկին՝ իբրև աւելի հազապիւտ մետաղ՝ արժէքի փոփոխութիւններ չի կրեր կամ քիչ կը կրէ: Մինչդեռ նոյնը չէ արծաթին համար: Արդ, երբ երկիր մը արծաթ կամ սև դրամ շրջաբերութեան կը հանէ, այնպէս կ'ենթադրուի որ այդ երկիր-

րը, պահանջուած դէպքին, կարող է իր արծաթ և սև փողին համարժէք ոսկի մէջտեղ հանել, այսինքն օտար երկիրներու պարտքը, ուղած ժամանակ՝ վճարել ոսկիով: Այսպէս ռուսական թղթադրամը, ֆրանսական ֆրանկը, բանկաոմսը որպէսզի միշտ միևնոյն արժէքը ներկայացնեն օտար երկրներու մէջ, պէտք է որ ռուս և ֆրանսական կառավարութիւնները ապահովցուցած ըլլան օտար պետութիւնները թէ կրնան, ի պահանջի հարկին, թղթադրամի և արծաթ դրամի փոխարէն ոսկեդրամ տալ:

Արդ Պարսկաստան այդ բանը չի կրնար ընել. Պարսկաստանի մէջ ոսկին չափազանց սակաւ է. օտար բոլոր երկիրներու մէջ, եթէ ձեր արծաթ դրամը բանկին տաք, կարող էք փոխարէնը ոսկի ստանալ, իսկ Պարսկաստանի մէջ, ոչ:

Ուրեմն, իրանի մէջ դրամի արժէքը հաստատուած է իսկապէս ոչ թէ ոսկիին, այլ արծաթին վրայ. իսկ արծաթը՝ իրեն աւելի առատ մետաղ՝ ունի արժէքի ելեէջներ: Հետեւաբար պարսկական արծաթ դրանը իր արժէքը կը փոփոխէ, արծաթի կուրսին համաձայն:

Ահա, հաւանականաբար, պարսկական դրամի արժէքին անկման պատճառը:

Ապրուստի թանկութեան երկրորդ և զլխաւոր պատճառը հողատէր խաներու, հոգեորականներու և մեծամեծներու սանձարձակ շահագիտութիւնն է. Գիւղերու մէջ ցորենը կը փոխցնեն իրենց ամբարներում և քաղաք չեն լիցնելը ու այսպիսի արհեստական միջոցներով կ'աշխատին հացահատիկի գինը հրապարակի վրայ բարձր բռնել:

Կառավարութիւնը՝ ընդհանրապէս ձեռնպահ թէ քաղաքական և թէ հասարակական ու տնտեսական հիւանդ, գայթակղեցուցիչ երևոյթներու առջև, միջամտութեան կը դիմէ, արտակարգ դէպքերու ժամանակ միայն: Այդ կարգի դէպքերում, կառավարութիւնը ունի սակայն բաւական զօրաւոր զէնք, զոր մտքէն չ'անցնելը զործածել: Կառավարչական շատ մը հողեր վարձու տրուած են այլևայլ խաներու կամ ազդեցիկ անձերու: Վարձու ալայմանն այնպէս է, որ վարձողը կառավարութեան պէտք է վճարէ, նայիլով հողին՝ տարեկան այսքան խաւվար ցորեն, Տարիներու ընթացքին մէջ, ցորենով վճարելու այդ սխտեմը փոխուել է. և վարձողները բնական բերքով վճարելու տեղ սկսել են վճարել դրամով: Կառավարութիւնը, եթէ ուզէ, կ'ընայ օգտուիլ իր նախին ալայմանէն, մանաւանդ որ ատիկա իրեն ձեռնտու է թէ մասամբ արգիլելու համար շահադիտու-

թիւնները, և թէ նիւթականապէս: Որովհետեւ ցորենի արժէքը հիմա շատ աւելի բարձր է քան առաջ:

Երբորդ պատճառն է քաղաքապետներու կաշառակերութիւնը: Բոլոր խանութպանները, մսագործ, հացագործ, նպարեղինավաճառ գաղտնիքը դիտեն իրենց վաճառքին գինը բարձր պահելու—կաշառել քաղաքապետը: Պարսկական քաղաքներու, մասնաւորապէս Թէհրանի մէջ խնդրանքի և մատուցումի (offre et demande) տնտեսական օրէնքը գոյութիւն չ'ունի: Քաղաքին մէջ կարող է ահագին քանակութեամբ մորթուելու կենդանի գոմէշ, ցորենի, ալիւրի առատութիւն տիրել. միան ու հացը իրենց աւանդական թանկութենէն շահի մը պակաս չեն ծախուիր սակայն:

Երեք չորս ամիս առաջ, Թէհրանի մէջ, կալուածատէրներու շահադիտութիւնն ու քաղաքապետին կաշառակերութիւնը արտայայտուեցաւ բաւական յատկանշական եղանակով մը: Հաւաակ իր ժամանակին տեղացած առատ, արգասաբեր անձրեւին և հունձքերու յաջողակութեան, Թէհրանի մէջ հացի գինը առասպելական բարձրութիւններու հասաւ. քաղաքին մէջ հացը վէճերով ձեռք կը բերէին, իսկ ծախուածը հազիւ թէ կարելի ըլլար հաց անուանել. աւագի, թեփի, մզլոտած ալիւրի խառնուրդ մըն էր. այնքան զգուշիկ հաց մը, որ անկարելի էր առանց դէմքի ծամածռումներու կուլ տալ: Ժողովուրդը թէև այս տեսակ խաղերու վարժ՝ չը կրցաւ երկար համբերել սակայն, ու իր զժգոհութիւնը յայտնեց զօրեղապէս: Նոյնիսկ պարսիկ կիները բողոքելու համար ասպարէզ իջան. այդ դաւադր ստրուկները, ըմբոստացումի յանգուզն շարժումով մը, շահի անցնելու ժամանակ քաղաքին մէջ ծախուող հացէն նմոյշ մը նետեցին արքայական կառքը: Այդ ցոյցին վրայ լուր պատուեցաւ թէ քաղաքապետը պաշտօնանկ եղեր է: Լուրը ճիշտ չէր, բայց քիչ յետոյ կառավարութիւնը աշխատեցաւ գիւղերէն ցորեն բերել ու հացին որակը թէ լաւացաւ և թէ գինը իջաւ:

Ընթերցողները կը յիշեն անշուշտ թէ Մէշէզի մէջ, շահագործումի սխրագործութիւնը շատ աւելի առաջները գնաց. ժողովուրդը յուսահատութենէն բռնութեանց դիմեց, եղան ընդհարումներ, վիրաւորութեան, սպանութեան: Ռուսական հիւպատոսը՝ որուն օգնութիւնը խնդրեր էր ժողովուրդը՝ հաց բաշխեց ամբոխին:

Եթէ շահագործութիւնը այսքան անպատկառօրէն կը կատարուի ամենաէական պէտքին՝ հացին վրայ, ալ զիւրութեամբ

կրնաք երեւակայել թէ անիկա ի՞նչ հրաշքներ կը գործէ կեանքի միւս պէտքերուն վրայ:

Հակառակ արեւելեան քաղաքներու մէջ նշմարուած երեւոյթին, դուք չէք պատահեր գիւղացիի մը, որ իր աշխատութեան արդիւնքը ծախելու համար ման գայ քաղաքին մէջ: Գիւղացին՝ քաղաքի դռները չը հասած՝ շահագործումի ասպետները կը դիմաւորեն զայն ու ապրանքը ձեռքէն կ'առնեն:

Ահա ինչու համար քաղաքներու մէջ կեանքը այնքան սուղ է, ապրուստը կրակի գին:

Պարսիկ ժողովուրդը կ'ապրի տնտեսական խորունկ անարգարութեան մէջ: Իր կեանքը ամէն կերպով անհանդուրժելի է: Պարսիկ ժողովուրդը տգէտ է, չը գիտէ թէ ո՞րոնք են այն շարժառիթները, որ առաջ կը բերեն իրենց անտանելի դրութիւնը, որպէսզի իրենց ջանքերը ուղղեն դէպի այդ շարժառիթներու ջնջումը: Որպէսզի, յեղափոխութիւն մը գիտակցական ըլլայ, զայն կատարող ժողովուրդը անհրաժեշտ է որ ունենայ իմացական ու բարոյական որոշ զարգացում:

Արդ, պարսիկ ժողովուրդը՝ կրելով իր մէջ դժգոհութեան տարրեր, չ'ունի իմացական ու բարոյական հարկաւոր զարգացումը՝ թափանցելու համար իր ցաւերու պատճառին: Օրինակ, իր ամենամեծ թշնամին հոգևորական դասակարգն է, բայց իր խելքով, իր հասկացողութիւնով ախուհներէն, մոլլաներէն աւելի սրտացաւ բարեկամ չ'ունի:

Անոնք որ Պարսկաստանի խռովութիւններու պատմութեան հետեցան գիտեն թէ անոնցմէ ամէնէն լուրջը Թաւրիզինն էր: Իսկ այդ շարժումը ստեղծուած, սարքուած, ղեկավարուած էր հոգևորականութեան կողմէ, և նպատակ ունէր հոգևորականութեան շահերը պաշտպանելու, հոգևորականութեան տիրացած դիրքը ամրապնդելու: Մուշտէյիդները, ախուհները զգալով որ ժողովուրդը՝ նոր բացուած դպրոցներով, երկրին մէջ մուծուած բարենորոգումներով իր մագիլներէն ազատելու վրայ է, կ'աշխատին օգտուիլ ժողովրդի՝ երկար, արիւնաքամ ընդ հալածահարութիւններու տակ ջգագրուած վիճակէն և անոր զայրոյթը կ'ուղղեն ճիշտ դէպի այն բաները որ ժողովուրդին գիտակցութիւնը պիտի պատրաստեն: Եւ արդարեւ ի՞նչ պահանջեց յուզուած ամբոխը Թաւրիզի մէջ.

1. Մաքսային ներկայ դրութեան վերացումը.

2. Եւրոպական սխտեմով դպրոցներու փակումը.

Իսկ գինեւաճառութեան դէմ կատարուած ցոյցն ու պա-

հանջը միջանկեալ էին և կը ձգտէին միւս պահանջներու բուն նպատակը քօղարկելու:

Ուրեմն ամփոփելով մեր խօսքը ըսենք որ խլրտումներու շարքը Պարսկաստանի մէջ բացարձակապէս փակուած կարելի չէ համարել, որ քանի ժողովուրդը ամեն տեսակէտով ճնշուած՝ մշտապէս վատ տրամադրութեան մէջ կը գտնուի:

Որպէսզի պարսիկ ժողովրդի խլրտումները դադրին, պէտք որ կառավարութիւնը խորհի անհրաժեշտ բարենորոգումներուն, իր անյետաձգելի պարտքն է նախ ջախջախել հոգևորականութեան ուժը որ առաջադիմութեան թշնամի է և իսկական պետութիւնն է ամբողջին վրայ ունեցած իր անսահման հեղինակութեամբ: Յետոյ բանալ ու բազմացնել եւրոպական ձևով դպրոցները և տալ նոր սերունդին ազատ զարգացում, խորհելու և դատելու կարողութիւն: Պէտք է ազատել մանաւանդ գիւղական համայնքները իշխող տարրերու հարստահարութիւններէն, վերցնել ձորտութիւնը և հաստատել քիչ շատ կանոնաւոր քաղաքացիական օրէնք որը անկարելի պիտի դարձնէր թէ գիւղերու և թէ քաղաքներու մէջ, յայտնի ապօրինութիւնները: Մի խօսքով պէտք է ազատութեան բարիքներ մտցնել երկրի մէջ: Դրա համար երկրին հարկաւոր են ընդունակ, եւրոպական մտքով զարգացած պետական անձինք...

Պարսկաստանի սադրազամ Աթաբէկի պաշտօնանկութիւնը՝ մամուլի զանազան մեկնութիւններուն տեղի տուաւ: Քաղաքական այդ դէպքին մէջ, ոմանք՝ Պարսկաստանի համար լաւագոյն ապագայի մը գրաւականը տեսան, ուրիշներ՝ ընդհակառակը: Ճիշտ է թէ Աթաբէկը ռուսասէր էր ու մանաւանդ հոգևորականութեան մարդը, բայց իրեն յաջորդը պիտի կարողանայ Աթաբէկէն տարբեր բան մը—եւրոպականութեան կողմը—նակից—ըլլալ: Ինչ-որ կասկածելի է: Ենթադրելով սակայն, որ նոր սադրազամը օժտուած ըլլայ հեռատեսութեամբ և երկրին օգտակար հանդիսանալու բարի կամքով, պիտի յաջողի՞ իրանի մէջ ներմուծել այն կարգ մը բարենորոգումները, որոնց մէկ քանին յիշատակեցինք քիչ վերև: Առանց ատոր ինքն ալ պիտի դառնայ, ուշ կամ կանուխ, նոր Աթաբէկ մը:

Բայց Պարսկաստանի ցաւը այնքան խորունկ է, որ չեմ կարծեր թէ պարսիկ ունէ քաղաքական գործիչ կարողանայ անոր դարման տանել:

Պարսկաստանի իսկական փրկութիւնը կախումն ունի ժողովրդի գիտակցութենէն, իսկ այդ գիտակցութիւնը զարթեցնելու դէմ է ինքը տիրող բեժիմը:

ՏԻՖՐԱՆ

ՓՐԿԱՐԱՐ ՀՐԵՇՏԱԿԸ ^{*)}

Պատմուածք ՄԱՐԿ ՏՎԷՆԻ

I

Օլիվիէ կրոմվելի ժամանակներն էին ^{**) :}

Ամող զօրքի մէջ Մայֆերից աւելի երիտասարդ գնդապետ չը կար.—նա հազիւ երեսուն տարեկան լինէր: Տասնեօթ տարեկան հասակից նա զինւորական ծառայութեան մէջ էր, մասնակցել էր շատ պատերազմների և իր քաջութիւնը ցոյց էր տուել բազմաթիւ ճակատամարտներում: Նա քայլ առ քայլ էր բարձրացել զինւորական սանդուղքները և հասել գնդապետի բարձր աստիճանին: Եւ այդ է պատճառը, որ չը նայելով իր ջահիլութեանը նա վետերանի հմտութիւն և փորձնակաւանութիւն էր ձեռք բերել:

Յանկարծ սեւ, չարագուշակ ամպերը ծածկեցին նրա մինչև այժմ պայծառ հորիզոնը:

Երկար ձմեռուայ երեկոն վրայ հասաւ: Դրսում մութ ու փոթորիկ էր, իսկ սենեակում ծանր լռութիւն էր տիրում: Գնդապետն ու իր ջահիլ կինը արդէն բաց էին արել իրար առաջ դառնացած սրտերը և այժմ լուռ նստած մնացել էին վառարանի հանդէպ, ծանր խոհերի մէջ: Մ'նում էր միայն սպա-

^{*)} Այս սրտաշարժ դէպքի մասին յիշատակուած է Գարլէյլի «Օլիվիէ Կրոմվելի նամակները և ճառերը» գրքում:

^{**)} Ծն. 1599—1658, մեծ դեր է խաղացել անգլ. պարլամենտի և Ստիւարտների մէջ եղած երկարատև մաքառման ժամանակ, անգլիական հանրապետութեան հիմնադիրն էր և պրոտեկտորը. երկաթէ կամքի և ամենախիստ զինցիպլինայի տիպար:

սել,—սպասելն էլ երկար չէր լինելու: Կինը այդ գիտէր և սոսկալի մտքից ամբողջ մարմնով դողդողում էր:

Նրանք միայն մի աղջիկ ունէին, եօթ տարեկան Աբբին: Նա պիտի իսկոյն ներս մտնէր ծնողներին բարի գիշեր ասելու: Գնդապետը ակամայ ասաց կնոջը.

—Արտասուքդ սրբիւր ու աշխատիր հանգիստ երևալ նրա առաջ, մի վայրկեան մոռացիր սպառնացող ապագան:

—Կ'աշխատեմ մոռանալ, բայց չէ՞ որ սիրտս պատուում է կսկծից:

—Սնւս, դալիս է:

Շեմքի վրայ երևաց մի փոքրիկ երեխայ գիշերուշայ երկար շապիկով: Գանգուր մազերը շրջանակում էին փոքրիկ սիրուն գլխիկը և և թափթփում ուսիկներին: Մի վայրկեան—և կրակոտ համբոյրները արագ տեղացին գանգուր գլխի վրայ:

—Հայրիկ այդպէս մի համբուրիր ինձ, մազերս նոր եմ սանրել:

—Ներքի, սիրելիս, մի բարկանար ինձ վրայ, և նա ձեռով ծածկեց աչքերը ու ձևացրեց իբր թէ լալիս է:

Մանկիկը վախեցաւ որ այգբան ցաւ պատճառեց հօրը իր այս խօսքերով և սկսեց հօր ձեռները յետ քաշել աչքերից:

—Լաց մի լինիր, խնդրում եմ, ես չէի ուզում քեզ վրշտացնել:—Բայց տեսնելով որ հայրը չի լալիս, ճչաց.—այ, ի՞նչ վատն ես, դու չես լալիս, խարում ես ինձ. ես կը գնամ մայրիկիս մօտ, դու ծաղրում ես ինձ:

Եւ նա ուզեց վայր սլկուել նրա ծնկների վրայից, բայց հայրը չը թողեց:

—Չէ, սիրուն աղջիկս, մնացի՛ր ինձ մօտ, և ներքի ինձ, իբրև պատիժ հրամայիր ինչ ուզում ես, ես ամեն ինչ կ'անեմ: Դէ, ասա, ի՞նչ կ'ուզես:

Հաշտութեան դաշը կապուեց, երեխայի դէմքի վրայ նորից ժպիտ փայլեց և աղջիկը իբրև պատիժ պահանջեց, որ հայրը մի հէքիաթ պատմի.

Եւ յանկարծ...

Ծնողները գադարեցրին իրանց շունչը և ականջ դրին:

Քայլեր: Մօտենում են, ոտի ձայները աւելի լսելի եղան, յետոյ քայլերը հեռացան, նրանց ձայնը նուազեց ու անհետացաւ:

Ծնողները հանգստացած շունչ առան և հայրը կրկնեց.

—Հա, հէքիաթ, ուրախ հէքիաթ:

—Չէ, հայրիկ, միշտ չի կարելի ուրախ հէքիաթներ պատ-

մեկ: Այսօր մի սարսափելի հէքիաթ պատմիր, դայեակն ասում է, որ մարդիկ միշտ ուրախ չեն լինում. ճշմարիտ է:

Մայրը ծանր հոգոց հանեց և նրա մտքերը դարձեալ դարձան դէպի անխուսափելին: Հայրը տխուր նկատեց:

—Ճշմարիտ է, թանկագինս: Աշխարհում վշտեր էլ կան: Ճշմարիտ է:

—Ուրեմն, հայրիկ, մի հէքիաթ պատմիր վշտի մասին, բայց այնպիսի սարսափելի, որ մենք ամենքս էլ դողանք վախից և կարծենք, թէ այդ ցաւը մեզ է պատահել: Մայրիկ, մօտ նստիր, և ձեռս բռնիր, որ շատ չը սարսափենք. հիմայ սկսիր, հայր:

—Լաւ: Կար չը կար, երեք գնդապետ կար:

—Ես գիտեմ գնդապետն ինչ է. դու գնդապետ ես, չէ՞. դէ, յետոյ:

—Դու գիտես, որ պատերազմի ժամանակ ամեն բանից աւելի դիպցիպլինան է պահանջւում:

Անհասկանալի խօսքերը հարուածեցին երեխային: Նա գլուխը բարձրացրեց և զարմացած հարցրեց.

—Այդ ուտելու բան է, հայր:

Ծնողները ակամայ ժպտացին: Հայրը պատասխանեց.

—Ձէ, բոլորովին ուրիշ բան: Այդ գնդապետները չը կատարեցին մեծի հրամանը: Նրանց հրամայուած էր, որ ձեռքներն թէ յարձակոււմ եմ թշնամու վրայ, որպէսզի գլխաւոր զօրքին միջոց տան նահանջիլու, յետ դառնալու, բայց այդ սպանները չը կարողացան իրանց զսպել, իսկապէս յարձակուեցին թշնամու վրայ, ջարդեցին նրան ու փախցրին:

Մեծը բարկացաւ նրանց վրայ, որ ճիշտ չը կատարեցին իր տուած հրամանը և նրանց դատի ենթարկեց, թէև իհարկէ դովեց նրանց քաջութիւնը:

—Մեծը,—այդ Կրօմվեւն է, չէ՞, պապա:

—Այո՛:

—Ես նրան տեսել եմ, նա յաճախ անցնում էր ձիով մեր տան առաջով և միշտ կարծես բարկացած էր ու ամենքը վախում էին նրանից... Միայն ես չեմ վախում, նա միշտ ինձ վրայ քնքոյշ հայեացք էր գցում:

—Ախ, անգին շատախօս. դէ, լսիր հէքիաթը:

Գնդապետներին բանտարկեցին ու բերին Լոնդոն. այստեղ նրանցից աղնիւ խօսք առան ու արձակեցին, որ գնան Զինա բարով ասեն իրանց ազգականներին:

Կրկին քայլեր: Ամենքը լսողութիւնը լարեցին:

Ձէ, անցան:

Երիտասարդ կլինը յենուեց ամուսնուն, նրա ուժերը սպառուում էին:

—Եւ ահա այս առաւօտ նրանք հասան Լոնդոն:

Երեխայի աչքերը լայն բացուեցին զարմանքից:

—Ինչպէս, հայրիկ, ուրեմն դա հէքիաթ չէ, դա ճշմարիտ եղած բան է:

—Այո, զաւակս:

—Որքան ուրախ եմ: Այդ աւելի լաւ է, շարունակիր: Այդ ի՞նչ է, մայրիկ, ինչի՞ ես լալիս:

—Ոչինչ, անուշիկս, ես... մտածեցի նրանց ազգականների մասին:

—Մի լաց լինիր, մայրիկ, կը տեսնես որ վերջը լաւ կը լինի. հէքիաթները միշտ լաւ են վերջանում: Դէ, շուտ արա շարունակիր, վերջը ամենքն էլ երջանիկ կը լինեն, գիտեմ, այ, կը տեսնես, մայրիկ:

—Ամենից առաջ նրանց տարան բերդը:

—Օ՛, ես ճանաչում եմ բերդը: Այստեղից երևում է: Յետոյ, հայրիկ:

—Բերդում զինւորական դատարանը մահի դատապարտեց նրանց:

—Սպանել, հայրիկ:

—Այո:

—Փո՛ւ, ի՞նչ վատն են: Մայրիկ, դու դարձեալ լալիս ես: Մի լաց, ամեն ինչ լաւ կը լինի: Շուտ-շուտ պատմիր հայր: Շատ դանդաղ ես ասում:

—Գիտեմ, բայց պիտի մտածեմ պատմելիս:

—Մի մտածիր, ուղղակի պատմիր:

—Լաւ: Ուրեմն երեք գնդապետները...

—Դու նրանց ճանաչում ես:

—Այո, սիրունիկս:

—Գնդապետները դատապարտուեցին մահի. ամենքը շատ ցաւում էին, մինչև անգամ դատաւորներն իրանք գնացին գլխաւոր հրամանատարի մօտ և ասացին, թէ գնդապետները իրանց պարտքն են կատարել, չի կարելի արդեօք նրանց կեանքը խնայել, կամ գոնէ նրանցից մէկին միայն գնդակահարել: Մեծը չը համաձայնեց, որովհետեւ թէև ճշմարիտ է գնդապետները իրանց պարտքն էին կատարել, բայց միևնոյն ժամանակ նրանք հրամանազանց էին եղել, ուստի պէտք է կրէին իրանց պատիժը, որ ուրիշներին օրինակ լինի: Նա կանչեց իր մօտ դատապարտուածներին և հարցրեց, թէ ի՞նչպէս կը վարուէին եթէ իր տեղը լինէին: Եւ երեքն էլ միարեւրան պա-

տասխանեցին, որ արժանի են մահուան իրանց անհնազանդութեան համար: Այս պատասխանը շատ յուզեց հրամանատարին, նա մի րոպէ միտք արեց և ասաց.

— Լիճակ գցեցէք. մէկը կը մեռնի, միւսները կենդանի կը մնան:

— Յետոյ, ապա, վիճակ գցեցին: Եւ որը մեռաւ նրանցից. — խեղճճէկ:

— Ո՛հ, չը գցեցին, մերժեցին:

— Ի՞նչի, հայրիկ:

— Նրանք ասացին, — մենք միասին ենք խանգարել զինւորական դիսցիպլինան, միասին էլ պիտի տուժենք:

Կրկին քայլերի ձայն!

Քամի՛ն է! Օհ, ոչ, իսկական քայլեր են, թմբուկներ են խփում, զինւորական երաժշտութիւն...

— Բացէք, յանուն օրէնքի: Լսուեց զրսից:

— Զինւորներն են, ես սիրում եմ զինւորներին, թողէք ես բանամ դուռը: Նա ցած թռաւ ծնկների վրայից, վազեց դէպի դուռը ու լայն բացեց:

— Ներս եկէք, ներս եկէք: Հայրիկ, զրեհադերներ են! Ես ճանաչում եմ զրեհադերներին!

— Զինւորական վաշտը ներս մտաւ և շարուեց, սպան զինւորական պատիւ տուեց, գնդապետը լուռ և անվրդով նոյն ձևով պատասխանեց, կինը մեռելի պէս սփրթնած դէմքը, բայց հանդարտ կանգնած մնաց ամուսնու կողքին, այն ինչ երեխան դիտում էր ամենքին զմայլած աչքերով...

Մի երկար, անվերջ զրակախառնութիւն, և պոկուելով կը նոջից ու երեխայից, գնդապետը հաստատ քայլերով անցաւ խմբակի գլուխը և դիմեց դէպի դուռը. Լսուեց հրաման.

— Առանջ, դէպի բերդ:

— Տեսար, մայրիկ, ինչպէս լաւ վերջացաւ, ես ասում էի բեզ: Հայրիկը գնաց, որ ազատի խեղճ գնդապետներին:

— Սեղճ իմ երեխայ, անմեղ երեխայ, մորմոքաց մայրը, կրծքին սեղմելով իր գաւակին:

II

Միւս առաւօտ դժբախտ կինը, կսկծից ու ցաւից, ընկաւ անկողինը, բժիշկներն ու խնամող կինը անպակաս էին նրա գլխավերեկից, Աբբիին ներս չէին թողնում և պատուիրեւ էին, որ խաղայ մանկանոցում ու չը նեղացնի հիւանդ մօրը: Երե-

խան հագնուեց ու դուրս վազեց փողոց: Նա մտածեց, որ հայ-
րը բերդումն է, չը գիտէ, որ մայրիկը տկար է,—պէտք է ի-
մաց տալ նրան:

Մի ժամից յետոյ Կրոմվիլը կանչել տուեց դատաւորներին.
նա անշարժ կանգնած էր սենեակի մէջ տեղը զոռոզ դէմքով
և սպասում էր, որ նրանք խօսեն:

Եւ նրանցից մէկը ասաց.

—«Մենք աղաչեցինք, որ համաձայնեն, բայց նրանք մի-
անգամայն մերժում են, չեն կամենում վիճակ գցել: Նրանք
պատրաստ են երեքն էլ մեռնելու»:

Կրոմվիլի դէմքը մռայլուեց. նա երկար լուռ կանգնած էր:

—Լաւ, ասաց վերջապէս, թող մի ուրիշը վիճակ գցի:
Ուղարկեցէք նրանց ետեից, կանգնեցրէք նրանց միւս սենեա-
կում երեսները դէպի պատը: Երբ կը գան, ինձ իմաց արէք:

Երբ մենակ մնաց նա, կանչեց հերթապահ սպային և հրա-
մայեց, որ դուրս գայ փողոց և առաջին պատահած երեխային
իր մօտ բերի:

Հազիւ սպան դուրս եկաւ, հանդիպեց Արրիին և բերեց
մտցրեց սենեակ:

Փոքրիկ աղջիկը ճանաչեց Կրոմվիլին,—այն մարդուն,
որի անունից գող էին ընկնում ոչ միայն հասարակ մահ-
կանացուները, այլև տէրութեան ամենանշանաւոր անձինք,
—և առանց քաշուելու բարձրացաւ նստեց նրա ծնկների վրայ
և ասաց.

—Ես ձեզ ճանաչում եմ, դուք Կրոմվիլն էք! Ես ձեզ առաջ էլ
եմ տեսել, երբ դուք ձիով մեր տան առաջով անցնում էիք:
Ամենքը ձեզանից լախում էին, միայն ես չէի վախում, դուք
երբէք ինձ վրայ բարկացած չէիք նայում, յիշում էք: Ինձ մը-
տաբերում էք: Ես դեռ հագած ունէի մի կարմիր վերարկու,
իսկ առջևից կախ էին երկու կապոյտ ժապուէշներ: Յիշում
էք:

Ժպիտը փայլեց Կրոմվիլի գոռոզ դէմքի վրայ:

—Ես շատ ցաւում եմ, մանկիկս, ես ամաչում եմ, որ...
Բայց երեխան ընդհատեց.

—Ուրեմն, մոռացել էք: Ա՛յ, ես ձեզ չեմ մոռացել:

—Այլևս չեմ մոռանայ քեզ, խօսք եմ տալիս: Կը ներես
ինձ. արի՛ բարեկամանանք: Դու ինձ յիշեցնում ես աղջկանս,
նա այլևս չը կայ, նա էլ քեզ պէս գզուող և սիրալիր էր... Նա
էլ ոչ ոքից չէր քաշուում, մօտենում էր ամենքին և ամենքին բախ-
տաւորացնում էր իր զգուհներով... Նա յաճախ նստում էր գո-
գումս, ինչպէս հիմա դու՝ սփռած, և քեզ պէս էլ թեթևացնում էր

սիրտը հոգսերից ու կսկծից: Մենք միշտ միասին էինք և խաղում էինք: Այդ վաղուց էր, վաղուց:

—Եւ դուք նրան սիրում էիք, շատ էիք սիրում, շատ:

—Իհարկէ: Նա հրամայում էր, և ես կատարում էի:

—Որքան բարի էք, համբուրեցէք ինձ:

—Ուրախութեամբ: Ահա, այս համբոյրը քեզ, այս էլ իմ հանգուցեալ փոքրիկին. հիմա դու էլ կարող ես հրամայել, ես կը լսեմ ու կը կատարեմ:

Երեխան ցնծութիւնից ծափ տուեց, բայց այդ բոպէին դրան ետեից լսուեցին ծանր քայլերի ձայներ:

—Զինւորներ են, զինւորներ! ուղում եմ տեսնել նրանց:

—Իսկոյն, սիրունիկս, սպասիր, ես պիտի քեզ մի յանձն-նարարութիւն տամ:

Կրոմվիլը ցոյց տուեց նրան երեք զնդակներ մեղրամոմից շինած, երկուսը սպիտակ, երրորդը կարմիր: Այս վերջինը դատապարտուած զնդապետներից մէկին պիտի մահի տանէր:

—Ինչ սիրուն զնդակներ են, ինձ համար են. այս կարմիրն էլ իմն է:

—Ձէ, զաւակս, դրանք ուրիշների համար են, նայիր այնտեղ, այն միւս սենեակում դու կը տեսնես երեք մարդ, որոնց երեսները դէպի պատնէն դարձած, իսկ մի ձեռը պարզած յետեւ: Գնա և ամին մէկի ձեռի մէջ այս զնդակներից մէկը դիր, յետոյ վերադարձիր ինձ մօտ:

Արբին անհետացաւ ծանր վարագոյրի յետեւ, և Կրոմվիլը մենակ մնաց—Աստուած ներշնչեց ինձ այս միաքը, մտածեց նա, այժմ ես համոզուած եմ, որ արժանաւորագոյնները կենդանի կը մնան:

Մանկիկը, մտնելով միւս սենեակը, հետաքրքրութեամբ դիտեց զինւորներին ու այն երեք մարդկանց, որոնք անշարժ կանգնած էին պատի առաջ: Յանկարծ նրա դէմքը լուսաւորուեց ուրախ ժպիտով: Նա փսփսաց ինքնիրան.

—Օ, սրանցից մէկը հայրիկն է, ես ճանաչեցի: Նրան կարմիրը կը տամ:

Նա ուրախ, կամացուկ մօտ գնաց, զնդակները մէկ-մէկ դրեց պարզած ափերի մէջ, յետոյ հօր թևի տակով անցկացրեց Հարաձձի դէմքը և ասաց.

—Հայրիկ, հայրիկ, տես ինչ կայ ձեռումդ: Այդ ես եմ տուել քեզ:

Նա աչքը զցեց կարմիր զնդակի վրայ, չոգեց գետին ու կրծքին սեղմեց իր երեխային, որը նրա դահիճն էր դառել:

Զինւորները, սպաները, ազատուած դատապարտեալները,

մի ակնթարթ քարացած մնացին այս ողբերգական տեսարանի առաջ և ամենքը, յուզուած, սկսեցին հեկեկալ, չ'ամաչելով իրանց արտասուքից: Այսպէս անցաւ մի քանի բոպէ, վերջապէս հերթապահ սպան մօտեցաւ գնդապետին և ձեռը դիպցնելով ուսին՝ արտասանեց.

— Ինձ չափազանց ծանր է այդ, բայց պարտքս ստիպում է...

— Ի՞նչ է ստիպում.— հարցրեց երեխան:

— Պէտք է տանեմ հօրդ...

— Տանէ՞ք, ինչո՞ւ:

— Ինչո՞ւ, ես կը տանեմ նրան բերդի միւս կողմը:

— Ձէ, այդ չի կարելի: Մայրիկս հիւանդ է, և հայրիկս պիտի ինձ հետ տուն գայ: Եւ կախ ընկնելով հօր վզից՝ ասաց. Գնանք, հայրիկ:

— Խեղճ երեխայ, ես չեմ կարող քեզ հետ գալ, պիտի ներանց հետ գնամ:

Երեխան վայր թռաւ յատակի վրայ և զարմանքով նայեց իր շուրջը, յետոյ վազեց դէպի սպան, և ոտը դետին խփելով, ճչաց:

— Ձէ՞ որ ասացի մայրիկը հիւանդ է, պէտք է շուտով տուն վերադառնանք:

— Ես շատ երջանիկ կը լինէի, եթէ հնար ունենայի ձեր հօր ազատ թողնելու, բայց անկարող եմ: Դէհ, առաջ տարէք:

Աբբին կայծակի նման դուրս վազեց և մի վայրկեան չ'անցած ներս բերեց Կրոմվելին ձեռից բռնած:

— Կանգնեցրէք սրանց: Մայրիկը հիւանդ է, և հայրիկը պիտի դնայ նրա մօտ, ես ասացի սրանց, բայց ինձ չեն լսում և ուզում են տանել հօրս:

Կրոմվելը ապշեց.

— Ի՞նչպէս, հայրդ: Սա քո հայրն է...

— Այո, իհարկէ, թէ չէ ի՞նչի պիտի նրան կարմիրը տայի.

— Աստուած իմ, կսկծաց Կրոմվելը, ես ուզում էի, որ ամեն բան լաւ վերջանար, և յանկարծ, այս ի՞նչ զարհուրելի եղեոնագործութիւն արի ես:

Աբբին համբերութիւնը կորցրել էր:

— Դու կարող ես ասել, որ բաց թողնեմ նրան, ասում էր նա լալով, ուրեմն ասա, դու խոստացել ես լսել ինձ, և ահա ես խնդրում եմ, և դու չես ուզում խնդիրքս էլ կատարել:

Սիրալիր ժպիտը պարզեց մեծ մարդու դէմքի խոժոռ կնճիւղները և նա ձեռը դնելով երեխայի ուսին՝ ասաց.

—Փառք Աստծու, որ ժամանակին վրայ հասաւ: Զաւակս,
դու իրաւացի ես, ես խոստացայ կատարել քո հրամանները և
կատարում եմ խոստումս: Գնդապետ, դուք ազատ էք, գնացէք
ձեր զաւակի հետ:

Թարգմ. Ֆ.

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ

Հնդկաստանցի ճանապարհորդը

IV *)

Հերակլ թագաւորը էմինին սկզբում վերաբերւում է ուշադրութեամբ և շատ քաղաքավարի կերպով: Հայ ճանապարհորդը՝ իհարկէ՝ շտապում է բաց անել նրա առջև իր ծրագիրները: Թագաւորն ու հիւրը երկար խօսակցութիւններ են ունենում քաղաքականութեան մասին: Այդ ծրագիրների, խորհրդակցութիւնների հիմքը այն էր, որ պէտք է ուժեղացնել Վրաստանը՝ դարձնելով նրան մի պետութիւն, որ կարող կը լինէր սեփական հեղինակութեամբ ինքնուրոյն և ազգեցիկ դեր կատարել Արեւելքում և պաշտպանել քրիստոնէութեան շահերը: Բայց ի՞նչպէս պիտի ստանար Վրաստանը այդքան հարկաւոր ոյժը: Եւրոպայից եկած էմինը չէր կարող չը նկատել այն յետամնացութիւնը, որին, ուրիշ ասիական երկրների պէս մատնուած էր և Վրաստանը: Ահա այդ յետամնացութեան դէմ կռւելն էլ կը լինէր այն ոյժը, որից զուրկ էր Վրաստանը: Էմինը համոզում էր թագաւորին բարւոքել երկրի տնտեսական դրութիւնը, տարածել լուսաւորութիւն՝ բաց անելով դըպրոցներ, կանոնաւոր զօրք պահել ևայլն:

Սակայն այդ բոլորի համար փող էր հարկաւոր, և Հերակլը միշտ այս պատասխանն էր բերում էմինի ծրագիրների և խորհուրդների դիմաց: Չը հերքելով այդ առարկութիւնը՝ էմինը ցոյց էր տալիս թագաւորին, թէ ինչպէս կարելի է կարգադրել փողի հարցը, ինչ միջոցների կարելի է դիմել, որպէսզի երկիրը ինքն իրան, առանց ուրիշներից օգնութիւն ակնկալելու հոգայ իր կարիքները: Այդ պատճառաբանուած առաջարկութիւնները սակայն անհամոզեցուցիչ էին երևում Հերակլին, և նա շարունակ այն կարծիքին էր մնում, որ մէկը պէտք է

*) Տես «Մուրճ» № 11.

փող տայ, որպէսզի կարելի լինի բարեկարգութիւններ մտցնել: Էմինը շուտով նկատում է, որ վրաց թագաւորը հէնց իրանից է սպասում դրամական օգնութիւն, կարծելով թէ հնդկաստանցի հայը, որ եկել էր իր խորհուրդներով, ահագին հարստութիւնների տէր է: Նա շտապում է հերքել այդ սխալ կարծիքը և անկեղծօրէն յայտնում է թագաւորին, որ ինքը մի աղքատ մարդ է և կարող է օգտակար լինել միայն իր անձնական ընդունակութիւններով: Հերակլը չէ հաւատում և մնում է կասկածանքի մէջ, կարծելով թէ իր հիւրը ծածկում է ճշմարտութիւնը իր անձի վերաբերմամբ:

Ամառը Էմինը գնում է Հերակլի հետ Կախեթիա, ամառանոց: Այդտեղից նա նամակագրութիւն է սկսում Ղարաբաղի հայ մէլիքների և Մուշի ս. Կարապետի վանահօր հետ: Յայտնի է, թէ ինչ բովանդակութիւն պիտի ունենային այդ նամակները, Ս. Կարապետի վանահայրը իսկոյն պատասխանում է, որ ամեն ինչ պատրաստ է գործը սկսելու համար, և եթէ Էմինը կարողանայ գոնէ 50 վրացի ձիաւորներով գնալ Մուշ, ինքը, վանահայրը, իսկոյն նրա տրամադրութեան տակ կը գնէ 4000 զինուած հայեր: Վրացի ձիաւորները, ասում էր վանահայրը, անպատճառ հարկաւոր են, որպէսզի թիւրքերն իմանան, որ վրաց թագաւորը Էմինի բարեկամն է: Էմինը պատասխանում է, թէ ինքը փող չ'ունի այդ բան մարդկանց կերակրելու համար: Քաջ վանահայրը նոր նամակ է գրում և ասում է, թէ իր ունեցած մարդիկ երգուել են տասը տարի առանց որեւէ վարձատրութեան ծառայել Էմինին, եթէ միայն Հերակլ թագաւորն իր հաւանութիւնը տայ:

Այսպէս ահա գործը գլուխ գալու վրայ էր, երբ Էմինի առջև կանգնեց Արեւելքին և նրա արքունիքներին յատուկ ասիական ինտրիգը: Ինտրիգի գլուխը կանգնած ենք տեսնում Էջմիածնի Սիմէոն կաթողիկոսին, որ նոր էր յաջորդել վախճանուած Յակոբ կաթողիկոսին: Սիմէոնը XVIII դարի լաւագոյն գործիչներից մէկն է համարւում: Բայց զարմանալի է, որ Էմինը շատ վատ է խօսում նրա մասին: Ի՞նչ է պատճառը: Արդեօք անձնական յարաբերութիւնը: Յիշենք այն սառն, թրշնամական վերաբերմունքը, որ ցոյց տուեց Էջմիածնի միաբանութիւնը դէպի Էմինը. արդեօք Սիմէոնը հէնց այդ ժամանակ, իբրև միաբանութեան անդամ չէր թշնամացած Էմինի հետ: Թէ՞ գուցէ պատճառն այն էր, որ Էմինը չափազանց համարձակ կերպով դատապարտում էր հայ հոգևորականութիւնը ամեն տեղ, ուր գէպք էր լինում խօսելու, համեմատում էր հայ հոգևորականներին եւրոպացի հոգևորականների հետ և ասում

էր, թէ հայ վարդապետները իրանց հօտին ստրկութիւն են քարոզում: Մեզ թւում է, թէ այս հանգամանքը պակաս զօրաւոր չէր, և հայ հոգեւորականները տեսնում էին էմինի մէջ անգլիական և գերմանական բողոքականութեան մի գործիք, որ եկել է մարտնչելու հայերի կրօնի դէմ: Միշտ անփոփոխ իրողութիւն է մնում, որ մեր լաւագոյն հոգեւորականներն անգամ չեն կարողացել հաշտուել եւրոպական ազատ գաղափարների հետ: Յատկապէս Սիմէոն կաթողիկոսի համար մեծ նշանակութիւն պիտի ստանար էմինի վերաբերմունքը դէպի հայ հոգեւորականութիւնը. Սիմէոնի ժամանակ հայերի մէջ սաստկացել էր կաթողիկէների գործունէութիւնը, և նա ամեն կերպ աշխատում էր գիմադրել օտար քարոզչութեան ջանքերին:

Ինչ էլ լինի պատճառը, էմինի հաղորդած փաստն այն է, որ Սիմէոն կաթողիկոսը նամակ է գրում Հերակլին և խորհուրդ է տալիս նրան հեռացնել իրանից այդ «վտանգաւոր մարդուն»: Տրամադրութիւնը միանգամից փոխւում է. էմինի դէմ են և Թիֆլիսի հայերը, ու նրանց հետեւելով, նաև վրաց ազնւականութիւնը: Էմինը գիմադրում է ինտրիգին, որքան կարողանում է, և Հերակլը առժամանակ չէ ենթարկւում էմինի թշնամիների խորհուրդներին: Մի փոքրիկ դէպք բոլորովին փոխում է թագաւորի տրամադրութիւնը դէպի հնդկաստանցի հիւրը: 24 հայ ձիաւորների հետ էմինը գնում է Հալբատի վանքը (Թիֆլիսից 2 օրուայ ճանապարհ): Ճանապարհին լէզգիների մի խումբ, 50 հոգուց բաղկացած, յարձակւում է էմինի վրայ կողոպտելու նպատակով, բայց հանդիպում է սաստիկ դիմադրութեան: Տասը ժամ էմինը կռիւ է մղում յարձակուողների դէմ, լէզգիները վախճում են, կրելով մեծ վնասներ: Հերակլը, իբրև քաջ զինուոր, դնահատում է էմինի այս քաջագործութիւնը և սկսում է յարգանքով վերաբերուել նրան: Էմինը, խրախուսուած այդ հանգամանքից, նորից սկսում է համոզել թագաւորին, որ նա մի արշաւանք սկսէ դէպի Թիւրքիան և միացնելով այդ երկիրը Վրաստանին, դառնայ ոչ միայն վրաց, այլև հայոց թագաւոր: Նա ցոյց է տալիս ս. Կարապետի վանահօր նամակները, որոնց մէջ մի ամբողջ պատերազմական ծրագիր էր գրուած: Յովնան արքեպիսկոպոսը հաւատացնում էր, որ Հերակլը իր աշաւանքի ճանապարհին կը գտնէ Բայազէտում 4000, Բիթլիսում 12,000 և Մուշում 10,000 զինուած ու պատրաստ հայեր:

Համարձակ գործը մի բոլորէ ոգևորում է քաջ թագաւորին: Էմինը խնդրում էր նրանից միայն 10,000 հետևակ և 6000 ձիաւոր վրացի զօրք. մնացածը պատրաստ էր մի այդպի-

սի հեռաւոր արշաւանք սկսելու և աջողեցնելու համար: Այդ խօսակցութիւնների տալաւորութեան տակ նա նոյնխակ կամենում է փեսայացնել էմինին, բայց Փիլիպպոս անունով հայ քահանան, որ Հերակլի ուսուցիչն էր և խորհրդականներից մէկը, յայտնում է նրան, որ էմինը արդէն նշանուած է Աւան-խանի աղջկայ հետ:

Երեք շաբթից յետոյ Հերակլը էմինի հետ վերադառնում է ամարանոցից Թիֆլիս: Ի՞նչ էր նա մտածում իրան առաջարկած արշաւանքի և նոր թագի մասին: Գուցէ նա անհնարին էլ չէր համարում հայ-վրացական միութիւնը, բայց նրան սպասում էր Սիմէոն կաթողիկոսի մի նոր նամակը, որի մէջ դարձեալ նոյն խորհուրդն էր տալիս—հեռացնել էմինին, չը լսել նրան: Այդ նամակը նա տալիս է էմինին, և սա, կարգաւուց յետոյ, զայրացած ասում է թագաւորին, որ եթէ ինքը հարուստ լինէր և կարողանար մի մեծ զուժար տալ կաթողիկոսին, անշուշտ նա կը փոխէր իր կարծիքներն ու խորհուրդները...

Մինչդեռ ինտրիգը զործում էր այսպէս, Թիֆլիսում երեւան են դալիս մի խումբ վիճուած հայեր: Նրանք այս կողմերից չէին, քիւրդստանցի լեռնականներ էին: Եկել էին Մուշի ս. Կարապետից և բերել էին նրա անխոնջ վանահօր մի նոր նամակը: Ինչպէս պատմում է էմինը, նամակը ունէր հետեւեալ բովանդակութիւնը.

«Նամակաբերս, Մէլիք Ստեփանը, ձեզ կը յանձնէ 600 ոսկի ձեր ճանապարհի ծախսերի համար: Խնդրում եմ որքան կարելի է շուտ ճանապարհ ընկնէք մեզ մօտ գալու համար: Իշխան Հերակլին յայտնեցէք իմ օրհնութիւնները և խնդրեցէք իմ կողմից, որ տայ ձեզ 20 վրացի ձիաւորներ իրրև ուղեկիցներ, որպէսզի գրանով համոզուեն այստեղի հայերը, թէ նա ձեր բարեկամն է: Իսկ եթէ մեր այս երկու աղղերի միութեան թշնամիները նրան արգելեն ձեր խնդիրը կատարել, անհոգ եղէք, Աստուած ողորմած է: Բայց այդ դէպքում էլ ստացէք այդ զուժարը և ծախսեցէք՝ ձեր պետքերի համար:

Ստացայ ձեր նամակը, որի մէջ դուք խօսում էք այն ստոր վարմունքի մասին, որով ձեզ արգելք են հանդիսանում մեր այն զաւնապզեստ գայլերը, որոնք միշտ պատճառ են եղել մեր թշուառ ազգի կորստեան և միշտ ծառայել են մեր թշնամիների շահերին:

Տասնեմէկ ամսից ի վեր զբաււր վիճումներով համոզեցի և ձեր ծրագրերին միացրի Թիւրքիայի մեր բոլոր ազգեցիկ հայերին Կ.-Պոլսում, Ջմիւռնիայում, Կեսարիայում, Թաթաւթում, Երզրումում, Դիարբէքիւրում, Վանում և այլն: Ինչ վերաբերում է կռուող ոյժերին՝ արդէն պատրաստ ունենք 40,000 մարդ: Առօրիններն ու եզգի բրգերն էլ պատրաստ են մեզ հետ միանալու: Յայտնեցէք վրաց իշխանին, որ նրանք ոչ մի գրամական վարձատրութիւն չեն ուզում ներանից, բոլորն էլ երդուել են ս. Աւետարանի վրայ, որ պատրաստ են տասը տարի շարունակ ծառայել նրա համար ձեր հրամանատարութեան տակ: Իսկ ինչ վերաբերում է ուսեստի և զէնքի պաշարին, այդ բոլորի հոգսը արդէն քաշել են:

Թիւրքերը այլևս այն չեն, ինչ որ էին սրանից 100 տարի առաջ. առանց մեծ զիմադրութեան նրանք անձնատուր պիտի լինեն. նրանց քաղաքները ամրացրուած չեն, ուստի և շատ հեշտ պիտի լինի նրանց զրաւելը: Մի նախապաշարուած գուշակութիւն նրա մէջ խոր արմատներ է գցել, որ նրանց վերջը մօտեցել է և այլևս չը պիտի կարողանան յաղթել քրիստոնեաներին: Նրանք քո մասին էլ արդէն լսել են, զիտեն, որ ռուսաց հզօր կայսրուհու կողմից յանձնարարուած են վրաց թագաւորին, և նրանք չեն համարձակուիլ ոչ մի քրիստոնեայի արիւնը թափել: Գիտեն նրանք նաև այն, որ երբ երեք տարի սրանից առաջ դու Անդլիայից գալիս անցար այս երկրից և բոլոր գիւղացիներին համոզեցիր զէնքեր գնել, ամենքն էլ քո խորհրդին հետեցին, և նոյնիսկ կանայք պատրաստ են կուի: Հիմա պակասում է միայն Հերակլի հաւանութիւնը:

Այսօրանը բաւական է: Իսկ եթէ չ'աջողուի Հերակլին համոզել, իմ հայրական խորհուրդն է բնաւ չը յուսահատուիլ: Զարուակիւր քո ջանքերը քո բոլոր ոյժերով, ոչ մի վտանգից մի վտիտեցիր, զի քո յոյսը Աստուծու վրայ: Բայց ես յոյս ունեմ որ դու պիտի լինես քո թշուառ հայրենակիցների ապաստողը գերութեան շղթաներից:

Ես խնդրում եմ Աստուծուց, որ քեզ պահէ ու պաշտպանէ ի սէր Հայաստանի և մնում եմ

Յովնան Արքիպիսկոպոս, Քրիստոսի ծառայ:

Գրուած 1763, Սառոին կնոջ սրգու *) սուրբ տանը, Սուրբ Յովհաննէս Մկրտիչ:

Եւ այսպէս, սկսուած ու պատրաստ գործը միայն մի անձնաւորութիւնից է սպասում աջողութիւն: Դա Հերակլն է: Վերևում մենք բացատրեցինք, թէ ինչ մտքերով էին զեկավարւում XVIII դարի հայ գործիչները: Հետագայ դէպքերը հասկանալու համար պէտք է միշտ աչքի առջև ունենալ այդ համագամանքը:

Հերակլը, անշուշտ գտնուելով Էմինի դէմ գործող ինտրիգի ազդեցութեան տակ, նորից փոխւում է: Լսելով, որ Էմինը Մուշից նամակ և փող է ստացել, փորձում է խլել նրանից գումարը. խուզարկել է տալիս նրա տունը, բայց ոչինչ չէ գտնում: Այնուհետև մի չնչին դէպք պատճառ բռնելով, բանտարկում է նրան 30 օր և ապա հրամայում է հեռանալ Աւստրալ գիւղը, այդտեղ սպասել իր կարգադրութեան: Իսկ կարգադրութիւնը այն է լինում, որ Հերակլը արգելւում է Էմինին մընալ Վրաստանի սահմաններում: «Թող գնայ Ռուսաստան, ուր նրա բարեկամներն են ապրում»—այսպէս էր վճիռը:

Էմինին մնում էր հնազանդուել: Նա անցնում է Կովկասեան սարերը և հասնելով Ղվարից 12 մղոն հեռու գտնուած Բորագան չէրքէզարնակ գիւղը, այլևս չէ շարունակում ճանա-

*) Էմինը բացատրում է, որ Յովհաննէս Մկրտչի մայր եղիստրէթին հայերը անուանում են «Սառոին կին»(?):

պարհը: Այդ գիւղում կար հայերի մի փոքր գաղութ, և էմինը մնում է հայերի մէջ, որովհետեւ հիւանդանում է և պառկում մի քանի ամիս: Առողջանալուց յետոյ նամակ է գրում Աստրախան Աւան-խանի աշրիին, Գոհար խանումին, և իր խոստման համաձայն, խնդրում նրա աղջկայ, իշխանուհի Մարիամի ձեռքը: Գոհար խանումը նամակին չէ պատասխանում, բայց ճանապարհորդների միջոցով բերանացի մերժում է էմինի առաջարկութիւնը: Այս բանը շատ վշտացնում է էմինին:

Այնուհետեւ սկսում են էմինի թափառումները, որոնք վիպական կերպարանք են ստանում իրանց անակնկալութիւններով, օտարոտի դէպքերով: Ռուսաստան չէ գնում նա: Եւ պատճառը դառնում է մի լէզգի, որ մի օր գիւղով անցնելիս, տեսնում է նրան տան առաջ նստած և ճանաչում է նրան: Դա մէկն էր այն լէզգիներից, որոնք յարձակուել էին էմինի վրայ Հաղրատի ճանապարհին: Ինչպէս զիտենք, նրանք յաղթուել էին երկարատեւ կռուում և փախել: Ահա դրանցից մէկը, որի անունն էր Աչախան և որ ջրաղացպան էր, մօտենում է էմինին և յայտնում, որ եկել է իր յարգանքը մատուցանելու մի «իգիթի», որ այնպէս լաւ գիտէր կուել: Լեռնցին քաջութիւնը այնպէս է պաշտում, որ նոյնիսկ մոռանում է, թէ այդ մարդուց ինքը յաղթուել էր ու փախուստ դարձել: Իսկ երբ էմինը պատմում է, թէ ինչպիսի տմարդութեամբ ինքը դուրս է վրանդուել Վրաստանից, ջրաղացպան Աչախանը այնքան զայրանում է, որ խոստանում է տալ նրան միջոյններ՝ Հերակլից իր վրէժը հանելու համար: Եւ նա, ճիշտ որ ընկնում է սարերը, իր և հարեան ցեղերի մէջ սկսում է խօսել նոր մարդու մասին: Լեռնցիներին պատրաստելու համար մեծ գժուարութիւն չէր կարող լինել. բաւական էր որ կար Վրաստանի վրայ յարձակուելու միտքը, աւարի ցանկութիւնը երբեք չէր պակասիլ Կովկասեան լեռներում, և ահա մի ամսուայ ընթացքում մի տահազին բազմութիւն ձիաւորների—էմինը նրանց թիւը հաշւում է 12,000—պատրաստակաւնութիւն է յայտնում օտարական հայի ետեից գնալու դէպի Կուրի հովիտը:

Բայց էմինը դրա համար չէր եկել արեւելք: Երբեք չը մոռանալով իր գործը, չը մոռանալով մանաւանդ քրիստոնեայի պարտաւորութիւնները, նա չ'օգտուեց այդ վայրենի ոյժից, չ'առաջնորդեց սրան դէպի խաղաղ, անմեղ ազգաբնակութիւնը կոտորելու ամօթալի գործը: Բայց Դաղստանի այդ շարժումը հառաւ Հերակլի ականջին և իհարկէ՝ սարսափ աղղկեց:

էմինը մնաց մի խաղաղ հիւր Բորագան գիւղում: Այդ ժամանակ էր, որ նա նստակ ստացաւ Աւան-խանի աղջկանից:

Իշխանուհի օրիորդը խնդրում էր ուշադրութիւն չը դարձնել իր մօր պատասխանի վրայ, ասում էր, թէ դա մի թիւրիմացութիւն է եղել և այլն: Բայց էմինը չը կարողացաւ հաշտուել իր ստացած հարուածի հետ և մի սառն նամակով յայտնեց իշխանուհի Մարիամին, որ այլևս ոչ մի կապ չէ կարող լինել իր և նրա մէջ:

Նոյն այդ օրերում մի հետաքրքրական հիւր էլ է գալիս էմինի մօտ: Դա Մուշի ս. Կարապետի միաբաններից մէկն էր, Սուքիաս վարդապետը, որ Ռուսաստան էր գնացել ժողովարարութեան համար և այժմ վերադառնում էր Մուշ: Յովնան արքեպիսկոպոսը այնքան սիրով նուիրուած էր էմինի գործին, այնքան աշխատում էր աջակցել նրա ծրագրերը, որ զրել էր Սուքիաս վարդապետին անպատճառ տեսնուել էմինի հետ և նրան տալ այն ամբողջ գումարը, որ հաւաքած կը լինի Ռուսաստանում: Վարդապետը մատուցանում է այդ գումարը (646 թուման) էմինին, նա չէ ընդունում, ասելով թէ ինքը նոր է ստացել Անգլիայի բարեկամներից իր 100 ոսկին և այնքանը բաւական է իրան: Սուքիաս վարդապետին էմինը չէրքէզ ձիաւորների հետ ճանապարհ է դնում դէպի Ղարաբաղ, դէպի այն երկիրը, որ չէին կարող անտես անել ոչ էմինը, ոչ Յովնան եպիսկոպոսը, քանի որ այնտեղ կենդանի էր մնացել անկախութեան գաղափարը:

Ինքը, էմինը, չէ շտապում Ղարաբաղ, այլ դեռ ճանապարհորդում է Դաղստանում: Գնում է Խոնզախ, Աւարիայի թագաւորութեան մայրաքաղաքը և տեղական իշխող նուցալ Մահմէդի մօտ շատ սիրալիր ընդունելութիւն է գտնում և հիւրասիրւում է չորս ամիս: Այդտեղից նա 25 ձիաւորով ճանապարհւում է Ղարաբաղ, և Մահմէդ-խանը տալիս է նրան մի յանձնարարական նամակ հարաւային Դաղստանի Քաթախի (Կայթաղ ?) հասարակութեան անունով: Մահմէդական լեռնցի իշխողի այդ նամակը հետաքրքրական պէտք է լինի մեր ընթերցողի համար, ուստի բերում ենք նրան ամբողջովին.

Նամակաբերս, էմին, մի հայ քրիստոնեայ, յարգուած լինելով Փրանդիտանի թագաւորներից, յանձնարարուած էր ռուսաց թագաւորի վէպրի կողմից վրաց հերակլ իշխանին: Այդ քէֆերը, փոխանակ նրա ծառայութիւնները վարձատրելու, դուքս հանեց նրան իր երկրից: Նա վերադառնում էր Օս լեռների վրայով դէպի Բօրազան զիւղը, անտառաշատ չէէն նահանգի Միշքից ցեղը աւաւաւութեան տենդից զրդուած՝ հազարներով դիմում է նրան, որպէսզի որչաւէ Վրաստանի վրայ. բայց նա, հոյ լինելով, մերժում է այդ առաջարկը և վերցնելով իր հետ իմ ազգական Ալի-Սուլթանին իրրև առաջնորդ՝ զալիս է այստեղ: Մենք նրան ընդունեցինք Արքահամի հրամայած հիւրասիրութեան օրէնքների համեմատ: Նրա սրտի անկեղծութիւնն ու բարութիւնը մեզ այնքան

ուր եկաւ, որ նրան սիրեցինք, յարեցինք և խնամեցինք իբրև մի մօրից ծնուած եղբօր: Մենք չենք կտակածում, որ Չառի (Ջառի ?) ջամահաթը նրան պիտի ընդունէ այնպէս բարեկամաբար, ինչպէս մենք ընդունեցինք: Գուր չը պէտք է ստիպէք նրան, որ ձեզ հետ նա էլ գնայ Վրաստան թալանի ու յափըշ-տակութեան, որովհետև նա իր հաւատին հաւատարիմ մի հայ է և ոչ թէ մի կեղծ ու նկնդամիտ վրացի, բայց եթէ ուզենք բէֆզիների (երևի թուրքերի) դէմ գնալ, նա ոչնչով դէմ չի լինի:

Գրուած իմ ձեռքով և կնիքով, Խունդախ քաղաքում, Աւարիայի թաղաւորութեան մէջ:

Այդ նոր երկրում էմինը մնում է վեց ամիս: Ապարդին չը կորաւ այդքան ժամանակը: Գանձակի Շահվերդի-խանը պատերազմ էր սկսում Նախիջևանի խանի դէմ և օգնութիւն էր խնդրում լեռնցիների այն ցեղից, ուր հիւրասիրւում էր էմինը: Եւ որովհետև դադատանցու համար հրապուրել էր կարող է լինել միայն օգնութեամբ, ուստի Գանձակի տէրը իր դաշնակից-ների առջև դնում էր այն հրապոյրը, որ պէտք է թալանուեն Նախիջևանի խանութեան հայ գիւղերը: Դա պիտի ունենար և այն օգնութեամբ, որ Նախիջևանի խանը, ունենալով մի քարուքանդ եղած քրիստոնեայ ազգաբնակչութիւն, պիտի տկարանար, ինչպէս տկարանում է հարուստ կալուածատէրը, երբ զրկւում է իր հօտերից: Արշաւանքին պիտի մասնակցէին և քէօլանի քրդերը, որոնք բնակւում էին Ղարաբաղի հիւսիսային և արևմտեան լեռներում: Հաւաքւում են 2000 ձիաւոր լէզգիներ՝ մի ոմն Հիւսէինի առաջնորդութեամբ. էմինն էլ ցանկութիւն է յայտնում մասնակցելու, և նրան հիւրասիրող տանուտէրը դնում է նրա տրամադրութեան տակ 40 ձիաւոր իր հպատակ-ներից: Շահվերդի-խանի բանակում նա դիտմամբ առաջապահ գնդի գլխաւոր է դառնում, մտքում դրած լինելով ազատել հայ գիւղերը վերահաս վտանգից: Այդ նպատակով նա Գեղամայ լճի ափերին գործը այնպէս է տանում, որ կուռ են բռնւում լէզգիներն ու քէօլանի քրդերը: Յաղթող հանդիսանում են լէզգիները, որոնք և կողոպտում են քրդերին, խլելով նըրանցից 814 գերի, 8000 ոչխար, 2000 տաւար և 600 մատակ ձի, իսկ թանգագին իրերը, որոնք լէզգիները ձեռքն ընկան, 12 հազար թումանի արժողութիւն ունէին: Բրդերը կորցրին մօտ 250 սպանուած մարդ:

Էմինը մանրամասն պատմում է այն գաղանութիւնները, որ լէզգիները կատարում էին իրանց զերիների վրայ: Հետաքրքրականը մանաւանդ այն բացատրութիւնն է, որ տալիս է էմինը դադատանցիների արշաւանքների մասին: Յայտնի է, որ հին ժամանակներից Կովկասեան սարերը կատարեալ պատուհաս էին Անգրկովկասի համար: Ինչպէս սովորական, անխու-

սափելի երևոյթներ են անձրեն ու ձիւնը, այնպէս էլ սովորական էին լեռնցիների արշաւանքները, որոնք կրկնուում էին պարբերաբար, սուգ ու արիւն տարածելով ամեն կողմ, ուր հասնում էին: Լեռնցիներից տանջւում էր մանաւանդ Վրաստանը, իբրեւ ամենամօտիկ հարեան, որ, բացի դրանից, մի ուրիշ դժբախտ առաւելութիւն էլ ունէր: Էմինն ասում է, որ այդ դժբախտ արշաւանքները տնտեսական դրդիչներ ունէին: Դադարտանցին ամենից լաւ շահւում էր՝ ձեռք բերելով կենդանի ապրանք և վաճառելով նրան: Այդ ապրանքը գլխաւորապէս կանայք էին: Գերեվաճառութեան համար գոյութիւն ունէին այնպիսի ընդարձակ շուկաներ, ինչպէս են Պարսկաստանը, Թիւրքիան և Դրիմը: Լեռնցին ծախում է նոյնիսկ իր որդիներին, ուրեմն որքան հեշտ ու օրինաւոր մի գործ պիտի լինէր նրա համար ուրիշների որդիներին բռնել և վաճառել: Նա չը գիտէր խնայել: Եւ Անդրկովկասի տափարակները հեծում էին այդ գիշատիչների ձեռքին...

Լէզգիներն սկսում են բաժանել իրանց խլած աւարը, և այդ ժամանակ էմինը իմանում է, որ գերիներէ մէջ կան նաև 60 հայ և մի քահանայ: Դրանց ազատելու համար նա թափարդ է հնարում: Շամշադինի գաւառում լէզգիները բաձակ են դնում, վճռած լինելով հանգստանալ այդտեղ մի քանի օր: Գիշերը էմինը, տեսնելով որ ամենքը քնել են, արձակում է մի քանի քրդերի ձեռքերն ու ոտները և ուղարկում է նրանց Շամշադինի հայ և թիւրք գիւղերը, որպէսզի խորհուրդ տան գիւղացիներին յանկարծակի յարձակուել բանակի վրայ և ազատել գերիներին: Այդպէս էլ կատարւում է: Գիշերային յանկարծակի յարձակումից լէզգիները զուլխ են կորցնում և անկարգ փախչում: Միւս օրը ցրուած լէզգիներին հաւաքում է էմինը և նրանց հետ փախչում է դէպի Կուր գետը: Այդտեղ մի նոր վտանգ էր սպառնում: Շահվերդի-խանը, լսած լինելով լէզգիների արարքները, մեծ քանակութեամբ ղինուած թուրքեր ու հայեր է ուղարկում գիշատիչներին պատժելու համար: Էմինը մեծ դժուարութիւններով խոյս է տալիս այդ բանակից և կուր է բռնւում միայն 500 թիւրքերի հետ, որոնք Կուրի անցքն էին պահպանում: Կուրի մէջ թեթեւ կորուստներ է ունենում, բայց էլի կարողանում է անցկացնել լէզգիներին Կուրի միւս ափը և տանում է նրանց իրանց երկիրը: Այդտեղ նա մի քանի օր հանգստանալուց յետոյ ճանապարհւում է Դարաբադ:

Հռչակաւոր երկրի սահմանը դեռ նոր անցած, էմինը ահանաւես եղաւ այն հերոսական կռիւներից մէկին, որ տեղացի հայ իշխանները շարունակ մղում էին մահմէդական իշխող-

ների դէմ: Գանձակից մօտիկ է Գետաշէն գիւղը. այդտեղ էմինը պատահում է խամսայի մէլիքներից մէկին, Մէլիք-Ուսուր Մէլիք-Բէկլարեանին, որ Գիւլստանի տէրն էր: Նա նոր էր վերադարձել Շամքորից. նրա մշտական զօրքը բաղկացած էր 500 մարդկանցից, բայց զրանց այդ օրերը թողել էր, որ գնան իրանց տները մի տօնի պատճառով: Մէլիքի մօտ մնացել էին միայն 40 հոգի: Ահա այդ մի բուռն մարդկանց վրայ յանկարծակի յարձակում է Շահվերդի-խանի զօրքը, բաղկացած 4500 հոգուց: Հայերը ապաստանում են Գետաշէնի մերձակայ ժայռերի մէջ և պաշտպանւում են մի ամբողջ օր: Էմինը հիացած պատմում է, թէ ինչպէս այդ 40 հոգին ամբողջ օրը գերբնական քաջութեամբ կուելով՝ փախուստ դարձրին թուրքերին, սպանելով նրանցից 40 մարդ, 50 ձի և վիրաւորելով հարիւրաւորներին: Հայերի կողմից սպանուեցին 4 հոգի:

Մի քանի օրից յետոյ մի նոր, աւելի ահագին բանակ է երևան գալիս Գետաշէնի մօտ: Կատաղած Շահվերդի-խանը այս անգամ ուղարկել էր իր որդի Մուհամէդ-Հիւսէյն-խանին մօտ 10000 զինուորներով և թնդանօթներով: Այդ ժամանակ արդէն հաւաքուած էր մէլիքի փոքրաթիւ, բայց անվեհեր բանակը— 500 հոգին: Գիւլստանի տէրը տեղաւորում է նրանց բարձրութիւնների վրայ և սպասում է թուրքերի յարձակմանը: Բայց դեռ կռիւն չը սկսած՝ վրայ են հասնում Զրաբերդի Մէլիք-Հաթամը և Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսը, որոնք երկար բանակցութիւններից յետոյ հաշտութիւն են կապում երկու կողմերի մէջ:

Մէլիք-Ուսուրը սկզբից ևեթ գրկաբաց էր ընդունել Էմինին: Հաշտութիւնից յետոյ նա տարաւ նրան իր Գիւլստան բերդը, ուր Էմինը հիւր մնաց ամբողջ տասն ամիս: Բայց մի օր Մէլիքը, դաւաճանելով լեռնցու նահապետական հիւրասիրութեան, խնդրում է Էմինին հեռանալ իր երկրից: Սաստիկ վշտանում է հիւրը և ճանապարհում է Գանձասար, ուր սակայն դարձեալ չէ կարողանում մնալ:

Այդ այն ժամանակն էր, երբ Շուշու Իբրահիմ-խանը կասկածներով էր լցուած հայերի դէմ և շարունակ աշխատում էր կոտրել նրանց յամառութիւնը, ոչնչացնել այն գործը, որի համար հայ մէլիքները միացել էին իրար հետ: Գանձասարը, իբրև մի տեղ, որ կապում էր երկրի ոյժերն իրար հետ, իբրև մի տեղ, որ սկզբից ևեթ հանդիսացել էր Ղարաբաղի ազատութեան շարժման գլուխ և ղեկավար, ամենից շատ կասկածելի և ատելի էր Շուշու խանի համար. և նա առիթներ է որոնում այդ հնադարեան վանքը պատժելու: Յովհաննէս կաթողիկո-

սը զգուշութեամբ էր վարում իր գործերը: Էմինին նա խնդրեց գնալ, ներկայանալ խանին, որպէսզի Գանձասարը յանցաւոր չը ճանաչի մի օտար և անծանօթ մարդուն իր մէջ պահելու համար: Էմինը գնում է Շուշի: Իբրահիմ-խանը նուրբ քաղաքագէտ էր և խելոյն իմացաւ, թէ ով է այդ մարդը, ինչ անցեալ և ինչ նպատակ ունի: Հայերը իմաց են տալիս Էմինին, որ խանը մի փորձանք է պատրաստում նրա համար, ուստի նա շտապով թողնում է Շուշին և վերադառնում է Գանձասար, ուր իմանում է, որ միայն խանի վախը չէր ծանրացած Աղուանից աթոռի վրայ: Յովհաննէս կաթողիկոսը անկեղծօրէն յայտնում է նրան, թէ Էջմիածնի Սիմէոն կաթողիկոսը իրան և Ղարաբաղի հինգ մէլիքներին առանձին-առանձին նամակներով հրամայել է չ'ընդունել Էմինին և նրա ոչ մի խորհրդին չը հետեւել, հակառակ դէպքում սպառնում է անիծել ամենքին:

Այստեղ միայն հասկանալի դառաւ Էմինի համար, թէ ինչու Մէլիք-Ուսուրը այնպէս վարուեց իր հետ: Հասկանալի դարձաւ և այն, որ ինտրիգը քայլադադար հետևում է իրան և Ղարաբաղում էլ անկարելի պիտի լինի գործ կատարելը: Այլևս ոչինչ փորձ չ'անելով, նա վճռում է վերադառնալ Ռուսաստան Դէրբէնդի վրայով: Շամախում նա լսում է տեղական քահանայից, թէ խոյի և Սալմաստի ասորի քրիստոնեաները, լսելով Էմինի ծրագրի մասին, պատրաստակա՞նութիւն են յայտնել 18,000 զինուոր գնել նրա տրամադրութեան տակ: Ինչպէս տեսանք, ս. Կարդետի վանահայրն էլ այդպէս էր խօսում ասորիների մասին: Էմինը փոխում է ճանապարհը, յետ է գընում Շամախուց և անցնելով Ղարաբաղի ու Զանգեզուրի վըրայով, գնում է խոյ քաղաքի մօտ գտնուող Խոսրով գիւղը, ուր ասորիներ էին ապրում: Յովհաննէս անունով ասորի մի վարդապետ սիրով ընդունում է նրան և սկզբում հաւատացնում է, թէ սուտ չէ նրա լսածը: Բայց երբ իմանում է, որ Էմինը միայն իր գլուխն է բերել և հարստութիւն չ'ունի, յուսախաբւում է և վերջնականապէս յայտնում, թէ առանց փողի ոչինչ չէ կարելի անել:

Նորից ծանր հարցը—ի՞նչ անել, ո՞ւր գնալ: Զարմանալի է, որ նա իր ձին չէ քշում դէպի Մուշի ս. Կարապետը: Աւելի զարմանալի է, որ նա վճռում է նորից վերադառնալ Թիֆլիս և մի անգամ էլ բախտ փորձել Հերակլի մօտ:

Եւ ահա նա նորից Թիֆլիսում է: Հերակլը սիրով է ընդունում նրան, ներողութիւն է խնդրում իր վարմունքի համար և արդարանում է նրանով, որ Սիմէոն կաթողիկոսն ու Թիֆլիսի առաջնորդ Զաքարիա եպիսկոպոսը զրդեցին իրան

այնպէս վատ վարուել հիւրի հետ: Այժմ առաջարկում է նրան մնալ Թիֆլիսում և խոստանում է իր օգնութիւնը: Այդ յոյսով էլ էմինը մնում է Թիֆլիսում ամիսներով և ապրում է Հերակլի յատկացրած ապրուստի միջոցով (օրական մի ֆունտ հաց, մի ֆունտ միս և մի ֆունտ էլ գինի): Բայց մի օր այդ բոլորը դարձեալ վերանում է, և էմինը հրաման է ստանում, առանց մի որևէ բացատրութեան, հեռանալ Վրաստանից:

Այս անգամ բախտը մեր ճանապարհորդին գցում է Իմերեթ: Լսել էր էմինը, որ Իմերեթի Սոլոմոն թագաւորը բարեմասնութիւններով օժտուած մի մարդ է, և զնաց նրան հաղորդակից անելու իր ծրագրին: Բայց Իմերեթի մայրաքաղաքում նրան ընդունողը եղաւ Վրաստանի ազնիւ բերքը—գինին: Սոլոմոնը ճաշի հրաւիրեց էմինին և նրան լաւ արբեցրեց: Մի քանի օրուայ ընթացքում էմինը համոզւում է, որ գինու այդքան առատութեան մէջ իր ծրագրին համադատասխանող մարդ չէ կարելի գտնել. ուստի մի բառ անգամ չ'ասելով, թէ ինչու է եկել, նա հեռանում է Իմերեթից և ուղևորւում է Գանձակ: Այստեղ էլ լաւ հիւրասիրութիւն, բայց կատարեալ անտարբերութիւն դէպի գործը:

Ութ տարի էր, ինչ էմինը թափառում էր իր մտքերով ու առաջարկներով: Անօգուտ թափառումներ: Նրանք վերջապէս յոգնեցրին այդ անխոնջ մարդուն: Անաջողութիւնները վերջապէս կոտրեցին նրա յամառ կամքը, և նա յիշեց իր երկրորդ հայրենիք Հնդկաստանը, իր ծնողներին և բարեկամներին: Նա ճանապարհ է ընկնում Գանձակից Շուշի, անցնում է Օրգուբադի, Թաւրիզի վրայով Բաղդատ, իսկ այդտեղից գնում է Բասրա: Նեղութիւններ շատ է կրել նա այդ ճանապարհին, փորձանքների շատ է ենթարկուել: Բայց մենք մանրամասնութիւնների մէջ չենք մտնի, որքան էլ նրանք հետաքրքրական լինեն:

Բասրայում էմինի հետ պատահած մի դէպքը շատ լաւ ընորոշում է այն ժողովուրդը, որի մէջ նա ուղւում էր գործել: Տեղացի հայ վաճառականները, ծանօթանալով նրա հետ, լսելով նրա մտադրութիւնները, յանկարծ ողևորւում են և սկսում են նրան համոզել, որ Բասրայից վերադառնայ ու շարունակէ գործել: Դրանցից երկուսը նոյնիսկ իրանց անձերը և ամբողջ կարողութիւնը դնում են էմինի տրամադրութեան տակ: Ութ տարուայ թափառումները արդէն բաւական սկեպտիկ էին դարձրել էմինին: Բայց վաճառականների ջերմ ողևորութիւնը մի քանի ժամ մոռացնել է տալիս ամեն ինչ, և էմինը համաձայնութիւն է տալիս: Նա յանձնարարում է վաճառականներին պատրաստել մի փոքր կարաւան, որպէսզի երեքով միասին ճանապարհուեն

Մուշ: Բայց նշանակուած ժամանակ վաճառականները յանկարծ անյայտանում են, և էմինը նրանց նորից գտնում է մի քանի օր անցնելուց յետոյ: Բանից դուրս է գալիս, որ քաջ վաճառականները փակուած էին իրանց սներում և վախենում էին փողոց դուրս գալ, որովհետև Բասրայի թիւրք փաշան գերի էր բռնել մի ապստամբ արաբ բէկի և նրա 14 կողմնակիցներին ու ամենքին կախաղան էր բարձրացրել քաղաքի հըրապարակում: Այսքանն էլ բաւական էր հայրենասէր վաճառականներին սրտաճաք անելու համար:

— Ի՞նչ կը լինի մեր դրութիւնը, եթէ թիւրքերը մեզ էլ բռնեն,—հարցնում են նրանք.—մեզ էլ, իհարկէ, կախաղան կը հանեն...

էմինը պատասխանում է նրանց.

—Այստեղ, Բասրայում, դուք վախենալու ոչինչ չ'ունիք, բայց երբ Քիւրդիստանում լինիք և դուք փոխանակ սպանելու կամ սպանուելու՝ ուղենաք փախչել, ձեր պատիժը խիստ կը լինի, ձեզ կը քերթեն և ձեր կաշին խոտով կը լցնեն իբրև դաւաճանների: Գնացէք ձեր ճանապարհը, հետևեցէք ձեր հրէական արհեստին, վաճառականութիւն արէք, տուրք տուէք մահմէդականներին և յանձնեցէք ձեր փողերը եկեղեցու սուրբ հայրերին, խոստովանեցէք նրանց առջև ձեր մեղքերը այն չափով, որչափ որ գործում էք մեղք, որպէսզի նրանք աղօթեն ձեզ համար և թողութիւն տան ձեր մեղքերին, որ մեռնելուց արքայութիւն գնաք:

Այս դառն խօսքերով էր էմինը հրաժեշտ տալիս այն գաղափարին, որ վառուած էր նրա մէջ պատանեկութեան օրերից և որ այնքան զրկանքների ու թափառումների պատճառ էր դարձել:

V

1770 թւականին էմինը հասաւ Կալկաթա, ուր առողջ գտաւ իր հօրն ու միւս աղգականներին: Հայրը սաստիկ ուրախացաւ, որովհետև վերադարձել էր իր «անառակ որդին»: Կալկաթայի հայ գաղութը մեծ յարգանք էր ցոյց տալիս հեռաւոր հայրենիքից վերադարձած զինուորին: Պէտք էր մի գործի կըպչել: Բայց այդ գործը էմինի համար, իհարկէ, վաճառականութիւնը չէր կարող լինել: Մօտենալով Կալկաթայի անդլիացիներին, նա միևնոյն ժամանակ վերսկսում է նամակագրութիւնը Նորթուոքերլանդի դուքսի հետ: Շնորհիւ այդ կապերի, նա կարողանում է պաշտօն ստանալ հնդկական բանակում:

Բայց գաղափարի մարդիկ չեն մոռանում իրանց երիտա-
սարդական յոյզերն ու քաղցր ձգտումները: Էմինի մէջ չը մե-
ռաւ վաղեմի միտքը. նա միշտ բռնկւում էր, երբ մի յարմար
առիթ էր ներկայանում: 1771 թւականին Էմինը իմանում է,
որ ռուսների և թիւրքերի մէջ պատերազմ կայ, և նրա մէջ
միտք է ծագում մտնել ռուս բանակը ծառայութեան ու այդ-
պէս աշխատել հայերի համար: Բայց Նորթումբերլանդի գուք-
սը, որի կարծիքը հարցրել էր Էմինը նամակով, խորհուրդ է
տալիս նրան մնալ Հնդկաստանում, որովհետեւ, ասում է նա,
մինչև որ դուք տեղ կը հասնէք, պատերազմը արդէն վերջա-
ցած կը լինի: Էմինը համաձայնում է:

Մի ուրիշ զրդիչ էլ Էմինի համար հանդիսանում է այն,
որ նա կարողանում է իր ոտճիկից 3000 ռուբլի խնայել: Այդ
գումարը հանգստութիւն չէ տալիս նրան, նորոգում է նրա
հին ցաւերը: Չը կարողանալով տեղը նստած մնալ, ան-
որոշ ժամանակով արձակուրդ է ստանում և ճանապարհ-
ւում է Պարսկաստան մի վերջին փորձ փորձելու համար:
Ճանապարհին մտնում է Մաղրաս քաղաքը, ուր, ինչպէս յայտ-
նի է, հարուստ հայ վաճառականների մի գաղթականութիւն
կար: Այդ հայերը ոգևորւում են, խոստանում են տարեկան
12000 ռուբլի տալ, եթէ Էմինին աշոգուի մի փոքրիկ բանակ
կազմել Հայաստանի համար: Իսկ մէկը, Գրիգոր Միքայէլ ա-
նունով, խոստանում է իր ամբողջ կարողութիւնը տալ նրան,
եթէ էջմիածնի Սիմէոն կաթողիկոսը իր հաւանութիւնը տայ:
Երկար բանակցութիւններով հազիւ էր խեղճ Էմինը կարողացել
մի որոշ համաձայնութեան վալ Մաղրասի հարուստ հայերի
հետ, և ահա հէնց այդ օրերում Մաղրաս է հասնում Երուսա-
ղէմի նուիրակ Յովհաննէս արքեպիսկոպոսը, որ շրջում էր ժո-
ղովարարութիւնների համար: Նա Էմինի հակառակորդն է հան-
դիսանում և կարողանում է հայ վաճառականներից ստանալ
այն փողերը, որոնք խոստացուած էին նրան: Բացի դրանից
Երուսաղէմի միաբանը մեծ քանակութեամբ թանգապին իրե-
ղէններ է ստանում և ճանապարհ է ընկնում:

Իսկ Էմինը գլխիկոր վերադառնում է Բոմբէյ, ուր մնում
է 9 ամիս: Յոյսը զրած իր խնայած գումարի վրայ, սա գնում
է Բասրա: Այդ միջոցին պարսիկների և թիւրքերի մէջ պատե-
րազմ կար, և Քէրիմ-խանը պաշարել էր Բասրան: Անգլիական
հիւպատոսը Էմինին է յանձնում հիւպատոսարանի պաշտպա-
նութիւնը, և նա 30 անգլիացի նաւաստիներով կատարում է
այդ խնդիրքը: Պատերազմից յետոյ Էմինը անցնում է Բուշիր,
այնտեղից Շիրազի վրայով գնում է Սպահան: Այնտեղ նա

հանդիպում է Էջմիածնի Մարկոս վարդապետին, որ Սիմէոն կաթողիկոսի կողմից նուէրներ էր տարել Զէնդ-Քէլըմ-խանին: Վարդապետը համոզում է Էմինին յետ կենալ իր մտքից, լաւ իմանալով, որ ոչինչ չի կարելի անել, քանի որ ամենայն հայոց կաթողիկոսը հակառակ է նրան: Էմին համոզւում է, և այս անգամ վերջնականապէս, անդառնալի կերպով: Նա լսում է Մարկոս վարդապետի և մի ուրիշ խորհուրդը, ամուսնանում է Զուղայում մի հայ աղջկայ հետ, որպէսզի ընտանեկան յարկ ունենայ ծերութեան օրերին: Վեց տարուայ մէջ Էմինը ունենում է երկու տղայ և երկու աղջիկ:

Բայց բախտը չէ թողնում Էմինին ընտանեկան յարկի տակ մնալ երկար ժամանակով: Զէնդ-Քէլըմ-խանի մահից յետոյ Պարսկաստանը, ինչպէս միշտ, արիւնահեղ պատերազմների դաշտ է դառնում՝ գահի՝ միմեանց դէմ մրցող թեկնածուների պատճառով: Ալի-Մուրադ-խանը, տիրելով Սպահանին, լսում է Էմինի անցեալի մասին, կանչում է նրան իր մօտ և հրամայում է, որ Զուղայի հայերից մի գունդ կազմակերպէ: Էմինը կատարում է այդ կարգադրութիւնը և հայկական զնդի հրամանատար է նշանակւում. բայց շուտով թողնում է այդ պաշտօնը և թոյլտուութիւն ստանալով Ալի-Մուրադ-խանից, նորից գնում է Կալկաթա, տանելով իր հետ իր մեծ որդուն, որի անունը Արշակ էր: Նա նորից ստանում է իր հին պաշտօնը՝ անդլիական բանակում և մնում է այդ պաշտօնի մէջ:

Էմինը վերջացնում է իր յիշատակարանը հետեւեալ տողերով.

«Հեղինակը խոնարհաբար խնդրում է իր ընթերցողներից ներդաւնդ լինել իր անմշակ լեզուի համար, բայց նա յոյս ունի, որ նիւթի տարօրինակութիւնը անհետաքրքիր չը պիտի լինի: Նա գոհ է որ հայ երիտասարդները, անդլիներէն լեզուի մէջ թոյլ լինելով, հեշտութեամբ պիտի կարգան և հասկանան այս գիրքը, այնքան պարզ է նրա ոճը: Ո՞վ գիտէ, գուցէ մի քիչ յոյս սփռեն այս տողերը նրանց մտքերի մէջ, եթէ միայն կարգացողները ուրիշներին էլ պատմեն և կտմ թարգմանեն հայերէնի: Ապագայում կարող է օգտակար լինել գիրքը նրանց համար, մինչև որ նրանք հետզհետէ բաց կանեն իրանց աչքերը և կը հասկանան ազատութեան իսկական նշանակութիւնը, որի մասին բոլոր ասիացիները ոչ մի զաղափար չ'ունեն, սկսած աշխարհի ստեղծուելուց մինչև այսօր. դրա ապացոյց՝ այն ընդարձակ երկիրները, որոնք կառավարուած են եղել հատ-հատ բռնակալների ձեռքով, որոնք վայրենի զաղանքների պէս յօշոտում էին իրանց հպատակներին: Եւ քանի որ արեւելիները չը գիտեն, թէ ինչ է ազատութիւնը, այս գրքի հեղինակը չէր կարող ուրեմն Ասիայում սովորել դրա նշանակութիւնը, ուստի նա դնաց Եւրոպա և բարեբախտաբար հասկացաւ ի վերջոյ, թէ ազատութիւնը կեանքի բոլոր բարիքների միակ աղբիւրն է»:

VI

Ահա մի կեանք: Ի՞նչպէս պիտի վերաբերուենք էմինի ինքնակենսագրութեան: Պատմողը նա ինքն է, ուրիշ աղբիւրներ չը կան, որոնց միջոցով կարողանայինք վերաստուգել նրա ասածները, բացատրել նրա երկար թափառումները, հանդիպած անաշուղթիւնների իսկական պատճառները: Հաւատալ էմինին, թէ՞ ոչ:

Մենք արդէն տեսանք, թէ որպիսի անկեղծութեամբ է պատմում նա իր գլխով անցածները: Ճշմարտութիւններ թաքցնելն ըստ երևոյթին չը կայ էմինի բնաւորութեան մէջ: Եւ անգլիական աղբիւրները խիստ պարզ կերպով շեշտում են, թէ որքան շիտակ ու անշահասէր մարդ էր հնդկաստանցի մեր ճանապարհորդը: Նա ունէր շատ բարեկամներ Անգլիայում, և ամենքը սրտանց ցանկանում էին, որ նա լայն ասպարէզ ունենայ իր իսկական կոչման, այսինքն ղինւորական գործի մէջ: Էմինի բարեկամներից մէկը, Վիլհելմ Զոնս, 1786-ին հետեւաւ տողերն էր գրում Հնդկաստանի ընդհանուր կառավարիչ Մակֆերսոնին. «Էմինի վրայ ունեցած խնամքներից համար շնորհակալ եմ ձեզինից, աղաչում եմ այսուհետեւ էլ նոյն խնամքը անպակաս անէք. Անգլիայի մէջ շատ մարդիկ կան, որոնք շնորհակալ պիտի լինեն ձեզ: Էմինը այնպիսի մի ճարտար մարդ է, որ եթէ մէկը որքան էլ մեծ պաշտօն տայ նրա ձեռքը, նա աւելի լաւ կը համարէ պատերազմի սաստկացած ու վտանգաւոր տեղը մտնել»:

Ահա այսպիսի մի մարդ, ովւերուած մի սուրբ գաղափարով, աշխատեց, գործեց, բայց վերջը ստիպուած եղաւ անհատական կեանքի մէջ որոնել երջանկութիւն: Շատ խորհրդածութիւններ կարելի է անել այսպիսի մի կեանքի վրայ, շատ հանգամանքներ կարելի է պարզել մեր իրականութիւնից, յետեւելով նրա տեսածների, կրածների վրայ: Բայց մենք կը վերջացնենք էմինի կենսագրութիւնը, նորից դիմելով Էդմոնդ Բլըքին, պետական այն մեծ խելքին, որ 1789 թւականի մարտի 29-ին էմինին գրած իր նամակի մէջ խօսում է և այն գործի մասին, որին նա նուիրել էր իր կեանքի մեծ մասը:

Ահա այդ նամակը *).

*) Անփոփոխ ենք թողնում «Մասեայ Աղանու» թարգմանութիւնը (1856, էջ. 271):

Առ Յովսէփ Էմին, ի Կալկաթա:

Սիրեցեալք իմ և վաղեմի բարեկամ,

Իրաւամբ կը մեղադրէք զիս որ ձեր գրերուն կանոնաւոր կերպով չը պատասխանեցի. բայց վստահ եղէք որ ոչ կողակիցս և ոչ ես չենք մոռցած զձեզ, որդիս ալ իր բարեկամական ողջոյնը չմոռցաւ ընելու ձեզի, անկէջ ի վստ կը խնդրէ որ զինքն ալ ձեր հին բարեկամներուն կարգը համարէք, թէպէտ և զինքը տղայութեան ատենը միայն կը ճանչնար:

Հնդկաստանի մէջ ոչ երբէք մեծ գործ մը ունեցեր եմ: Անգամ մը լորդ Քլայվ *) միտքը դրաւ թէ ինձի երախտապարտ է՝ իրեն արդարացի ծառայութիւն մը ընելու համար: Իր ինձի ցուցուցած բարեկամական յօժարութիւնը ասօր միայն գործածեցի. ազաւեցի իրեն որ հրամանացող համար լաւ զինուորական տեղ մը գտնէ: Եյս բանս 1772-ին պատահեցաւ:

Ստոյգ զիտեմ որ նամակիս պատասխանը գրած է. բայց կածեմ թէ այն ատենի իշխանութեան մէջ գտնուող անձանց հետ ազէկ չէր. անկէջ ի վեր Հնդկաստանի ներքին և արտաքին կառավարիչներէն մէկն ալ չեղաւ որ ինձի հետ մասնաւոր բարեկամութիւն ընէ. գուցէ մէջերնէն ոմանք գտնուին որ հետս ազէկ ալ չեն: Հնդկաստանի բարեկարգութեան համար խորհրդարանին **) մէջ ունեցած վրադմունքներս ընականապէս շատ հաճող պիտի չը լլան անոնց, որոնց կառավարութեան պակասութիւնները շտկելը ինձի կիցնայ: Իմ բարեկամներս նեղութիւն կրեցին. և ես ալ բան մը չը վստակեցայ, և սովայն աշխատանքիս ազէկ փոխարէն մը եղած կըլլար, թէ որ կարենայի Անգլիոյ տէրութեան հնդկաստանցւոց վրայ դրած հարկը քիչ մը թիթիցընել:

Իսկ դուք, սիրելի բարեկամ, շատ տեղ շատ փորձանքներու հանդիպեր էք. հիմա որ ծերացաք՝ պէտք է քիչ մը հանգչիք: Ուրախ եմ որ բարի հօր մը ընտանեկան հաճոյքը և մարդը խղճմտանքի մը միսիթարութիւնը փնդուցիք ու գտաք. անկէջ գուրս ամեն բան աւերեայթ բարիք է:

Քանի որ մեզմէ բաժնուեցաք՝ շատ փոփոխութիւններ եղան հոս: Ձեր բարեկամ Նորթմըրելնդի դուրսը մեռաւ. Մոնթակ տիկինը տակաւին ողջ է. երբոր զինքը տեսնեմ՝ զձեզ միտքը պիտի ձգեմ: Ուրիշ շատ փոփոխութիւններ ալ պատահեցան ձեզի հետ ճանչնորութիւն ընելէս ի վեր: Զձեզ Սէնթ-Ջէյմսի պարտիզին մէջ տեսած օրս որո՞ւ մտքէն կանցնէր թէ ատենով այս տէրութիւնը Հնդկաստանի մեծ մասին պիտի տիրապետէ: Բայց տէրութիւնները կը կանգնին ու կը կործանին. կայսերի գերի կիցնան ու կը կուրանան, կայսերութիւնը ծախու հանողները կայսերութեան կը հասնին: Սակայն մենք ողջ ենք և բաւական խելք ունինք մեծամեծ արկածներու մէջ ալ մասնաւոր կերպով միսիթարուելու. և որովհետեւ մեծերը, որոնց համար այս բաներս եղած կերենան, ասոնցմէ բան մը չեն շահեր, ուրիշները պիտի նային որ օգուտ մը քաղեն: Դուք շատ մը ազնուական մտածմունքներու ետեւ եղաք ու չը հասաք. բայց հիմա աւելի լաւ էք՝ քանիք ինչ որ պիտի ըլլայիք, եթէ

*) Հռչակուոր անգլիական զօրավար Հնդկաստանում, որ իր անօրինակ եռանդով տարածեց անգլիական տիրապետութիւնը հնդկական թերակղզու վերայ, ոչնչացնելով ֆրանսիական ազդեցութիւնը և նուաճողական ծրագիրները:

**) Պարլամենտ:—Բըքը, իբրեւ ազատամիտ կուսակցութեան ներկայացուցիչ, խիստ կերպով քննադատում էր կառավարութեան պակասութիւնները: Հիւսիսային Ամերիկայի ապստամբութեան միջոցին նա ամերիկացիների կողմն էր և պահանջում էր, որ Անգլիան արգար կառավարութեան եղանակով շահէ ամերիկացիների սիրտը:

յաջողութիւն գտնէիք. վասն զի դուք պատուաւոր, և աւելի լաւ ըսեմ՝ երջանիկ մասնաւոր մարդ մըն էք: Հաւատացէք որ եթէ առիթ մը գտնեմ՝ զձեզ չեմ մոռնար: Որդիս և տիկինս կաղաչեն որ զիրենք մտքերնէդ չը հանէք:

Էմինը աջողութիւն չ'ունեցաւ, ինչպէս չ'ունեցաւ և Իսրայէլ Օրին: Բայց մարդկանց գործերը կշռադատելու չափը միայն աջողութիւնը չէ: Կան գործիչներ, որոնք մարդկային միտքն են ներկայացնում, այն միտքը, որ միշտ չէ իրագործւում, միշտ գործի չէ անցնում: Եւ սակայն, մտքին ներկայացուցիչները պակաս պատկառելի ու երախտաւոր չեն:

Այդպիսի մի երախտաւոր էր մեր Էմինը:

ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ *)

XIV

Քեզ մի քանի անգամ առիթ եմ ունեցել գրելու, սիրելիս, այս երկրում կատարուող լեռնային զբոսանքների մասին, որոնց այնպէս սիրահար է շվէյցարացի ժողովուրդը: Թոյլ տուր ինձ այս անգամ նկարագրել քեզ մի այդպիսի զբոսանք լեռներում, որին ես էլ մասնակցեցի, և որը ինձ համար կը մնայ որպէս կեանքիս լաւագոյն յիշողութիւններից մէկը:

«Արևի ծագումը տեսնել» այս կամ այն լեռան կատարից, հորիզոններին իշխող բարձունքներից՝ մի շատ տարածուած, շատ յաճելի զբոսանք է Շվէյցարիայում: Արևի ծագումը տեսնելու համար մարդիկ այս երկրում այնպիսի նեղութիւններ են յանձն առնում, որ մեղանում կարող է նկատուել առնուազն յիմարութիւն: Երեւկայիր, սիրելիս, որ մարդիկ օրերով՝ գիշեր ցերեկ մագլցում են Ալպերի կատարները, շատ անգամ անձրևի կամ ձիւնի տակ, վտանգաւոր առաւարներով, սառցադաշտերով, ժայռերի ու մացառների մէջ, որպէսզի մի լեռնակատարից կամ արևի ծագումը գիտեն կամ լայնարձակ հորիզոնների գեղեցիկ տեսարանների պատճառած հաճոյքը մի քանի րոպէով ճաշակեն: Վտանգներն այնքան մեծ են և այնպէս յաճախ լեռնային տուրիստների համար, որ իւրաքանչիւր տարի մի քանի տասնեակի է հասնում զոհերի թիւը:

Մոլորում են անծանօթ կիրճերում ու սառչում, կամ հոսող ձեան հետ տարւում են անլուսնային, կամ սխալ անգագոյշ քայլով վայր են գլորում ահագին բարձրութիւններից ու ջարդ ու փշուր լինում ձորերի մէջ: Այնուամենայնիւ բնութեան գեղեցկութիւններին, Ալպերի օդին սիրահար ճանապարհորդները

*) Տես «Մուրճ» № 11

չեն քաշուում ամեն տարի նոյն վտանգաւոր արահետները մագլցել և նորերը փնտրել, միշտ դէպի վեր, միշտ դէպի վեր: Ինչ ուզում ես, ասա, սիրելիս, բայց ըստ իս մի տրագիկական մեծութիւն, վեհութիւն կայ դէպի լուսաւոր բարձունքները, դէպի անհունը դիմող այս ըմբոստ հոգիների գեղեցիկ խենթութեան մէջ: Քեզ չէ՞ն գրաւում բոցի շուրջը սաւառնող և այրուող թիթեռները: Նոյն բանն է:

Անցեալ տարի ցանկութիւնս այնպէս մեծ էր սրանց պէս լեռնակատարների վրայ շրջել, անծանօթ հովիտներում թափառել, մօտիկից տեսնել վտանգը, ճաշակել գեղեցիկ խենթութեան պատճառած քաղցր սարսափը, դողալ, բայց նայել մութ անդունդներին, լսել խորխորատների մէջ փշրուող ջրվէժների հոսանքը, տեսնել այն զարմանալի ծառերը, որոնք ասես երկրից խռոված՝ սիրում են անմատչելի բարձունքները, որտեղից նրանք ամառ թէ ձմեռ փսփսում են աստղերի հետ, տնքում ու գանգատում փոթորիկների տակ: Այնպէս էի ուզում գէթ մի անգամ արծիւների շնչած օդը շնչել, նրանց պէս երկընթին մօտ գգալ ինձ, որ չը նայելով իմ բոլոր անկարողութեան, լեռնային ճանապարհորդութիւն կատարելու իմ խլճուկ անգորութեան, յանձն առայ ուսանող ընկերներիս հրաւէրը մի լեռնակատար բարձրանալ, այն էլ ձմեռ ժամանակ:

Յունուարի տօներն էին: Իմ ընկերներն էին մի գրիզոնցի երիտասարդ, մի գերմանացի՝ Հանովրից և էլի մի ուրիշ ուսանող դարձեալ Գերմանիայից: Լողանից ճանապարհ ընկանք երկաթուղով առաւօտեան ժամի 4-ին: Գնացքը լիքն էր նոյն զբօսանքի գնացող ջահիլ աղջիկներով ու երիտասարդներով, օտարականներ ու տեղացիներ, պայուսակները թիկունքներին, լաւ կապած, ոտներին լեռնային հաստ կօշիկներ, իսկ ձեռներին մի-մի հաստ, երկար գաւազան: Աղմուկ, ճիչ, ուրախութիւն, սրախօսութիւններ: Լուսաբացից առաջ հասանք լեբան ստորոտը, և սկսուեց վերելքը: Մեղանից առաջ քանի մի ուղեկիցներով հանգարտ բարձրանում էր մեր փիլիսոփայութեան երիտասարդ պրոֆեսսոր Միլիւ, որ Ալպերի ջերմ սիրահար է և ամբողջ ամառ թափառում է լեռներում:

Քանի դեռ ձիւն չը կար, լաւ էր. ես էլ միւսների պէս կատակներով բարձրանում էի, բայց հէնց որ հասանք ձիւնին, երբ պէտք էր տեղ-տեղ գաւազանով ոտնատեղ փորել առաջ շարժուելու համար, իմ բանը դժուարացաւ: Քայլում էի անագին ճիգ գործ դնելով, աշխատելով ծածկել իմ թուլութիւնը ընկերներիցս, որոնք ցատկրտում էին այծեամբերի պէս, մասնաւոր գրիզոնցի երիտասարդը: Վերջինս իր եռանդի յաւե-

լուածը չը գիտէր՝ որ մաշէր. վազում էր առաջ, յետոյ իր գաւազանի վրայ յենուած՝ ցած էր սլլում մեզ մօտ, կրկին բարձրանում, կրկին վար գլորւում: Լեռնային օդը նրան խտակ խենթ էր դարձրել: «Մեղանում այսպէս ենք անում», բացառանչում էր նա և շեղ բարձրութիւնից ցած սլլում սառած, հարթ ձիւնի վրայից: Լեռան որդի էր, Գրիգորնի կանտոնը Շվէյցարիայի ամենալեռնոտ մասերից մէկն է: Վատ չէին նաև գերմանացիները. առանց աւելորդ գծութիւնների, առանց վերևներքև անելու, նրանք դանդաղ, բայց հաստատ քայլուածքով բարձրանում էին անդադար: Ես աւելի և աւելի յետ էի մնում. ծածկել չէի կարող իմ անդօրութիւնը. գրիգորնցի երիտասարդը այդ առաջինը նկատեց և ծիծաղելով՝ ինձ մօտեցաւ, որ փոխանակ գծութիւնների՝ ինձ օգնի: Խելացի միտք էր. նա կատակներ անելով քայլում էր իմ կողքից, ոտնատեղ էր փորում սառած ձեան մէջ և երբեմն ձեռքիցս բռնած՝ անցկացնում վտանգաւոր տեղերից, ճիշտ մայր թռչունների պէս, որոնք իրանց փետրակալած ձագերին թռչել են սովորեցնում. այս բոլորը շատ գեղեցիկ էր, ձիւնապաա լեռան կէսից աւելի կտրել էինք արդէն, մնում էր մի յետին ձիգ գործ դնել կատարին հասնելու համար: Ես նայում էի այդ գրաւիչ բարձունքին, ոյժ էի տալիս ոտներինս, գրիգորնցի ընկերս ոչինչ չէր խնայում ինձ օգնելու համար, բայց իզուր, վերելքը կամաց-կամաց դառնում էր ինձ համար անտանելի:

— Լսեցէք, բարեկամ, ես էլ չեմ կարող քայլել, անկարելի է:

— Կարող էք, կարող էք:

Գրիգորնցին էլի քաշում էր ինձ, էլի ոտնատեղեր փորում, կրկին բարձրութիւն թևակոխում ինձ հետ:

— Նայեցէք, թէ մեր պրոֆեսսորը ինչպէս է բարձրանում:

— Հա, բայց նա շվէյցարիացի է:

— Իսկ ձեր երկիրը մի՞թէ լեռնոտ չէ:

— Լեռնոտ է, սիրելիս, շատ լեռնոտ, բայց մենք երբէք չենք համարձակուի այսպիսի վերելքներ կատարել, վտանգաւոր է:

Եւ ես բոլորովին ուժասպառ՝ պառկեցի ձեան վրայ՝ խնդրելով ընկերներիս թողնել ինձ և ճանապարհը շարունակել: Ես հանգստանալուց յետոյ կարող էի մենակ վար իջնել: Գրիգորնցի ընկերս չը համաձայնեց, նա ինձ անընդունակ գրտաւ նոյնիսկ մենակ վար գալու, ընկերացաւ ինձ մինչև ապահով տեղերը և կրկին բարձրացաւ նոյն եռանդով:

Ես յետ դարձայ ու հիացմունքով նայում էի նրա յետևից,

տխրութեան մի խորին զգացմունք համակեց ինձ. լեռներ, լեռներ, լաւ է լեռնցի լինել, լեռնցի ծնունել և սնունել, շատ, շատ կողմերով լաւ է. երանելի՛ ձեզ, շվէյցարացիներ:

Այս տարի, երբ տանտէրս ինձ առաջարկեց Վիմիսի մօտ բարձրացող Նիզըն լեռը բարձրանալ, ես ակամայ յիշեցի իմ անցեալ տխուր փորձը և պատմեցի իմ արկածը: Նա ժպտաց ու հաւատացրեց, թէ՛ նոյն դժուարութիւններն այստեղ չեն կարող լինել, նախ՝ այժմ ամառ է, երկրորդ՝ դէպի Նիզըն լաւ ճանապարհ կայ, և երրորդ՝ այնքան բարձր չէ, ընդամենը 2200 մետր: Եւ այդ Նի՛զընը... ինչ սիրուն լեռ է. բարձրանում է նա իմ լուսամուտի հանդէպ, որպէս մի հակայ պիրամիդ, ամբողջապէս ծածկուած անտառներով ու կանաչով: Երկրորդ փորձ. դնում ենք բարձրանալու: Վերելքը կատարելու ենք լուսնկայ գիշերով:

Ճանապարհն սկսում է սահանքաւոր աղմկուող Կանդար գետակի ափերից: Ի դէպ է ասել, որ այս երկրում գետերն ու գետակները իրաւունք ունեն աղմկուել ու բողբոջել. շվէյցարացին նրանց սեղմել, խեղդել է քարէ պատերի մէջ, համարեա ամբողջ երկարութեամբ, մեծամեծ թումբերով նրանց ընթացիկ կատաղի թափը մեղմել ու չափի տակ դրել: Ջրերն էլ այստեղ ընտանի են ու ձեռնասուն:

Կանդարի ափին, Նիզընի ոտքի տակ մի թէև փոքր, բայց սիրուն հարթութիւն կայ, որի վրայ տեղ-տեղ երևում են շվէյցարական կոկիլի, սիրուն խրճիթներ, ցաքուցրիւ, իրարից հեռու՝ խռոված մանուկների պէս: Եւ խրճիթների առաջ տարածւում են մարգագետինները, ուր աշխատում են գիւղացիք աշնանը վայել եռանդով: Աշխատանքը բազմաշան չէ, նրանք գերանդիներով խոտ են հնձում, կամ տեղ-տեղ գետնախնձորներ հանում: Այս է բոլորը. ինչ աղքատ է այս երկիրը մերի համեմատութեամբ:

Բարձրանում ենք. մի գալարուն ճանապարհ օձապտոյտ մանուածներով ձգւում է դէպի վեր, դէպի Նիզընի կատարը, որ մերթ ծածկւում է ծառերի տակ, մեր յայտնւում հպարտ ու գեղեցիկ:

Երեկոյեան հովը մեղմիւ փչում է, ծառերի մէջ աղմկում են թռչունները, աւելի բարձրից լսւում է մեղանից առաջ զննացածների կանչոտոցն ու երգը, անտառային մթնոլորտը բուրախից ու գաղջ շնչում ենք լայն կրծքով և բարձրանում կատակելով:

Այս վերելքն այնքան հաճելի է, այնպէս զրաւիչ: Ճանապարհի իւրաքանչիւր պտոյտ մեր առաջ բաց է անում աւելի լայն տեսարաններ, լայն հորիզոններ, և մենք հաճոյքով յետ ենք դառնում նայում դէպի վար, հեռուն, ուր գեղանկար Օբեր-

լանդը ձգւում է իր լճերով, գետակներով, անտառներով ու գիւղերով:

Արեւ մայր մտաւ, և մենք արդէն կէս ճանապարհին ենք: Անտառը դադարեց, այժմ քայլում ենք կանաչների և խոտերի միջից, որ ուշ աշնանն էլ շվէյցարական լեռներում պակաս չեն: Այստեղից դէպի վեր հովիւների աշխարհն է, նրանք այստեղ են իրանց կովերով, եզներով, ոչխարներով: Անտառի եզրով ձգւում է փայտեայ մի անվերջ ցանկապատ, որ մերթ իջնում է ձորերը, մերթ բարձրանում կատարները ծառերի քլմահաճոյքի համեմատ: Հովիւների շինածն է այդ, որպէսզի անասունները չ'իջնեն՝ անտառներում մոլորուեն կամ գիւղերը մտնեն:

Գիշեր է արդէն, բայց այս լեռնակատարին խաղաղութիւն չը կայ: Բազմաթիւ մեծ ու փոքր զանգակների ձայները խառնւում են ու տարածւում անտառներում անթիւ արձագանգներով: Այդ զանգակները կախուած են անասունների պարանոցներից, որպէսզի հսկողութիւնը նրանց վրայ հեշտ լինի: Հսկող չը կայ սակայն, կովերն ու եզները ահագին խմբերով փռուած են լեռնալանջերին, հանդարտ արածում են լուսնի գունդատ շողերի տակ, և կարծես պատկանում են ո՛չ մարդկանց, այլ լեռնային ոգիներին: Կարող ես երեւակայել, սիրելիս, թէ որքան զրաւիչ է այս բոլորը, արածող անասունների ստուերները, նրանց զանգակների ձայնը, մեզնից վար մթին սուտող անտառները, աւելի բարձր լեռնակատարը, այս գիշերային, որ սկսում է մրսեցնել, ամբողջ այս լեռնային բնութիւնը, որ չը գիտես՝ ինչ մի առանձին, գաղտնի թովչութիւն ունի, որ գերում է, որ մարդու էութիւնը համակում է մի անորոշ, թախճոտ, բայց ակորժելի զգացմունքով:

Ճանապարհին տեղ-տեղ մենք անցնում ենք անասունների հօտերի միջով, լսում ենք նրանց առողջ, երջանիկ փնչոցը մօտիկից, նրանք բարձրացնում են գլուխները, մի վայրկեան մեզ նայում, ապա կրկին շարունակում արածել: Մի քանի հատ նրանցից ընկնում են մեր առաջը, փակում են լեռնային նեղ շաւիղը և բարձրանում են մեզ հետ դէպի վեր գնալու սիրուն բնագլուխ: Հարկաւոր է լինում մի մեծ պտոյտ գործել նրանցից ազատուելու համար: Պահապան չը կայ, հօտերն արածում են առանց հսկողութեան: Բարձրից լսում է մի սուտոց, և իսկոյն մեր առջևն է յայտնւում մի գիւղացի պատանի, միակ հովիւը այս բոլոր հօտերի: Նա մօտ տասնեակօթ տարեկան է և ինչպէս բոլոր հովիւները՝ անհոգ արտաքին ունի: Լայնեզր ձողէ գլխարկը, որ իջել է մինչև ականջները, իր

ստուերի տակ ծածկել է նրա դէմքը. ահագին գաւազան ունի ձեռքին, խոշոր կօշիկներ, որոնց մեխերը աղմուկ են հանում քարերի վրայ: Նա մեզ բարեկեց, իր կովերին ինչ-որ բան ասաց, քշեց հակառակ կողմը ու անցաւ: Մի առժամանակ լեռնաշաւղի վրայ մերթ երևում և մերթ ծածկւում էր քարերի յետևում նրա անորոշ ստուերը. նա իջնում էր ոչ խսկական ճանապարհով, այլ կտրուկ շաւիղներով, կամ ինչպէս պատահի: Շուտով նրա սուլոցն էլ լռեց, և մնաց միայն զանգակների ձայնը և լեռնային հովի սլալոցը:

Լեռնակատարը հեռու չէ. էլի մի քանի պտոյտ, և մենք կանգնած ենք մի փոքրիկ հիւրանոցի առաջ, որ հաստատուած է այս բարձրութեան վրայ բազմաթիւ այցելուներին մի քանի անհրաժեշտ յարմարութիւններ տալու համար: Այցելուն այստեղ համեմատաբար ոչ թանկ գնով պատրաստ գտնում է տաք և փափուկ անկողին առանձին սենեակում, ամենատեսակ գինիներ և լաւ ճաշ: Ուշ գիշեր է. քայլել ենք ընդամենը վեց ժամ: Թեթեւ ընթրիքից յետոյ ես դուրս եմ գնում լուսնի լուսով Ալպերին նայելու, եթէ հնար է: Հեռուն միայն կաթնագոյն մշուշ է, որի մէջ անորոշ կերպով զծագրւում են լեռների ստուերները, ներքև թուն լճի ակերում պլպլում են բազմաթիւ ճրագներ, իսկ աւելի հեռու Խնտերլակենը ամբողջապէս բոցավառուած է երևում երկտրական ճրագներով: Ոորին լըռութիւն է, որ հնար է տալիս միանգամայն մոռանալ աշխարհը, ներքևում թողած գունատ իրականութիւնը: Թւում է, թէ երկինքը կախուել է վար, վար և նա է այս լռութեան տէրը, նա է պահանջում, որ ամեն ինչ և ամենքը լռեն ու խորհն:

Այստեղ՝ լեռան վրայ ես աւելի լաւ եմ հասկանում, սիրելիս, թէ ինչու են ծնուել կրօնները, բոլոր միասիկ վարդապետութիւնները, հանդերձեալից, երկնքից, տիեզերքի նպատակից, բնութեան մութ, խօլական ոյժերից խօսող այնքան հաւատալիքները, որոնցով մարդը հնագոյն ժամանակներից պաշարել է իր հոգին ու գլուխը: Այստեղ ամեն ինչ թւում է անհուն, յաւիտենական, որովհետեւ ամեն առարկայի միայն սկիզբն է երևում, իսկ վախճանը կորչում է մի խորհրդաւոր շամանդազի մէջ, որ երկնքից է կախուած:

Պառկում ենք քնելու՝ խնդրելով մեզ զարթեցնել առաւօտեան ժամի 5-ին՝ արևի ծագումը տեսնելու համար: Աղախինները սակայն այդ նեղութիւնը կրելու պէտք չեն զգում. ժամը 5-ը չ'եղած, հիւրանոցի պատերի տակ լսուող երգը, ծիծաղը, աղմուկը մեզ զարթեցնում է. մեզանից աւելի ուշ ճանապարհ ընկած այցելուների մի ահագին բաղմութիւն է այն, որ

այժմ միայն համոռն է կատարին: Դուրս ենք գալիս, էլ քնել անկարելի է: Հիւրանոցի նախասենեակներում, աստիճանների վրայ, ընդարձակ սեղանատանը, դրսում՝ պատերի տակ իրար կողքի թափթփուած են երիտասարդների և ջահիլ աղջիկների հարիւրաւոր բազմութիւն: Սա մի խայտաբղէտ ամբոխ է. կան ուսանողներ, ուսանողուհիներ, աղախիներ, բանկային փոքրիկ պաշտօնեաներ, զիւղացիներ, արհեստաւորներ, բանւորներ, շվէյցարացիներ և օտարներ, կան բանւորական կամ արհեստաւորական ամբողջ ընկերութիւններ, որոնք միասին եկել են իրանց կիւրակէն Նիդընի վրայ անցկացնելու: Իւրաքանչիւրը թիկունքին կապած ունի իր պաշարը և ձեռքին մի ահագին գաւազան: Մի փոքր հանգստանալուց յետոյ իրար յետևից ամենքը դուրս են գնում և լեռան ամենաբարձր կէտում յարմարաւոր գիրքեր գրաւում արևի ծագման բոլոր մանրամասնութիւնները լաւ տեսնելու համար:

Արեւելքը շառագունում է կարծես Ալպերի յետևում բլուրնկած մի հսկայական հրդեհից, որի բոցերը չեն երևում: Արեւմուտքում երկնքի կապուտակ ֆոնի վրայ, գունատ հորիզոնի շրթունքին կախուել է լրիւ լուսինը, խղճուկ ու անփայլ, առանց իր ընկեր աստղերի: Բայց բազմութիւնը գիշերային լուսատուին չի նայում, բոլոր հայեացքները դարձել են դէպի արեւելք, ուր արշալոյսի առաջին նուրը ցնցուղները Ալպերի թիկունքից ձգուել են ուղիղ բազմերանգ գծերով մինչև երկրնակամարի կէսը: Այնպիսի ժամ է, որ կարծես բնութեան մէջ ամեն ինչ հեքը բռնած՝ նայում է միայն մի կէտի, հորիզոնի այն բոցավառ մասին: Եւ այն ներքևի լճերը, որոնք լեռների ոտների տակ սարսուռում են առաւօտեան հովի առաջ, և այս անճոռնի ժայռերը, որոնք կարծես արևին նայելու համար է, որ չեն ուզում թարթել իրանց խոռոչէ ահուկի աչքերը, և մանաւանդ այս զարմանալի, ձիւնապատ Ալպերը, որոնք քնից զարթնած հսկաների պէս՝ իրար թիկունքի, իրար գլխի վրայից աշխատում են առաջին շողերը գողանալ, բոլորը, բոլորը շնչաւլրութեամբ սպասում են արևածագին:

Եւ ինչ դանդաղ, ինչ հանդիսաւորութեամբ է գալիս նա՛յ այդ ամենքի սպասած արևը: Շողեր, շողեր, երկներանգ, նուրը, խուրձ-խուրձ կամ կտոր-կտոր, որոնք դուրս են ընկնում ասեա անդունդներից, վազվզում լեռների սպիտակ կառաւորներին, նստում են այս ու այն ցից ժայռերի վրայ, կամ խաղում են մի մոռացուած ամպի հետ: Անհնարին է նկարագրել երկնքի վրայ կատարուող ճառագայթների բոլոր խաղը, գոյների բոլոր նրբութիւնները, լոյսերի անընդհատ բեկբեկու-

մը, անկարելի է նոյնիսկ աչքով հետեւել այդ բոլորին, ջոկել իրարից բոլոր նրբութիւնները, գոյների սահմանները, նրանց դասաւորութիւնը. այդ ամենը կատարւում է ըստ երևոյթին աննկատելի դանդաղութեամբ, բայց իրօք այնքան արագ, որ լոյսերի, գոյների, շողերի շարժման սկիզբն ու վախճանը կարծես միշտ խառն են իրար հետ. ճառագայթների ծնունդը, նը-
րանց յանկարծական փայլը և ամբողջի մէջ նրանց լուծումը կատարւում է աւելի արագ, քան միտքը: Աչքը շփոթւում է, լեզուն կարկամւում, և միայն հոգին է, որ կարողանում է հասկանալ, ապրել այդ փախչող վայրկեանները, զգալ ճառա-
գայթների թրթիւրը, նրանց հետ դողալ, նրանց հետ լուծուել անհունութեան մէջ:

Ալ'պերի վրայ արեւածագը բնութեան մեծագոյն հրաշալի-
քն է: Մարդկային կարողութիւնից վեր է նկարագրել այդ հրաշալիքը, ուստի ես կ'ասեմ. «Նիզընի կատարից մենք տեսանք
Ալ'պերի վրայ ծագող արեւը»:

Տ'գրութիւն!

Ըսկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Բանաստեղծ Ակակի Ծերեթելու նոր յօդուածները հայերի մոտին:—Կրկին «վրացի-լուսաւորչականների» հարցը:

Ինչպէս մեր նախորդ յօդուածում ասել էինք, վրաց նշանաւոր, ծերունի բանաստեղծ Ակակի Ծերեթելին, մի կողմ ձգելով իր քաղցրալուր քնարը, զբաղուած է այժմ այլևայլ հրապարակախօսական վէճեր սարքելով: Յաջողութիւն չը գրտնելով իր նոր ստեղծած թատրոնական քննադատի դերում, մի դեր, որի համար նա առատօրէն ու արժանապէս վայելեց «Յնոբխա-Փուրցելի»-ի կծու ծաղրն և անխնայ յարձակումները, պ. Ծերեթելին գտաւ իր համար դարձեալ մի նոր գործ. նա չարաչար զբաղուած է այժմ... հայոց հարցով:

Մեր ազգին պ. բանաստեղծը նուիրեց «Իվերիայի» էջերում (№№ 248 և 258) երկու մեծ ֆելիէտոն, որոնցից առաջինում նա սաստիկ գովում է հայերին և աւելի սաստիկ պախաւակում վրացիներին, իսկ երկրորդում անտեղի և անմիտ կերպով դատապարտում ու զրպարտում նոյն իր գոված հայերին... Պէտք է ասած, առաջին անգամը չէ, որ պ. Ծերեթելին գրիչ է վերցնում հայերի դէմ. դեռ ևս սրանից հինգ տարի առաջ նա տպեց իր «Կրեբուլի» (Ժողովածու) ամսագրում մի ընդարձակ, անհիմ մեղադրանքներով լի, գրութիւն, որ ջարդ ու փշուր եղաւ մօր կողմից վրացի՝ պրոֆեսսոր պ. Ն. Մարրի հօր հարուածներին տակ («Новое Обозрѣніе» լրագրում): Պ. Ծերեթելին փորձել է այնուհետև խայթել հայերին նաև իր ոտանաւորներին միջոցով, բանաստեղծօրէն...

Բայց դառնանք պարոնի նորագոյն աշխատութիւններին:

«Հայերն այնքան են սիրում—ասում է նա իր «Դառն մտածողութիւններ» յօդուածում—իրանց ազգութիւնը, որ յաճախ՝ յափշտակուած չափազանց երևակայութեամբ՝ մոռանում են արդարութիւնը. իւրացնում են այն, ինչ որ իրանցը չէ: Օրինակ՝ ասում են թէ «նոյն իսկ Վրաստանի կենտրոնը, սիրտը, հին Հայաստանի մասն է», թէ «վրաց բերդերն ու պալատները հայոց թագաւորների կառուցածն են», թէ «վրաց գրերը Մեսրոպը գտաւ» և այլն: Եւ միթէ նրանք չը գիտեն, որ այդ բոլորը սուտ է. լաւ էլ գիտեն, բայց այնքան են սիրում իրանց ազգը, որ ուզում են օգտուել ոչ միայն ճշմարտից, այլ և ստից: Փանք և պատիւ նրանց մոլեռանդութեան... Իսկ մէնք, ինչի՞ արժանի ենք մենք վրացիքս... բողկի և հորթի գլխի (արհամարհանքի)...

Պ. Ծերեթելին իր «Դառն մտածողութիւնների» մէջ համեմատութիւններ է անում երկու հարևան ազգերի մէջ և վրացիների նախանձախնդրութիւնը արծարծելու համար նախապատուութիւնը շարունակ հայերին տալիս...

Գանք հիմայ պարոնի երկրորդ յօդուածին:

Սրանից երկու տարի առաջ, ինչպէս մենք իր ժամանակին գրեցինք «Մուրճում», «Իվերիա» լրագրում սկսուեց մի նոր շարժում՝ Վրաստանում ապրող վրացախօս հայերի վերաբերութեամբ: Լրագիրը յայտնում էր այն զարմանալի կարծիքը, թէ ամեն մի հայ, որ դժբաղդութիւն է ունեցել կորցնելու իր մայրենի լեզուն և խօսում է վրացերէն—այլևս հայ չէ... Նա վրացի է, թէև կրօնով լուսաւորչական: Այդ իր անհեթեթ դատողութեան վրայ հիմնուելով, «Իվերիան» պահանջում էր որ վրացախօս հայերի եկեղեցիներում ժամակարգութիւնը, ընթերցանութիւնը և քարոզը կատարուեն անպատճառ վրաց լեզուով և այդ նոր համայնքը ճանաչուի էջմիածնի կողմից իբրև «վրացի-լուսաւորչական» կամ «վրացի-գրիգորեան»...

Պ. Ծերեթելին այժմ նորից վերականգնում է այդ մոռացուած, նոյն իսկ վրաց մամուլի մեծամասնութեան կողմից հաւանութիւն չը գտած հարցը: Մենք անհրաժեշտ ենք համարում բառաբառ առաջ բերելու այստեղ մի երկու կտոր նրա այդ յօդուածիցն էլ. «Վրացուն ասում են՝ դու այն չես, ինչ որ ես (կաս), այլ պիտի լինես այն, ինչ որ ես եմ, որովհետև—դու իմ հաւատիցն ես: Եթէ ասածիս չէք հաւատում, հարցրէք Վրաստանում գործող հայ քահանաներին և գրողներին, որոնք զբաղուած են վրացի-լուսաւորչականներին հայացնելու գործով: Ինչ արդարութիւն է արդեօք այդ պարոն-

ների արածը, երբ նրանք՝ տիրանալով մեր աշխարհին մի քաղաքական սխալի (?) շնորհիւ, չեն բաւականանում լոկ նիւթապէս մեզ ստրկացնելով, այլ աշխատում են նաեւ սեպհակահացնել մեր եղբայրակից վրացիներին, որոնք պատահամբ նրանց դաւանութիւնն են ընդունել, այսինքն վրացի-լուսաւորչական են դարձել Ուրեմն դրանք ուզում են գտնել այդպիսով մեր աշխարհում այն, ինչ որ կորցրել են ուրիշ տեղ: Իսկ մենք այդ գործին նայում ենք բոլորովին անտարբեր և ոչինչ աշխատանք չենք թափում: Վրաստանում ապրում են 210,009 լուսաւորչական և երեւակայեցէք ինչպիսի բարոյական տանջանք պէտք է կրէ դրանց հաւգին մեծամասնութիւնը, որ հայերէնից ոչինչ չի հասկանում և որի ուղեղը չարչարում են եկեղեցիներում և ծխական դպրոցներում (?) նրա համար բոլորովին անհասկանալի լեզուով: Վրացերէն լեզուի այդօրինակ հալածումը առաջ եկաւ հայ ազգասէրների քաղաքական ձգտումից, ձգտում, որ սկսուեց նախ իրանց գրականութեան մէջ և ապա անցաւ վրացի-գրիգորեանների եկեղեցին, ուսումնարանը, ընտանիքը և մինչև իսկ գերեզմանատունը: Բայց մեր աշխարհի սիրահար հայ ազգասէրների ցնորքը պէտք է համարել փուչ և անպտուղ»:

Այնուհետեւ յօդուածագիրը, զոհ դառնալով մի տարօրինակ թիւրիմացութեան, գործում է մի արդարեւ «փուչ ու անպտուղ» և միևնոյն ժամանակ ծիծաղելի, դոնկիխոտական յարձակում իր այնքան ատելի «ազգասէրների» դէմ: Ահա թէ բանն ինչու՞մն է: Սրանից մօտ 20 տարի առաջ թաղուեց Թիֆլիսի Վանքի եկեղեցում, հիւսիսային պատի տակ, վրաց էրէկլէ (Հերակլ) Թագաւորի հարս հայազգի Մարիամ Մելիք-Աղամալեանը (երևանցի): Նրա գերեզմանի գլխին, պատի վրայ, փորագրուած է հանգուցեալի ով լինելը՝ հայերէն, վրացերէն և ռուսերէն լեզուներով: Հայերէն արձանագրութիւնը գրաբար լինելով, էրէկլէն կոչուած է «արքայ», որպիսի բառը, ինչպէս յայտնի է, աւելի սովորական է մեր հին լեզուում: Պ. Ծերեթելին, այցելելով մօտերս յիշեալ եկեղեցին և կարդալով այդ արձանագրութիւնը—ծերունի բանաստեղծը աւարտել է իր ուսումը Պետրերուրգի համալսարանի արեւելեան ֆակուլտետում—սաստիկ վիրաւորուել է, կարծելով թէ «արքայ» նշանակում է ոչ թէ «թագաւոր» (այդ երկու բառը նա դնում է հայերէն), այլ «մթաւարի», այսինքն իշխան, կառավարիչ, պետ և այլն...

— Ա՛յ քեզ խաթարալա...

Ախր ի՞նչով են մեղաւոր, յարգելի պարոն, հայ «ազգա-
»էրները», երբ դուք ձեր 40 տարի առաջ սովորած հայերէնը
բոլորովին մոռացել էք...

Կրճկ է ու պատիժ, էլի՜...

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆ

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Մ. Մանուկեան՝ «Էսփիգներ», 30 եր. դ. 5 կոպ., Բագու:

Հեղինակը, որի անունը ես առաջին անգամն եմ տպուած տեսնում, դիտել է աղքատութիւնը սրտի կսկիծով և անյաւակնոտ էսքիզների ձևով հաղորդում է մեզ իր տպաւորութիւնները և տրամադրութիւնները:

Տպաւորութիւնները լուրջ են, տրամադրութիւնները խոր ու համակրելի, իսկ արտայայտութեան եղանակը՝ անկասկած գեղարուեստական:

Եթէ հեղինակը սկսնակ է և երիտասարդ, ինչպէս մենք հիմք ունենք ենթադրելու, այն ժամանակ կարելի է լաւ յոյսեր տածել նրա ապագայի մասին: Ո՛չ մի գիծ աշակերտութեան, ո՛չ մի ճիգ էֆֆեկտ գործելու, ո՛չ մի նշոյլ հայկական աւելորդաբանութեան, այլ ընդհակառակը՝ վերին աստիճանի հակիրճ ու խտացրած ոճ և չափի զարմանալի զգացմունք:

Աղքատութեան մի սովորական պատկեր: Մութ գետնաշարի սենեակ. բորբոսնած պատեր. գերեզմանային ցուրտ: Մի կտոր հնամաշ ու կեղտոտ խսիր, վրան պառկած 13 տարեկան մի կոյր աշուղ, գզգզուած ու հիւանդ: Նա պապակում է տենդից: Պէտք է խնամել նրան: Բայց աղքատութիւնը դաժան է: Նա կանգնած է հիւանդի գլխավերևը: Խղճուկ հօր բերանով նա յայտնում է հիւանդին, որ հաց չը կայ ուտելու: Կոյր աշուղը և թշուառ հայրը դուրս են գալիս մի փշուր հաց ճանկելու գոյութեան կուրի գոռ աղմուկի մէջ: Երկար թափառում են: Փոքրիկ աշուղը ուժասպառ երգում է: Նա ուշաթափ վայր է ընկնում, բայց ստանում է իր վարձը... երեք կոպէկ... Այդպէս էլ կոչւում է այդ էսքիզը—«Երեք կոպէկ»:

Ահա և՛ մի ուրիշ դէմք, նոյնպէս «ստորացածների և զըրկուածների» թւից: Մի նորակոչ զինուոր է այդ: Ապուշի տըպաւորութիւն է գործում. ընկերները «խրտուիլակ» են կոչում նրան: «Ասա, Կ ՎՅՎԵՍՈ, սովորեցնում էին նրանք: Նա՛ սպուշ, բերանը կիսաբաց, բոլորովին թութակի նման կրկնում էր՝ Կ ՎՅՎԵՍՈ»: Սակայն այդ ապուշանման արտաքինի տակ ապուշում էր մարդկային մի քնքոյշ հոգի, ընդունակ սիրելու և տանջուելու: «Սրտուիլակը» տանջում էր հայրենիքի ու մտերիմների կարօտից: Նա ստեղծուած չէր զինուորական կեանքի համար: Կարծէք արմատախիլ արած բոյս լինէր, որ թառամում ու ճոզում է օտար շրջապատում: Իբրև մի մեքենայ նա կատարում է ամեն բան, ինչ որ պահանջում են նրանից: Բայց չի կարողանում դիմանալ: Փախչում է մտնում շների բունը: Նրան գտնում են այնտեղ: Նա թրջուած է: Ընկերները ըստ սովորութեան ծիծաղում են նրա վրայ, քրքշում են, բայց նա լուրջ կերպով հիւանդ է: Հիւանդանոց են տանում: Գիշեր է: Հիւանդը զառանցում է: Յիշում մօրը... «Մայրիկ... ջճւր»... շարունակում է զառանցել:—«Նա սկսեց հեկեկալ. դէմքը չը փոխուեց, ոչ մի կաթիլ արցունք դուրս չ'եկաւ. նրա փոքրիկ աչքերից:—Հն հն, հն հն... յանկարծ ջղաձգօրէն հռնաց նա... Կ ՎՅՎԵՍՈ, ՎՅՎԵՍՈ... մայրիկ... մայր...իկ...—Մի քանի ցնցումներ, և նա մնաց անշարժ... Բոլորը քնած էին, ոչ ոք չը տեսաւ նրա մահը»:

Նոյնքան տխուր է և «Գարեջրատանը» վերնադիր կրող էսքիզի բովանդակութիւնը: Երկու երիտասարդ ընկերներ, մէկը՝ աւելի տարիքով ու յոռետես, միւսը՝ նորաւարտ դպրոցական ու լաւատես, ծխով լի սենեակում երկար վիճելուց յետոյ մտնում են մի գարեջրատուն մի փոքր թարմանալու: Նորաւարտը, միւսի ասելով, ցնորքներով է ապրում և չի ճանաչում իրական կեանքը: Գարեջրատանը նա տեսնում է այդ կեանքի մի սովորական պատկեր: Մի ջահէլ օրիորդ, խալուհի, իր պատանի եղբօր հետ փող են վաստակում փողոցային նուազածութեամբ, իսկ երեկոյեան զուարճացնում են գարեջրատան հիւրերին: Գարեջրատունը դեռ դատարկ է, բայց ահա ներս են թափւում մի քանի քէֆ անող տղամարդիկ վաճառող կանանց հետ: Սկսւում է այդպիսի տեղերում սովորական դարձած մի օրգիա: Իրականութիւնը յոռետեսի կողմն է: Չորրորդ էսքիզը կոչւում է «Սև քաղաքում, (վիճակագրութեան օրերից)»: Դարձեալ չքաւորութեան, թշուառութեան տխուր պատկերներ:

Ակնհերև է, որ հեղինակի երևակայութիւնը բնական հա-

կումն ունի դէպի մոայլ գոյները, ջախջախուած իրերը, կոտորած սրտերը, կորացած մէջքերը, հանգած աչքերը և առհասարակ դէպի ամեն ինչ, որ ճնշուած է, աղքատիկ ու թշուառ: Այդ երևոյթները հեղինակը դիտել է ուշադրութեամբ, դրոշմել է յիշողութեան մէջ և կարողանում է վերարտադրել կենդանի կերպով:

Տ. Յ.

Յարութիւն եսայեան՝ «Կեանքի խորհրդից», պատկերներ, 101 եր., դ. 20 կ., Ալեքսանդրօպոլ, 1903:

«Կեանքի խորհրդից»-ը բաղկացած է եօթ հատ պատկերներից.—1) Օբայի հերոսները, 2) Հոգեհացը, 3) Ամմեղ զոհ, 4) Սիրոյ յարութիւն, 5) Բանտարկեալները, 6) Բժիշկը և 7) Շառախօսը:

«Օբայի հերոսները» մի եկեղեցու տօնի բաւական աջող նկարագրութիւն է, որի մէջ երևան է զաւիւս մեր ժողովրդի ստորին դասակարգն իր շատ ցաւերով, մնոտապաշտութիւններով, փչացած ու լաւ կողմերով:

«Հոգեհացը» ներկայացնում է մի նշանած աղայի «զուռնա-դաւալով» թաղումից յետոյ նրա տանը կատարուող քէֆը՝ մեռածի մօր ու նշանածի աչքերի առաջ: Այդ սովորութիւնը կայ Թիֆլիսում, բայց թւում է, թէ այս պատմութեամբ բաւական չափազանցացրուած է:

«Ամեղ զոհ»-ի բովանդակութիւնը հետեւեալն է. Ստեփան Մաճառեանին Գրիգոր աղան տաս հազար ռուբլի է պարտ, բայց Գրիգոր աղան ոչ միայն ուրանում, ժխտում է իր պարտքի գոյութիւնը, այլև Ստեփանի վրէժն է պարտք դնում: Ստեփանը վճռում է միւս օրն սպանել նրան: Գիշերը քնի մէջ դառանցելով՝ նա ուզում է իբր թէ խեղդել Գրիգոր աղային, բայց խեղդում է հարազատ կնոջը: Նրան դատում են և որպէս մարդասպանի՝ դատապարտում տաժանակիր աշխատանքի: Մի քիչ տարօրինակ է թւում հանգոյցի այսպիսի լուծումը:

«Բանտարկեալները» գրուածքում երկու կալանաւորներ իրար պատմում են իրանց բանտարկուելու պատճառները: Մէկըն սպանել է իր տանտիրոջ որդուն, որ փորձ էր արել նրա հաւատարիմ կնոջը բռնաբարելու, իսկ միւսն անաջող փորձ է արել սպանելու «մի ոմն բէալիստ»-ի և իր սիրած աղջկան, որովհետև նրանք յանդգնել էին իրար սիրել կամ գուցէ միայն

սիրախաղութիւն անել. մանաւանդ որ աղջիկը յուսախաբ էր արել նրան և զրկել (?) բարձրագոյն կըթութիւնից, ինչպէս ասում է. «Ձը նայած՝ որ գտնուեցան բարերարներ, ինձ ուղարկելու ուսումնա շարունակելու, բայց ես ընդմիշտ մերժեցի այդ, թողեցի բարձրագոյն ուսում ստանալուս միտքն ի սէր Եւայի, և սպասեցի նրա աւարտելուն, որ ամուսնանանք»:

«Բժիշկը» պատկերում դուրս է բերուած կոպէկի համար հոգին տուող, հարստի առաջ երեքտակ ծալուող, իսկ խեղճ աղքատին շան տեղ չը քնող մի բժիշկ, որը հրաժարւում է այցելել մի աղքատ պառաւի ջարդուած ու հոգեվարքի մէջ ընկած որդուն, մինչև չը ստանայ իր երեք բուլբի այցեղինը: Բժիշկուհիու եկած հիւանդները խղճալով պառաւին՝ իրանց մէջ ժողովում են բժշկի պահանջած երեք բուլբին, բժիշկը վերցնում է այդ փողը, բայց իր այցը կատարում է հետեւեալ օրը միայն, երբ հիւանդն արդէն մեռած է լինում:

«Ճառախօսը» մի անաջող նմանողութիւն է Չեխովի «Հոնտոր» պատմութեան: «Ճառախօս»-ում դուրս բերուած երեւոյթը—ամեն ծակոժուկ մտնել և ճառեր արտասանել—մեր մէջ գոյութիւն չ'ունի:

«Սիրոյ յարութիւնը» կատարւում է դատկի կիրակի օրը: Օ. քաղաքի տներից մէկում ինն հայ ուսանող ողջերթի խնջոյք էին սարքել ի պատիւ իրանցից երեքի, որոնք համալսարանն աւարտած լինելով՝ հայրենիք էին դառնալու: Այդ երեքից մէկըն—Արտէմ Լուսնակեան—խնջոյքը կիսատ թողնելով՝ վերադառնում է իր բնակութեանը հանգստանալու, այնտեղից էլ ուղևորւում ծովափ՝ մաքուր օդ շնչելու: Այդտեղ նա «ակամայ» ընկնում է երազանքի մէջ: Յիշում է իր մանկութիւնը, թէ ինչպէս սիրեց մի աղջկայ և մինչև անգամ չը գնաց բարձրագոյն կըթութիւն ստանալու, այլ «սկսեց հոգալ ամուսնութեան մասին», ճիշտ և ճիշտ այնպէս, ինչպէս քիչ առաջ պատմում էր բանտարկեալներից մէկը միւսին: Բայց այդ աղջիկը փչացած դուրս եկաւ, և Լուսնակեանը խզեց վերջինիս հետ իր բոլոր կապերն ու փոխանակ սպանութեան փորձ անելու և բանտարկուելու՝ «ճանապարհուեց դէպի Ռուսաստան ուսումը շարունակելու... Իսկ օրիորդ Հռիփսիմէ Կուռօնեանը մի քանի ամիս յետոյ անյայտացաւ մի երիտասարդի հետ, և ոչ ոք չ'իմացաւ թէ ուր գնաց նա... Այն օրից անցել էին հինգ բոլորակ տարիներ, և այժմ Արտէմ Լուսնակեանը բոլորովին մոռացած իր առաջին սիրապիտութիւնը, աւարտում էր համալսարանը, և նոր իդէալներով ոգևորուած, վերադառնում էր հայրենիք գործելու համար»: Իսկ առայժմ ուղում էր տուն գնալ, երբ «յան-

կարծ մի խուլ շշուկ և մարդկային ձայն հասաւ նրա ականջներին»։ Նա նայեց շուրջը, բայց ոչինչ չը նկատեց. «Ալիքներն կատաղել են, մտածեց ու շարունակեց քայլել։ Բայց դարձեալ նրա ականջներին հասաւ մի ձայն, որ նման էր կանացի հեկեկանքներին»։ Լուսնակեանը կանգ առաւ, ականջ դրաւ ու դիմեց դէպի ձայնը։ Եւ ի՞նչ... Բանից դուրս եկաւ, որ այն աղջիկը, որի մասին հէնց նոր էր մտածում Լուսնակեանը, ինքը—օրիորդ Հռիփսիմէ Կուռօնեանը—եկել էր Օ. քաղաքը՝ յատկապէս ծովն ընկնելու և խեղդուելու նպատակով, ձանձրացած լինելով իր վարած վատ կեանքից։ Թո՛ղ ընթերցողը չը կարծէ, թէ օրիորդն իմացած լինելով՝ որ Լուսնակեանը Օ.-ում է գտնուում, նրա պատճառով էր այդտեղ եկել, ո՛չ, այդպիսի բան չը կայ, նա գուցէ Լուսնակեանին մտքովն անգամ չէր անցկացրել այդ հինգ տարւայ ընթացքում, այլ եկել էր այդտեղ հէնց այնպէս... Եւ Լուսնակեանը ոչ միայն ազատեց նրան մահից, այլև նրա մէջ յարութիւն առաւ նախկին սէրը մի քանի վայրկեանում, և նա մինչև անգամ կնուծեան առաւ այն փշացած աղջկան, որը սակայն «սկսեց ինքնակրթութեամբ նախապատրաստուել իսկական (ոչ թէ կեղծ) մայր և տանտիկին լինելու համար...»

Պ. Նսայեանի պատկերները խակ են, բայց երևում է, որ երիտասարդ հեղինակը գրելու շնորհք ունի, սակայն անփորձ լինելուց՝ նրա գրչի արտադրութիւնները զատ-զատ դէպքերի նկարագրութիւններ են և զեղարուեստական ամբողջութիւն չեն կազմում. հարցերը շօշափուած են թուղթիկ կերպով, մակերևոյթօրէն, տիպի ամենատարրական ուսումնասիրութիւն անգամ չը կայ։ Լեզուն անմշակ է, խառըն օտար—մանաւանդ թուրքերէն—բառերով։ Բերենք մի քանի օրինակներ. «Հին մօղայի տարազով» (մողա հէնց տարազ է նշանակում. ուրեմն եթէ եւրոպական բառը թարգմանենք հայերէն, դուրս կը գայ այսպիսի բան.—«հին տարազի տարազով»... Զը լինի՞ թէ խօսքը մեր հին «ճարազ» թերթի նոր տարազի մասին է. բայց այդ դէպքում պէտք էր «տարազ»-ներից մէկն ու մէկը չակերտներում դնել և գրել գլխատառով). «մի խօսքով հասարակ դասակարգի համար մեծ եղելութիւն է». «դէ հիմայ դու տես թամաշէն, խալիւն էլ էս էր ուզում... Կանայք հեռու փախան, իսկ տղամարդիկն էլ չէին ուզում նրանց բաժանել.—այլ հեռու կանգնած ծիծաղում էին այդ տեսարանի վրայ» (15 եր.). «Ջիբգիր», ուրիշ մի քանի տեղ՝ «գրպանահան» (փոխանակ «գրպանահատ» գրելու). «բաղալ» (մրգավաճառ կամ նպարավաճառ). «նաղարա» (թըմ-

բուկ)։ «գալլաք» (սափրիչ)։ «տակսա կամ սակագին» (չէ՞ որ տակսա հէնց սակագին է նշանակում, էլ ի՞նչ կամ է)։ «մուշտարի»։ «դուխի»։ «բոնաւոր» (կալանաւոր բառի իմաստով!), և այլն և այլն։ Այլ բան է, եթէ այս բառերը ժողովրդի բերանից հնչելիս լինէին, բայց գործ է ածում ինքը հեղինակը։

Թիֆլիսի բարբառով արտայայտուած տեղերը խճողուած են գրական լեզուով և ուրիշ գաւառաբարբառով. «Ան հոգիս առ, Աստօձ, ան ազատիր էս վիճակից, իմ էրէսս քու ոտին տակին» (20 եր.)։ «հերիք լաց ըլիս, մենք ըստի, էս աշխարքումս ենք քէֆ անում, որ Օսէփն էլ հրկնքումը քէֆ անի» (29 եր.), և այլն։

Սրբագրութիւնն անտանելի է. գրաշարի և սրբագրչի ձեռքի տակ «ազովկատին» խօսքը յանկարծ դարձել է «այդ վախկոտին»։ մինչև անգամ վրիպակները սխալ են տպուած. «տպած է՝ ջերմաւանդութեամբ, պէտք է լինի՝ ջերմեռանդութեամբ», իբր թէ հրկրորդ բառն աւելի ճիշտ է, քան առաջինը...

Ա.Թ.Ա.

«Հռովմայեցի իմաստ. Էպիկտետի կեանքն ու վարդապետութիւնը», Թաղմ. Զաւեն վարդապետ. 1903թ., Վաղարշապատ.

Քաղցածին հաց պէտք է տալ, ծարաւին ջուր. սրանք յաւիտենական ճշմարտութիւններ են։ Ծարաւի համար մի ամբողջ դասախօսութիւն բարեգործութեան մասին չ'արժէ մի կաթիլ ջուր։ Մենք ճիշտ այդ դրութեան մէջ ենք։ Ընթերցող հայ հասարակութիւնը կարիք ունի ժողովրդական ընթերցանութեան յարմար գրքերի, իսկ մենք առաջարկում ենք այդ ծարաւն յագեցնելու համար ոչ թէ մարսական, այլ կոշտ ու մոշտ բաներ, որ ըկին կանգնի ներս չ'երթայ։ Ահա այս տպաւորութիւնն ստացանք Էպիքտետի գրքի հրատարակութիւնից։ Էպիքտետի իմաստութիւնը լաւ էր իր ժամանակի համար։ Մեր մատաղ սերունդը նրա երբեմն այլանդակ (ներկայ հասկացողութեամբ) խորատներին կարօտ չէ և Աստուած չ'անի որ նրանով ղեկավարուի։ Այդ սերունդի և երիտասարդութեան համար ի՞նչ գեղեցիկ դաս է «Չասես թէ փնասուեցի, երբ փոխես էլը ձիու, ոչխարը եղան... այդպիսի դէպքերում աւելի ես օգտուում, քան փնասում։ Եթէ այդ չես հասկանում, չես հասկանում և քո բախտաւորութիւնը, երջանկութիւնը» *) (36 երես)։ Ներկայ լեզ-

*) Այդ հատումը «Բարեգործութիւնը կորուստ չէ» գլխից ենք բաղել։

ւով այդպէս վարուողը բախտաւոր և երջանիկ չի կոչուում, այլ խարերայ և խարդախ. և այդպիսի մի վարուողութեան համար շատ հեշտութեամբ կարող է մեղապարտաների նստարանի վրայ նստել: Մեր մատաղ սերունդը այդ գրքից պիտի սովորի, թէ հանոյելը, հօր չար լինելը, հիւանդութիւնը օգտակար բաներ են, որովհետեւ տանելով այդ բոլորը, մենք համբերութեան ենք վարժուում (44 երես): Մի ուրիշ տեղ (53 եր.) խորհուրդ է տալիս, որ մի ամբողջ դասախօսութիւն կարդաս մօտդ եկած հիւանդները և անտէր աղքատների գլխին թէ, «բարիք փնդըռել հարկաւոր է ոչ թէ իրենից դուրս, այլ հէնց իրեն մէջ»: Մի այլ տեղ (56 երես) «մեզանից իւրաքանչիւրի բարիքն իր խելացի ապրելու մեջն է—իսկ չարիքն ընդհակառակը... եթէ այս մենք շատ լաւ հասկանանք, այն ժամանակ ոչ ոքի հետ երբէք ոչ կը վիճենք և ոչ էլ կը թշնամանանք»: Մի անմիտ խրատ էլ քերենք և վերջ տանք (102—103 երես). «... ցանկանում է Նա (Աստուած), որ ես դողացնեմ, ես ես ցանկանում եմ այդ. կամենում է Նա, որ գործեմ, անեմ այս և ոչ թէ այն, ես էլ նոյնն եմ ցանկանում. կամենում է Նա, որ ինձ հետ (հայերէն ասում են ինձ պատահի և ոչ թէ ինձ հետ) մի որեւիցէ բան պատահի, ես էլ նոյնն եմ ուզում»...

Այսպիսի գրքերի թարգմանելն ու հրատարակելը թէ որ բոլորովին անեղծորդ չէ, այն ժամանակ գոնէ շոայլութիւն է, որոհետեւ դեռ շատ հարկաւոր և օգտակար բաներ կան, որ չ'ունենք: Թարգմանութեան լեզուն լաւ է, թէև տեղ-տեղ ուսական ոճի ազդեցութիւն երևում է: Կրճատումները տեղ-տեղ արուած է այնպէս, որ կապը չէ պահպանուած: Դիմել 40 կոպ. է, որ չ'արժէ:

Ա. վ. Ղ.

Յակոբ Կարնեցի՝ «Տեղագիր Վերին Հայոց», Կ. Կոստանեանց, 1903 թ. Վաղարշապատ.

«Տեղագիր Վերին Հայոց» գրքոյկը տաանեօթերորդ դարու մի յիշատակարան է, ուր հեղինակ Տէր Յակոբ Կարնեցին տեղադրել է Արզրումի կուսակալութեան—իր ժամանակի—23 գաւառները: Տեղագրութեան մասին այն հասկացողութիւնը որ այժմ մենք ունենք, անծանօթ է Կարնեցուն: Համառօտակի հկարագրելով ամեն մի գաւառ շատ քիչ գէպքում է գաւառներէ բերքերը միառմի յիշում. արդիւնաբերութեան մասին նրա տուած տեղեկութիւնները շատ սեղմ են, իսկ ազգաբնա-

կութեան թիւ ամենեին չի տալիս համարեան թէ: Իբր քահանայ՝ չի մոռանում վանքերն ու եկեղեցիները ու սրբոց մասունքները: Չընայելով այդպիսի սեղմ, համառօտ տեղեկութիւններին երկրի արդիւնաբերութեանց մասին, այնուամենայնիւ երկրի տնտեսական վիճակի մասին որոշ գաղափար է տալիս: Խօսելով առանձին էրզրումի մասին խառնում է և ժամանակակից դէպքերը և երկրի դրութիւնը, հալածանքները: Կարնեցուց իմանում ենք, որ իր ժամանակին որեւէ կուսակալութիւն մի փաշայի էր տրւում կառավարելու անսահման իրաւունքներով, իւր սեփականութիւն: Ինքը Կարնեցին «կեր» և «կերուածք» բառերով ամենից լաւ է բնորոշում փաշայի իրաւունքներն ու երկրի քաղաքական վիճակը, որ ներկայ դրութիւնից շատ էլ տարբեր չէ:

Գիրքը լուսարանուած է ծանօթութիւններով, որ կցուած է վերջին: Կայ յատուկ անուանց ցանկ: Գրքի գինը չէ նշանակուած վրէն: Հրատարակութիւնը եղել է խնամքով և մաքուր:

Ա. Վ. Ղ.

Գիւ *) դր-Մոպասանի «Գեղեցկուհու խոստովանութիւնը և հանգուհալի գաղտնիք» թարգմ. ու. Երուանդ Տէր-Յովհաննիսեանցի. 1903 թ. Բազում. գինն է 10 կոպէկ:

Գի դը Մոպասան՝ Գիւստաւ Ֆլոբերի աշակերտը՝ իրապաշտ (réaliste) դպրոցի ցայտուն դէմքերէն մէկն է: Ֆլոբերի, Ալֆրէն Դոդէի, Գոնկուո եղբայրներուն հետ Մոպասանը՝ իրապաշտ դպրոցի գլխաւոր ներկայացուցիչներէն մէկը եղաւ: Մոպասանը՝ իր գրչի տաղանդաւոր ընկերներէն այն բանով կը տարբերի որ իր ոճը՝ ոչ Ֆլոբերի շքեղութիւնը, ոչ Դոդէի նուրբ հեգնութիւնը, և ոչ Գոնկուո եղբայրներէն չարչրկուած՝ տպաւորական (impressionniste) նկարագիրն ունի: Մոպասանը ժուժկալ, ուժեղ, գրեթէ դասական լեզուով մը իրապաշտ պատմուածքներ գրած է, ուր ապշեցուցիչ ճշտութեամբ մը կը նկարագրէ գեղջուկներու, մանաւանդ նորմանդիացի գեղջուկներու բարքերը, պղտիկ բուրժուաներու և զործակատարներու (employé) նիստ ու կացը, անոնց ապրելու, զգալու, խորհելու եղանակները: Մոպասանը բացի պատմուածքներէ ունի մէկ

*) Guy de Maupassant պէտք է կարդալ Գի դը Մոպասան և ոչ թէ Գիւ. Ֆրանսերէնի մէջ *g* տառի մօտ դրուող *u* տառը չի հնչուիր:

քանի վէպեր, ինչպէս Une Vie, Bel Ami, Notre Coeur, Pierre et Jean. Բայց ինքը նշանաւոր է իբրեւ պատմող, պատմուածքներ գրող:

Մոպասանի պատմուածքները՝ հայերէնի թարգմանուած են մասամբ: Պ. Երուանդ Տէր-Յովհաննիսեան մեղի կու տայ երկու նոր պատմութիւններու թարգմանութիւնը: Մոպասան շատ ու շատ պատմուածքներ ունի գրած. բոլորը թարգմանել, կարծենք, միտք չ'ունի. որովհետեւ եթէ Մոպասանը ունի հիւսնալի պատմուածքներ, ունի և այնպիսիները, որոնք շատ քիչ հետաքրքրութիւն կարող են արթնցնել մեր մէջ: Վախնամ պ. Տէր-Արդէասեանի թարգմանածները այդ տեսակներէն ըլլան:

Ահա քանի մը բառով Գեղեցկունու խոստովանութիւնը: Բրբտանեցի կոմս մը՝ իր կնոջ մասին կասկածներ ունի: Կինը թէն իր ամուսինը չի սիրեր, բայց անոր հաւատարիմ է: Կոմսի կասկածները կը ծագին պահապանէն որը միշտ, գիշեր ժամանակ, մէկու մը գաղտագողի գնալ դալը կը նկատէ: Պահապանը՝ գիշերային այցելուն՝ կոմսի կնոջ սիրահարը կը կարծէ: Կոմսը կը վճռէ սարսափելի վէժ լուծել:

Անգամ մը, երբ ընթերիքը վերջացուցած էին, կոմսը իր կնոջ կը հարցնէ թէ չ'ուզե՞ր արդեօք իրեն ընկերանալ, «որպէս զի սպաննն ամէն գիշեր իր հաւերը գողացող աղուէսին»: Կինը վայրկեան մը տատանելէ յետոյ, կ'ընդունի ամուսնին առաջարկը: Կը դիմեն որոշուած տեղը ու դարանի կը մտնեն: Կը սպասեն. յանկարծ «ամուսինս բռնելով ձեռքս, բոլորովին փոխուած ձայնով ասաց. «Տեսնո՞ւմ էք ծառերի ետեւ նրան»: Ես սկսեցի դիտել, բայց ոչինչ չը կարողացայ նշմարել: Երկէն անընդհատ աչքերիս մէջ նայելով սկսաւ դանդաղ բարձրացնել հրացանը: Ես ինքս ևս պատրաստուում էի հրացանս պարպել, երբ նկատեցի երեսուն քայլաչափ հեռաւորութեան վրայ լուսնու լուսով լուսաւորուած մի մարդու»:

Ահա այդ էր աղուէսը: Կինը անմիջապէս կը հասկնայ. կ'ուզէ աղմուկ բարձրացնել, բայց գնդակը կը մեկնի ու գետին կը գլտորէ անծանօթը:

Սպանուողը՝ փոխանակ տանտիրուհիին հաւերը գողնալու, աղախինն հաւերը կը գողնար ամէն գիշեր: Կոմսը սպաննեք էր, խաբուելով պահապանէն, իր աղախինն սիրահարը:

«Եւ հէնց այդ վայրկեանից ես հասկացայ, որ պիտի անհաւատարիմ գտնուեմ դէպի իմ ամուսինս» կը վերջացնէ գեղեցկունին իր խոստովանութիւնը:

Հանգուցեալի գաղտնիքը.— Կը մեռնի մալըր, ու զաւակները անոր մամնին շուրջը հաւաքուած՝ կը սգան: Օ՛, որքան

քարի էր իրենց մայրը ու որքան պարկեշտ: Լաց ու կոծեր է յետոյ քոյրը իր եղբորը կ'ըսէ.

«Դու գիտե՞ս, թէ ինչպէս մայրիկը սիրում էր կարգալ իր հին նամակները. նոքա բոլորը այստեղ պահարանումն են, և արդեօք լաւ չէ՞ր լինի որ մենք ևս այս գիշեր կարդանք վերջին անգամ նրա մօտ և մի անգամ ևս վերակենդանացնենք նորա ամբողջ անցեալը. դա կը լինէր մի միջոց, որ կը յիշէինք գոնէ վերջին անգամ նորա մօրը և մեր անծանօթ նախորդներին, որոնց նամակներն այստեղ են գտնուում, և եթէ յիշում ես, որոնց մասին նա յաճախ խօսում էր»:

Ու արկղէն հինցած, դեղնած նամակի ծրարները կը հանեն ու յաջորդաբար նամակները կը կարդան: Կը վերցնեն ծըրար մը, որուն վրայ ոչինչ գրուած չէ. կը բանան ու կը գտնեն այսպէս խօսքեր. «Իմ պաշտածս, ես քեզ սիրում եմ խելագարի նման... ես զգում եմ թէ ինչպէս շրթունքներդ գիպչում են իմ շրթունքներին, աչքերդ՝ աչքերիս, մարմինդ՝ մարմնոյս կայլն»:

Եղբայրը՝ քրոջ ձեռքէն կը խլէ նամակը. կը նայի ստորագրութեան՝ «Հէնրիկ»: Իրենց հօրն անունն էր սակայն Ռընէ: Ուրեմն այդ նամակը իրենց հօրմէն չէր: Քոյր ու եղբայր ապշութենէն կը քարանան: Եղբայրը քրոջը կ'ըսէ.

«Այժմ քոյրիկս հեռանանք այստեղից»:

Թարգմանութիւնը՝ իր արատներով հանդերձ տանելի է. մարդ այս լեզուն՝ աւելի գիւրութեամբ կը կարդայ քան զբարբի և աշխարհարարի խառնուրդ charabia-ն:

Թարգմանութիւնը կատարուած է սակայն, փոխանակ բնագրի վրայէն՝ ռուսերէնից:

ԶԱԻՆ

Պոլ Բուրժէի «Մի խոսուվանութիւն» վէպիկ թարգմ. Փրանսերէնից ն. Յարոյ. 1903 թ. Թիֆլիզ գինն է 15 կ.:

Պոլ Բուրժէ՝ Ֆրանսայի այն գրողներէն է, զորս կարելի է քնորոշել միակ բառով մը—«սալոնական»: Պոլ Բուրժէ գրականութեան գիլետանտ մը, սիրող մըն է: Ստեղծագործութեան պէտքը՝ իր մէջ կիրք մը չէ, ինչպէս Միլըօի մը, Զոլայի մը, Բօլ Ատանի մը, Ֆրանսի մը մէջ: Ինքը աշխատած է վերլուծել կարգ մը հոգեբանական կնճիռներ, որոնք անտարբեր պիտի թողէին բուն ժողովուրդը, ժողովրդական անկեղծ, խորունկ գրականութեան մը սիրահարները:

Պոլ Բուրժէի մէջ որոշ համոզմունքներու, հաստատուն աշխարհայեցողութեան մը բացակայութիւնը՝ զինքը՝ հոգեկան այլևայլ, մանաւանդ հակասական՝ վիճակներու առաջնորդած է:

Սկիզբները՝ Պոլ Բուրժէ սկեպտիկ էր. այսօր անիկա ջերմեռանդ հաւատացող մը, մոլեռանդ կաթոլիկ մըն է:

Իր «Մի խոստովանութիւն» վէպիկը, զոր թարգմանած է պ. Ն. Յարոյ, դժգոյն նմոյշ մըն է իր մշակած գրական սեռին. այնտեղ դուք պիտի գտնէք Բուրժէի ոճին կապարեայ ծանրութիւնը, հոգեբանական վերլուծումներու մէջ սովորաբար գործ դրած չոր ու ձանձրալի մեթոդը: Վէպիկին նիւթն արդէն հեռու է ընթերցողին մէջ գեղեցիկ տրամադրութիւններ արթնցնելու: Թարգմանութեանց պէտքը՝ մեր մէջ, աւելի քան երբեք ստիպողական է ու անհրաժեշտ. բայց ժողովուրդը կերակրել այդ տեսակ սնունդներով պարզապէս անիմաստ է ու վնասակար:

Թարգմանութիւնը կատարուած է անբաւարար կերպով. թարգմանչի ոճը գրաբարի արատներով լեցուն է. օրինակ «առաջին նուագ»—առաջին անգամ ըսելու տեղ—«փանակի կեանք», «մերժել է այլոց», «ողորմելի ծնանելին», «երկիւղածութեամբ առանելեալ ձայն» ևայլն ևայլն:

Կան և խորթ, աղճատ ձևեր. ինչպէս. անփախչելի ոճիր», «թացուած ու գաղջ մարմին» ևայլն:

Շատ կան այս տեսակ նախադասութիւններ. «Հիւրանոցի հազիւ արթնցած կենդանի վարձուորների ու դեռ սակաւամարդ առնթներ հրապարակի լռութեան միջոցին»...

Ահաւասիկ վէպիկ մը, զոր խորհուրդ կուտայինք կարդալ բոլոր անքնութենէ տառապողներուն:

ԶԱԻՆՆ

Ե. Թովյեանի՝ 1903 թ. համար կազմած «Լոյս» օրացոյցները. գրպանի՝ 266 երես, գինը 20 կ., պատի՝ 732՝ երես, գինը 50 կոպէկ և սեղանի՝ 504 երես, գինը 1 ըուբլի:

Գրական ոչ մէկ գործ՝ այնքան մեծ ծաւալով կը տարածուի ժողովուրդին մէջ, որքան օրացոյցը: Անիկա կը մտնէ հարուստին ինչպէս աղքատին, քաղաքացիին ինչպէս շինականին տան սեմէն ներս: Ուրեմն, ինքնին հասկանալի է, թէ սրճափ մեծ նշանակութիւն ունէր մասնաւորապէս մեղ, հայերուս համար, օրացոյցային գրականութիւնը: Այդ գրականութիւնը

կարող էր ըլլալ հայ տգէտ, նախապաշարուած ժողովուրդին համար բարիք, եթէ առողջ, ազնիւ ու օգտակար նիւթերով ժողովուրդը մոռցանէ և զարկ չը տայ անոր նախապաշարմունքներուն ու մոտիապաշտութեան: Պոլսի Ազգային Հիւանդանոցի օրացոյցը այդպիսի օգտակար հրատարակութիւններէց էր: Ռուսահայերը այդպիսի օրացոյց կարող են համարել պ. Թոփչեանի հրատարակած՝ զրպանի, պատի և սեղանի օրացոյցները: Մի թերութիւն, որ նկատելի է Պատի օրացոյցի մէջ, այդ առաջ բերած առաձներն և «ընտիր մտքերն» են. մեզի ներկայացուած ընտիր մտքերու մեծ մասը՝ սովորական դատողութիւններ են, օրինակ «Թմրած ու քնած են մեր ինտելիգենտները», «մեր ժողովրդին ընթերցանութիւն է հարկաւոր», «Ընչ սև գարդեր չէ տեսել հայը»: Ու տակաւին շատ ուրիշներ:

Ամենէն շահագրգիռն սեղանի օրացոյցն է, որը տեսակ մը ժողովածու է գրական, գեղարուեստական, ժամանակագրական և ուրիշ օգտաւէտ ծանօթութիւններու: Մասնաւորաբար այստեղ, ջանացած է նմանիլ եւրոպական համապատասխան հրատարակութեանց ու յաջողած է անշուշտ այն չափով, որը թոյլ կուտային միջոցները:

Օրացուցական բաժնէն յետոյ կան կարգ մը բաժիններ ինչպէս տեղեկատու, խորհրդատու, վիճակագրական, տընտեսագիտական, կրօնագիտական, դպրոցական, հանրագիտական, պատմագրական և ուրիշ բաժիններ, ուր ընթերցողը պիտի գտնէ իւրաքանչիւր բաժնի յատուկ հետաքրքիր և նպատակայարմար տեղեկութիւններ և ծանօթութիւններ: Այդ բաժիններէն զատ կան մի քանի ուրիշներ, որոնք բաւական ուշագրաւ են. օրինակ, Հայերը վերնագրով բաժինը, ուր Պարսկաստանի, Պարսկական Քիւրդիստանի, Բուլղարիայի, Ամերիկայի, Կովկասի հայերու մասին խօսուած է ամփոփ ու հակիրճ կերպով: Միայն թէ, զարմանալի է, որ պ. Թոփչեան մոռցած է հայութեան կարևոր հատուածներէն մէկուն՝ Թուրքահայերու մասին յօդուածը: Մենք հայերու փոքրիշատէ կարևոր բոլոր բաժանումներուն վրայ տեղեկութիւն կը գրանենք, իսկ ամբողջ Թուրքիայի հայերու մասին ոչ մէկ խօսք:

Վէպ եւ քանաստեղծութիւն եւ Օտար զրականութեան բաժինն կարող էին և աւելի մեծ ընտրութեամբ կազմուել: Կենսագրական յօդուած կայ և տիկին Սիրանոյշի մասին: Ինչպէս մեր ընթերցողներուն յայտնի է, այս տարի կը լրանայ մեր տաղանդաւոր դերասանուհիին 30 ամեայ գործունէութեան յօբելեանը: Մենք չը գիտենք թէ թատերական վարչութիւնը կը խորհի՞ արժանաւոր ցոյցով մը մեծարելու հայ բեմի այդ Դեկտեմբեր, 1903.

գեղեցիկ զարդը, բայց պ. Թովչեան հրատարակելով անոր պատկերն ու համառօտ կենսագրութիւնը, արժանի յարգանք մը մատուցած է տիկին Սիրանոյշի տաղանդին:

Օրացոյցը ունի ժողովրդական երկու նոտագրուած երգեր. «Սարէն կու գայ ձիաւոր» և «Օ՜յ նազանըմ»:

Օրացոյցի չորս վերջին երեսները զարդարուած են գունատիպ պատկերներով:

Ահա իր թերութիւններով և առաւելութիւններով պ. Թովչեանի կազմած օրացոյցները: Ապագային պ. Թովչեանն, անկասկած՝ պիտի կատարելագործէ իր հրատարակութիւնները, որոնք ամէն կերպով արժանի են ջերմագին քաջալերութեան:

ԶԱԻՆ

Տիկին Սվաճեանի նորավէպերը (*Marie Sevadjan: Nouvelles, Traduites par Frédéric Macler*)

Տիկին Մարի Սվաճեանի նորավէպները որոնք հրատարակուած են մեծ մասամբ՝ Պոլսոյ «Հայրենիք»ին մէջ և երկու հատ ալ «Անահիտ»ին մէջ, մեր հասարակութեան կողմէն միշտ գտած են շատ համակրական ընդունելութիւն մը՝ իրենց բնական, կենդանի, պարզ ու վճիտ ոճովը, պատմուածքի հակիրճ ու ինքնատիպ ձևովը, և զգացմանց եւրոպական նրբութեամբն ու վառվռունդութեամբը: Պ. Ֆրետերիք Մաքլէր ծանօթ հայագէտը, այդ նորավէպներէն ֆրանսերէնի թարգմանած է 15 հատ և հրատարակած է այս օրերս սիրուն հատորով մը:

Թարգմանուած նորավէպներն են՝ «Ապարանջանը», «Կելին», «Գուշակը», «Հին Հաւատք», «Հոլիտէյ», «Կտոր մը հացի համար», «Շլիցա Շլուխթ», «Մանուշակի թաղարը», «Գրաւը», «Բարեկենդանի կատակ մը», Սիթարը» (հրատարակուած «Հայրենիք»ի մէջ), «Թութը» (հրատարակուած «Նոր Կեանք»ի մէջ) և «Մահու արհաւիրք» ու «Սամսին» (հրատարակուած «Անահիտ»-ի մէջ):

Պ. Մաքլէր գիտցած է իր թարգմանութեան մէջ պահպանել բնագրին ամբողջ շնորհն ու կենդանութիւնը: Վստահ ենք որ այս հատորը սիրուն ընդունելութիւն մը պիտի գտնէ ֆրանսական հասարակութեան կողմէ: Կը յուսանք որ մեր ֆրանսագէտ զբասէրները իրենց համար մեծ հաճոյք մը պիտի նկատեն օրինակ մ'ունենալ այս հատորէն: Գինն է 2 ֆր. 50:

«Անահիտ»

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ծխախոտի արդիւնաբերութիւնը Անդրկովկասում

Ծխախոտը վաղուց արդէն մուտք գործելով Անդրկովկասում և հետզհետէ տարածուելով, մի քանի տեղերում ազգաբնակչութեան գլխաւոր պարապմունքն է դարձել:

Անդրկովկասի մի քանի մասերը շնորհիւ իրանց կլիմայական և հողային առանձնայատկութիւնների մեծ յարմարութիւններ և բաւականին նպաստող պայմաններ ունին ծխախոտի արդիւնաբերութեան արագ զարգացման համար. այդպէս են առաւելապէս Բուլթայիսի նահանգը՝ Սև ծովի ափերի արգաւանդ հողերով և Ալազանի հովիտը՝ Թիֆլիզի նահանգում: Շնորհիւ այդ նպաստող հանգամանքներին այս տեղերում աւելի մեծ է ծխախոտի արդիւնաբերութիւնը և աւելի արագ է առաջ գնում ու ծաւալւում նա, քան Անդրկովկասի միւս մասերում:

Բացի բարեյաջող հանգամանքներից Բուլթայիսի նահանգի ծխախոտի արդիւնաբերութեան մեծ զարկ տուին 1878 թ. յետոյ Տրապիզոնից, Սամսոնից և Համշէնից եկած հայերը, որոնք հմուտ լինելով Թիւրքիայում մշակուող ծխախոտի արդիւնաբերութեան ձևին, կարճ ժամանակամիջոցում Սև ծովի ափերի բերրի հողերի վրայ մեծացրին ծխախոտի արդիւնաբերութեան ծաւալը և լաւացրին նրա որակութիւնը: 1895 թ. յետոյ Թիւրքիայից փախած նոր հայ գաղթականները միանալով իրանց հայրենակիցների հետ բնակութիւն հաստատեցին գլխաւորապէս Սուխումի շրջանում և բացառապէս սկսեցին պարապել ծխախոտի արդիւնաբերութիւնով: Այժմ Սև ծովի ափերի ամենալաւ ծխախոտի պլանտացիաները մշակւում են հայերի ձեռ-

քով: Բացի հայերից Քութայիսի նահանգում ծխախոտով զբաղում են թուրքերը, վրացիները և մասամբ արևազներն ու Տրապիզոնից զաղթած յոյները:

Անդրկովկասի մնացած մասերի ծխախոտի արդիւնաբերութիւնը, բացի Ալազանի հովտից, աւելի աննշան է և ծխախոտը ցածր տեսակից:

Ծխախոտը, չը նայելով գիւղատնտեսական միւս բոյսերից աւելի հողը յագեցնող և ուժասպառող իր յատկութեան, շնորհիւ շահաւէտութեան սկսում է միւս բոյսերի հետ մրցել, բռնելով նոցա տեղը. նրա արդիւնաբերութիւնը արագ տարածւում է մինչև իսկ աֆսիսի տեղեր, որտեղ բոլորովին ծանօթ չեն այդ բոյսի մշակման ձևի հետ:

Անդրկովկասի 8860 գիւղերից 1901 թւին ծխախոտ են ցանել 1560 գիւղ, իսկ մի տարուց յետոյ այն է՝ 1902 թ. այդ գիւղերի թիւը հասել է 1646-ի:

Աւելանալով արդիւնաբերողների թիւը, բնական է, որ աւելացել է արդիւնաբերութեան քանակութիւնը, պլանտացիաների թիւը և նոցա բռնած տարածութիւնը. այսպէս 1897 թւին ծխախոտ ցանուած է եղել 3684₈ դեսեատինի վրայ, և ստացուած է 205,222 պուդ զանազան տեսակի ծխախոտ, և այդ տարուայ բերքը եղել է միջին թւով դեսեատինից 55₁ պուդ: Իսկ 1902 թ. ստացուած է 321,028 պուդ ծխախոտ 5372₂ դեսեատինից, միջին բերքը եղել է մի դեսեատինից 59₁₅ պուդ. այսինքն 6 տարուայ ընթացքում արդիւնաբերութիւնը համարեա կրկնապատկուել է: Ծխախոտի պլանտացիաների թիւը թէև շատ է, բայց պէտք է ասել, որ առհասարակ իւրաքանչիւրը նոցանից այնքան էլ մեծ տեղ չէ բռնում. միայն Սուխումի շրջանում մի քանի պլանտացիաների մեծութիւնը հասնում է 5—11 դեսեատինի, իսկ Անդրկովկասի միւս կողմերի պլանտացիաների մեծութիւնը քիչ բացառութեամբ հաւասար է 1 դեսեատինի, յաճախ դեսեատինից շատ պակաս: Քութայիսի նահանգում ծխախոտի արդիւնաբերութիւնը զարգացած է զլիսաւորապէս ծովափնեայ շերտում—Սուխումի, Արզուինի, Բաթումի, Օզուրգետի շրջաններում. բայց ամենաաջող պայմանները ունին առաջի երկուսը, իսկ վերջին տեղը բռնում է Օզուրգետի շրջանը, որտեղ օդի խիստ փոփոխութիւնները և չափազանց խոնավութիւնը տալիս են վատ տեսակի ծխախոտ, որը գնահատուում է աւելի էժան:

Քութայիսի նահանգի 1603 գիւղերից ծխախոտի արդիւնաբերութիւնով 1902 թւին զբաղուել են 917 գիւղ. ծխախոտ ցանուած է եղել 4147 դեսեատին հողի վրայ, և ստացուած է

220,236 պուղ ծխախոտ: Այս քանակութիւնից 82⁰/₁₀₀ ստացուած է Սուխումի շրջանից, 11⁰/₁₀₀ Արդուինի, 3⁰/₁₀₀ Օզուրգետի, 2⁰/₁₀₀ Բաթումի, իսկ նահանգի մնացած տեղերից 0⁰/₁₀₀: Այդ տարուայ բերքից տեղական ժողովուրդը իր համար ցանած է եղել 2256 պուղ, իսկ մնացած 217,980 պուղը վաճառելու նպատակով: Ուղարկուած է գլխաւորապէս Սուխում քաղաքը, որը այս նահանգի ծխախոտի շտեմարանն է համարուում, և ծախուած է պուղը 5—20 բուբլու: Այս նահանգի արդիւնաբերութիւնից 163,238 պուղ արտահանուած է գլխաւորապէս Ռուսաստան, իսկ 16378 Անդրկովկասի միւս մասերը, այսինքն 12 անգամ քիչ, քան արտահանուել է Կովկասից դուրս:

Թիֆլիզի նահանգի արդիւնաբերութիւնը ընդհակառակը գործադրուում է բացառապէս տեղական գործարաններում: Թիֆլիզի նահանգի ծխախոտի արդիւնաբերութիւնը կենտրոնացած է գլխաւորապէս Ալազանի հովտում, իսկ մնացած գաւառամասերում նա շատ քիչ է զարգացած: Այս նահանգի 2193 գիւղերից ծխախոտի արդիւնաբերութեամբ զբաղուել են 1902 թւին 237 գիւղ. ցանուած է 735⁸/₁₀₀ դեսեատինի վրայ և ստացուած է 58539 պուղ: Արտահանութեան համար ծխախոտ մատակարարել են գլխաւորապէս Ալազանի հովիտը, Բորչալուի և Հնչին քանակութեամբ Ախալցխայի, Ախալքալաքի և Գորիի գաւառամասերը, իսկ մնացած տեղերում համարեա ցանքս էլ չի եղել: Վերջիններում, նամանաւանդ, Ախալքալաքի, Ախալցխայի և Գորիի շրջաններում մեծ մասամբ տեղական ժողովուրդը գործ է ածել իր կարիքների համար և եղած ծխախոտն էլ վառ տեսակիցն է եղել: Իսկ Ալազանի հովիտը արտահանել է գլխաւորապէս Թիֆլիզ, որտեղ ծախուել է 5 բ. 70 կ. մինչև 9 բ. 50 կոպէկով պուղը:

Այս երկու նահանգներից յետոյ երրորդ տեղն է ընդում Գանձակի նահանգը, որ 1617 գիւղերից 1902 թ. այդ արդիւնաբերութիւնով զբաղուել են 124 գիւղ և 181⁸/₁₀₀ դեսեատինից ստացուած է 22467 պուղ ծխախոտ, գլխաւորապէս Նուխու գաւառից, իսկ Հնչին քանակութեամբ Գանձակի, Զանգեզուրի, Արէշի և Զիւանշիւրի գաւառներից: Այս նահանգի ծխախոտը չի կարող մրցել առաջինների հետ իր վառ յատկութեան պատճառով և գործադրուում է մեծ մասամբ իր տեղում, միայն մի մասը արտահանուում է Թիֆլիզ, պուղը ծախուում է 4 բ. 50 կ. մինչև 7 բ. 20 կ.:

Անդրկովկասի միւս մասերի՝ Երևանի, Բազուի նահանգների, Կարսի և Զաքաթալայի շրջանների ծխախոտի արդիւնաբերութիւնները Հնչին են և ծխախոտի տեսակը վատ. այս տե-

դերի 3447 գիւղերից 1902 թ. ծխախոտ ցանել են 338 գիւղեր և 307 դեսետախից ստացուած է ընդամենը 15646 պուղ, որը և գործադրուել է իրանց տեղերում, բացի Բագուայ նահանգը, որ մասամբ արտահանել է Բագուայ գործարանները:

Անդրկովկասում 1902 թ. ծխախոտի արդիւնաբերութիւնով զբաղուող բոլոր 1646 գիւղերից 966 գիւղ ցանել է ծխախոտ իրանց կարիքների համար քիչ քանակութեամբ, մօտաւորապէս 3505 պուղ, իսկ մնացած 650 գիւղեր ցանել են յատկապէս արտահանութեան համար, և ստացուած է 317, 523 պուղ. այս բոլորից 280,866 պուղը եղել է բարձր տեսակից: Բարձր տեսակից ստացուած է գլխաւորապէս Սամսոն, Տրապիզոն, ամերիկական տեսակներ և դիւպակ:

1902թ. ամբողջ արդիւնաբերութիւնից արտահանուած է Կովկասից դուրս 666,360 պուղ, գլխաւորապէս Պետերբուրգի, Միջին և Հարաւային Ռուսաստանի նահանգները, քիչ քանակութեամբ Ֆինլանդիա, Անդրկասպեան երկիր և Պարսկաստան, իսկ մնացած մասը արտահանուել է Անդրկովկասի գլխաւոր քաղաքները և գործադրուել է գոյութիւն ունեցող 15 գործարաններում, որոնցից 5 թիֆլիզում, 2 Բագում, 1 Քութայիսում, 2 Բաթումում, 1 Ախալցխայում, 3 Նուխում և 1 Շամախում են գտնւում:

Այս գործարաններում պատրաստուած է 1902 թ. 80,490 պուղ զանազան ձևերի և տեսակի ծխախոտ, որից 21,616 պուղը գործադրուել է 609 միլիոն գլանակների վրայ, իսկ 58874 պուղը փաթեթներով ծախելու համար:

Ամենամեծ քանակութիւնը պատրաստուած է թիֆլիզի «Миръ», Էնֆիաջեանցի, Բոգարջեանցի և Բագուի Միրզաբեգեանցի ծխախոտի գործարաններում, իսկ փոքր մասը մնացած գործարաններում:

Այս բոլորի համար պետական ակցիզ և պատենտի փող վճարուած է 2,360,053 ռուբլի *), որից՝

Թիֆլիսի մասն է 53,8%	կամ 1,256,464 ռուբլի,
Քութայիսի » 31,8%	» 750,261 . . »
Գանձակի . » 11,1%	» 269,877 . . »
Երևանի . » 0,9%	» 21,317 . . . »
Ղարսի . . » 0,4%	» 9,062 . . . »
Զաքաթալայի » 0,13%	» 3168 . . . »

ՅՈՎ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Այս թւերը վերցրիւ ենք «Акцизное управление»-ի հրատարակած վերջին պաշտօնական հաշիւներից, հրատարակած պ. Першке-էի խմբագրութեամբ:

ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Երեւանի քաղաքագլխի ընտրութիւնը

Այն բոլորը, ինչ որ տեղի ունեցաւ վերջին շաբաթների ընթացքում մեր քաղաքային խորհրդարանում և իրաւասունների շրջանում, քաղաքագլխի ընտրութեան առիթով, կարելի է համարել մի ճիշտ արտացոլումն մեր հասարակութեան ապրիկարութեան:

Քաղաքային խորհուրդը—մի ամբողջ հասարակութեան բազմագոյն ընտրեալների կազմը—այսօր մնացել է շուարած, գլուխը կորցրած, առանց կարողանալու գտնել մի ելք, ընտրելու մի ճանապարհ, որով հնարաւոր լինէր դուրս գալ այժմեան նեղ դրութիւնից:

Եւ այդ բոլորը շնորհիւ այն հանգամանքի, որ որոշ կարգի մարդիկ մոռացած հասարակական շահը և ժողովրդի բարիքը, առաջնորդւում են հսակաւ նեղ շահերով:

Այժմեան քաղաքագլխի—Ի. Մէլիք Աղամալեանի—դէմ կազմուած թշնամիների բանակը գործեց. գործեց, մինչև յաղթանակը տարաւ, բայց դա մի յաղթանակ էր, որը աւելի թանգ նստեց նրա հակառակորդներին քան պարտութիւնը, որովհետև վերջին լողկներում նրա—Մէլիք Աղամալեանի—ներկայութիւնը աւելի զգայուն եղաւ. բայց արդէն ուշ էր և այս առիթով ծագած տրտունջը ընդհանուր:

Սեպտեմբեր ամսից իր գործունէութեան մէջ մտաւ մայիսին տեղի ունեցած 48 ընտրեալներից բաղկացած խորհրդի նոր կազմը, որի մէջ այժմեան քաղաքագլուխը աւելի քիչ թուով կողմնակիցներ ունէր քան նախկին կազմը:

Սեպտեմբերի 24-ի հերթական նիստում քննուում էր քա-

ղաքագլխի ոռճիկի խնդիրը, որը անմիջական կապ ունէր ապագայ քաղաքագլխի անձնաւորութեան հետ: Այս հարցի վրայ իւրաքանչիւրը նայում էր իր նեղ տեսակէտով, ոչ թէ պաշտօնը ի նկատի ունէին, այլ այս կամ այն անձնաւորութիւնը: Այսպէս էին առաջնորդւում շատերը իրաւասուններից: Բացարձակ կերպով համեմատութեան մէջ ղենել ներկայ քաղաքագլխի անձնաւորութիւն այն անձնաւորութիւնների հետ, որոնք համարւում էին թեկնածուներ, վստահութիւն չ'ունէին նոյնիսկ հակառակ կողմի մարդիկ, որոնց համար միանդամայն պարզ էր, որ եթէ ոռճիկը մնայ 5000 բուբլի, այն է նախկին չափը, անպայման կը մնայ նախկին քաղաքագլուխը: Այդ ծանր դժբերութիւնից դուրս գալու գամար միայն մի ելք կար և այդ ելքն էլ ընտրեցին: Հինգ տարի առաջ ի նկատի ունենալով անձնաւորութեան արժանիքը քաղաքը բոսկ արեց վճարել քաղաքագլխին 5000 բուբլի ոռճիկ: Եւ նա չը սխալուեց, երեք տարուց յետոյ քաղաքը ունէր անտեսած երեք տասնեակ հազար բուբլիներ: Իսկ այսօր քաղաքային բիւդժէի աւելի նպաստաւոր պայմաններում յանկարծ հարց էր դառնում 5000 բուբլի ոռճիկի ծանրութիւնը քաղաքի համար: Եւ ձայնից բաղմունքիւնը արդարացից այդ ոլորմելի պատճառաբանութիւնը: 22 ձայնով ընդգէմ 18-ի 5,000 բուբլին իջաւ 3,000-ի, հետևաբար Մելիք Աղամարեան այլևս լինել չէր կարող:

Հոկտեմբերի 15-ի հերթական ժողովում նշանակուած էր քաղաքագլխի ընտրութիւն: Դրուած երկու թեկնածուներն էլ չ'անցան—Գ. Մնացականեան և բժ. Լ. Տիգրանեան ստացան ձայների փոքրամասնութիւն, թէև մեծ ջանքեր եղան առանձնապէս առաջինի համար: Ռոճիկի փոքր չափ, թեկնածուների չգոյութիւն և այնուամենայնիւ սե քուէների դերակշռութիւն, ահա վարքի այն թւանշանը, որ շահեցին նրանք, որպէս Երևանի քաղաքագլխի թեկնածուներ...

Սրա հետ միաժամանակ ներկայ քաղաքագլխի մեծութիւնը սկսեց ակներև դառնալ, տատանուող մարդիկ որոշ դիրք բռնեցին, մի ըսպէ արդարութեան ձայնը խօսեց և հոկտեմբերի 29-ի հերթական նիստում, ուր նշանակուած էր քաղաքագլխի երկրորդ և վերջին ընտրութիւնը, մտաւ 14 ձայնաւորներ խորագրութիւնը կրող մի յայտարարութիւն, որով պահանջում էին ոռճիկի հարցի վերաքննութիւն ունենալ ասելու «ես էլ եմ ցանկանում» պէտք էր ունենալ ընդունակութիւն, որը քչերին է տրուած և այդ քչերին ամուր ձեռքերով պահելու համար պէտք էր վարձատրել, պէտք էր վարձի չափը մե-

ծացնել և ոչ թէ փոքրացնել: Ռոճկի վերաքննութեան հարցը անցաւ 22 ձայնով ընդդէմ 18-ի:

Մի ծանր քար վերացաւ ամենքի խղճի վրայից, որ արժանաւոր մարդը նորից պիտի կանչուէր վարելու քաղաքագլուխի պատասխանատու պաշտօնը, բայց նահանգական վարչութիւնը մերժեց թոյլ տալ քաղաքային խորհրդին նորից վերաքըննել ռոճիկի հարցը:

Խնդիրը բարդացաւ, խորհրդի կամաւոր սխալը միայն սըխալ, երկու թեկնածուներ սեւացան, նոր թեկնածուներ չը կային, իսկ ընտրութիւն պիտի լինէր, մէկին պէտք էր գտնել, ճարուեց այդ մէկը պ. Յ. Մէլիք-Աղամալեան, այժմեան քաղաքագլխի եղբայրը:

Նոյեմբերի 20-ին բացուեց խորհրդի նիստը: Հերթական հարցերից յետոյ, քննուեց նահանգական վարչութեան մերժման հարցը, թէ որ աստիճանի նա իրաւացի է վարուել թոյլ չը տալով վերաքննել քաղաքագլխի ռոճիկ խնդիրը—մի քանի բացատրութիւններից յետոյ խորհրդի 32 ձայնով ընդդէմ 10-ի որոշեց լողոքել սենատին նահանգական վարչութեան վճռի դէմ վերականգնելով խորհրդի իրաւունքը համաձայն կանոնադրութեան:

Այս որոշումից յետոյ, երբ պիտի անցնէին քաղաքագլուխի ընտրութեան—տեղից կանգնեց քաղաքագլուխ Մէլիք-Աղամալեան և մի ճառով տուեց իր հրաժեշտը: Հինգ տարուայ մէջ վճռուեց ջրանցքի հարցը և վերջնական ձեակերպումը ստացաւ, քաղաքի դատարկ սնդուկը լցուեց, անգլիական այգին ճահիճներից մաքրուեց, Աստափեան մեծ փողոցի սալայատալեքը, որը 20,000 ր. արժէ շինուեց գանձարանի հաշւով և վերջապէս հայոց դերեզմանատան համար հող յատկացրուեց և նըրա շուրջը պարիսպ շինուեց պահապանի բնակարանով միասին: «Այսքանը, ասաց պ. Մ. Աղամալեանը, իրաւունք եմ համարում ասել, զլուխ են եկել իմ ջանքերով, որի համար ոչ միայն տարիներով արիւն եմ կորցրել, սիրտ ու թոր մաշել, այլ ամեն անգամ նախատինքներ լսել, բամբասանքի ու չարախօսութեան ենթարկուել և հազար ու մի դժգոհութիւնների և տրտունջների արժանացել: Այս շղթան, որը դուք յանձնեցիք ինձ, նոյնութեամբ վերադարձնում եմ ձեզ և եթէ ես չը կարողացայ այն բոլորը անել ինչ որ պէտք էր—այդ իմ մեղքս չէր»:

Մի փոքր ընդմիջումից յետոյ վերսկսուեց նիստը նախագահութեամբ պ. Կ. Կամսարականի, որը ի զարմանս ամենքի յայտնեց, որ Յ. Մէլիք Աղամալեանը որի ցանկութեան վրայ չէին կասկածում զբաւոր կերպով յայտնել է որ իրան չը

քուէարկեն քաղաքագլխի թեկնածութեան համար: Շուարունմն ընդհանուր էր, եթէ այդ օր ընտրութիւնը կայանար և ընտրելի չը գտնուէր խորհուրդը կորցնելու էր ընտրելու իրաւունքը: Այդ նեղ զրութիւնից դուրս գալու համար, որոշուեց նիստի շարունակութիւնը թողնել յաջորդ օրուայ, թերևս հնար լինէր գտնել մէկին և համաձայնութեան գալ:

Հասաւ յաջորդ օրը ևս, բայց դարձեալ անպատրաստ, առաջարկուեցին երկու անուններ—Ամիրխանեան և Մէլիք Օհանջանեան—երկուսն էլ մեր հասարակութեան շատերի համար բոլորովին անծանօթ անձինք, ուստի որոշ համաձայնութեան գալ դժուար էր, պէտք էր նորից յետաձգել, բայց խորհուրդը չէր զրկուի արդեօք ընտրութեան իրաւունքից: Այս հարցը մի ժամից աւելի վիճարանութեան և թեր ու դէմ կարծիքների նիւթ դառնալով ընտրութիւնը յետաձգուեց յաջորդ նոյեմբերի 26-ի նիստին և նիստը փակուեց տրտունջների աղմուկով:

Նոյեմբերի 26-ին տեղի ունեցաւ քաղաքագլխի երկրորդ և վերջին ընտրութիւնը: Թեկնածու համարուածները—Փ. Մէլիք-Օհանջանեան, Յ. Մէլիք-Աղամալեան, Նախկին քաղաքագլխի եղբայրը, և բժ. Լ. Տիգրանեան, հրաժարուեցին: Երևանի քաղաքագլխի պաշտօնի համար միակ մարդը, որը դրեց իր տուփը, Գ. Մնացականեանն էր, որ առաջին անգամ սեպտեմբերի 1-ին խորհրդի առաջ դրուած էր կամ Գ. Մնացականեան և կամ Նշանակովի քաղաքագլուխ: Մի փոքր վիճարանութիւնից յետոյ, արդեօք մի անգամ սեպտեմբերի 1-ին կարող էնորից քուէարկուել, դրուեց այդ միակ տուփը և 24 ձայնով 17-ի դէմ քաղաքագլուխ ընտրուեց Գ. Մնացականեանը:

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ

I Արտիստիկական թատրոն

«Օտարունին» Դիմա որդու:— «Քաղնուած կայծեր» Ս. Քառայեանի:— «Նսրա» Իրսէնի:— Պիեսաների ընտրութիւնը և բեմական լեզուն:

Հայոց դրամատիկական ընկերութեան խումբը դեկտեմբերի 11-ին ներկայացրեց Դիմա որդու Օտարունին (l'Étranger): Ստիպուած ենք ասել, որ մեր՝ ինչպէս և հաւանականաբար բոլոր հանդիսատեսների անկեղծ ցանկութիւնն է այդպիսի ներկայացումն այլևս երբեք չը տեսնել հայ բեմի վրայ: Ո՞վ էր ընտրել այդ պիեսան և ինչո՞ւ համար. առաջին հարցի պատասխանը գուցէ կարելի լինի գտնել, բայց երկրորդին պատասխանելը առնուազն չափազանց դժուար է: Այդ երեկոյ դժգոհ էր հասարակութիւնը, դժգոհ էին ինչպէս իմացանք՝ վարչութեան անդամները, դժգոհ էին երևի նաև դերասանները, որովհետև վատ էին խաղում և քիչ էր մնում բեմի վրայ սկսեն յօրանջել:

Եւ այդ բոլորը հասկանալի է. Դիմայի «Օտարունին» նրա գործերի մէջ ամենաթոյլերից մէկն է: Գործողութիւնը շատ քիչ, բառերը շատ, իսկ գլխաւոր տիպը՝ Օտարունին իրականութիւնից կտրուած, մի տեսակ առասպելական արկածախնդիր: Եթէ այս բոլորի վրայ աւելացնենք և այն, որ մնացած գործողներն էլ առանձին հետաքրքրութիւն զարթեցնել չեն կարողանում և որ առանց այն էլ ձանձրալի այդ պիեսան վատ էլ խաղացուեց, ապա հասկանալի կը լինի այն ընդհանուր դժգոհութիւնը, որ այդ երեկոյ համակել էր դահլիճը: Դեռ լաւ որ Դիման այդ պիեսայի մէջ դրել է մի անգլիացու տիպ, և աւելի լաւ, որ այդ դերը կատարում էր պ. Աբելեան. շնորհալի դե-

րասանը էլի կարողացաւ մի փոքր մեղմել այդ երեկոյի ընդհանուր հիասթափութիւնը: Այդ ներկայացման մասին աւելին ասել անկարելի է:

*
* *

Դեկտեմբերի 15-ին խաղացուած «Թագնուած կայծերը» պ. Ս. Թառայեանի, կարելի է համարել մի տխուր թիւրիմացութիւն և լուռութեան տալ, բայց ներկայ դէպքում մի այդպիսի լուռութիւն առնուազն դատապարտելի է, երբ հրապարակի վրայ թատրոնական գործը կայ:

Պ. Թառայեանի «Թագնուած կայծեր»-ը քննադատելու ցանկութիւն չ'ունենք. որևէ գործ մօտիկից ուշադրութեամբ դիտելու համար անհրաժեշտ է ոտքի տակ մի հաստատ յենակէտ ունենալ, տարաբախտաբար այս դրամայում պակասում է անգամ այդ յենակէտը: Եթէ աւելին չ'ասենք, դա մի տղայամիտ գործ է, ուր ամեն ինչ կայ, բացի այն, ինչ անհրաժեշտ է, այսինքն լուրջ միտք, գեղարուեստական ամբողջութիւն, բեղիկի փայլ: Հինգ գործողութիւն իրար վրայ բեմում հանդէս էին դրուում արտիստիկական թատրոնի բաւական հարուստ զեկուրացիաները և դերասանները, որոնք ակամայ ընկել էին ֆրագորներին վիճակի մէջ, իրար էին յաջորդում զէսից-զէնից հաւաքած բառեր ու նախադասութիւններ ասելու համար: Արուեստականութիւն տիպերի մէջ, արուեստականութիւն գործողութիւնների մէջ, որոնցից և ոչ մէկը արդիւնք էր խելացի տրամաբանութեան:

Չը կար համարեա մի հատիկ տրադիկական մոմենտ, որ կարողանար յոյզ առաջ բերել, ծիծաղի պատճառ չը դառնալ: Եւ դա շատ հասկանալի է, քանի որ պ. Թառայեանի զլխաւոր հերոսը մի պատեռիկ մոմենտում իր սիրած կնոջ աչքերի մէջ տեսնում է՝ «Մայր Արաքսի դարաւոր թախիծը»: Ծայրէ ի ծայր նայելուց յետոյ մաքուր դալիս է այն տխուր եղբակացութեան, որ հիդլինակը առանց քննելու, առանց սիստեմի դրի է առել այն բոլորը, ինչ լսել է այստեղից-այնտեղից, ինչ երբեքից կարգացել է մի գրքում, ինչ գտել է մի բանաստեղծութեան մէջ, և այս բոլորի արդիւնքը դուրս է եկել մտքերի, գաղափարների մի անտանելի ժխոր, որը տեսնելու համար համբերութեան մեծագոյն չափը անհրաժեշտ է դառնում:

*
* *

Օր. Խիթարեան իր բենեֆիսին ընտրել էր Իբսէնի «Նորա»-ն, որ խաղացուեց ղեկտեմբերի 11-ին: Այս դրաման Իբսէնի խոշոր գործերից մէկն է, որի մէջ հոգեբանական վերլուծութիւնը հասցրած է օրինակելի կատարելութեան և որի հիմնական գաղափարը տրամաբանօրէն ժայթքում է ամբողջութիւնից յանկարծական գեղեցիկ փայլով: Ծայրայեղօրէն ինդիւլիդուալիստ, «հիւսիսի մենաւորը» ինչպէս սիրում են անուանել Իբսէնին, դրել է Նորայի տիպի մէջ անհատական կամքի ամենաբուռն արտայայտութիւնը: «Դու ամենից առաջ կին ես և մայր», ասում է ամուսինը Նորային, երբ վերջինս պատժւարաստում է նրան թողնել. «Ինձ թւում է, որ ես ամենից առաջ մարդ եմ կամ յամենայն դէպս ես պարտական եմ փորձել մարդ դառնալ», պատասխանում է Նորան: Ահա այս դրամայի հիմնական գաղափարը: Բոլոր մնացած գործողութիւնները, բոլոր տիպերը նրա համար են, որ այս խոշոր գաղափարը՝ որքան կարելի է՝ ընդհանրապէս կերպով աչքի ընկնի: Եւ որովհետեւ գլխաւոր հերոսուհին, զոհը և մարտնչողը Նորան է, բնականապէս նրա խաղից է կախուած լինում այս դրամայի յաջողութիւնը: Տարաբախտաբար օր. Խիթարեանն այդ պահանջին բաւականութիւն տալուց հետո մնաց: Օրիորդի խաղը կարելի է համարել տեղ-տեղ մտածուած, յաճախ անհարթ, մեծաւ մասամբ անյաջող: Նա ժեստեր ունի, որոնք տրամբուկական են, մի ճիշդ, որ կարող է յոյզ առաջ բերել, լոռութեան մոմենտներ, որոնք վատ չեն, բայց նա երբէք չի կարողանում մարդու յափշտակել, մոռացութեան մէջ ձգել, որ լաւ խաղի իսկական նշանն է: Նա հրապարակ եկաւ վերջին մի քանի պիեսաներում պատասխանատու գերերի մէջ և ամեն տեղ էլ նոյն թերութիւնները: Եթէ երկրորդական պատճառները մի կողմ թողնենք, հէնց այն հանգամանքը, որ օրիորդը հայերէն արտասանում է ցաւագին դժուարութեամբ, որ նա կտրտում է նախադասութիւններն ու բառերը մի արտասուելի ճիգով, որ նրա շրթունքները երբեմն ասես կարկամում են և պինդ պահում խօսքերը, այսքանը բոլորովին բաւական է նրա խաղը սպանելու համար:

Անկարելի է ուշադրութեան չ'առնել նաև պ. Պետրոսեանի (Դորեւոտ Գելմեր) վերին աստիճանի չոր, անյոյզ, համարեա ակամայ խաղը, որ էլ աւելի փչացրեց ընդհանուր տպաւորութիւնը:

*
**

Ընդհանրապէս պէտք է նկատել, որ ղեկտեմբեր ամիսը

Թիֆլիսի հայկական ներկայացումների համար ձախորդ ամիս եղաւ:

Ինչի՞ն պէտք է վերագրել այս բաւական անհաճոյ երեւոյթը. անշուշտ ոչ մի հատիկ հանգամանքի և ոչ մի հատիկ անձի, այլ հանգամանքների և անձերի: Պատասխանատուութիւններ սահմանելու ոչ կարողութիւն և ոչ ցանկութիւն ունենք, բայց չենք կարող մատնացոյց չ'անել այս սխտեմատիկ անհոգութիւնը, որ կարող է հասարակական տրամադրութեան վրայ իր ունեցած ազդեցութեամբ անախորժ հակահարուած առաջ բերել դէպի թատրոնական գործը, որ այնքան զնահատելի զոհողութիւնների, անհատական թէ հաւաքական գովելի եռանդի գեղեցիկ արդիւնք է:

Պիեսաների ընտրութիւնը երբեմն այն աստիճան անյաշող է, այնպիսի անփութութեան ապացոյց է տալիս, որ մարդ անկարող է լինում նոյնիսկ մեղմացուցիչ հանգամանքներ գտնել: Օրինակ՝ «Օտարուհին», «Թագնուած կայծերը», որոնք երկուսն էլ համարձակ կարող էին չը խաղացուել, և հասարակութիւնը ոչինչ չէր կորցնի, իսկ բեմը կը շահուէր:

Եւ յետոյ՝ դա ի՞նչ լեզու է, որ լսում է բեմից. թատրոնական կոմիտետը նայում է հարկ եղած ուշադրութեամբ իր քննութեանը յանձնուած երկերը՝ ինքնուրոյն թէ թարգմանական, ուղղել, սրբագրել տալի՞ս է արդեօք այդ բոլորը:

Եթէ այո՛, ապա ինչի՞ն պէտք է վերագրել այն արտասուելի «լեզուասպանութիւնը», որ կատարւում է հայոց բեմի վրայ: Ամբողջ աշխարհում բեմը հանդիսանում է այն դպրոցը, ուր մշակւում է լաւագոյն ոճը, լաւագոյն լեզուն, հայ բեմը մեղանում կարծես նրա համար է, որ առանց այն էլ հայերէնի խորթացած ականջները միշտ ըմբոստ պահի մայրենի լեզուի նրբութիւնների, գեղեցկութիւնների հանդէպ: Ժամանակ է հասկանալ, որ մեր շուրջը իշխող ողորմելի թոթովանքները, որոնք հայերէն են համարւում, լեզուական բարբարոսութիւնները, որոնք bon ton են նկատւում, ամօթալի, նոյնիսկ նողկալի դարձնելու համար, անհրաժեշտ է մայրենի լեզուի լաւագոյն ոճը հնչեցնել բեմից: Թատրոնական վարչութիւնն այս գործում խոշոր պարտք, խոշոր պատասխանատուութիւն ունի: Եթէ տեխնիկական անյետաձգելի, անհրաժեշտ գործերը արգելք են հանդիսանում նրանց հարկ եղած ուշադրութիւնը տալ պիեսաների ընտրութեան կամ լեզուի մշակութեան, մի՞թէ ճշմարիտ անկարելի է յատկապէս այդ գործի համար կողմնակի կարող անձանց աջակցութեանը դիմել:

Եւ մեր դերասանները...—խօսքս բոլորի մասին չէ ան-

շուշտ—երևի եղել են օտարազգի թատրոններում, լսել են օտար դերասանների, յիշում են արդեօք մեր բեմի վրայ իշխող լեզուական այս բարեկոնեան խառնակութեան հեռաւոր նմանութիւն ունեցող մի բան: Ձայրոյթի և հեղնութեան առարկայ կը դառնայ մի Ֆրանսիացի, գերմանացի կամ իտալացի արտիստ, որ առանց իր մայրենի լեզուն կատարելապէս տիրապետելու յանդգնի բեմ դուրս գալ: Հայ լեզու, քաջքշուած, տըրորուած, աղաւաղուած կամ արհամարհուած դրսում, փողոցում, առևտրականի խանութում, տներում, թող գոնէ նա մաքուր, անխառն մնայ բեմի վրայ: Չը պիտէ՞ք, Հարչարուեցէք, սովորեցէք, ձեր աչքի առաջ, փառք Աստուծոյ, հայ լեզուի լաւնմուշը կայ յանձին տիկին Սիրանոյշի: Ինչու իւրաքանչիւր մասնագիտութեան համար անհրաժեշտ է որոշ պատրաստութիւն, որոշ աշխատանք, միայն հայ բեմն է, որ կարելի է ոտք կոխել առանց ամենամահրաժեշտ պայմանի—մայրենի լեզուի:

Վարչութիւնը և դերասանները հաստատ կարող են հաւատացած լինել, որ առանց լաւ հայերէնի նրանց աշխատանքը ամուլ կը մնայ:

Ա.

II Արաքսեանի թատրոնը Հաւարարում

Նոյեմբերի 23-ին խաղացուցին՝ առաւօտեան—Ձիակոմետտի «Ոճրագործի ընտանիքը» դրաման, երեկոյեան—Դոնճերի «Մայրական սէր» մեթոդրաման:

«Ոճրագործի ընտանիքը» պիեսի մէջ պ. Սարազեանը Կորբադօի դերը կատարելով՝ ապացուցեց վերջնականապէս, որ նրա մէջ ինքնուրոյն ոչինչ չը կայ, իսկ այն, ինչ փոխ է առել ուրիշներից, շնորհ չէ ունեցել քիչ թէ շատ կարգին իւրացնելու: Նա համարենս թէ գաճաճ դարձրեց իր տանջանքներով հսկայ Կորբադօին. նրա հարաւային տաք, առիւծի հոգին չէր փայլում պ. Սարազեանի խաղի մէջ. Կորբադօն մոնսիներէի հետ խօսելիս այնպէս կորովի ու կատաղի է, որ մոնսիներէի վախ է արտայայտում. սակայն այդ վախը դուրս եկաւ անտեղի, որովհետեւ բեմի Կորբադօի ձայնը չափազանց խեղճ էր:

Մոնսիներէի տիպը շատ գեղեցիկ կերպով վերարտադրեց պ. Վրոյրը. այդ դերը նրա ամպլուայի մէջ տեղ բռնող ամենաաշուղակ դերերից մէկը պէտք է համարել:

«Մայրական սէր» մեթոդրամայի գլխաւոր հերոսուհի տ.

Ձարէլը զուր էր ճգնում դրամատիկական դերում փայլել. մի-
թէ՞ այսքան տարիների փորձութիւններից յետոյ տիկինը չը
կարողացաւ հասկանալ իր տեղը բեմի վրայ: Ծիշտ է՝ որ Հաւ-
լարարի թատրոնում դերասանի համար սովորուա գոյութիւն
չ'ունի, բայց իր ուժերից շատ և շատ վեր, միանգամայն ան-
համապատասխան դերեր ստանձնելով՝ դերասանը միայն ծիծա-
ղի առարկայ կարող է դառնալ...

Այդ պիեսին միակ տոն տուողները պ. պ. Վրոյրն ու Բե-
րոյեանն էին:

Նոյեմբերի 26-ին խաղացուեց Գէի «Տրիլբի» դրաման ի
նսպաստ տիկին Արաքսեանի:

Բենեֆիսիանտուհին տանելի Տրիլբի էր. տեղ-տեղ (վեր-
ջին գործողութիւններում) լաւ էր, բայց ընդհանրապէս կրա-
կից զուրկ էր տիկին Արաքսեանի խաղը. Տրիլբին վառվռուն,
կայտառ բնաւորութիւն է, մանաւանդ սկզբում, երբ նա ծա-
ռայում էր իբրև մողէլ՝ նկարիչների համար:

Բենեֆիսիանտուհին ստացաւ ընծայ և ծաղիկներ:

Պ. Արաքսեանը օրինակելի ժեկկօ էր: Ափսոս որ շնորհա-
լի դերասանը՝ ձայնը խղուած լինելու պատճառով շատ քիչ է
երևում բեմի վրայ. մինչդեռ նա անհրաժեշտ է, մանաւանդ
դերասանական ներկայ խիստ պակասաւոր կազմի մէջ:

Հրէայ երաժիշտ Սվենգալիի դերում աննման էր պ.
Աբելեանը. մարդ հիանում, զարմանում էր՝ տեսնելով արտիս-
տի մտածուած խաղը, որի մէջ երևում էին խորը ուսումնասի-
րութիւն, դերի ճշգրիտ ըմբռնումն և արտայայտելու ուժգին
կարողութիւն:

Շատ տիպիկ էր անգլիական ջէնտլմէնի փոքրիկ դերում
պ. Վրոյրը:

Վատ չէր և՛ պ. Բերոյեանը, բայց ցաւօք սրտի պէտք է
ասել, որ վերջերս նկատուում է նրա մէջ մի խոշոր թերութիւն,
այն է՝ որ դերը երբեմն հիմնաւոր չէ սովորում, ինչպէս այդ
երեկոյ: Հարկաւոր է նրան և՛ հայոց լեզուի վրայ առանձին
ուշադրութիւն դարձնել:

Նոյեմբերի 29-ին ներկայացուեց «Ձաւակ» մեւօդրաման:

Այդ պիեսը վաղուց ծանօթ է մեր բեմին և արխիւն ընկ-
նելու ժամանակը վաղուց է անցկացրել արդէն: «Ձաւակ»-ի
հետաքրքրութիւնը միայն նրանում էր կայանում այդ երեկոյ,

որ Մադրլէնի դերը կատարում էր տիկին Սիրանոյշը՝ Ինչ ասել կ'ուզի, որ նա փայլեց, որպէս միշտ մեծ աջողութիւն է ունենում մեղօգրամմաներում.—էֆֆեկտը կատարեալ էր—շատերի աչքից արցունք քամեց արտիստուհին, շատերին յուզեց, շատ սրտեր տակն ու վրայ արաւ, շատ լաւ էր մանաւանդ՝ երբ իրանց դրացի Անդրէի հետ խորհրդակցում էր գնալ միասին բարոնի մօտ. այդտեղ աչքի ընկաւ տիկնոջ՝ կեանքը դիտելու և ճիշտ ըմբռնելու կարողութիւնը... սակայն կեղծ կլասսիցիզմը, որպէս միշտ, նոյնպէս և՛ այդ երեկոյ անբաժան էր տիկնոջից. տիկինը մնուել, ապրել է բեմի վրայ այդ շկոլայի ազդեցութեան տակ, ուստի շատ դժուար է նրան ձեռք քաշել մի այնպիսի բանից, որը նրան դափնիներ է պարգևել...

Թատրոնը համարեա թէ լիքն էր, բայց ոչ հաւաքաբացիներով, այլ գլխաւորապէս ուրիշ թաղերից եկած ժողովրդով:

Տիկին Սիրանոյշն ընծայ ստացաւ:

Թատրոնական սեզոնի սկզբից յաճախ յայտարարւում էր, թէ պատրաստւում է խաղացուելու Սարգարեանի փոխադրած 5 գործողութեամբ, 6 պատկերով «Զուբէյդա կամ հարէմ» դրաման, և ահա նոյեմբերի 30-ին բոլոր պատրաստութիւնները վերջացած համարուելով՝ բեմի վրայ դուրս ելաւ այդ սիրալիրը: Զարթէ խօսել այդ փոխադրութիւն բովանդակութեան մասին:

Ով տեսել է «Ղարաբաղի աստղագէտը», նրա համար նորութիւն չէր կարող լինել «Հարէմ»-ի առաջին գործողութիւնն առանձնապէս և ամբողջ պիեսն ընդհանրապէս: Ինչ որ կատարւում էր «Ղարաբաղի աստղագէտ»-ի մէջ հէյդացիների խանի վրանում, ինչ-որ ասում էր Սալիհան այդ խանին, նոյնը կատարւում, նոյնն էր ասում Զուբէյդան Աբբաս-Միրզային «Հարէմ»-ի մէջ: Այստեղ աստղագէտի դերը մաս-մաս էին արել իրար մէջ երեք մարդիկ—Զուբէյդայի սիրական Դաւիթբէգը, ներքինապետը և Զուբէյդայի աղախինը: Անծանօթ անձնաւորութիւն չէր և՛ Սաֆֆի բանաստեղծը:

Ձեռք հասկանում, թէ պ. փոխադրողը, որ յայտնի է իր նոյնքան անհամ և՛ ուրիշ փոխադրութիւններով, ինչպէ՞ս առաջ-նորդուել այդ նոր արտուրդը կազմելիս, ի՞նչ իդէա է դիկավարել նրան, ի՞նչ է եղել նրա նպատակը: Միթէ՞ բաւական է մի քանի տարիներ լինել սցենարիստ, ծանօթանալ կուլիմների ծակոճուկների հետ, միզանսցենի դործն ուսումնասիրել, վերջապէս դրամատիկական երկ գրելու տեխնիկայի հետ քիչ թէ շատ

ծանօթանալ, որպէսզի մարդ դրամատուրգ դառնալու իրաւունք ունենայ:

Այդ դեռ բաւական չէ, այլև տեղերի դնելը համարենք թէ երկպառակել էին (առաջին կարգը 1 ր. 50 կ.-ի տեղ 2 ր. 25 կ.), որի հետեւանքն այն եղաւ, որ ժողովուրդը պատժեց այդպէս անողին, այդքան պատրաստութիւններից, ջանք ու ճիգներից յետոյ թատրոնի կէսն անգամ չէր բռնուել:

Դեկտեմբերի 6-ին կատարուեց պ. Պարազեանի բենեֆիսը: Պ. Պարազեանն ընտրել էր Գուցկովի «Ուրիշ Ակոստա»-ն, սակայն այդ պիեսում փայլեց ոչ թէ ինքը բենեֆիսիանտը, այլ պ. Արաքսեանը Բեն-Ակիբայի դերում:

Մի քանիսը դերերը լաւ չէին սերտել: Ինչպէս համարենք միշտ, նոյնպէս և՛ այդ երեկոյ խեղճ հայ լեզուն նահատակուած էր բեմի վրայ. մի կողմ թողած թարգմանութեան վատ լեզուն, ինչպէս՝ «Հոլլանդիայում ձեզ համբերում են», «Նա օտարանում է իր հայրենակիցներից» և այլն, իրանք խաղացողներն էլ չէին խնայում: Առանց լեզուին գոնէ քիչ-շատ ծանօթ լինելու բեմ դուրս գալ—առնուազն անշնորհքութիւն է:

Դեկտեմբերի 7-ին կրկնուեցին՝ ցերեկը—«Մեծապատիւ մուրացկաններ»-ը, երեկոյեան—«Ձուրէյդա կամ հարէմը»-ը:

Դեկտեմբերի 10 կայացաւ պ. Բերոյեանի և պ. Պուղանեանի բենիֆիսը: Պաղացուած էին Նայդենովի «Վանիւշինի զաւակներ» դրաման և «Օրհասական դքսիւ» վողվիլը:

Դահլճի դատարկութիւնն էր պատճառը, թէ ուրիշ հանգամանք էր ազդել խաղացողների վրայ,—այդ պիեսը աջող խաղ չ'ունեցաւ: Դերակատարների մեծամասնութիւնը դերերը կարգին չէր սովորել: Մի քանիսը չը գիտէին իրանց բեմ դուրս գալու և այնտեղից հեռանալու ժամանակը. չորրորդ գործողութեան մէջ յուշարարը «Պարազեան» գոչելով՝ հազիւ կարողացաւ մէկ էլ յետ բերել անհամբեր արտիստին, որը դերը կիսատ թողել՝ դուրս էր եկել բեմից... Հասարակութիւնը տրտնջում էր, երբ բեմի վրայ մէկը միւսին ստիպում էր արտասանել իր դերը կամ շուտ անել՝ ներս գալ և ընդհատել անտեղի երկար պաուզան...

Դաշնամուր, թէ նուագող չը լինելու պատճառով չորրորդ գործողութիւնը քարեփոխել էին... պոչը խուզելով: Վերջին տեսարանը, որ ամենաէֆֆեկտաւոր տեղն է պիեսում, չափազանց սառը և անրնական դուրս եկաւ: Վանիւշինի փոքր աղջիկ Անիան պէտք է զարդարուած մտնէր հօր մօտ, և հայրն ասէր՝ «զարդարուե՛լ ես» եղբօր հարմանցուի այցելութեան առիթով. բայց թատրոնի վարչութիւնը հարկ չէր համարել հոգալ շորի մասին, օրիորդ Անիան այդ երեկոյ իր աշակերտական շորերով էր, և երբ պ. Աբելեանը դարձաւ ասելու՝ «զարդարուե՛լ ես» ու տեսաւ, որ օր. Անիան (Քնարիկը) իսկի էլ զարդարուած չէ, հիասթափուեց ե վարանելով՝ ասաց. «չէս զարդարուե՛լ»... Թէև այդ հարցը համապատասխան էր բեմի վրայի իրականութեան, բայց շեղումն էր պիեսից, իսկական իրականութիւնից:

Օրիորդ Սաթենիկը մեծ շնորհք ցոյց տուաւ «Օրհասական դըբիւ»-ի մէջ: Լաւ էր այդտեղ և՛ պ. Խուզանեանը, սակայն տեղ-տեղ շփոթութեան մէջ էր ընկնում:

Պ. Բերդեանը համեստ ընծաներ ստացաւ:

Թատրոնի վարչութեան ուշադրութիւնն ենք հրաւիրում աֆիշների և ծրագիրների ապագրութեան վրայ, որոնք միշտ լիքն են լինում անճշտութիւններով և տառասխալներով, ինչպէս օրինակ՝ «Մեծապատիւ մուրականներ, [Ժարգմանութիւն Պարոնեանի», «Շաթեր, հեղինակութիւն Ալիխանեանի (!!!), ևայլն ևայլն: Ծրագրի մէջ որեւէ դերի դիմաց գրուած է մի անուն, բայց բեմ է դուրս գալիս բոլորովին ուրիշ անձնաւորութիւն. այդ երեկոյ օր. Հայկանուշը ըստ ծրագրի պէտք է կատարէր երեք դեր (Ակուլինայի դերն էլ—որի անունն իսպառ ջնջել էին—նա էր կատարում, ուրեմն չորս դեր...), բայց իրօք կատարեց երկու դեր:

Դեկտեմբերի 13-ին Հայոց Դրամատիկական Ընկերութեան խումբը Հաւլաբարում կրկնեց Արտիստիկական թատրոնում այս տարի խաղացուած Սումբատովի և Նեմերովիչ-Դանչենկօի «Բազէներ և ագռաւներ» դրաման *):

Խաղն անցաւ մեծ աջողութեամբ. դերակատարներն ամենքն իրանց դերերում էին:

Զինուորական երաժշտական խումբը նուագեց պ. Արաքսեանի ղեկավարութեամբ... որի համար ղեկավարը ծափահա-

*) Այդ պիեսի մասին տես «Մուրճ»-ի անցեալ համարը:

րուեց: հասարակութիւնից: Սակայն մենք խորհուրդ կը տա-
յինք պ. Արաքսեանին ղեկավարել և լաւ ղեկավարել իր ղե-
րասանական խումբը, որն՝ ինչպէս լսում ենք՝ միանգամայն
յանձնուած է ճակատագրի տնօրինութեանը...

Դեկտեմբերի 14-ին տիկին Սիրանոյշի մասնակցութեամբ
ներկայացուեց «Մեղէա» դրաման:

Մեղէան տիկին Սիրանոյշի ամենաաջող դերերից մէկն
է, եթէ ոչ ամենաաջողը: Այդ երեկոյ տիկինը ցոյց տուաւ իր
արտիստիկական խոշոր տաղանդի բոլոր ուժգնութիւնը: Ամ-
բողջ դահլիճը կախարդուած դրութեան մէջ էր գտնուում ներ-
կայացման ընթացքում: Նա արտիստուհու հետ վերապրում էր
Մեղէայի թշուառութիւնը՝ մերթ սարսափած, մերթ շահագրգը-
ռուած ու վերացած, մերթ լքուած ու զայրացած: Տիկնոջ պատ-
ճառած էստետիկական հաճոյքն այդ երեկոյ այն բացառիկ
հաճոյքներից է, որոնք երկար ժամանակ չեն մոռացուում:

Միւս գերակատարներն իրանց տեղերում էին, բացի պ.
Խարաղեանից... Պ. Խարաղեանի բեմ ընկնելը մենք վերջնակա-
նապէս համարում ենք մի թիւրիմացութիւն:

Այդ երեկոյ պ. Արաքսեանը նորից առժամ ղեկավարեց
երաժշտական խումբը: Խորհուրդ չէինք տալ պարսին թողնել
բեմը և դառնալ կապելմայստեր, եթէ նա այդպիսի դիտաւո-
րութիւն ունի:

Հաւարարի թատրոնի առանց այն էլ հետաքրքիր կեան-
քում այդ երեկոյ ներմուծուել էր մի նորութիւն ևս. ներկայա-
ցումը վերջնալուց թատրոնի ղեկավարը պատնէշ էր դրել շոր
կախելու առանց այն էլ խիստ նեղ տեղի առաջ և ինքը մի
ոստիկանի ու մի այլ պարոնի հետ յետեւ կանգնել և արգելե-
լով հասարակութեանը խմբովին մտնել պատնէշի յետեւ՝ մէկ-
մէկ էր ներս թողնում շոր վերցնելու. մի կապել'գիներ էր աշ-
խատում, միւսները պարապ կանգնած էին՝ մեծ պահանջ չը
լինելու պտածառով: Փոքրիկ թիւրիմացութիւններ տեղի ունե-
ցան հասարակութեան և պատնէշը պահպանողների մէջ... այս
վերջիններից մէկի բերանով հասարակութիւնը մեծարուեց
«անասուններ» մականունով... Շատերն ստիպուած էին մի ժամի
չափ սպասել, մինչև հերթը կը հասնի իրանց շորերն ստանալու:

Դեկտեմբերի 19-ին տիկ. Զաբէլի բնէֆիւսին խաղա-
ցուեց Կամուխտիի «Գոյր Թերեզա» դրաման:

Այդ օրուայ ներկայացման հետաքրքրութիւնը նրանում էր կայանում, որ պարոն Վրոյրը կատարում էր կնոջ դեր. այնպէս որ քոյր Զուգէպպայի քաղցրահնչիւն բարիտոնը շոյում էր հանդիսականների լսելիքը: Պ. Վրոյրը երևի ժամանակ չ'ուներնալու պատճառով զանց էր առել գոնէ երեսը սափրել, այնպէս որ հանդիսականներից մի քանիսը զարմանում էին, կարծելով՝ թէ օտար երկրում (Իտալիայում) տղամարդիկ և կանայք հագնւում են միատեսակ: Սակայն՝ ինչպէս երևում էր, պ. Վրոյրն այնքան էլ գոհ չէր, որ կնոջ դեր է կատարում, ուստի դժկամակութեամբ էր արտասանում իր խօսելիքը. այդ պատճառով էր երևի, որ Յ գործողութեան մէջ տիկին Զարէլն ստիպեց պ. Վրոյրին ասել՝ «սո՛ւրբ կոյսեր, մօտեցէ՛ք, աղօթեցէ՛ք»...

Ինչո՞վ բացատրել այս բոլորը:

Տիկ. Զարէլն ընծայ ստացաւ:

Ա.Թ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գանանց քառճագոյն կրքոքիւնը Ռուսաստանում իբրեւ մասնաւոր նախա-
ձեռնութեան արդիւնքի—Պետերբուրգի գրական փոքրիկ ձեռնարկած հոսանքը—
նախարարները գրականագիտների համար:—Պետական գանձարանի տուած նը-
պասքը գրականագիտներին:—Հոգեւորականութեան ձեռքը գեմեսվային դըպ-
րոցների յանձնելու խնդիրը Տիւրեան գաւառական գեմեսվային ընդհ. ժողո-
ւում եւ հակալիւթիւր նահանգային գեմես. ընդհ. ժողովում:—Քաղաքային
ընտրութիւնները Պետերբուրգում:—Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ:
—Չուշու քեմական դպրանոցի փակումը:—Ամենայն Հայոց կաթողիկոսի
հիւանդութիւնը:—Գառաւաղական կարգադրութիւն Բաքումի վերաբերեալ:

Ռուս կիւնը բարձրագոյն կրթութիւն ստանալու իր բուռն
տենչով կարող է առաջնակարգ տեղը գրաւել իր սեռի մէջ
ամբողջ աշխարհում: Զը գտնելով սկզբում իր հայրենիքում նը-
պաստաւոր պայմաններ՝ յագեցնելու իր մտաւոր ծարաւը՝ նա
դիմեց եւրոպական համալսարանները, ուր իր ջանաւորութե-
ւոյն իր լուրջ վերաբերմունքով դէպի գիտական պարապ-
մունքները հիացմունքի արժանացաւ: Երբ ուսական իրա-
կանութիւնը փոխուեց վաթսուհական թւականների բեֆորմ-
ների շնորհիւ, ուսաց համալսարանների պրոֆեսսորները և առ-
հասարակ ինտելլիգենտ շրջանները նախ Մոսկուայում ապա
Պետերբուրգում բացին կանանց բարձրագոյն կուրսեր: Մայրա-
քաղաքների օրինակին սկսեցին հետևել և միւս համալսարանա-
կան քաղաքները. Կազան, Կիեւ, իսկ երբ հոսանքը հասաւ նաև
Վարշավա, Սարկով, Օդեսսա—արդէն հասել էին 1881 թւականի
դէպքերը և կառավարութեան վերաբերմունքը փոխուել էր:
1886 թւականին փակուեցան կանանց բոլոր կուրսերը: Ապա
նոր կանոններով նախ վերաբացուեցան 1889 թւականին Պետեր-
բուրգի կանանց կուրսերը, իսկ մի քանի տարի անց, 1900 թւակա-

նին, և մոսկուայինը: Այժմ բոլոր համալսարանական քաղաքներում պրոֆեսորներին նախաձեռնութեամբ միջնորդութիւններ են յարուցուած կանանց բարձրագոյն կուրսեր բանալ Դորբատ, Օդեսսա, Կիեւ, Կազան և այլն: Քանի որ Ռուսաստանում կանանց մոտքը համալսարաններում արդեւուած է, այդ մասնաւոր կուրսերը հանգիստանում են իբրեւ միակ հնարաւոր գոհացում կանանց մտաւոր իրաւացի պահանջներին:

Այս նոյեմբերի 12-ին Պետերբուրգում հանգիստաւոր կերպով տօնուեց Պետերբուրգի կանանց բարձրագոյն կուրսերի քսանեօթնամեակը: Այդ կուրսերի պահպանութեան համար հիմնուած էր առանձին ընկերութիւն, որը քսանեօթնգ տարուայ ընթացքում կարողացել է մի միլիոնից աւելի գումար հաւաքել նրան: Այդքան մեծ է հասարակութեան ցոյց տուած համակրութիւնը դէպի լուսաւորութեան այդ հաստատութիւնը: Մասնաւոր նուիրատուութիւններով են պահպանուել և միւս կուրսերը: Սակայն կառավարութիւնը օժանդակում է կանանց բժշկական կուրսերին Պետերբուրգում: Բժշկական կրթութիւն ստացած ռուս կիւնը ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ ցոյց տուեց իր լուրջ պատրաստութիւնը և իբրեւ գնահատում ներանց արած ծառայութիւններին նրանց շնորհուեց կին-բժիշկ կոչումը կրելու իրաւունքը: Այս տարի ռուս կին-բժիշկներն ևս տօնեցին իրանց իրաւունքի այդ քսանեօթնգ ամեակը:

Ռուս հասարակութեան մասնաւոր նախաձեռնութեան է պարտ նաև չքաւոր գրականագէտներին և նրանց այրիներին ու որբերին օգնելու նպատակով դեռ 1859 թւականին Պետերբուրգում հիմնուած Գրական Ֆոնդ ընկերութիւնը: Այդ ընկերութեան կանոնադրութեան մի կէտի վրայ արժէ առանձին ուշադրութիւն դարձնել. այդ այն է, որ ընդհանուր ժողովին իւրաքանչիւր տարի ներկայացնող հաշւում Ֆոնդի վարչութիւնը չի յայտնում այն անձանց անունները, որոնք նպաստ են ստանում: Բացառութիւն անւում է միայն գրական և գիտական աշխատութիւնների տպագրութեան և կրթութիւնը աւարտելու նպատակով տրուած նպաստների վերաբերմամբ: Նպաստ ստացող անձանց անունները հրապարակ կարող են դալ միայն դրանց մահուանից յետոյ: Այդպիսով գրողի ինքնասիրութիւնը յարգւում է այդ համակրելի ընկերութեան մէջ:

Նոյեմբերի 23-ին, Պետերբուրգում կայացաւ յիշած Գրական Ֆոնդի արտակարգ ընհանուր ժողով, որ նուիրուած էր մի նշանաւոր հարցի. առաջարկւում էր ձեռք բերել սեփական տուն և էփան բնակարաններ շինել չքաւոր գրական գործիչների համար: Գործը հեշտութեամբ գլուխ է գալիս, որովհետև

Դոլուբեվի ժառանգները տալիս էին 150,000 ռուբլի այդ նըպատակով: Բացի այդ, հանգուցեալ ոռուս գրող Մեխնիվիչը կըտակած է եղել Պետերբուրգի իր տան $\frac{2}{3}$ Ֆոնդին, իսկ $\frac{1}{3}$ կնոջ՝ ցկեանս օտուկու և ապա նոյա Ֆոնդին տալու համար: Ընկերութիւնը վճռել է այդ կնոջ տարեկան որոշ գումար տալ և ձեռք բերել տան նաև նրա մասը և հէնց այժմուանից վերածել է ժանազին բնակարանների չքաւոր գրականագէտների համար:

Բացի մասնաւոր նուիրատուութիւնից ոռուս գրողները և գիտնականները ստանում են նպաստ նաև պետական գանձարանից: Յայտնի է, որ 1895 թ. յունուարի 13-ի Բարձրագոյն հրամանով իւրաքանչիւր տարի պետական գանձարանից բաց է թողնուում 50 հազար «անհրաժեշտ օգնութիւն տալու համար ոռուս չքաւոր գիտնականներին, գրականագէտներին և հրապարակախօսներին, ինչպէս և նրանց այրիներին և որբերին»:

Վերև յիշած Դրական Ֆոնդը, որպէս և ամեն մի համակրելի ձեռնարկութիւն Ռուսաստանում, միշտ Гражданствъ և Московскія Вѣдомости թերթերի յարձակումներին են ենթարկւում. դրանց աչքի փուչն է և զեմստվոն իր բոլոր լուսաւոր կողմերով: Եւ դրանք օգտւում են ամեն մի առիթից խայթելու համար ոռուսական ինքնավարութեան գործունէութիւնը, չարախնդաց ծափահարութիւններով դրանք ողջունում են այս կամ այն զեմստվային ժողովում կայացած որևէ յետադիմական եղակի երևոյթ:

Այդպիսի մի առիթ ներկայացրեց Տվերեան գաւառային զեմստվոի ժողովի մի տարօրինակ որոշումը, ոմն Ստոլպակովի առաջարկութեամբ 17 ձախով ընդդէմ 7-ի ժողովը որոշեց զեմստվային դպրոցները դարձնել եկեկեղեցական-ծխական և յանձնել հոգևորականութեան տեսչութեան: Սակայն յիշած թերթերի ցնծութիւնը վաղաժամ էր, որովհետև Տվերեան նահանգային զեմստվոի ժողովում այլ վճիռ կայացրուեց:

Ահա ինչ ենք կարդում այդ բնորոշ դէպքի մասին «Рyse. Вѣд.» լրագրում. «Նոյեմբերի 28-ին, տեղական փոխ-նահանգապետ՝ նահանգապետի պաշտօնակատարի ձեռքով բացուեց Տվերեան նահանգային զեմստվային ժողովը 54 անդամների ներկայութեամբ: Չայնաւոր Ս. Վ. դէ-Մորերտի հարց բարձրացրեց՝ հոգևոր վարչութեան Տվերեան գաւառի դպրոցների յանձնելու մտադրութեան մասին: Հոետորի կարծիքով, նահանգային ժողովը պէտք է ասի, թէ նա չի համակրում Տվերեան գաւառային զեմստվային: Չայնաւոր Ի. Ի. Պետրունկեվիչ ասաց, որ անհրաժեշտ է՝ Տվերեան գաւառական զեմստվոի սկզբուն-

քային վճիռը ենթարկել նահանգական զեմստվային ժողովի քննութեան, նախապէս մշակելով այդ վճիռը խմբագրական մասնաժողովում: Գաւառական զեմստվոն, հռետորի կարծիքով, իրաւունք չ'ունէր՝ դպրոցներն հոգևորականութեան յանձնելու մասին սկզբունքային որոշում կայացնելու, չը հարցնելով նահանգական զեմստվոյի համաձայնութեան մասին, քանի որ նահանգական զեմստվոյի միջոցներով են կառուցուում դպրոցական շէնքերը, պատրաստուում ուսուցչական կազմը, բացուում գրադարանները, ուսուցանողների համար մանկավարժական հանրակրթական դասընթացներ հիմնուում և այլն: Ժողովուրդի կրթութեան մասին հոգատարութիւնը զեմստվոյի ամենագլխաւոր նպատակն է, որ դրել է նրա վրայ օրէնքը, և եթէ զեմստվոն այժմ չ'ունի այդ նպատակին հասնելու համար, կամ չի ուզում կատարել իր վրայ դրած գործը, այդ դէպքում պարտաւոր է յանձնել այն նահանգական զեմստվոյի ձեռքը և ոչ թէ հաստատ կորուստի դատապարտել, յանձնելով հոգևորականութեան կարգադրութեան: Չէ որ հոգևորականութիւնը կիսատպուստ է կարողանում կառավարել նոյնիսկ իր եկեղեցական-ծխական դպրոցները, որոնք անհամեմատելի կերպով ստոր են զեմստվայիններից ամեն կողմից: Ի՞նչ կը լինի զեմստվային դպրոցների դրութիւնը երբ դրանք եկեղեցական-ծխականի վերածուին: Եւ վերջապէս, կը համաձայնուի՞ արդեօք ազգաբնակչութիւնը այդպիսի կերպարանափոխութեան: Իսկ այդ համաձայնութեան մասին անպատճառ պէտք է լինելու հարցնել, որովհետև դպրոցական շինութիւններից շատերը կառուցուած են ազգաբնակչութեան միջոցներով: Ժողովը որոշեց յանձնել հարցը խմբագրական մասնաժողովին: Այդ որոշման դէմ էին 4 անդամներ և հոգևոր վարչութեան ներկայացուցիչը: Ապա խմբագրական մասնաժողովը ժողովին ներկայացրած գնկուցման մէջ առաջարկեց հետևեալ միջոցները ձեռք առնել այն դէպքում, եթէ Տվերեան գաւառային զեմստվոն լրիւ չի փոխի իր վճիռը դպրոցների յանձնման մասին: Ահա առաջարկած միջոցները. 1) զրկել գաւառական զեմստվոն ըտլորովին կրեդիտից (վարկից), 2) իսկոյն պահանջել այն նւապատները որ ստացել է դպրոցների շինութեան համար, 3) մերժել գաւառական զեմստվոյի դպրոցների շինութեան համար 13 հազար ըտլրու փոխառութեան միջնորդութիւնը և 4) յայտնել գաւառական զեմստվոյին որ անհրաժեշտ է վճարել զեմստվոյի ուսումնարանների 178 ուսուցանողների համար թոշակային աւանդները, որովհետև գաւառական զեմստվոյի մոտ-

դրրութեան իրագործումով այս անձինք մնում են առանց պաշտօնի:

Ժողովը ձայների ահագին մեծամասնութեամբ (ընդդէմ 8-ի) որոշեց ամբողջապէս ընդունել խմբագրական մասնաժողովի գեկուցումը:

Հազիւ թէ գոհ լինեն այդ որոշումներից իշխան Միշչերսկին և պ. Գրինգմուտը... Անշուշտ դրանց սրտին մօտ չի լինելու նաև Պետերբուրգի քաղաքային ընտրութիւնների հետևանքը: Մենք մեր մի տեսութեան մէջ (№ 7) համառօտ կերպով ծանօթացրինք ընթերցողին Պետերբուրգի քաղաքային հասարակական ինքնավարութեան այն փոփոխութեան հետ որ կատարուել է 1903 թ. յունիսի 8-ի օրէնքով: Եթէ յիշում է ընթերցողը, ընտրողական իրաւունք է տրուում մայրաքաղաքում և այն բնակարանատէրերին, որոնք իրանց բնակարանների համար վճարում են տարեկան 1000 ռուբլուց աւելի: Բնակաւնաբար այդպիսիները կարող էին լինել լաւ վարձատրուող պաշտօնների և ազատ զբաղմունքի անձինք. նշանաւոր պրոֆեսսորներ, փաստաբաններ, բժիշկներ, ինժեներներ և այլն: Այդպիսով ինտելիգենտ դասակարգի որոշ խաւերն ևս օրէնքով կարող էին մասնակցել ընտրութիւններին, ուր առաջ ասպարէզը ամբողջապէս մնում էր տնատէրերին և առևտրական արդիւնաբերական ձեռնարկութիւնների ներկայացուցիչներին: Այժմ բնակարանատէրի ցենզով մասնակցում էին 2050 հոգի: Այդ նոր տարրը ունեցաւ նախապատրաստական ժողովներ, ուր մշակուեցան գործունէութեան ծրագրեր և առհասարակ ընտրողական պայքարի մէջ մտցրեց կենդանութիւն, մասնաւոր շահերից դուրս սկզբունքներ, քաղաքային ամբողջ ազգաբնակչութեան կարիքների հարց: Պետերբուրգի փորձը ցոյց տուեց, որ դէպի քաղաքային գործերը պլուտոկրատիայի անտարբերութեան դէմ ամենաղրական միջոցներից մէկը ընտրողական սկզբունքի ընդարձակումն է:

Այդ ընդարձակումը ժամանակին կը լինէր, քանի որ տարէցտարի աւելանում է Ռուսաստանում ինտելիգենտ աշխատանքով ապրող դասակարգի թիւը և առհասարակ լայն ծաւալ է ստանում գրագիտութիւնը: Դրան ապացոյց Ռուսաստանում այժմ հրատարակուող գրքերի քանակը և օրէցօր աւելացող պարբերական օրգանների թիւը: Ի դէպ յիշենք, որ ոմն Գերասիմովին թոյլ է տրուած Մոսկուայում հրատարակել Москва ամենօրեայ թերթը, Իսկ Պետերբուրգում ոմն Ա. Սուվորինին առանց նախօրօք գրաքննչական քննութեան Маленькая Газета անունով ամենօրեայ լրագիրը:

Անցնենք Անդրկովկասեան կեանքին:

«Кавказъ» լրագրում տպուած էր Կովկասի կառավարչապետի պաշտօնակատարի հետեւեալ պարտադիր որոշումը Բաթում քաղաքի համար:

«Հասարակական ապահովութեան և անդորրութեան խանգարման առաջն առնելու, ինչպէս և փողոցային անկարգութիւններին վերջ դնելու նկատումով, որ կարող է պատահել զէնք կրելու կանոնները չը կատարելու պատճառով, դնուած են հետեւեալ պարտաւորութիւնները. 1) այն անձինք, որոնց վերաբերում է՝ Բաթումի շրջանի զինւորական նահանգապետից 1903 թ. օգոստոսի. 8-ին հրատարակած և այժմ գործադրուող պարտադիր որոշումը—զէնք կրելու և վաճառելու կանոններին մասին, պարտաւոր են ճշտութեամբ կատարել յիշած որոշման վրայ հիմնուած պոլիցիական բոլոր պահանջները. 2) Նրանք, որոնք առանց հակաճառութեան և իսկոյն չեն հնազանդուիլ պոլիցիայի պահանջներին՝ ենթարկուած են, ազմինխտրատիւ կարգով, պետ. կարգի և հաս. անդորր. պահպան. միջոցների կանոնադր. 15 և 16 յ. յ. համաձայն, 500 ռ. տուգանքի կամ մինչև 3 ամիս բանտարկութեան»:

Նոյն թերթում կարգում ենք.

(Դեկտ. 21-ի Տում) «Այս տարուայ հոկտեմբերի 18-ին Բարձրագոյն հրամանի հիման վրայ, Ղարաբաղի հայ. լուսաւորչական հոգեւոր ղալոցքը Շուշի քաղաքում հայ-լուսաւորչական հոգեւոր իշխանութեան ձեռքով նշեմբերի 17-ին փակուած է»:

Тиф. лист.-ը (№ 294) էջմիածնից դեկտ. 14-ին բժիշկներ Բարայեվի և Տէր-Աւետիսովի հաղորդածներին հիման վրայ յայտնում է թէ Նորին Վեհափառութիւն Մկրտիչ կաթողիկոսը հիւանդ էր ջղային խանգարումով և տանջուած էր յամառ անքնութիւնից: Իսկ դեկտ. 17-ին ստացուած տեղեկութիւններից երևում է որ Նորին Վեհափառութեան ինքնազգացումը, քունը և ախորժակը լաւ են, ոյժերը կազդուրւում են. մարմնի միւս գործառնութիւնները համապատասխանում են տարիքին:

Լ. Ս.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ռուս-եասպոնական բարդութեան ներկայ դրութիւնը:—Մակեդոնիայի ռե-
փորմների առաջին փայլերը:—Գոյուխովսկու ձառք եւ Սափարովի ու
Յոնկովի կարծիքները ապագայի մասին:—Նոթելեան երրորդ մրցանակաբաշ-
խութիւնը:—Մասսարիա Գարագաշեան եւ Վ. Մանուկ Քաջունի:

Օրէցօր մոայլ ու չարագուշակ են դառնում Հեռաւոր Ա-
րեւելքից հասնող լուրերը: Ռուսաստանի պատասխանը չը գո-
հացրեց Եապոնիային: Նոյեմբերի վերջում բացուեց եապոնա-
կան պարլամենտը: Լսելով իրանց սիրելի Միկադօի գահա-
կան ձառք եապոնական ազգի ներկայացուցիչները իրանց պա-
տասխանի մէջ միաձայն ընդունեցին մի բանաձև, որ պախա-
րակում էր կառավարութեան անվճռողականութիւնը Ռուսաս-
տանի նկատմամբ: «Եապոնական կայսրութիւնը, ասուած է
պարլամենտի այդ պատասխանի մէջ, գտնւում է իր փառքի
գազաթնակէտում: Նրա ներկայ դրութիւնը չ'ունի հաւասարը
վերջին հազարամեակի պատմութեան մէջ: Ստորին պալատի
անդամները խորապէս ափսոսում են, որ այդպիսի կրիտիկա-
կան բուլէում, երբ ազգի բախտը վտանգի է ենթարկուած,
կառավարութեան ձեռք առած միջոցները այնքան քիչ են հա-
մապատասխանում դրութեան պահանջներին և անկարող են
ծառայել ազգային ազդեցութեան բարձրանալուն: Կարինետի
քաղաքականութիւնը համաձայն չէ կայսրութեան առաջադի-
մութեան, որովհետև այդ քաղաքականութիւնը ղեկավարւում է
միայն ներքին խորհրդածութիւններով և լի է տատանումնե-
րով: Մինիստրութեան դիպլոմատիան սխալ է, և մենք ամե-
նահպատակօրէն խնդրում ենք ձերդ բարձրութեան՝ քննութեան
ենթարկել դրութիւնը: Ներկայ պատասխանը թելադրուած է

կայսրութեան բարօրութեան հոգսից և հանդիսանում է իբրև ազգային բաղձանքների արտայայտութիւն»:

Միկաղօն, ինչպէս յայտնի է հեռագրներից, պատասխանեց պարլամենտի արձակումով: Դրանից հետոյ՝ Ռուսաստանի պատասխանը քննելու համար Տոկիօում (դեկտ. 4-ին) գումարուեց Նապոնիայի աւագագոյն պետական գործիչների խորհուրդը: Ռուսաստանի պատասխանը չէր գոհացնում դրանց: Դեկտեմբերի 8-ին Նապոնիայի արտաքին գործոց մինիստր բարոն Կոմորան յանձնեց ռուսաց դեսպան բարոն Բոգենին հապոնական նոտան: Անգլիական թերթերի ասելով այդ նոտան ունի մօտաւորապէս հետեւեալ բովանդակութիւնը. Կորէայի նըկատմամբ Նապոնիան չի կարող թոյլ տալ, որ այդ թերակըզզին կամ նրա մի մասը ընկնի մի այլ պետութեան, մանաւանդ Ռուսաստանի ձեռքը. նոյնը չի կարող թոյլ տալ թէ Նապոնիայի ապահովութեան և թէ այլ քաղաքական նկատումներով, ինչպէս և հապոնական առևտրի և արդիւնագործութեան շահերի գերակշռութեան տեսակէտով: Գալով Մանջուրիային Նապոնիան անկարող է համբերել որ Ռուսաստանը մշտապէս զբաղւի այդ երկիրը, և վտանգի մշտական սպառնալիք դառնայ Նապոնիայի ամենակենսական և օրինական շահերին Կորէայում: Նապոնիան Մանջուրիայում ունի դաշնագրներով հաստատուած իրաւունքներ և շահեր, որ պէտք է պաշտպանի: Բացի այդ, անհրաժեշտ է ինկատի ունենալ և Մանջուրիայի աշխարհագրական դիրքը՝ Պեչիլեան ծոցի, Պեկինի ու Տիենցզինի նկատմամբ. պէտք է պահպանել բաց դռների և իրաւունքների հաւասարութեան սկզբունքը, որ խախտուած կը լինի եթէ Ռուսաստանը գրաւի Մանջուրիան: Նապոնիան աւելի քան մի այլ պետութիւն ստիպուած է պահպանել Չինաստանի անկախութիւնը: Նապոնիայի վարկը կ'ընկնի չինացիների աչքում, եթէ նա հնարաւորութիւն տայ Ռուսաստանին՝ խախտել իր հանդիսաւոր խոստումը և բազմիցս արած հաւաստիացումները՝ Մանջուրիան որոշ պայմանաժամին թողնելու մասին:

Եւրոպական մի քանի թերթերի ասելով Պարիզի և Լոնդոնի կարփնեաները իրանց կողմից աշխատում են ռուս-հապոնական դիպլոմատիայի բանակցութիւնների վրայ ազդել խաղաղարարական ուղղութեամբ: Նապոնիայի վերջին նոտայի պատասխանը սպասուած է յունուարի սկզբում:

Մինչ այս մինչ այն երկու հակառակորդները լարում են իրանց ամբողջ ոյժը և արագ պատրաստուած պատերազմի համար: Հեռաւոր Արևելքի ջրերն են ուղարկուած և անգլիական զորահաւորներ: Հէնց դեկտ. 19-ին ճանապարհ ընկաւ Սադաղ

Ովկիանոսը անգլիական «Կինգ Ալֆրեդ» մեծ և նոր զրահակիր յածանաւը:

Մերձաւոր Արեւելքում Թիւրքիան ակամայ սկսում է համակերպուել մեծ պետութիւնների լիազօրութեամբ գործող աստրո-ռուսական ղեկավարի ցուցումներին: Մակեդոնիայի ընդհանուր տեսուչ Նիլմի փաշային մօտ պէտք է լինեն այդ պետութիւնների երկու քաղաքացիական զործակալները: Աւստրո-Ունգարիան առաջարկել է Հէնրիխ Միլլեր Ֆոն-Բագոին, որ ծագումով մաջար է, եղել է հիւպատոս Բէյրութում, Գահիրէում, Բոսնիայում և Օգեսսայում: Ռուս քաղաքացիական ազենտ նշանակուած է Դեմերիկ, որ հիւպատոս է եղել Նիշում, Կանդիայում, Եաֆֆայում և Բէյրութում: Երկուսն էլ լաւ գիտեն թէ Թիւրքերէն և թէ սլաւոններէն: Բացի այդ, մակեդոնական ժանդարմերիայի հրամանատարը պէտք է լինի իտալացի զենեւալ, որ կ'ունենայ երեք զնդապետ օգնականներ, մի-մի նշանակուած Ռուսաստանի, Աւստրո-Ունգարիայի և Անգլիայի կողմից:

Աւստրո-Ունգարիայի արտաքին գործոց մինիստր Գոլուխովսկին, ինչպէս երևաց նրա ճառից, բաւական զոհ է հասած արդիւնքներից և ապագայում ծագելիք բարդութիւնների մեղը հէնց այժմուանից գցում է Բուլղարիայի վրայ: Այդ կառավարութեան ցոյց տուած աջակցութիւնը մակեդոնական յեղափոխականներին նա «ուղղակի յանցաւոր (sträflig) և ակտիւ միջամտութիւնից սակաւ տարբերուող» գործ անուանեց:

Բուլղար կառավարութիւնից դժգոհ են և Ռուսաստանում: Պէտք է նկատել որ պարլամենտական վերջին ընտրութիւնները Բուլղարիայում վերջացան ստամբուլովեան կուսակցութեան յաղթանակով. այժմեան մինիստրութեան (Պետրով-Պետկով) կողմընակից են 143 պատգամաւորներ, մինչդեռ ընդդիմադիր կամ ռուսասէր կուսակցութիւնը (պարագլուխ Դանեվ) 46 հոգուց է բաղկացած: Գաղտնիք չէ որ ստամբուլովեան կուսակցութեան համակրանքը մակեդոնական յեղափոխականների կողմն է: Երկու պարագլուխներ՝ Սարաֆով և Յոնչեվ՝ այն կարծիքի են որ այս գարնան կը վերսկսուի յեղափոխական շարժումը Մակեդոնիայում, որ այժմ դադարել է ցրտերի պատճառով: Այդ գործիչների իդէալն է Մակեդոնիայի լիակատար ինքնավարութիւնը, մանաւանդ որ այդ համապատասխանում է Բերլինի դաշնադրութեան 26 յօդ.-ին: Սարաֆով և Յոնչեվ այժմ պտտում են գլխաւոր եւրոպական կենտրոնները՝ հասարակական կարծիքը իրանց դատի օգտին գրաւելու նպատակով: Լրագրներից յայտնի է որ մակեդոնական կոմիտեները այժմ հաւաքում են զէն-

քի մեծ պաշար և դրամ: Արդէն առատ նուիրատուութիւններ են ստացուում Վիեննայից, Պարիզից, Լոնդոնից, Հոմից, Ֆրլորենցիայից, Չիկագօից, Ֆրանսիսկօից, Մարսելից և Մուկուլայից: Մակեդոնական շարժման պարագլուխները լաւատես են ապագայի նկատմամբ և հաւատացած են որ մակեդոնացիները յաղթանակ կը տանեն...

Տեղի և ժամանակի սղութիւնը թոյլ չեն տալիս աւելի կանգ առնել քաղաքական կեանքի վրայ, ուստի մեր տրամադրութեան տակ մնացած տողերում գէթ թռուցիկ կերպով արձանագրենք մի քանի երևոյթներ ևս գիտական աշխարհից:

Կայացաւ Նորելեան երրորդ մրցանակաբաշխութիւնը: Բիմիական մրցանակը բաժանեցին իրար մէջ մեր ընթերցողներին ծանօթ Կիւրի ամուսինները և Անրի Բեկկերէլ^{*)}, երեքն էլ հռչակուած բաղիյ նոր տարրի և ճառագայթագործին երևոյթների հետազոտութիւններով: Մրցանակը ֆիզիկայից ստացաւ Ստոկհոլմի պրոֆեսոր Սուանտէ Արրենիուս. բժշկական մրցանակը տրուեց պրոֆ. Նիլս Ֆինզենին՝ հռչակաւոր դանեմարքցի ըժշկին, որ հնարել է լուսաբուժութիւնը: Գրական մրցանակին արժանացաւ հռչակաւոր Բիերնստիերն-Բիերնսոն. խաղաղութեան մրցանակը տուին սնգլիացի Չարլզ Կրեմերին— միջազգային միջնորդ դատարանի այդ անխոնջ ջատագովին ու քարոզչին, որ 30 տարի է միջազգային միութեան քարտուղարն է:

Անշուշտ աւելի համեստ համբաւ ունէին աշխարհում այն երկու հայ գիտնականները, որոնք նոյեմբեր ամսում վախճանուեցան Պոլսում. Մխիթարեանների պանթէոնում աւելացան երկու նոր շիրիմներ, դրանցից մէկը Մատաթիա Գարագաշեանինն է, որ յայտնի է հայոց պատմութեամբ հետաքրքրող իրաքանչիւր անհատի իր նշանաւոր «Քննական պատմութիւն հայոց» գրքով, իսկ միւսի տակ հանգչում է Մանուէլ Քաջունին՝ «Բառագիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեան» երկհատոր պատկառելի աշխատութեան հեղինակը:

Այլ անգամ կը տանք այդ նշանաւոր գործիչների աւելի մանրամասն կենսագրութիւնը:

Լ. Ս.

*) Տես «Մուրճ» № 4 և 7 «Գիտութեան աշխարհից»:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԶԳՅՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԷՍ, X զիւրք:—
«Գոչալ վաճի կամ նոր Գեօրկ» վեր-
նագիրը կրող յօդուածում պ. Ի. Յա-
րութիւնեան տալիս է հայոց միակ
գատաստանողքի հեղինակ Միխիթար
Գոշի կենսագրութիւնը և նրա հիմնած-
վանքի պատմական-նկարագրական տե-
սութիւնը: «Աշուղների մասին» յօ-
դուածում պ. Գ. Լեոնեանը աշուղների
մասին տալիս է ընդարձակ տեսու-
թիւն, համեմատում է նրանց միջնա-
դարեան եւրոպական միննէզիգերների,
տուրադուրների և բարդերի հետ, ա-
պա տալիս է նշանաւոր հայ աշուղնե-
րի գնահատութիւնը, որ սակայն իր
կողմից ևս կարօտ է վերգնահատու-
թեան... Գէորգ Աստուածատրեան «Սա-
յաք-նովայի անյայտ երգերից» զը-
րուածքում բերում է այդ նշանաւոր
աշուղի մի քանի անյայտ երգեր, քա-
ղելով Պետերբուրգի Գիտական ձեմա-
րանի Ասիական Թանգարանում պա-
հուած մի մատեանից: «Բորչալու գա-
ւառ»-ի աղագրական ուսումնասիրու-
թիւնը կատարել է պ. Ե. Լալայեան.
այդ ընդարձակ զրուածքին կցած են
մի քանի լուսարանող նկարներ: Խ.
Սամուէլեանն «Արեան վրիժ ևւ վիր-
կանի» յօդուածում քննում է սովո-
րութեան իրաւունքի այդ երեւոյթները
հայկական կեանքում, որքան այդ ար-
տայայտուած է հայոց զրուոր և բանա-
ւոր զրահանութեան, հայոց գատաստա-
նողքի, ինչպէս և ժողովրդի կեան-

քում զեռես գոյութիւն ունեցող սովո-
րութիւնների մէջ: Ինչպէս տեսնում է
ընթերցողը՝ աղագրական գիտութեան
շատ հարուստ պաշար է պարունակում
այս հատորի մէջ:

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ, դեկտեմբեր:—
Ձուտ մասնագիտական թերթ է դառ-
նում և Վիլննայի Միխիթարեանների օր-
գանը, զաղարեցնելով «քաղաքական
տեսութեան», «օգտակար գիտեցաց»
և այլ նիւթերի տպագրութիւնը: Եւ իս-
կապէս շատ խելացի է այդ որոշումը,
քանի որ այդ զէն գցած բաժինները,
զանազան հանգամանքների շնորհիւ,
չէին կարող լիակատար լինել: Մեր
զրահանութիւնը պէտք ունի աշխա-
տանքի բաժանման, ուստի կարելի է ող-
ջունել Վիլննայի Միխիթարեանների ո-
րոշումը՝ դառնալ ընդարձակ ըմբռնումով
հայազիտութեան ուսումնասիրութիւն: Յան-
կալի է, որ ամենալիակատար կեր-
պով խմբագրութիւնը կարողութիւն
ունենայ իրագործել իր նպատակը և
ամենանորը գործիքի պէս արձանագը-
րի այն աւելելը, ինչ կատարում է
հայազիտութեան ընդարձակ դաւառում
հայ և օտար զիտնականների ջանքե-
րով:

Այս համարում տպուած են հետևեալ
յօդուածները.— Գ. Խալաթեանի «Կրիւ-
ստսին յարադրող հայոց Արտաշէս Բա-
գաւո՞րն էր» գերմաներէն ուսումնա-
սիրութեան թարգմանութիւնը. «Հըրմը-

Աւրոյական Տ վերջապատը հայերեկի մեջ» լեզուաբանական գրութեամբը. «Գոհ. Ռուսիկեանի կենսագրական վերջը, «Գոհ. Անսոն Արաիկեանի» կենսագրութիւնը, «Կորոս»-ի մասին ուսումնասիրութիւնը, Զ. Բաղրուղանեանի «Ստուգարանական հետազոտութիւն» եւ մատենախօսականներ: Հայագիտութեան են նուիրուած և Մարտիրոսի «Հանդէս Հայագիտութեան», ինչպէս և մասամբ Պարիզի «Բանասէրը», որ առայժմ անստիպ ձգտում է լինել նաեւ գրական հանդէս: Մեզ թւում է, թէ «Հանդէս Ամսօրեայ»-ն աւելի նպատակաւոր պայմաններ ունի հայագիտութեան կենսորոնական օրգան լինելու և նա պէտք է ձգտի այդ դիրքը զբաւելու:

